




Handwritten cursive text, possibly a signature or name, written vertically on the left side of the page.

Handwritten cursive text, possibly a signature or name, located in the middle section of the page.



Handwritten cursive text, possibly a signature or name, located at the bottom of the page.

20

ԲԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՄԻՋԳԻՏՈՒԹԵԱՆ

Ի ՀՐԱՀԱՆԳՍ ՄԱՆԿԱՆՅ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ


ՏՆ. Հ. ՄԻՆԱՅ Վ. ԲԺՇԿԵԱՆ  
Ի ՄԻՒԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԿՐԿԻՆ ՏՊԱԳՐԵԱԼ

A/629



Ի ՎԵՆԵՏԻԿ  
Ի ՍՈՒՐԲՈՒ ԱՄԳԵԼԵ  
—  
1836



31 2000000

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՑ ԳՈՑ ԼՈՒՍԱՒՈՒ  
ԲԷ, ԵՒ ԻՄԱՍՏՈՒՆ ԱՌՆԷ ԶՏՂԱԹՍ :

Սաղճ. ՃՃԸ :



45350-64

## Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն


**Բ**ստ սողումոնի՝ ճանաչելն ԱՃ  
և գիտելն իւր ամենակարող զօրու-  
թիւնն՝ է արմատ անսահութեան.  
և անոր համար ՚ի սկզբանէ հետէ  
վարդապետք սուրբ եկեղեցւոյ ան-  
խոնջ ջանացին յայտնաբանել քա-  
րողութեամբ աստուածային սքան-  
չելիքն, որ գօրծեց վասն փրկու-  
թեան մարդկան . որպէս զի ա-  
մենայն քրիստոնեայք ճանչնալով  
և գիտնալով աստուածային ամե-  
նակարող զօրութիւնն և անսահ-  
ման խնամքն՝ աստուածապաշտ ըւ-  
լան քրիստոնէական կատարելու-  
թեամբ : Արդ՝ որովհետև յետ  
քսաներկուամեան օտարանալոյս  
ասկէց և յետ այնչափ աշխարհ-  
ներ ուղևորելոյս, նորէն բերաւ

զիս հոս հայրենիքս հասուց առա-  
քելական պաշտօնիւ՝ վերին տես-  
չութիւնն. պարտաւոր զիս համա-  
րիմ, որ այս 1818 տարւան կիրա-  
կի իրիկուններն՝ խրատաբանելով  
յայտնեմ ձեզ աստուածային սքան-  
չելիքն և խնամքն, հանդերձ ամե-  
նայն հարկաւոր գիտելիքներով  
քրիստոնէական կրօնիս. որպէս զի  
յայտնի գիտնաք թէ՛ աստուածպաշ-  
տութիւնն ոչ միայն՝ ի հանդերձեալն  
երջանիկ կընէ մարդն, այլև այս  
աշխարհիս մէջն ալ փառաւոր և բա-  
րի կը գործէ: Ահա այս է վախճան  
այս մեր վարդապետութեան. և այս  
ըլլայ պատճառ ձեր երջանկու-  
թեան, հասնելով շնորք սուրբ հոգ-  
ւոյն մեզ ՚ի ատենաբանելն, և ձեզ  
՚ի լսելն այս եկեղեցնայ մէջ տրա-  
պիզոնի:

# ԱՆՏԵՂԱՎԱՐ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱԾԱՆՕԹՈՒԹԵԱՆ



ԱՎԻՐԱԿԻ

Հ. Ի՞նչ է յայտնութիւն :

Պ. Յայտնութիւնն է ինչևիցէ անյայտ բանին յայտնի ըլլալն, և այնպիսի գաղանի բանին, որ առանց յայտնութեան չի մացվիր. զոր օրինակ էթէ այսօր ձեզ յայտնեմ թէ վաղն արեգակը պիտի խաւարի, մէկէն մտքերնիդ հասու կըլլայ անյայտ բանին. որ թէ չիյայտնէի՝ չէիք կրնար իմանալու : Հին ատենը գաղանիք կը կոչէին այսպիսի բնական բաները. զի քուրմերն աստղաբաշխութիւն իմանալով կը հռչակէին, և յայտնի կնէին ժողովրդեան խաւարումն արևու, լուսնի, ամսագլուխը, տարեգլուխը՝ ևն : Բայց

այս յայտնութի՛ է մարդկային և բնական բանի . թէսպէտ՝ թէ որ քուրմերը չիյայտնէին , ռամիկ ժողովուրդը չէր կրնար իմանալ բնական խելքով . իսկ հրեշտակին յայտնութին , որով յայտնեց սարայի թէ զաւակ պիտի ունենաս՝ ոչ էր մարդկային , այլ հրեշտակային կամ գերբնական . որ է նոյն ընդ ձեռքին յայտնութե . զի բնական խելքով չէր կրնար իմացվիլ նոյն ատենը : Նոյնպէս գերբնական և ձեռքին յայտնութի էր՝ հրաշալի աստղին երևիլը մոգուց . որով յայտնի եղաւ իրենց . թէ ձեռք մարդկային մարմնով յայտնեցաւ , և դնացին երկրպագուի ըրին արարչին . անոր համար ձեռք յայտնութիւն ըսվեցաւ , ինչպէս այսօր տօնեցինք և խորհուրդն իմացուցինք քարոզին մէջ , որ պիտի լսէք ևս իսկ կիրակին :

Հ. Ի՞նչ է յայտնութիւն ձեռքիտութեան :

Պ. Իսկապէս յայտնութի ասելով՝ կիմանանք ձեռքին յայտնութին , որ յայտնէր է արարածոց . զի թէ ձեռք չիյայտնէր՝ անհնար էր թէ ստեղծական միտքը կարենար ըմբռնել բնականապէս . որպէս յոհաննէս աւետարանչին տեսած յայտնութին էր ձեռքին . որով հասու եղաւ նոյ գաղտնի խորհրդոցն : Ապա յայտնութի ձեռքիտութե՛ է այնպիսի գաղտնիք և անգիտելի խորհուրդ , որ ձեռք ամենաբարին յայտնելով որդւոց

մարդկան՝ դիտուն և հմուտ ըրաւ իւր  
 գաղանի խորհրդոց և գործոց, լուսա-  
 ւորելով ստեղծական միտքն մարդոց և  
 հրեշտակաց՝ իմաստուն ըրաւ զամէնքը .  
 սորվեցան և իմացան՝ թէ ԿՅ է սկիզբն  
 երևելեաց և աներևուածից, եղածնե-  
 րուն և ըլլալիքներուն . որով յայտնի  
 եղաւ՝ թէ ինչ որ դիտենք, ինչ որ կը  
 տեսնենք, կը լսենք, և կը խօսինք՝ ԿՅ  
 է յայտներ . ինքն է պատճառ և հեղի-  
 նակ ամենայնի : Ըստ այնմ . Ամենայն  
 ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և  
 ոչ ինչ . և ըստ առաքելոյն՝ յայտնեաց և  
 յայտնեցաւ իշխանութեց և պետուէց :  
 Անոր համար դաւիթ մարգարէն ասաց,  
 թէ Յայտնութի բանից քոց լուսաւորէ  
 և իմաստուն առնէ զաղայս : Ահա մեր  
 ակար միտքն ալ այս ԿՅ այն յայտնուէն  
 սակաւ ինչ լուսաւորեալ՝ կըսկըսինք այս  
 առաջին կիրակիս յայտնել՝ նախ թէ  
 ուսալի է սկիզբն յայտնութեանց, և թէ  
 ո՞վ է սկիզբն անսկիզբն : Երկրորդ՝ թէ  
 քանի՞ կերպ յայտնութի եղաւ : Ապա  
 միւս կիրակին կըսկըսինք յայտնել այ  
 ստեղծածներն :

Հ. Ի՞նչ է սկիզբն :

Պ. Սկիզբն է եղած բանին ծայրն կամ  
 սկսող պատճառն, որ իսկապէս ԿՅ է  
 միայն սկիզբն և պատճառ ամէն բանի .  
 զի երբոր անոնք չի կային ինքն յաւի-  
 տեան կար, և փառաւորեալ էր իւր  
 յաւիտենական փառօքն . բայց կամեցաւ

յայտնել արարածոց իւր խորհուրդն և  
գիտութիւն , ամենակարողութի և անչափ  
բարութիւնն . ուստի ինչպէս որ միայն  
ինքն է տէր և վախճան ամենայնի . վասն  
զի ամէն բան իրմէն եղաւ և իրեն հա-  
մար եղաւ . նոյնպէս ինքն է միայն յայտ-  
նիչ ամենայնի : Անոր համար մարգարէն  
ասաց . Լուսով երեսաց քոց տեսանեմք  
զլոյս . և սողմոնն ասաց . Որինչ առ ոտս  
կայցէ՝ աշխատութե՞ գտանեմք . իսկ  
որինչ յերկինս է՝ ո՞վ քննեսցէ , և զևոր-  
հուրդս քո ո՞վ գիտաց , եթէ ոչ գու-  
ետուր զիմաստութի և առաքեցեր զմք  
հոգիք քո ՚ի բարձանց :

Հ. Ինչո՞ւ կրսվի սկիզբն անսկիզբն :

Պ. Անոր համար ձ՞ծ կրսվի սկիզբն  
անսկիզբն , պատճառ անպատճառ . զի  
ամենուն գոչն և սկիզբն ինքը տվաւ , և  
պատճառ եղաւ ըլլալնուն . սակայն ինքն  
ուրիշէն չըսկրսաւ , և ոչ ոք իրեն պատ-  
ճառ եղաւ . վասն զի է ինքնագոյ , ա-  
նեղ . և անժամանակ . ոչ սկիզբն և ոչ  
ծայր ունի . միշտ էր , և կայ մնայ յա-  
ւիտեանս յաւիտենից : Ինչպէս բոլորակ  
մի որչափ գարձընէս՝ ծայրը չէս կրնար  
գտնել , զի չունի ծայր . այսպէս մտքովդ  
որչափ վեր ելլես՝ յաւիտենականութե-  
ծայրը չէս կրնար գտնել . զի անծայր է  
և անսկիզբն , որ է ձ՞ծ . ինչպէս գեղե-  
ցիկ կը հաստատէ սք լուսաւորիչ : Տէ՛ս  
Ճեմ . 1 :

Հ. Քանի՞ կերպով յայտնուի եղաւ :

Պ. Կրկին կերպով. նախ բնական լոյս մի տալով մտաց՝ յայտնեց անձ. որպէս զի մարդիկ կարենան անով ճանչնալ ստեղծողն և սիրել. կամ թէ ստեղծական բաներուն վրա նայելով և մտածելով ան մեծութիւն ճանչնալ և զմայլելու յուստի միայն արեգակը տեսնելով՝ միաքը կրնայ բնական լուսով մակաբերել և խորհիլ, թէ այս ստեղծվածն որ այսպէս մեծ և գերազանց է, այսչափ աշխարհ կը լուսաւորէ և կը տաքցընէ, հասկա ասոր ստեղծողն որչափ մեծ և գերազանց պիտի ըլլայ, որչափ բարի և նախախնամող համօրէն աշխարհաց: Վարի աշխարհի վայրենիները տեսան որ ծովու թռչուններն ամէն օր մէկ ատեն կուգան ջուր խմելու. ոմանք նոյն ատենը ջուրը կը մանեն կելեն. հասկըցան որ Նախախնամութի մի կայ որ զերենք կը կառավարէ. ուստի իրենց ժամանակն անոնց գործքերով որոշեցին, և բնական լուսով անբաններէն բան սորվեցան, ու ստեղծողին մեծութիւնն ըմբռնեցին: Իսկ եթէ կոյր մարդ ըլլայ, որ կենդանի և արե չի տեսնէր, իր մարմինը միայն քննելով կրնայ ան մեծութիւն հասկընալ նոյն բնական լուսով. որովհետև մարմինն այնչափ զարմանալի կատարելութիւներ ունի բիւրաւոր մասունքներով, և հիանալի գործողութիւն մի և նոյն կէտի մէջ կատարելով, մինչ զի՝ անհաւատ փիլիսոփայ մի ասաց. թէ

որ աշխարհիս մէջ ուրիշ բան չըլլար , միայն մարդուս մարմինն ըլլար , կարող էր անձային ամենակարող զօրութիւնն յայտնել և ստեղծուին գերազանցութիւնը քարոզել . զորօրինակ աչքը մէկ նայելով քանի՛ բիւրաւոր առարկայ մէկէն կը տեսնէ և կիմանայ . ականջին՝ միայն օդին շարժումն գպչելով հոտտակելքին հոտ գպչելով ինչպէս մէկէն կիմանայ և կորոշէ . այս ինչպիսի արուեստ և զօրութի է . հասա ասոնց ավօղն ո՞րչափ գերազանց է : Գիտասցեն թէ ո՞րչափ ևս նոցա տէրն առաւել լաւ է . որ գեղեցկութե արարչապետն է ասաց սողման : Ի՞նչ է խելքին և մտքին զօրութին , որ ստեղծական բաներով անստեղծ անձային գերազանցութիւնն կրմբունէ . երևելի բաներով աներևոյթ անձային զօրութին կիմանայ . որ ըստ առաքելոյն է մշանջենաւորութի , զօրութի և անձութի նորա : Անոր համար հին կռապաշաներուն օրինաց գրեանցը մէջ կայ՝ թէ ստեղծող և նախախնամօղն աշխարհի է անձութի և յաւիտենականութի , տէր և օրէնագիր է ընդհանուրց :

Հ . Ո՞րն է երկրորդն :

Պ . Երկրորդ՝ իսկական յայտնութի՛ հաղորդեց մեզ անձ իւր անձաւելի գիտութին՝ որչափ որ մարդկային տկար մտքն կրնայ հասնիլ . և այս է լոյս հաւատոյ , որ տվաւ հաւատացելոց , ոմանց անմիջապէս միտքն լուսաւորելով , ինչպէս

մարդարէններուն և առաքեալներուն . որոնք առանց ուսման և խորհրդածուծէ լեցվեցան հոգւոյն նքի իմաստութիւն , և լուսաւորեցին աշխարհս : Ոմանց նաև յայտնեց միջնորդութիւն ուսմանց և ջանից . ինչպէս էին նք վարդապետներն . որոնք թէպէտ ուսմամբ սորվեցան անգիտութիւնն , սակայն անձային յայտնած խորհուրդներն արամաբանելով լուսաւորեցան , և լուսաւորեցին եկեղեցւոյ մանկունքն . ինչպէս որ ամենքն իս լուսաւորեալ գիտենք և կը հաւատանք ամենայն ճշմարտութեց , որ ան յայտներ է նք եկեղեցւոյ : Անոր համար ստաց որդին միածին . Գոհանամզքէն հայր տէրերկնի և երկրի . զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց , և յայտնեցեր աղայոց : Այսան զի բնական միտքն իմաստնոց՝ չի կրնար իմանալ . այլ հաւատքն է լոյս սվողը և յայտնողը մտաց մանկանց :

Հ . Ինչ խորհուրդ ունի այս վարդապետութիւն :

Պ . Ահա այս խորհուրդով այս մեր վարդապետութիւն կանուանենք Յայտնութիւն անգիտութիւն , որ սկսելով սկիզբէն կը յայտնէ այ գիտութիւն այս տարւան հինգ տաղաւարաց կիրակիներն . ուստի բաց ՚ի առաւօտեան քարոզներէն իրիկուններն ալ իրատաբանելով յայտնի կրնենք նախ և առաջ՝ ստեղծվածներով անածանսութութիւն :

Երկրորդ՝ վարդապետութիւն հաւատոյ :

Երրորդ՝ վարդապետութիւն բարոյա-  
կան :

Չորրորդ՝ վարդապետութիւն խորհր-  
դոց :

Հինգերորդ՝ վարդապետութիւն նք ե-  
կեղեցւոյ որուն անվրէպ դատաստանին  
յանձն եղեալ ասեմք առ պարգևատուն  
ամենեցուն, ՏՕւր մեզ տէր աղաչեմք  
զքեզ՝ հաստատուն կալ 'ի հաւատ՝ 'ի  
յոյս՝ 'ի սէր՝ և 'ի պատուիրանապահու-  
թե՛ք քո :

## Բ . ԿԻՐԱԿԻ

Հ . Ի՞նչ է ոչինչն :

Պ . Ոչինչն է մէկ բանին չըլլալը, կամ  
պակասական սկիզբն, որովհետև աշխարհ  
չըստեղծած՝ ամէն բանէն առաջ ոչինչ  
էր, որ ըսել է թէ բաց 'ի անբան չի կար-  
գի ոչինչն է պակասութի կամ չունելու-  
թի . զորօրինակ կուրուին է չունելութի  
աչքի, որ լոյս չի տեսներ . և խաւարն է  
պակասութի լուսոյ . ուր լոյս չըլլալով  
խաւար կամ անլոյս է : Ուստի թէ ոչինչն  
և թէ կուրութիւն կամ խաւարն բան մի  
չեն, հասպա մէկ բանին չըլլալն կամ պա-  
կասութիւնն են : Իսկ ան տմենաբարին  
ասանկ պակասական սկիզբն չէ, այլ  
դրական և պատճառական սկիզբն է ա-

մենայնի . ըստ որում ամէն բան իրմէ սկսած է արարչագործութեամբ . ինքն է սկսածառ և արարիչ ամենայն ընչի . զի առանց նորա եղև և ոչինչ :

Հ . Տեսածներդ ի՞նչ են :

Պ . Տեսած բաներս ոչնչին հակառակն են . որ կըսվին արարածք կամ էակք , և կամ սկսուած , եղած բաներ . ինչպէս է հող , ջուր , արև , մարդ , ևն . որոնք յայտնի կը քարոզեն , թէ առաջ ոչինչ էր և ամենևին բան չի կար , ոչ հող , ոչ ջուր , ոչ լոյս , ոչ երկինք , ոչ արև , ոչ մարդ , և ոչ հրեշտակ : Հասկա արարիչն երբոր կամեցաւ՝ ասոնք ամէնն ստեղծեց . այսինքն չեղածէն կամ ոչնչէն ըրաւ ինչ , կամ եղած , և կամ արարած . ըստ այնմ . Արարչագործ ան , որ յոչնչէ գոյացուցեր զերկինս և զերկիր :

Հ . Ի՞նչպէս կրնաս հաստատել :

Պ . Նախ և առաջ կը մտածեմ թէ էս առաջ չկայի , արդեօք ուսկից եղայ . կիմանամ թէ ծնողքէս եմ եղած , ասկա անոնք ալ իրենց ծնողքէն . և այնպէս իրարմէ ծնանելով յաջորդաբար կը հասնինք առաջին մարդն ազամ . դնենք թէ անալ հողէն եղաւ . հողն ուսկից եղաւ . դնենք թէ ջրէն եղաւ . ջուրն ուսկից եղաւ . դնենք թէ օդէն եղաւ . օդն ուսկից եղաւ . ըսենք թէ երկինքին շարժմունքէն եղաւ . երկինքն ո՞վ ըրաւ . ըսենք հրեշտակներն ըրին . հասկա զանոնք ո՞վ ըրաւ : Ա՛րջապէս միաբս կը

հաստատվի, թէ կայ առաջին սկիզբն  
կամ պատճառ և արարիչ, որ զիս և ա-  
մէն բան ստեղծեց, թէ հոգեղէն և թէ  
մարմնեղէն . զի գործքն է յայտնօղ  
պատճառին : Սքօգոստինոս կը հարցը-  
նէ թէ ուսկից գիտնամ, թէ դուն կեն-  
դանի ես, երբոր հոգիդ չեմ տեսներ .  
պատասխան կուտաս թէ՛ վասն զի կը  
խօսիմ, վասն զի կը շըջիմ . վասն զի կը  
գործեմ . անմիտ, թէ որ մարմինիդ գործ-  
քէն կրնաս հասկընալ կենդանի ըլլալդ,  
հապա այսչափ ան ստեղծածներէն չե՞ս  
կրնար ճանչնալ արարիչն :

Հ . Ի՞նչ կըմբռնես առաջին պատ-  
ճառն :

Պ . Առաջին պատճառն կըմբռնեմ  
անստեղծ էակ՝ ամենակալ արարիչ՝  
պարզ էութի, և անչափ բարութիւն .  
որուն ոչ մարդու և ոչ հրէշտակի միտք  
կը հասնի . զի ամէն ստեղծվածք չափա-  
ւոր են . իսկ անչափ և անհաս . որ  
կամեցաւ իւր յաւիտենական բարիքն  
հաղորդել արարածոց և արարածներ  
ունենալ, որ իւր փառքն տեսնեն ու  
վայելեն, և զինքը փառաբանեն . ըստ  
այնմ . Նորաստեղծեալ բանն յանէից՝ ի  
սկզբանէ զերկինս երկնից, և զերկանային  
զօրս անմարմնոց իմանալեացն զուարթ-  
նոց . որով յաւէա փառաբանի : Աւստի  
երբոր կամեցաւ ստեղծեց աշխարհս, եր-  
կինք և երկիր մէջի ամէն բաներով բարի  
և կասարեալ . որ հիմակւան կարգին

նայելով քան զայս կատարեալ և կար-  
գաւոր չէր կըրնար ըլլալ. թէպէտ ան-  
կարող է ուրիշ զարմանալի կերպով ան-  
բաւ աշխարհներ ստեղծել խելքէ մտքէ  
դուրս, ինչպէս որ կըսէ սբ գիրքն, միթէ  
տկարանայցէ՞ առ 'ի յայ բան, միթէ  
ձեռն ան չիցէ՞ բաւական : Զամենայն  
չափով և թուով և կշռով կարգեցեր .  
զի զօրուէ բազկի քո սիլ է, որ ընդդէմ  
դառնայցէ :

Հ. Ինչպիսի կարգով ստեղծեց :

Պ. Ածային ամենակարող զօրութիւն  
Ժամանակի չի կարօտիր . մէկ անբաժա-  
նելի կետի մէջ բիւրաւոր աշխարհք կըր-  
նայ ստեղծել անթերի և կատարեալ բայց  
մարդուս միտքն իւր ամենակարող զօրու-  
թիւր լաւ ըմբռնելու համար կամեցաւ առ-  
ջի օրն ստեղծել երկինք և երկիր, լոյս  
և հրեշտակ, նաև նիւթն ամէն բանի  
ամբողջ և անկազմ . և այս ստեղծած-  
ներն՝ յից օրւան մէջ ուղեց կատարե-  
լագործել և կանոնաւորել անանկ զար-  
մանալի եղանակաւ, որ խելք չի հաս-  
նիր՝ ոչ կարգին և ոչ կառավարութեն .  
մինչ զի պէտք է խոստովանիլ՝ թէ միայն  
ամենակարող զօրութիւն հնար է այսպիսի  
գործ գործել : Երկինք պատմեն զփառս  
այ, և զարարածս ձեռաց նորա պատմէ  
հաստատութի, ասաց մարգարէն :

Հ. Ե՞րբ ստեղծեց :

Պ. Արարիչն 'ի յաւիտենից սահմա-  
ներ էր, որ աշխարհս պիտի ստեղծէ . զի

կամքն դործ է եղելոց . ուստի սահմա-  
նած ժամանակն որ հասաւ նախ տաց .  
Եղիցի լոյս և եղև լոյս . այսինքն խաւարն  
վերցաւ լոյս եղաւ , կամ լոյսն ստեղծ-  
վելով խաւարն վերցաւ . ըստ այնմ .  
Խաւարն անգոյ և սկզբնածին հալա-  
ծեցաւ յօրն առաջին . նաև ոչինչն  
անցաւ ինչ եղաւ . վերն երկինք եղաւ  
բիւրաւոր հրեշտակներով , վարը եր-  
կիր եղաւ խառն հողով ջրով օդով և  
հրով անկազմ և անպատրաստ : Իբր զի՝  
ջուրն ու հողն միատեղ խառնած ըլլա-  
լով ցամաքն չէր զատված , և ամէն բոյ-  
սերուն սերմն հողին մէջն էր : Եւ հո-  
գի այ կամ ամային նախախնամութիւն  
չըջէլով աշխարհիս վրա կը խնամէր . ինչ  
պէս հաւը խնամելով կը հոգայ իւր ձա-  
գերն , ըստ բացատրութեան քնն բարսղի :  
Որովհետև ստեղծական բաներն ամային  
զօրութեամբ միայն կրնան մնալ էութե և  
կայութե մէջ , և առանց նախախնա-  
մութե մէկէն ոչինչ կը դառնան , անոր  
համար ասաց սողոմոն . Չմեծն և զվոքբն  
ինքն արար և զմիօրինակ խնամ ունի ա-  
մենեցուն : Արդ՝ մեղք ալ այ նախախ-  
նամութիւն վայելելով , լոյսն տեսնելով ,  
օգն շնչելով , ջուրն խմելով , և երկրիս  
վրա կոխելով , պարտական ենք անբաւ  
շնորհակալութիւն ընելու արարչին , որ  
այսչափ առատ ավեր է իւր պարգևն ,  
մտածելով եթէ ասոնք չըլլային , կամ  
վերցրնէր աշխարհէս՝ ինչ պիտի ընէինք :

Ահա այս մտածական բաւական է մե-  
զի այս շարժումս, այ բարիքն ճանչնալու  
և շնորհակալութիւն յառաջը ըլլալու :

Գ. ԿՒՐԱԿԻ

Հ. Երկրորդ օրն ինչ գործեց :

Պ. Առաջին օրն աշխարհս ստեղծելով  
շարժում մի տվաւ երկնից. և այն ան-  
կազմ լոյսը կամ արեգակը շրջելով ժա-  
մանակ ձևացաւ, և խաւարն լուսէն  
զատվելով ցորեկ եղաւ. իսկ նոյն լոյսն  
երբ եղեւթին տակը մտաւ իրիկուն ըլլա-  
լով օր մի եղաւ : Եւ երբ նոյն լոյսն նո-  
րէն ծագեցաւ՝ առաւօտ եղաւ, և որոշ-  
վեցաւ երկրորդ օրն : Ահա այս երկրորդ  
օրւան մէջ արարիչն օգը կարգաւորե-  
լով թեթեւ մարմինները և ջրեղէն գո-  
լորշեքները վեր հանեց ամպ ձևացուց.  
որպէս զի պէտք եղած ատենը թան-  
ձրանալով ջրջրկին և անձրեւէն : Նաև  
օգն իբր հաստատութի գրաւ երկրիս ու  
երկնային մարմիններուն մէջ, և ասով  
աստղալից երկինքը զատվեցաւ երկրէս,  
և վարի ջուրը վերի ջրէն կամ ամպերէն  
որոշվեցաւ օգով. ինչպէս երգեց շնոր-  
հալին. Արարչական բանին հրաման 'ի  
յերկրորդումն աւուր սկզբան, զջուրն  
'ի ջուրցն բաժանեաց, հաստատութիւն

629  
629



պարունակեաց . որով զաշխարհս հողե-  
ղինաց՝ անջրպետեաց՝ ՚ի հրեղինաց : Ուս-  
տի լոյսն ու օդը թեթև ըլլալով վեր մնա-  
ցին , և ջուրն ու հողն ծանր ըլլալով վար  
մնացին . իսկ երկրագունտս տեղի ծանր  
ըլլալով կեդրոն եղաւ մթնոլորտին ,  
ջուրը վրան , օդը ջրին վրա , հուրն ալ  
կամ լոյսն ալ օդին վրա . որ է մթնո-  
լորտ երկրիս : Ահա այսպէս հրամայեց  
ի՛ծ . Եղեցի՛ հաստատութի՛ն ՚ի մէջ ջրոցդ ,  
և եղեցի՛ մեկնել ՚ի մէջ ջուրցդ և ջուրց :  
Եւ եղև այնպէս : Եւ կոչեաց ի՛ծ զհաս-  
տատութի՛ն երկին : Եւ ետես ի՛ծ զիբա-  
րի է : Եւ եղև երեկոյ , և եղև վաղոր-  
դայն , օր երկրորդ :

Հ . Երրորդ օրն ինչ գործեց :

Պ . Երրորդ օրն հրամայեց ի՛ծ , որ  
ջուրը քաշվէ և զառաւել ցամաքէն ծով  
ըլլայ : Եւ ասաց ի՛ծ Ժողովեսցին ջուրքդ  
որ ՚ի ներքոյ երկնից ՚ի Ժողով մի , և  
երևեսցի ցամաքն . և կոչեաց ի՛ծ զցա-  
մաքն երկիր . և զԺողովս ջուրցն կոչեաց  
ծովս : Ուստի այս ի՛ծային հրամանն ե-  
ղածին պէս՝ մեկէն երկրիս ջուրը մէյ-  
տեղեցաւ ահագին ծով եղաւ և ցամաքն  
երևցաւ հանդերձ լեռներով և կղզիներ-  
ով . նաև նոյն օրն ովկիանոս պատեց  
երկիրս : Եւ որովհետև ամէն բոյսերուն  
հունար գրեր էր ի՛ծ հողին մէջ , երբոր  
հրաման եղաւ ստեղծողէն՝ ամէն տեսակ  
բոյսերն ու ծառերը բուսան աճեցան և  
զարգարեցան հանդերձ հունտերովն , և

եղաւ գարուն : Եւ ասաց ի՞նչ բղիտեացէ  
 երկիր զբանջար խոտոյ սերմանել սերմն  
 ըստ ազգի և ըստ նմանութեւ, և ծառ  
 պտղաբեր տունել պտուղ, որոյ սերմն  
 իւր 'ի նմին, և եղև երեկոյ, և եղև վա-  
 ղորդայն, օր երրորդ :

- Նոյն օրն գետերն ալ վազելով զուար-  
 ճալի կռոպգանէին երկիրս, որ լեւնե-  
 րով և դաշտերով ծաղկալից և պտղա-  
 լից գեղեցիկ կերևնար : Եւ անչափ ան-  
 համար բոյսերը նոյն կետին մէջ ծաղկե-  
 ցան բոլորն իրարմէ տարբեր թէ հոտով  
 թէ գունով և թէ ձևով : Ուստի երգեց  
 շնորհալին. Էական բանն որ ընդ հօր՝  
 արարչակից և համազօր, յերրորդ աւուր  
 զջուրան զատոյց, զբոյսս և զտունկս բըղ-  
 խեցոյց :

Հ. Չորրորդ օրն ի՞նչ գործեց :

Պ. Արարիչն չորրորդ օրը կարգաւո-  
 րեց երկնային մարմիններն. ուր առաջ  
 միագունա լոյս կերևնար անկազմ կամ  
 անկանոն, որ միայն դառնալով գիշեր  
 ցորեկ կիմացվիր. իսկ այսօր ի՞նչ կարգի  
 դնելով նոյն լոյսն՝ նախ արևն, լուսինն,  
 և ամէն աստղերն որոշ կարգաւորեց  
 ըստ այնմ. Լոյսն այն պայծառ յօր չոր-  
 րորդին, յարեգական նիւթ հաւաքեալ  
 լուսինն 'ի տիպ լուսոյ ստեղծեալ, և  
 աստեղաց պարս յօրինեալ : Երկրորդ՝  
 աստղալից կամարն հաստատեց, մոլո-  
 րակները զատեց՝ ամէն մէկին մէյմէկ  
 կերպ շարժում տալով. և մէյմէկ դժի

վրա հաստատուելով որը վար, որը վեր :  
 Անանկ որ ասոնց շարժմունքով ամիսը ,  
 տարին , ժամանակն , և եղանակն յայտ-  
 նըվեցան : Եւ ասաց ի՞մ եղիցին լուսա-  
 ւորք 'ի հաստատութե՛ք երկնից 'ի լուսա-  
 ւորութի՛ն 'ի վերայ երկրի . և մեկնել 'ի  
 մէջ տունջեան և 'ի մէջ գիշերոյ . և ե-  
 ղիցին 'ի նշանս և 'ի ժամանակս , և յա-  
 ւուրս և 'ի տարիս . . և արար ի՞մ զեր-  
 կուս լուսաւորսն զմեծամեծս . . և զաս-  
 տեղս . . և եղև երեկոյ , և եղև վաղոր-  
 դայն օր չորրորդ : Ահա այս կարգով  
 սկսան պտրտիլ լուսաւորներն . ուստի  
 լուսինը ամսուան մէջ իր շրջանը ընե-  
 լով , լուսնական ամիսն սկսաւ ըլլալ .  
 իսկ արևն տարւան մէջ իր կամարը դառ-  
 նալով կամ զոգիակոսէն անցնելով տա-  
 րի եղաւ . նաև ժամանակն ու եղանակն  
 յայտնի եղաւ նոյն գծին ծուռ ըլլալովն  
 քսանւիրեք աստիճան . որ եթէ շիտակ  
 ըլլար , ոչ դարուն ոչ ամառ ոչ աշուն  
 և ոչ ձմեռ կորոշվէր : Տես . Ճեմ . 349 :

Հ . Հինգերորդ օրն ի՞նչ գործեց :

Պ . Հինգերորդ օրն հրամայեց ի՞մ ,  
 որ ջրէն ստեղծ վին ելլեն զեռուններ և  
 թռչուններ . զի գեռ շնչաւոր կենդանի  
 չի կար աշխարհիս վրան . ուստի ի՞մ այլին  
 հրամանաւ նայիս օգն անհամար թռ-  
 չուններով զարգարվեցաւ զանազան տե-  
 սակով և մեծութիւն . ջուրն ալ այլևայլ  
 ջրային զեռուններ և մանր մանր զարմա-  
 նալի կենդանիներ ունեցաւ , որ ջրին մէջ

կը խաղային . նաև նոյն օրն ստեղծեց ջրէն բոլոր ծովուն մեջի կենդանիները , մեծամեծ կէտեր , ահագին ձկներ , անբաւ ժժմունքներ և խեցիներ : Եւ սասց ի՞նչ հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց . . և զամենայն թռչունս թռաւորս ըստ ազգի . . և ասէ աճեցէք , և բազմացարուք , և լցէք զջուրսդ որ 'ի ծովս , և թռչունքդ բազմացցին 'ի վերայ երկրի . և եղև երեկոյ , և եղև վաղորդայն , օր հինգերորդ : Ուստի այսպէս երգեց շնորհալին . Ճառագայթեալ բանն 'ի հօրէ յօր հինգերորդն հրամայէ , բղխեալ 'ի ջրոց սեռս կայսառաց և թռաւորս օդականաց :

Հ . Վեցերորդ օրն ի՞նչ գործեց :

Պ . Վեցերորդ օրն հողէն արարչագործեց ամէն ցամաքի կենդանիներն՝ չորքոտանի , դազան , և անասուն մեծ և փոքր : Երբոր երկիրս ամէն տեսակ բոյսերով և կենդանիներով զարգարվեցաւ , ամենաբարի արարիչն կամեցաւ թագաւոր մի ստեղծել և դնել իշխօղ երկրիս վրա ամէն բանի : Ուստի ամէն բանէն ետև նորէն ստեղծեց առաջին մարդն ադամ այսպէս . առաւ ի՞նչ կաւ երկրէ և ձևացուց մարմին , և ապա փչելով ավաւ իրէն բանական հոգի . զոր նբ գիրքն այսպէս կրսէ . Փչեաց 'ի նա հոգի կենդանի . որով նոյն հողէն ստեղծեալ մարմինը հոգևորեցաւ և եղաւ մարդ կամ բանական կենդանի : Անատենը մէկէն

ոկսաւ շարժիլ, տեսնել, լսել, իմա-  
 նալ, տրամաբանել, և զուարճանալ ա-  
 լարածներուն վրա նայելով: Սակայն ա-  
 գամայ բնութիւնն, և օգնական չի  
 կար այն անհամար կենդանիներուն մէջ-  
 ապա Իժմութի մի տվաւ ագամայ,  
 և անոր կողէն ստեղծեց երրորդ ժամուն  
 առջի կինն եւա, որ կեանք ըսել է. և  
 օրհնելով հրամայեց, որ աճին ու բազ-  
 մանան: Եւ ասաց Իժմ հանցէ երկիր  
 շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի, և  
 սողունս և գաղանսերկրի ըստ ազգի: Եւ  
 արար Իժմ զմարդն 'ի պատկեր իւր. ըստ  
 պատկերի Իժմ արար զնա. արու և էգ ա-  
 րար զնոսա. և օրհնեաց զնոսա. . և եղև  
 երեկոյ և եղև վաղորդայն օր վեցերորդ:  
 Ըստ որոյ այսպէս երգեց շնորհալին.  
 Չհանդուրժեալ բնութիւն բարւոյն, ու-  
 նել միայն զանձառ բարին, այլ ստեղ-  
 ծեալ զմարդն յիւր պատկերին 'ի վեցե-  
 րորդ առաւօտին, և 'ի յերրորդ ժամ  
 զկողածինն 'ի յօգնութիւն ետ հողածինն:

Հ. Եօթներորդ օրն ինչ գործեց:

Պ. Եւ հանգեաւ յաւուրն եօթնե-  
 րորդի, կրսէ Իժմաշունչն. իբր զի՝ վեց  
 օրւան մէջ կատարեց Իժմ երկինք և եր-  
 կիր ամենայն բաներով, հրեշտակներով  
 և մարդով. ապա եօթներորդ օրն իբր  
 դադարելով ստեղծագործութեն հան-  
 գեաւ. և սրբելով նոյն օրն կամեցաւ որ  
 նր պահվի, բան չի բանին չաշխատիննոյն  
 օրն 'ի յիշատակ գադարման Իժմ յարար-

չադործու թէն. ուստի այն օրւան անունն  
 նալ ըսվեցաւ շաբաթ, որ կը նշանակէ  
 հանգիստ. բայց ետքը յնի փառաւոր  
 յարու թէ սրտիւ ընելով շաբաթ օրը  
 կիրակիի փոխեց սբ եկեղեցին: Ըստ  
 այնմ. Տրն յեա ստեղծմանն արարա-  
 ծոց՝ հանգեաւ յեօթն օր ՚ի գործոց:  
 Տէս 7. կիրակին:

Հ. Ի՞նչպէս էին նախաստեղծք:

Պ. Ադամ եւա անմեղ և սբ վիճակի  
 մէջ էին. բայց դեռ իծային տեսու թէ  
 երանելի չէին եղած կատարելապէս, և  
 ոչ անմեղանչական սբ էին. թէպէտ շատ  
 գեղեցիկ, խելացի, և կատարեալ չա-  
 փահաս մարդիկ էին: Ադամ այնչափ ի-  
 մաստուն խելացի էր որ իրեն նման կա-  
 տարեալ մարդ չէ եղած. անկէ յայտնի  
 է որ ամէն կենդանիներուն յատկու-  
 թին ճանչնալով անուն դրաւ ամենուն:  
 Մանաւանդ թէ ըստ լուսաւորչայ, ա-  
 դամ նախ ինչ անուն մի տալով արարիչ  
 անուանեց: Ճեմ. 2:

Վ. Ի՞նչ վախճանի համար ստեղծ-  
 վեցան:

Պ. Ադամ և ամէն մարդիկ՝ այս ան-  
 ցաւոր կենացս համար չեղան, այլ յաւի-  
 տենական կենաց կամ ինչ համար, և իծ  
 վայելելու համար ստեղծվեցան. վասն  
 զի անմահ հոգի ունենալով պէտք էր  
 անմահանալ յաւիտեան, և բարի գործ-  
 քերով հասնիլ անանցանելի ուրախու-  
 թէ և երանութի: Թէ չէ՝ վախճանա-

զուրկ կը սեպվէր ւծտտուր անմահա-  
կան հոգին՝ եթէ անբան կենդանեաց  
նման մինակ այս աշխարհիս համար  
ստեղծված ըլլար: Եթէ այսու կենօքս  
միայն յուսացեալք իցեմք, ողորմելի  
եմք քան զամենայն, ասաց առաքեալը:  
Ազամ՝ եւա թէպէտ յաւիտենական ե-  
րանութի չէին հասած, բայց սկզբնա-  
կան արդարութիւն վայելելով զւծ կու-  
րախանային, ինչպէս կըսէ շնոր՝. Յո-  
րում ցնծայր զուարճացեալ անտխրա-  
կան խնդութիւն, քանզի զւծ տեսանէր  
միշտ խոնարհեալ ՚ի դրախտին, յորմէ  
զուսոյն ճառագայթ տպաւորէր ՚ի յին-  
քեան:

Հ. Ինչպէս էին հոգեղէն և անմար-  
մին ստեղծվածք:

Պ. Ասոնք աննիւթ և սրարզ իմացու-  
թիւք են, զորս արարիչն ստեղծեց իրեն  
ստրաստուր և փառաբանիչ ըլլալու նաև  
մեր վրկութի օգնելու համար, ուստի  
անմարմին ըլլալով շատ աւելի իմաստու-  
թիւ և գիտութիւն քան զազամ լեցված  
էին, մանաւանդ սաղայէլն, որ անհա-  
մեմատ գերազանց էր: Ասոնք առջի օրն  
ստեղծվեցան անարատ և անմեղ, բայց  
գեռ կատարելապէս երանելի չըլլալով՝  
սաղայէլ տեսաւ իւր մտաց գերազան-  
ցութիւն՝ հպարտացաւ, և մեծամտելով  
ասաց, թէ ես ալ իմ աթոռս կը դնեմ  
ամպերէն վեր և նման կըլլամ բարձրե-  
լոյն: Եւ այսպէս գլուխ քաշելով չէ

հնազանդեցաւ ինչ, և մէկէնիմէկ իսկային  
անձառելի փառքէն զրկուիցաւ, և  
երկնքէն դժոխքը թափեցաւ ինքն և իրեն  
հեռեւող դասն. ուստի ըստեցան դև և  
սատանայ, որ ըսել է հակառակ ինչ և  
արդարութեւն: Ահիկէց ետքը չի կամեցան  
ապաշխարել և փրկութեւն հասնիլ. ինչ-  
պէս կը յայտնեն սք վարդասպետք:

Հ. Ո՛րն են բարի հրեշտակք:

Պ. Բարի հրեշտակ կրովին, որ սա-  
ղայելի հպարտութեանը չի հեռեցան.  
այլ մնացին յիսկային փառաբանութե-  
մէջ, որ են ինը դասք. և վերէն վար  
իջնելով են՝ Սերոբէք, Քերոբէք, Ա-  
թուք, Տերութեք, Չորութեք, Իշխա-  
նութեք, Պետութեք, Հրեշտակասպետք,  
և Հրեշտակք: Այսպէս կը թուէ դիտ-  
նէսիոս: Ասև իրեք իրեք քահանայա-  
պետութի կը բաժնեն այսպէս. Աթուք,  
քերոբէք, սերոբէք՝ առաջին քահա-  
նայապետութի: Տերութեք, Չորութեք,  
իշխանութեք՝ երկրորդ քահանայապե-  
տութի: Հրեշտակասպետք, հրեշտակք,  
պետութեք՝ երրորդ քահանայապետութի:  
Պօղոս առաքեալ կըսէ՝ թէ հրեշտակ-  
ներն են կարգեալ սպասաւորել փրկու-  
թեւ մարդկան: Քանի մեծ է ինչ իննամբն որ  
այսչափ հոգ ունի մարդուս վրան, մինչև  
հրեշտակներն իրեն օգնիչ տվաւ: Հապա  
քանի անպէտ և դատապարտելի կըլլայ  
մարդն, երբոր հոգ չունենար իր փրկու-  
թեանն համար. այլ անբան անասունի

նման կերթայ, և չի մտածէր թէ օրէ օր  
 կը մօտենայ յաւիտենականութիւն : Քա-  
 նի մեծ սարսափ պիտի ունենանք, երբ  
 կը տեսնենք որ հրեշտակներն մէկ յան-  
 ցանքի համար դժոխային եղան . մենք  
 ինչ պիտի ըլլանք, որ սցսչափ ստեղծո-  
 ղին դէմ անհնազանդութիւն և ապերախ-  
 տութեամբ կը մեղանչենք : Զի եթէ 'ի  
 հրեշտակսն յանցուցեալս ան ոչ խնայ-  
 եաց, այլ խաւարին կապանօք արկեալ  
 'ի տարտարոսն ետ պահել 'ի դատաս-  
 տան, ըստ պետրոսի առաքելոյն . ապա  
 մեզ ինչպէս պիտի դատէ և պատուհա-  
 սէ, թէ որ չի զղձանք և ան երախտիքը չի  
 ճանչնանք ու չի ծառայենք իրեն հրեշ-  
 տակային վարուք . վասն զի թէ որ ան  
 մեծուիը և երախտիքը ճանչնանք, հար-  
 կաւ բարութիւն կը հեռակինք բարի հրեշ-  
 տակաց նման, ըստ իմաստանոյն . ճանա-  
 չելն զքեզ բովանդակ արդարութի է .  
 և գիտելն զգորութի քո . արմատ անմա-  
 հութեան :

### Դ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ . Ո՞ր ստեղծվեցան ադամ, եւա :

Պ . Ադամ ստեղծվեցաւ դրախտէն  
 դուրս արևելք, և յետոյ գրվեցաւ  
 դրախտին մէջ . որ երրորդ օրն ան զար-

գարեց անուշահոտ ծաղիկներով և պլու-  
 ղալից ծառերով . և եղաւ գեղեցիկ և  
 սքանչելի սպարտէզ մի ամէն զուարճու-  
 թի լի : Հոն ստեղծեց ի՞ժ զնախամայրն  
 մեր եւա՛ թմբութի տալով ադամայ ա-  
 ռաւ մէկ կողն ու շինեց անով եւայի  
 մարմինն , ինչպէս ըսինք : Արդ այս  
 զուարճալի դրախտը կերևնայ , թէ  
 հայաստանու մէջն էր , էրզրումայ և էջ-  
 միածնայ միջոցը . որովհետև դրախտէն  
 ելած չորս գետերուն գլուխը էրզրու-  
 մայ մօտը կիյնի . թէպէտ դրախտը ջր-  
 հեղեղին ժամանակն անյայտ եղաւ մարդ-  
 կային տեսութէն , ինչպէս կըսեն վար-  
 դապետք : Այս գեղեցիկ դրախտն այն-  
 չափ գերազանց և սքանչելի տեղ էր , որ  
 ամէն տեսակ բարիքով զարգարած էր , և  
 մէջ տեղը տնկած էր ծառ կենաց . ուս-  
 կից ադամ և իւր զաւակներն ուտելով  
 ոչ կը ծերանային և ոչ կը մեռնէին , նաև  
 ամենևին նեղութի և կարօտութի չէին  
 ունենար : Թէպէտ քուներնին կուգար ,  
 կը ծարւէին , և կանօթենային , բայց մե-  
 ղի պէս կարօտութիւն և նեղութի չէին  
 քաշեր . ինչպէս կը հաստատեն սբ վար-  
 դապետք : Ադամ դրախտին մէջ ըլլա-  
 լով , երբ որ ուղէր , մօտ էր ծառն կե-  
 նաց , ուտելով ծերութենէ կազատէր :  
 Տղաքը վշտանալով չախտի լային դրախ-  
 տին մէջ . ոչ թու՛նով կը մեռնէին և ոչ  
 բնական սակասութի բութ կը ծնէին .  
 բայց 'ի փոքր մարմնոյ՝ ուրիշ բանով

նման ադամոյ կը ծնէին ըստ Կրօնագրոյ  
տինոսի :

Հ . Կար ուրիշ ծառ :

Պ . Ուրիշ ծառ մի կար , որ կըսուէր  
գիտութեան բարւոյ և չարի . այսինքն թէ  
որ մարդն հնազանդ և հաւատարիմ մնար  
իւր արարչին , այն կըլլար իրեն ծառ գի-  
տութեան բարւոյ . զի միայն բարին կը  
ճանչնար և կը հետևէր , իսկ թէ որ ան-  
հնազանդ ըլլար , այն կըլլար իրեն գիտու-  
թեան չարի . զի անկէ ետև չարը կը հասկը-  
նար , և չարիքն իրմէն սրտաւ չէին ըլ-  
լար . ինչպէս որ եղաւ : Ուստի ամենա-  
բարի արարիչն իւր իշխանութիւնը մար-  
դուն խնայեցնելու համար ստուգեց  
ադամոյ , որ ամէն ստուգներէն ուտէ ,  
միայն գիտութեան ծառէն չուտէ և չի  
մտենայ . նաև ստուգելով ասաց , թէ  
երբոր ուտէք՝ կը մեռնիք :

Հ . Ի՞նչպէս խաբուեցաւ :

Պ . Չար սատանան հակառակ և թըշ-  
նամի ըլլալով ջանաց որ մարդն ալ իրեն  
նման ստուգամբ ըլլայ Կրօնագրոյ . ուստի երբոր  
եւա ստուգելով և զուարճանալով դրախ-  
տին մէջ մտեցաւ արգելած ծառին ,  
ահա սատանան օձին կերպարանքը կամ  
օձին մարմինը մտած սկսաւ փորձելով  
եւային հետ խօսիլ . և համոզելով ասել  
թէ ինչո՞ւ համար դրախտին ամէն ծա-  
ռին ստուգը չէք ուտէր . և ի՞նչ է ստու-  
գան որ չէք ուտէր այս ծառէն . կերէք  
որ Կրօնագրոյ նման ըլլաք : Պատասխան տալու

Եւա թէ ձ՛ժ արդէլէց որ չուտենք ու չի մեռնինք : Արկնէց օձը . չէ թէ կը մեռնիք , հասպա աչքերնիդ կը բացվի և անմահ կը լըսք , անոր համար հրամայեց ձ՛ժ որ չուտէք : Այսպէս համոզելով և լաւ երեցնելով կիներ խաբէց . որ կերաւ և ազամին ալ կերցուց : Երկուքն ալ կերան , և մէկէն ձ՛ժային շնորհէն ընկան կորուսին իրենց անամեղութիւն ու փառքը . բացվեցաւ աչքերնին տեսան որ զըրկըլէր են ձ՛ժային շնորհէն , և ախտաւոր յօժարութիւնը զերենք շարժելով իմացան որ մարմնով ալ մերկ են . ուստի ամբշնալով թզի տերևով իրենց ամօթալի մերկութիւնը ծածկեցին , ըստ այնմ . Եկայք որդիք մարդկան ողբասցուք ըզհօրն զվտանգ . որ մերկացաւ զփառս առաջին և զգեցաւ զթզենոյն ծածկոյթ փոխանակ անճառ լուսոյն :

Հ. Յետոյ ինչ եղաւ :

Պ. Ագամ և եւա փոխանակ ձ՛ժանալու ողորմելի վիճակի մէջ ընկան . տեսան որ ձ՛ժային շնորհէն և մեծութէն զըրկըլած են , սկսան երկուսն ալ սուկալ , ափշիլ , միալ տարակուսեալ : Սակայն ամենաբարի արարիչն կամեցաւ ապաշխարութիւն կանչել զանոնք . ուստի դեռ դրախտին մէջն էին հարցուց ադամայ , թէ ո՞ւր ես : Ա՛ժ կուզէր որ ադամ մեղայ ըսելով թողութիւն խնդրէ սխալալանացն . բայց ադամ փոխանակ զըջալու կիներ սրտաճառ բռնելով ասաց՝ թէ

ինձի տված կինդ տվաւ որ կերայ: Ա՛ծ  
 ժամանակ տալով իրենց տպաշխարու-  
 թեան՝ կնկանն ալ հարցուց. անալ օձը  
 պատճառ բռնեց: Ապա երբոր ասոնք  
 շուղեցին տպաշխարել անէծք առին  
 ստեղծողէն. օձն ալ անիծ վեցաւ որ դոր-  
 ծիք եղաւ սատանայի:

Հ. Ե՛րբ դուրս ելան դրախտէն:

Պ. Ադամ Ի՛յ անէծքն առնելով  
 պարտաւոր մնացարդարութե՛ բոլոր զա-  
 ւակներով, որ սլիտի ծնէին իրմէն մինչև  
 աշխարհիս վերջն. որովհետև ինքն էր  
 հայր ամենուն, եթէ արդար մնար՝ զա-  
 ւակներն ալ սլիտի արդարութեան մէջ  
 մնային. ինքն անհնազանդ ապստամբ  
 ըլլալով բոլոր մարդիկ ալ պարտաւոր  
 մնացին, և անարժան եղան այն դրախ-  
 տին հիանալի գեղեցկութիւն վայելելու.  
 ուստի դուրս արտաքսեցաւ ադամ ընդ  
 եւայի, ու դրախտին գիմացը բնակեցաւ.  
 ուր միշտ լալով և տպաշխարելով ան-  
 ցուց կեանքը: Տարիէն ետև կային եղաւ,  
 յետոյ հաբէլ, որուն նախանձելով կային  
 զարկաւ մեռցուց. որ անհնարին կսկիծ  
 եղաւ ծնողացն: Անոր տեղն Ի՛ծ՝ սէթ  
 տվաւ իրեն և կայինն անիծեց. որ երե-  
 րեալ տատանեալ եղաւ. իսկ ադամայ  
 յետոյ ուրիշ զաւակներ ալ եղան և քա-  
 ղաք շինեցին: Տէս Հմտ. հտ. Գ. 153:

Հ. Ո՛րչափ ապրեցաւ:

Պ. Ադամ ինը հարիւր երսուն տարի  
 ապրեցաւ, և բոլոր կենացը մէջ տպաշ-

խարանք քաշելով կուլար սխալանայն վրայ . իսկ մարգասէրն ի՞նչ ողորմելով մխիթարեց և խոստացաւ , որ իր զաւակէն պիտի զսկէ մէսիւս , վրկիչ . որ զինքն ազատէ սատանային գերութիւն :

Հ . Ե՞րբ եղաւ ջրհեղեղ :

Պ . Ագամ մեռնելէն ետե սէթին զաւակները խառնակեցան անիծած կայենին զաւակներուն հետ . որ կերևնայ թէ ի՞նչ արգիլէր էր : Ասոնք այնչափ անառակուի ըրին . որ անօրէնութեան չափն լեցվեցաւ . մինչև ի՞նչ բարկանալով կամեցաւ բոլոր աշխարհ ջրհեղեղով կորսնցնել : Ուստի նոյնաճապետը տապան շինեց և տապանին մէջ մտնելէն ետե եղաւ ջրհեղեղն յամի աշխարհի ըստ ժամանակագրաց 1656 : Եւ միայն տապանին մէջ եղօղներն ապրեցան ութ հոգի ամէն տեսակ կենդանիներով : Իսկ տարիէն ետե տապանն հայաստան արարտու լեռան վրան նստաւ և բոլոր ջուրը քաշվեցաւ : Հոն ելաւ նոյ , նախ և առաջ զո՛հ ընելով ի՞նչ երկրպագութի ըրաւ . և ապա այդի տնկեց քաղաք շինելով . շինած քաղաքին անունն դրաւ նախիջևան , այսինքն առաջին իջևան և բնակարան :

Հ . Ո՞ւր է բաբելոն :

Պ . Բաբելոն տիգրիս գետին քով ընդարձակ դաշտ է , որ խառնակումն կը նշանակէ . զի նոյնաճապետէն բազմաճալով մարգիկ հայաստանու մէջ . ելան

Հոն գնացին միաբանած բազմութիւնք  
 և սկսան մեծ աշտարակը շինել, որ ա-  
 նուն թողուն աշխարհիս մէջ: Այս  
 գործքն այ գէմ ըլլալով այլայլութիւն  
 և շփոթութիւն մի ավաւ շինողներուն.  
 նայիս ամենուն լեզուն փոխվեցաւ, չէին  
 կրնար մէկզմէկ հասկընալ. մինչ զի աշ-  
 տարակն անկատար ձգեցին մէյմէկ գի-  
 քաշվեցան՝ ոմանք հեռու, ոմանք մօտ.  
 և եօթանասունուերկու նահապետութի  
 ազգ և լեզու բաժնրվեցան յամի աշխար-  
 հի 1770: Ահա այսպէս հայաստանու  
 թողովուրդը բաժնրվեցաւ. մէկ մասը  
 մնաց հայաստան նոյ նահապետին քով,  
 որ դեռ ողջ էր. և մէկ մասն ալ բաբե-  
 լոնէն ցրվեցան ասիա, ամբիկէ, եւրո-  
 պա, նաև ամէրիկա. մինչ զի՝ բոլոր եր-  
 կիր և կղզիներն մարդով լեցվեցան. իւ-  
 ռաքանչիւր տեղաց օգը և գիւրքը՝ բարբեր-  
 նին փոխելով տարբեր ազգեր եղան. զի  
 տաք երկրի ազգերն արագ և խորամանկ  
 եղան. ցուրտ տեղերունը՝ սաղ և գան-  
 դաղ. իսկ միջակներունը բարեխառն  
 եղան:

Հ. Ո՞վ եղաւ կռապաշտ:

Պ. Նոյ նահապետին իրեք որդիքն  
 բազմանալով աշխարհ լցին մարդով, և  
 քիչ քիչ սկսան ամ մոռնալ. բայց առ-  
 ջի կռապաշտներն եղան քամայ ցեղէն  
 քանանացիք, որ նախ սկսան աստղերն  
 և մեծամեծ մարդիկ սաշտել: Իսկ բէլ  
 եղաւ առջի կռապաշտ թագաւորն, ու

զինքը պաշտել կուտար ժողովրդեան :  
 Տէս ճեմ . 6 : Յետոյ ասոր ցեղէն նինոս  
 թագաւորը՝ ծաղկահաս զաւակը մեռ-  
 նելով արձան շինել տվաւ , և ասկէց  
 կուռք շինելը մտաւ . որ ամէն աշխարհ  
 մեծամեծներուն արձանը շինէին կը պաշ-  
 տէին : Սակայն կերևնայ թէ մեր ազգին  
 մէջ ետքը մտաւ կռապաշտութիւն . վասն  
 զի պատմիչները կը հաստատեն , թէ  
 հայկ բելայ երկրպագութիւն չընելու հա-  
 մար պատերազմ ըրաւ՝ զարկաւ բէլը  
 մեռցուց . և ետքի թագաւորները յու-  
 նաստանէն բերին կուռքերն հոյաստան :  
 Տէս հմտ . հտ . 7 : Ահա մարդուս այս  
 ապերախտութիւնը տեսնելով դաւիթ  
 մարգարէն կըսէ . ո՞վ է մարդ զի յիշես  
 դու զնա . բոլոր աշխարհ մարդուն հա-  
 մար ստեղծեցիր այնչափ մեծութի տա-  
 լով . բայց մարդը միայն ապերախտ ըլլա-  
 լով թողուց արարիչն ու սկսաւ քարի  
 փայտի ծառայութիւն ընել : Եւ ոմն ի-  
 մաստուն կըսէ . ամենայն արարածք այ  
 դրած օրէնքը կը կատարեն . մարդն է  
 միայն , որ ստեղծօղն թողուցեր է անօ-  
 րէնութիւն կը ծառայէ : Արդ՝ չըլլայ թէ  
 մեհք ալ նոյն ապերախտներէն ըլլանք .  
 ապա այս շաբաթ լաւ մտածենք այ բա-  
 րիքն ու հաւատարմութիւն ծառայենք ստեղ-  
 ծաղին , ինչպէս որ պարտական ենք :

Հ . Ո՞վ էր աբրահամ :

Պ . Հայր աբրահամ էր սեմայ ցեղէն և կուսպաշա Թարային որդին . զի քաղ-  
 գէացոց կուռքերը Թարա կը շինէր կը-  
 սեն : Բայց աբրահամ մտաւոր և բարի  
 ըլլալով կը մտածէր՝ Թէ ի՞նչպէս ան-  
 կրնայ ըլլալ այն , որ մարդուն շինածն  
 է . և քարէ փայտէ շինած կուռքն ան-  
 կրնայ ըլլալ . ուստի գիշերներն երկինքը  
 նայելով աստղերուն՝ կը մտածէր Թէ  
 այս սքանչելի լուսեղէն մարմիններուն  
 ստեղծող մի պիտի ըլլայ : Այս գեղե-  
 ցիկ խորհրդածութեն համար ան ամե-  
 նաբարին լոյս տվաւ իրեն , ճանչցաւ  
 ստեղծողն ու երկրպագութիւն ըրաւ  
 երկնաւորին . անոր համար զինքն օրհ-  
 նեց ան , և հանեց քաղգէացոց մէջէն  
 աւետեաց երկիրը տվաւ իրեն և զաւա-  
 կացն : Աբրահամ հնազանդելով ան-  
 ձայնին երբոր ելաւ հայրենիքէն , նորէն  
 յայտնութի եղաւ և խոստացաւ ան որ  
 իր զաւակէն փրկիչ պիտի գայ աշխարհ :  
 Եւ այս կըսվի կոչումն աբրահամու , որ  
 եօթանասունըհինկ տարւան էր յամի  
 աշխարհի 2083 : Իսկ երբոր եղաւ իննը-  
 սունըինը տարւան՝ իրէք հրեշտակներն  
 երևցան իրեն մարդու կերպարանքով , և  
 դնային տունն աւետիս ւովին , Թէ սա-  
 հակ պիտի ծնի քեզմէ . նոյն ժամանակը

Երկինքէն կրակ իջաւ Երեց սողոմ՝ գոմոր  
 իրենց չար մեղացն համար, միայն արդար  
 զովտ ապրեցաւ : Եւ այս ժամանակն էր  
 մէլքիսեդէկ քահանայապետն , որ սա-  
 ղեմայ Թագաւորն էր . արբահամու ա-  
 ռաջն ելաւ . տասանորդ առաւ . որ էր  
 օրինակ քնի . ինչպէս կը բերէ առա-  
 քեալն :

Հ . Ո՞րչափ տպրեցաւ :

Պ . Աբրահամ հարիւր եօթանասու-  
 նըհինգ տարի ապրեցաւ , և միակերպ  
 կենդանի հաւատքով այ ծառայեց . մինչև  
 մէկհատիկ սիրական որդին սահակ այ  
 զոհ սխաի ընէր . անոր համար կրկին  
 օրհնութեցաւ ստեղծողէն : Եւ ապա նոյն  
 օրհնուիլը տվաւ սահակին , ան ալ տվաւ  
 յսկոբին , յսկոբն ալ տասւերկու որդ-  
 ւոցն , որ են նահապետ տասւերկու ցե-  
 ղին եբրայեցւոց . որոնց մէկն էր յովսէփ  
 գեղեցիկ . որուն նախանձելով եղբայր-  
 ները ծախեցին , և դնաց եգիպտոս ծախ-  
 վեցաւ տասնըեօթը տարւան . ուր տասւի-  
 րէք տարի բանաղ մնալէն ետև , փարա-  
 ւոնին երազը մէկնելով եղաւ իշխան ե-  
 գիպտոսի . որ երսուն տարւան էր :

Հ . Յակոբ նահապետն ի՞նչ ըրաւ :

Պ . Յակոբ նահապետ սիրական որ-  
 դուն վրա այնչափ լացաւ ողբաց , որ աչ-  
 քին լոյսը Թափելով մաշեցաւ կեանքն :  
 Սակայն ինչպէս որ յովսէփ գեղեցիկ  
 փարաւոնի երազը մէկնէր էր՝ սկսաւ  
 սաստիկ սով այն կողմերն . մինչ զև յա-

կոր նահապետ դրաւ որդիքը զրկեց ե-  
գիպտոս որ ցորեն բերեն : Խակ յովսէփ  
եղբայրները ճանչնալով յայտնեց զինքն  
ու բերել տվաւ հայրն հարիւր երսուն  
տարւան, որ միայն իրենք եօթանասու-  
նըհինգ հոգի էին բաց 'ի ծառաներէն .  
որոնք մօտն եգիպտոս և շատ պատիւ  
ունեցան թագաւորէն . և այնչափ ա-  
նուանի էին եգիպտացւոց առջին, մինչ  
զի՛ եգիպտացւոց թագաւորներն ասոնց  
անուամբն հովիւ կը կոչվէիներկար ժա-  
մանակ : Ուր մնացին իսրայէլացիք եր-  
կուհարիւր տասնըհինգ տարի, և այն-  
չափ բազմացան՝ որ ետքի թագաւորներն  
սկսան նախանձել . ուստի փարաւոն թա-  
գաւորը չարանալով սկսաւ չարչարել  
հրէաներն դառն ծառայութի՛ հարիւր  
քառսունըչորս տարի :

Հ . Ո՞վ էր մովսէս :

Պ . Երբոր այսպիսի ծառայութեամբ  
կը տանջուէին՝ հրաման եղաւ թագա-  
ւորէն գայեկներուն որ մեռցընեն հրէա-  
ներուն մանչ զաւակներն . որպէս զի  
պակսին չի մնան : Այս միջոցս ամրամ  
իսրայէլացուն զաւակ եղաւ, որ կայ-  
տառ տղայ ըլլալով սրտերնին չըգիմացաւ  
մեռցընելու . իրեք ամիս պահելէն ետե  
տեսան որ չըլլար՝ սնտուկի մէջ գրին  
տղան ծնւի՛ցին ու գետին մէկ կողմը նե-  
տեցին : Մտուկը մնաց գետին մէջ,  
մայրն ալ հոն մօտն էր . ուր փարաւոնի  
ազնիկը սկսաւ սնտուկը հանել տվաւ

տղան մօրը տվաւ մեծցուց, և ապա առաւ պալատը՝ ամէն գիտութիւն կրթելով որդեգիր ըրաւ. որ կողմեցաւ մովսէս՝ այսինքն ջրէն ելած :

Հ. Ի՞նչպէս ազատեց :

Պ. Երբոր մովսէս քառսուն տարւան եղաւ ձգեց ելաւ եգիպտացոց մէջէն. և ութսուն տարւան էր հրեշտակ երևցաւ իրեն քորեք լերան վրա բոցով, և ինչ կողմանէ հրամայեց որ երթայ իսրայէլացիներն ազատէ փարաւոնի գերութիւնն : Ուստի գնաց ելաւ փարաւոն թագաւորին դիմացն և ինչ կողմանէ ասաց, որ թող տայ իսրայէլացիներն. բայց փարաւոնի սիրտը խօտանալով չուզեց լսել ինչ հրամանն և սկսաւ աւելի տանջել ժողովուրդը : Անոր համար տասն պատիժ տալով պատուհասեց. և որովհետեւ եգիպտացիք նեղոս գետին ջուրը կը պաշտէին, նախ և առաջ որչափ ջուր կար եգիպտոսի մէջ արիւն դարձուց, և բոլոր ձկներն ապականելով ջարդեցան : Այս բանը տեսնելով փարաւոն չի զղջացաւ, այլ հոր փորեցին եգիպտացիք որ ջուր գանեն խմեն : Երկրորդ պատիժն եղաւ, որ եգիպտոսի ամէն տեղը գորտով լեցվեցաւ : Այս պատիժն որ տեսաւ զղջաց փարաւոն և խոստացաւ թող տալու. բայց յետոյ ստեց : Երրորդ պատիժ՝ մոռն (սիւլիսինէկ) տվաւ ինձ : Չորրորդ՝ շանաճանճ տվաւ : Հինգերորդ՝ անասուններուն ջարդ տվաւ :

վասն զի եգիպտացիք շատ կենդանի կը պաշտէին . անոր համար ասանկ պատիժներով զանոնք պատուհասեց: Երբոր ասով ալ չի խրատվեցաւ փարաւոնն, սկսաւ լծ ուրիշ կերպ զանոնք պատժել . ուստի Ալեցերորդ՝ չարաչար բորոտեցան ամէնքն: Եօթներորդ՝ անանկ սասաիկ հարկուտ մի տվաւ, որ շատ անասուն ջարդեց: Ութերորդ՝ մարախ տվաւ: Իններորդ՝ թանձր խաւար շօշափելի: Տասներորդ՝ եգիպտացոց բոլոր անդրանիկներն ջարդեց: Ահա ամէն տուն լաց ուլբ ըլլալով՝ այլ չգիտնացաւ փարաւոնն հրաման տվաւ որ շուտով ելլեն խրայէլացիք եգիպտոսէն:

Հ. Երբ ելան:

Պ. Յամի աշխարհի 2315 զատիկ ըրին խրայէլացիք . և գառն ուտելէն ետև ճամբայ ելան իրենց ամէն բաներով գնացին գէպ 'ի կարմիր ծովու ճամբան . որ էին բազմուի իբր երկու միլիոն, և եգիպտացոցմէ ալ շատ գանձ առին կողոպտելով . որոնք շփոթած կըստիպէին խրայէլացիներն որ շուտով ելլեն իրենց երկրէն . ուստի երբոր մօտեցան կարմիր ծովուն, փարաւոնի սիրաբ նորէն խստացաւ . ելաւ բազմութէ ետևներէն գնաց, որ ետ գարձընէ: Սակայն մովսէս մարգարէն լծային հրամանաւ դաւազանը զարկածին պէս՝ ծովն երկուս բաժնրվելով ճամբայ բացվեցաւ . խրայէլացիք մասն սկսան ծովուն մէջէն անցնիլ գիմաց: Քա-

բաւոն ալ ետեւներէն մտաւ . բայց խ-  
րայէլացիք անցնելէն ետեւ մովսէս նորէն  
զարկաւ գաւազանը . ահա մէկէն ծովը  
լեցվեցաւ , և փարաւոն մնաց ծովուն  
մէջ խղզըվեցաւ այնչափ զօրքով և ե-  
գիպտացի իշխաններով :

Հ . Ո՛ւր գնացին :

Պ . Իսկ իտրայէլացիք իբր չորս հարիւր  
տարի եգիպտոս կենալէն ետեւ , և իբր  
հարիւր տարի այն խիստ ծառայութիւնը  
քաշելէն ետեւ անցան ծովէն այնպիսի  
հրաշքով , և գնացին անապատ , որ անց-  
նին երթան աւետեաց երկիրն , որ շատ  
հեռու չէր . սակայն ապերախտ և արարն-  
ջող ըլլալնուն համար քառսուն տարի  
անապատին մէջ մոլորեցան մնացին :  
Թէպէտ ան մովսէս մարդարէին ձեռօք  
շատ հրաշքներ ըրաւ . մանանայ տվաւ  
հացի տեղ որ ամէն կերպ համ ունէր .  
լորամարդի տվաւ մսի տեղ , և ապառա-  
ժէն պատուական ջուր բզխեցուց . բայց  
միշտ կը տրտնջային . ուստի պատիժն  
ալ ետեւէն կուտար , չարաչար կը ջար-  
գըվէին , մինչև ամէնքն ալ մեռան միայն  
յեսու և քաղէք մտան աւետեաց եր-  
կիրը :

Հ . Ո՛վ էր յոք երանելին :

Պ . Էր իշխան և թագաւոր եգոմայ՝  
թուոն եսաւայ . որ մարդարէական հող-  
ւով և սքանչելի առաքինութիւն լցեալ  
ըլլալով զարմանալի համբերութեամբ  
չարչարվեցաւ սատանայէն ու չյուսա-

հատեցաւ . այլ միշտ փառք կուտար անոր համար հարիւր եօթանասուն տարի ալ կեանք տվաւ իրեն անձ . առաջինէն աւելի փառաւորեցաւ , որ էր ժամանակակից մովսէսի . իսկ երբոր այննեղութիւնները քաշեց եօթանասունըութ տարւան էր . որ եղաւ օրինակ անձաշտութե , և համբերութե : Արդ՝ յոբ երանելին համբերութեամբ փառաւորեցաւ . իսկ հրէայք տրանջալով՝ կորան յանապատին մէջ . հիմա այս շաբթու մտածենք թէ որոն հեռակինք պիտի . թէ որ հրէից նման փոքր բանի համար թերեհաւատելով տրանջանք , անոնց նման պատուհասելով յաւիտեան կը կորսըվինք . իսկ եթէ յոբ երանելոյն համբերութեն հեռակինք , անոր նման կը փառաւորինք թէ հոս , և թէ յերկինս . ըստ այնմ . Զհամբերութե յոբայ լուարուք : Երանեալ է այր , որ համբերիցէ փորձանաց . զի եթէ ընտիր ևս գտանիցի , առցէ զպսակն կենաց . զոր խոստացաւն սիրելեաց իւրոց :

## Զ. ԿԻՐԱԿԻ

Հ . Երբ առին պատուիրան :

Պ . Իսրայէլացիք իրեք ամիս երթալէն ետե երբոր սինա լեռն հասան , մով-

սէս լեռն ելաւ՝ հրեշտակն ան կողմանէ  
 հետը խօսեցաւ ; ուխտ դաշինք ըրաւ ,  
 եթէ ժողովուրդն ան պատուիրանները և  
 օրէնքները պահեն՝ կըլլան ընտրած ազգ  
 և ամէն ազգաց վրա կը զօրանան : Երբոր  
 մովսէս վար իջաւ այս պատուիրանները  
 պատմելով ժողովուրդին ամէնքն ուրա-  
 խացան : Ուստի նորէն ելաւ լեռն . ժո-  
 ղովուրդը տեսաւ որ լեռան գըլուխն  
 լուսափայլ ամպերով գոցված էր , ուր  
 սոսկալի կայծակներ և որոտումներ կըլ-  
 լար : Եւ ահա ամպերուն մէջէն ահաւոր  
 ձայն եկաւ , որ անձային պատգամները  
 կը պատմէր . ինչպէս պիտի յայտնենք  
 իր տեղն : Տէս ի՞նչ . կիր :

Հ . Մովսէս մարգարէն ի՞նչ ըրաւ .

Պ . Մովսէս ամէն պատգամն լսելէն  
 ետև , առաւ քարեղէն երկու տախտակ-  
 ներն , որոնց վրա ան տալաւ որեց տասը  
 պատուիրաններն , և բերելու ատենը՝  
 հեռուէն ձայներ լսեց խառվեցաւ . զի  
 անհաւան ժողովուրդք տեսան որ մով-  
 սէս ուշացաւ չի դար , ոտք կոխեցին ա-  
 հարոնին , որ իրենց կուռք շինէ . ահա-  
 ընն տեսաւ որ ճար չի կայ , զինքը պիտի  
 մեռցընեն . ասաց որ կնիկներուն ոսկիէ  
 զարդերը ժողվէն բերեն . կը յուսար ,  
 որ կնիկները դէմ կը կենան չեն տար ,  
 ինքն կազատի այն չարիքէն . բայց կատ-  
 ղած ժողովուրդը շուտմը դնաց ժողվեց  
 զարդերը բերաւ . որ հալեցին հորթ մի  
 շինեցին և սկսան պաշտել և խաղալ խըն .

գալ հեթանոսներուն պէս: Երբոր մովսէս եկաւ ժողովուրդն ասանկ գտաւ, անանկ բարկացաւ խռովեցաւ, որ այն քարէ տախտակներն գետինը զարկաւ կտարեց. և շատ մարդ անատենն իրար ջարդեցին մեծապէս պատուհասեցան. և այն հորթը փշքելով մանրեց մովսէս ու ջուրը լեցուց ժողովուրդին խմցուց. որպէս զի ոսկիին մանրութիւն իրենց աղակտուութեանը մէջ տեսնելով ամբշնան, և հասկընան թէ ինչ էր պաշտածնին: Մովսէս չի կեցաւ նորէն լեռն ելաւ. Ի՞նչ ժողովուրդին զղջումն ընդունելով մովսէսի գրել տվաւ նոյն պատուիրաններն զսկեց ժողովուրդին:

Հ. Երբ շինվեցաւ տապանակն:

Պ. Նոյն ժամանակն Ի՞նչ հրամայեց մովսէսի որ մեծագործ տապանակ մի շինէ նոյն պատգամներուն տախտակներն մէջը դնելու համար: Ուստի իջաւ լեռնէն և բեւեռելէ ճարտարապետին հասկըցնելով շինել տվաւ Ի՞նչ ուղած ձևովն. բայց նախ շինեց խորանն վկայու, թեան պզտի աղօթարանի ձևով. յետոյ տապանակն ալ շինվեցաւ կարծր փայտէ եօթն ամսըւան մէջ՝ սնտուկի ձևով բարձր՝ կանգուն ու կէս. երկայն՝ երկու կանգուն ու կէս, և լայն՝ կանգուն ու կէս. ներսն ու դուրսն էր ոսկիապատ. իսկ վրայի խուփը բոլոր ոսկի էր. վրան ոսկիէ թափած երկու քառաթեւեան հրեշտակներ կային. որոնց մէջէն

անձ կը խօսէր : Մէջը գրաւ պատգամին  
 տախտակներն , և այն տված օրէնքներն  
 գրած , ոսկի ամանով մանանայն , և ա-  
 հարոնի գաւազանն որ ծաղկեցաւ հրաշ-  
 քով : Այս տապանակն էր հրաշալի , որ  
 գրին ներսի կողմն խորանին վարագու-  
 րով գոցած . ուր միայն քահանայապե-  
 ար կը մտնէր տարին մէկ անգամ :

Հ . Խորանին մէջ ինչ կար :

Պ . Խորանին մէջն ալ երկու սեղան  
 շինեցին . մէկն էր անփուտ փայտէ ոս-  
 կիտապատ , և կըսվէր սեղան առաջաւո-  
 րութե . ուր միշտ տասներկու քաղաք  
 կար անուամբ տասներկու խորայէլեան  
 ցեղից , և մէկալը՝ սեղան խնկոց . ուր ի-  
 րիկուն առաւօտ խունկ կը ծխէին քա-  
 հանայք . և հոն կը դնէին այն տրված ըն-  
 ծաները : Գուրսն ալ ուրիշ սեղան մի  
 կար , որուն վրա ողջակէզ կընէին կայ-  
 րէին . ուր աշտարակներ և շատ կանթեզ-  
 ներ կային : Իսկ առաջաւորութե սե-  
 ղանին առջին ամէն գիշեր եօթը լաստե-  
 րով կը վառէր մեծ ջահն ոսկի : Այս ա-  
 մէն զարդերն և տապանակն սբ ձէթով  
 օծեց մովսէս և այն ընծայ ըրաւ : Յետոյ  
 ահարոնին ալ քահանայական ըզգեստ  
 շինեց հանգերձ բուրվատով , և այլ ըս-  
 պաններով . որ հագաւ եղաւ քահանայ  
 բոլոր իր ցեղովն . որոնք ղևտազի կըս-  
 վէին ղևի նահապետին ցեղէն ըլլալնուն  
 համար . որ որդւոց որդի կը ծառայէին  
 տապանակին :

Հ. Ի՞նչ հրաշք կըլլար :

Պ. Ամէն բան կատարվելէն ետև Եժ  
Ժածկեց ամպով խորանն վկայութեան,  
և եղաւ հրաշքի տեղ: Երբոր ճամբայ  
սլտի ելլէին՝ այն ամպն վրայէն վեր կը  
վերնար՝ Ժողովուրդն այս հրաշքը տես-  
նելով կը միանային կերթային. և երբ  
տեղ մի բանակ սլտի ընէին և կենային,  
բանակին մէջ տեղը կը դնէին, նորէն  
ամպն ժածկելով գիշերը լոյս կերևնար  
վրան: Երբոր սլտանութի կունենային  
մովսէս կերթար տապանակին առջև՝ կը  
հարցնէր. նայիս Եյ կողմանէ ձայն կու-  
գար, և անպակաս հրաշքներ կըլլար  
ղարմանալի:

Հ. Ի՞նչ եղաւ տապանակն:

Պ. Հէզի քահանայտալեան ժամա-  
նակն, երբ անոր որդիքն քահանայք,  
նաև Ժողովուրդ անկարգութե հեռու-  
ցան՝ Եժ բարկացաւ. այլազգիներն յաղ-  
թեցին հրէից և գերի ըրին տապանակը  
տարին սլտուով իրենց գագոն չԵժին.  
կռատունը գրին. բայց զղարմանալի հրաշք-  
ներ եղան հոն. զի կուռքն ընկաւ վշրե-  
ցաւ. և կռապաշտներն սլտուհասե-  
ցան զանազան ցաւերով. որոնք անանկ  
զարհուրեցան՝ որ տապանակը հանդերձ  
ընծաներով սայլին վրա գրին. եկաւ  
ինքնիրեն զևտացոց քաղաքը կեցաւ սայ-  
լը, և տարին տապանակն ամինադաբայ  
տունը գրին: Ժամանակէն ետև երու-  
սաղէմայ առջև կործանման ատենն երե-

Միտ մարդարէն գրաւ տապանակն ան-  
 ծանօթ այրի մի մէջ և դուռը փակեց՝  
 հոն թողուց, և մնաց ծածուկ կամ ա-  
 ներևոյթ. վասն զի յետոյ գնացին վարն-  
 տըռեցին, չի գտան տեղը. ինչպէս կը  
 գրէ մակաբայեցոց գրքին մէջ :

Հ. Խորայեւացիք ինչ եղան :

Պ. Իրենց մեղացն համար քառսուն  
 տարի անտապախին մէջ ստորակեցան, մինչև  
 եգիպտոսէն ելլողները մեռան. յետոյ  
 ահարոն ալ մեռաւ. մնացին մովսէս,  
 յեսու, և քաղէբ: Երբոր եկան յորդա-  
 նան գետին մօտ, մովսէս ելաւ նաբաւ  
 շերան վրայէն աւետեաց երկիրը տեսաւ:  
 Ուր ամէն բան յեսուին յանձնելէն ետև  
 մեռաւ հարիւր քսան տարւան. բայց  
 գերեզմանն անյայտ եղաւ. որպէս զի  
 խորայեւացիք չի պաշտեն: Այս նբ մար-  
 դարէս կըսվի ընտանի նոյ, նծամերձ,  
 կամ նծատես. անոր համար լուսաւորած  
 էր դէմքն, մարդ երեսը չէր կրնար նայել.  
 Երեսը բարակ շարով գոցէր անանկ կերև-  
 նար ժողովուրդ ին, և մինչև մեռաւ՝ վրան  
 ծերութե՛ն նշան չերևցաւ :

Հ. Ե՞րբ մտան աւետեաց երկիրն :

Պ. Յեսու մովսէսի տեղն անցնելով  
 եղաւ առաջնորդ ժողովրդեան և անցուց  
 զանոնք յորդանան գետէն անդին, և  
 տասներկու ցեղին բաժնեց տվաւ աւե-  
 տեաց երկիրներն երուսաղէմայ: Սակայն  
 շատ սպառեալով ըրաւ յաղթեց այն կող-  
 մի աղգերուն, և լաւ կառավարելով տե-

զաւորեց ժողովուրդն մինչև մեռաւ. նաև իւր իշխաններն ալ մեռան. ժողովուրդն սկսաւ կռապաշտութիւնել. մինչ զի՝ անձ բարկանալով զիրենք գերի ըրաւ այլազգիներուն :

Հ. Ո՞վ են գատաւորք :

Պ. Յետուէն ետև ժողովուրդին գլուխ եղօյները գատաւոր կոչվեցան. զի կառավարելով կը գառէին ժողովուրդն : Արդ՝ ութ տարի խորայեւացիք գերի ըլլալով զղջումըրին գործած մեղքերուն վրա, անձամբարին ողորմելով զիրենք ազատեց գոթոնիէլի ձեռամբ, որ եղաւ առջի գատաւոր երսունըութ տարի յետուէն ետև : Անկէետև եղան գատաւոր աւովգ, դէբորա, բարակ, գէգէոն, յեփթայէ, սամսոն ևն. որուն ժամանակակից էր քաջն հերակլէս. և այս միջոցս առնուելու արոյա : Իսկ վերջի գատաւորն եղաւ սամուէլ մարգարէն, որ ամենէն աղէկ կառավարեց ժողովուրդն :

Հ. Ե՞րբ եղաւ թագաւորութիւն :

Պ. Սամուէլ մարգարէին օրն խորայեւացիք թագաւոր ուղեցին, որ զիրենք կառավարէ. ուստի առջի թագաւոր օծեց իրենց սաւուղ կիսեան, որ հասարակ մարդու զաւակ էր, բայց թիկնաւէտ զօրաւոր մարդ կերևնար : Եւ այսպէս գատաւորութիւր վերցաւ թագաւորութի եղաւ : Իսկ սաւուղ ժամանակ մի թագաւորութի ընելէն ետև անյ սպառնիրանները մտնալով անարգ վե-

ցաւ . բոլոր յաջողութիւնը կորսընցնելով  
ակար և անպիտան եղաւ . նաև չար գործ-  
քերով դիւահարեցաւ :

Հ . Ե՛րբ թագաւորեց դաւիթ :

Պ . Սամուէլ մարգարէն բոլորովին  
երեսէ ձգեց սաւուղ , և այն հրամանաւ  
թագաւոր օծեց դաւիթ մարգարէն , որ  
այն պատուիրանացն հետեւելով ոչ միայն  
հոգւով նբւիլ լեցվեցաւ և մարգարէանա-  
լով սաղմոսն երգեց , այլև շատ զօրացաւ  
և փառաւորեցաւ : Մարգարէացաւ յնի  
գալստեան համար , թէ պիտի դայ իր  
ցեղէն . իսկ որդին սողմոնն իրմէ ետև  
նստաւ թագաւոր տասւերկու տարւան ,  
և խաղաղասէր ըլլալով լի եղաւ փարթա-  
մութիւն և իմաստութիւն . մինչև շինեց ե-  
րուսապէմայ տաճարն եօթը տարւան  
մէջ , չորսհարիւր ութսուն տարի եգիպ-  
տոսէ ելլելէն ետև : Այնչափ սքանչելի  
մեծագործ էր այս տաճարն , որ չէ եղած  
աշխարհիս վրան ասանկ շէնք . ուր կային  
զանազան պայծառ սրահներ և գաւիթ-  
ներ , աւազաններ և տաշտեր . բիւրաւոր  
ոսկի արծաթ ամաններ և բուրվառներ .  
միայն քսան հազար ոսկի աման կար :  
Ճեմ . 552 :

Հ . Սողմոնն ի՞նչ եղաւ :

Պ . Սողմոննին երիտասարդութե գործ-  
քերը շատ գովելի են . սակայն ետքերը  
կնիկմարդոց խելք տալով անկարգ բա-  
ներու հետեւեցաւ , և անով այն երեսէն  
ընկաւ . թէպէտ վարդասպետները կը հաւ

տասուն թէ ապաշխարելով մեռաւ: Առ-  
բովամ որդին տեղն անցաւ. որ անմիտ  
ըլլալով և ծերոց խորհրդին չի հեռակելով  
մորութիւն տկարացաւ. և անձային յաջո-  
ղութիւն իրենցմէ վերցաւ. մինչ զի՝ տաս-  
ւերկու կտոր բաժնը վեցաւ թագաւորու-  
թիւր. տասն մասին խրայէլի թագա-  
ւորները կը տիրէին. միայն երկու մա-  
սին սողոմոնի ցեղէն յուգայի թագա-  
ւորները կը տիրէին. որոնք միշտ կու-  
սլաշառութե հեռակելով՝ այ սլաութն ալ  
վրաներէն սրահաս չէր միշտ. ինչպէս էր  
աքաղ, մանասէ ևն: Սակայն ան որորմե-  
լով անսլահաս մարդարէ կը զրկէր իրենց  
որ խրատվին. ինչպէս էր եղիա, եղիսէ,  
եսայի, երեմիա, ևն. սակայն ինչ շահ էր-  
բոր լսող չի կայ. փոխանակ խրատելու  
մարդարէները ջարդեցին:

Ահա այսպէս է խստատրտութի մար-  
դոյ. երբ այ խնամքը կը տեսնէ, աւելի  
կը չարանայ. անոր համար ասաց մարդա-  
րէն. Արդիք մարդկան՝ մինչև յէրբ էք  
խստասիրաք. ընդէր սիրէք զնանրութի:  
Բայց արդարութիւն այ շուտ սլատու-  
հասեց անոնց անօրէնութիւն. ինչպէս  
եկած կիրակի կը լսէք: Մեծ խրատ է  
ամենուհի՝ նաև սողոմոնին գործքն որ  
սիրան աշխարհի տալով ինչպէս յամա-  
րեցաւ. խրատըլլայ ծերոց, որ միշտ սկստք  
է զգաստ կենալ, և չի վստահիլ իրենց  
վրա. խրատըլլայ երիտասարդաց, որ եթէ  
աշխարհի մատնէն զիրենք՝ ողորմելի, և

խայտառակ կըլլան. խրատ ըլլայ տղոց, որ  
լաւ սորված բաներնին չի ձգեն, միշտ  
միակերպ բարի ապրին. զի թէ սողմոն  
խաբվեցաւ, ո՞վ կրնայ ապահով ըլլալ. ե-  
թէ ոչ երկիւղածն ւնայ. երանի անոնց, որ  
կը վախնան ստեղծողէն. և երանի անոնց,  
որ ւնայ մարդասիրուիլ ճանչնալով վտան-  
գաւոր առիթներէն կը փախչին: Որով  
ւնայ հոգին չի հեռանար իրենցմէ, և շուտով  
կարգարանան. ըստ այնմ. Անեղծ հոգիդ  
քո է յամենեսին. վասն որոյ զյանցա-  
ւորս առ սակաւ սակաւ յանդիմանես, և  
որովք մեղանչենն յուշ արարեալ խրա-  
տես. զի զերծեալք 'ի ջարեաց հաւա-  
տասցեն 'ի քեզ տէր. ասաց իմաստունը:

### Է. Կ Ի Ր Ա Կ Ի:

Հ. Տրէայք երբ գերի եղան:

Պ. Կռապաշտական բաներէն ետ չի  
կենալով այնչափ յանդգնեցան, մինչև  
մարդարէները մեռուցին ու կուռքեր  
գրին բարձր տեղեր կը պաշտէին, այնչափ  
որ ւնայ բարկութիւն շարժեցին և բոլորովին  
երեսէ ընկան: Ուստի յամի արբահամու  
1/426. նաբուգոգոնոսոր քաղդէացոց  
Թագաւորը գնաց պաշարեց երուսաղէմ  
առաւ. սեղեկիա Թագաւորը կուրացուց  
գերի տարաւ. Իսկ նաբուգարդան գահ-

Ճապեան հինգ ամիսէն ետև այրեց քանդեց սողմոնի շինած այն հիանալի տաճարը չորսհարիւր քառասունէրկու տարի անցնելէն ետև . և հրէաներն դերի տարաւ բաբելոն: Եւ այսպէս վերջացաւ իարայեւացոց թագաւորուն , որ սաւուղէն սկսեալ հինգհարիւր ութը տարի տևեց :

Հ . Ե՞րբ ազատեցան :

Պ . Յամի աշխարհի 3468 ԹՅ պատիժը կատարեցաւ , և եօթանասուն տարին լնրնցաւ , Թժ ամենաբարին հրէից խեղճ ու թիւր տեսնելով կիւրոս թագաւորին սիրտը շարժեց , որ բաբելացոց վրա թագաւոր ըլլալէն ետև հրաման հանեց որ հրէաներն իրենց բաներով ելլեն երուսաղէմ երթան . և այն ժամանակն հինգ բիւր հրէայ գնացին երուսաղէմ ու տաճարին հիմն դրին . բայց մօտակայ ազգերը խափանեցին , գործքը մնաց անկատար մինչև դարեհ թագաւորին օրը . միայն սեղանը կար , ուրիշ բան չի կրցան շինելու : Տաճարը քանդելէն ետև մինչև դարեհ թագաւորին երկրորդ տարին եօթանասուն տարի անցաւ . ահա այս ժամանակը զօրաբարէլ գնաց երուսաղէմ կատարեց տաճարն :

Հ . Ի՞նչ կերպով հրաման տուաւ :

Պ . Թագաւորն օր մի կերած խմած կը քնանար . իրէք ծառաները խորհուրդ ըրին , որ մէյմէկ խեղացի բան գրեն՝ թագաւորին բարձին տակը գնեն , տեսնեն

Թէ արուն բանին աւելի կը հաւնի :  
 Առջինը գրեց թէ ամէն բանէն զօրա-  
 ւոր գինին է : Երկրորդը գրեց թէ ա-  
 մենէն զօրաւոր թագաւորն է : Իսկ  
 զօրաբաբէլ գրեց թէ ամենէն զօրա-  
 ւոր կնիկներն են . և ամէն բանի յաղ-  
 թօղ ճշմարտութիւնն է : Թագաւորն  
 արթըննալէն ետե կարգաց այս թուղթը  
 շատ հաւնեցաւ զօրաբաբէլին խօսքին .  
 մինչև ժողովըրաւ և գիտուններուն առ-  
 ջին հաստատել տվաւ . զօրաբաբէլ գե-  
 ղեցիկ պատճառներով հաստատելէն  
 ետև շատ գանձ առաւ թագաւորէն , և  
 հրաման եղաւ իրեն որ երթայ երուսա-  
 ղէմայ տաճարը շինէ . որ և չորս տար-  
 ւան մէջ կատարեց :

Հ . Հրէայք ունեցան թագաւոր :

Պ . Գերութիւն գառնալէն ետև գլխա-  
 ւոր թագաւոր չունեցան . այլ միայն իշ-  
 խան և քահանայապետ , որ կը կառա-  
 վարէին ազգը Վասն զի աղէքսանդր թա-  
 գաւորէն ետև պողոմէոս եգիպտացոց  
 թագաւորը , կամ սելևկիացոց թագա-  
 ւորները հետզհետէ տիրեցին մինչև ան-  
 տիոքոս եպիփանէս . որ շատ հալածանք  
 և նեղութիւն տվաւ հրէից կռապաշա-  
 րնելու համար . մինչև տաճարին մէջ  
 արամազգին կուռքը գրաւ և ամէն քա-  
 ղաք կուռքեր գրաւ որ պաշտեն : Այն  
 ժամանակն յամի սբրահամու 1850  
 մատաթիա սրբակայ քահանայն էր  
 մովզիխմ քաղաք հինգ որդւով . մա-

կաբէ, շմաւոն, յոհաննէս, եղիազար,  
յովնաթան: Օր մի տեսաւ որ ուրա-  
ցող հրէայ մի կուռքին առջին զոհ կը-  
նէր. սիրար չգիմացաւ զարկաւ ուրա-  
ցողը մեռցուց ու զաւակներով լեռը քաշ-  
վեցաւ. սկսաւ մարդ ժողովել և թա-  
գաւորին հետ ծեծկրվիլ, որ շատ յաղ-  
թութի ըրաւ մինչև որ մեռաւ:

Հ. Ո՞վ անցաւ իր տեղն:

Պ. Քաջն մակաբէ յուգա անցաւ հօրը  
տեղն, և աննման քաջութիւն և բարեպաշ-  
տութիւն ամէն պատերազմի մէջ յաղթեց  
խայտառակ ըրաւ թագաւորը: Նոյն յա-  
ջողութիւն առաւ երուսաղէմ աաճարը  
սրբեց, որ իրէք տարի սղծեք էին կու-  
պաշտութիւն: Ասոր անուամբ մակաբայեցի  
ըսվեցան. որ զարմանալի քաջութիւն ընկաւ  
պատերազմին մէջ, և իրեն տեղն անցաւ  
յովնաթան գլուխ և քահանայապետ  
ազգին, և շատ զօրացաւ, բայց խաբէու-  
թիւն մեռուցին: Ասոր տեղն անցաւ շմաւոն  
եղբայրն, և անոր տեղն յոհաննէս որդին:  
Այս արութի կրավի մակաբայեցոց իշխա-  
նութիւն, որ տևեց մինչև քսի ժամանակը:

Հ. Ո՞վ էր աղկիմոս:

Պ. Աղկիմոս հրէայն՝ քահանայի ցեղէ  
չըլլալով քահանայապետ եղաւ կու-  
պաշտներուն բռնութիւնը մակաբայեցոց  
խռովութեանը. իսկ ոնիա քահա-  
նայապետին որդին ձգեց երուսաղէմ  
գնաց եգիպտոսի արեգ քաղաքն ու ոմա-  
պօլիս քաղաքը շինեց, և մէջը տաճար մի

կանդնեց նման երուսաղէմայ տաճարին :  
Իսկ աղկիմոս պատուհասեցաւ յնոյ, և  
քահանայապետութիւնն անցաւ յուրա  
մակաբէի, որ քահանայական ցեղէ էր :

Հ. Ո՞վ էր արխատաբուզոս :

Պ. Էր որդի յոհաննէսին, որ հօրն  
յաջորդելով անւանեցաւ քահանայա  
պետ և թագաւոր հրէաստանի. որուն  
յաջորդեց էլբայրն յանէոս աղէքսանդ  
րոս. և ասոր յաջորդեց իւր կիկնն աղէքսան  
դրա : Անկէեաւ արխատաբուզոս և հիւր  
կանոս իրեն որդիքն իրարու հետ իյնելով  
կործանեցին տէրութիւնը. որոնք չէին  
իրենց նախնեացը նման քաջ և արդար .  
անոր համար հռոմայեցիք առին երու  
սաղէմ, և օտարները զօրացան իրենց  
վրա. ուստի հրէաստան բաժնրվեցաւ  
չորրորդապետութիւն. իսկ հիւրկանոս գերի  
եղաւ հայոց թագաւորին. և ապա գե  
ղով մեռաւ հերովդէսին չարութիւնը :

Հ. Ո՞վ էր հերովդէս :

Պ. Հերովդէս էր ասկաղոնացի հե  
թանոս անգիպատրոսի որդին, որ էր  
աննշան. բայց հռոմայեցոց ուժովն ա  
ռաջ եկաւ. և մտաւ տէրութիւն բանե  
րու մէջ. քիչ քիչ խորամանկ խաբէութիւն  
գալիլիայի կողմին տիրեց հռոմայեցոց  
իշխանութիւնը. զի անատենը բողորովին  
հռոմայեցիք տիրած էին հրէաստանի. և  
հերովդէս իշխան ըլլալով զօրացաւ, և  
հրէից սիրաբ շահելով հրէայ ձեւացաւ .  
որպէս զի քահանայապետութիւնն ալ

յափշտակէ, ահա ասոր ցեղէն տիրեցին մինչև երուսաղէմայ կործանումն :

Հ. Ինչպէս վերջացաւ քահանայապետութիւն :

Հ. Հոկտաւիոս կայսեր թագաւորութե տասներորդ տարին հերովդէս բռնացեալ յափշտակեց քահանայապետութիւն. բայց ինքն հեթանոս ըլլալով աննշան մարդ մի իր տեղը քահանայապետ կը դնէր սուանց օժման, և բոլոր քահանայապետներուն ցեղը ջարդեց : Սակայն անտիգոնոս մակաբայեցին հայոց տէրութե ուժովն եկաւ երուսաղէմ, հալածեց հերովդէս ու ինքն եղաւ քահանայապետ և թագաւոր. այլ անըզգամ հերովդէս նորէն դարձաւ հռոմայեցոց զօրքով բռնեց մեռցուց անտիգոնոսը. որ եղաւ վերջի իշխան յամի աշխարհի 3999 : Եւ այսպէս վերջացան օծեալ առաջնորդներն և քահանայապետներն, որ դարեհի ժամանակէն սկսան իշխան ըլլալ հրէից, և տևեց չորս հարիւր իննսուն տարի, ինչպէս մարգարէացեր էր դանիէլ մարգարէն, թէ այսչափ տարիէն ետև բարձցի օծումն : Ահա այս հերովդէսի օրը փրկիչն եկաւ աշխարհ քահանայապետ յաւիտենից, ինչպէս մարգարէացեր էր յակոբ նահապետ : Մի սակասեացէ իշխան յուգայմինչև եկեացէ փրկիչն, որ է ակնկալութի հեթանոսաց : Ահա հոս կատարեցաւ անձային խօսքը՝ թէ զփառաւորիչս

իմ փառաւորեցից, և ով որ ապերախտ  
 կըլլայ, անարգեացի. վասն զի ԹՅ կարօտ  
 չէ մարդու ծառայութե. Եթէ ստեղծո-  
 ղին բարիքը ճանչնանք և ծառայենք՝ կը  
 փառաւորինք և կը մեծնանք շնորհօք.  
 Թէ չէ՝ անարգ դատապարտելի կըլլանք  
 հրէից նման: Սակայն Եթէ ԹՅ չի խնայ-  
 ւոյ սիրելի Ժողովուրդն այսպէս երեսէ  
 ձգեց. հասցա մենք որ ապերախտ ըլ-  
 լանք՝ քանի՞ մեծապէս սխալի դատա-  
 պարտինք: Ուստի բոլոր այս շարթու-  
 պէտք է այս բանիս վրա մտածենք և  
 սարսափինք: Այնչափ հրաշքներ, ԹՅ  
 խօսութիւններ, նահապետներ, և մարդա-  
 բէներ օգուտ մի չբերին ապերախտ ազ-  
 գին. այլ բոլորն անօգուտ եղան: Ահա  
 որդին միածին առաքեց՝ ասելով. Թերևս  
 ամաչեսցեն յորդոյ իմմէ և դարձցին և  
 բժշկեցից զնոսա. բայց անոնք այս ան-  
 սահման շնորհացն ալ ապերախտ եղան:  
 Անոր համար երեսէ ձգեց զանոնք ու  
 զմեզ ըրաւ իրեն ժողովուրդ. որպէս զի  
 վառվինք ԹՅ ային սիրովն ու բարի գործ-  
 քով փառաւորենք բարեգութ և ոլոր-  
 մած հայրն մեր, որ յերկինս է:

Հ. Երբ ծնաւ փրկիչն :

Պ. Աշխարհիս ստեղծմանէ չորս հազար տարի անցնելէն ետե ըստ ժամանակագրաց, իսկ սահմանած ժամանակն հասաւ, մարգարէներուն գրած ժամանակն եկաւ կատարեցաւ : Ադամայ և արբահամու խոստացած մեծիա փրկիչը ծնաւ բանն ինքն ինքն կուսէն ինքն ինքն թէ ինքն ինքն հրէաստանի հերովդեսի օրն՝ ինչպէս գրած կայ հրէից թալմուտին մէջ թէ ուսոյց տունն ելիայի, թէ աշխարհա վեց հազար տարի պիտի մնայ. երկու հազարը պիտի ըլլայ բնական օրէնք. երկու հազարը մովսիսական օրէնք. և երկու հազարը մեսիայի օրէնք : Ահա նոյն չորս հազար տարին կատարեցաւ, մեսիայն ծնաւ ի քառսուն և երկու երրորդ ամի օգոստոս կայսեր. և երսուն և երկու երրորդ ամի թագաւորութեան հերովդեսի. նաև արբահամէ մինչև քն երկու հազար տասնըհինգ տարի անցեր էր. և ադամէն ըստ եօթանասնից թուին հինգ հազար հարիւր իննսունընը տարի : Այս հաշուով վեցերորդ գարուն եկած կըլլայ քն ըստ այնմ. իսկ նորդ ադամ ի վեց գարուն այց արարեր կորուսելոյն : Հնարտանցոց գրեանց մէջ կայ այսպիսի աւանդութի. Անուանի օձ մի պահապան գոլով ծառոյն անմահութեան, որ ի պար-

տիպին Շօքքան, չարացեալ եհեղ ըզ-  
թոյնս, և թունաւորեաց զամենայն մար-  
դիկ, մինչ զի՝ ոչ ոք կարաց զերծ լի-  
նել. բայց Շիվան Կժ՝ գթացեալ ՚ի  
բնութիւն մարդոյ երևեցաւ ընդ աե-  
սակաւ մարդոյ, և մաքրեաց զամենայն  
թոյնս. որով օձն չար ապականեալ էր  
զաշխարհ :

Հ. Ե՛րբ յայտնեցաւ :

Պ. Ինչպէս հեթանոս պատմիչները  
կը պատմեն՝ յնի ծննդեան ժամանակ-  
ները շատ զարմանալի ցուցանիք կըլլար,  
երկինքը բաներ կը աեննէին. որպէս էր  
նաև այն հրաշալի աստղն, որ աստեղա-  
բաշխ մոգերուն երևնալով հրաւիրեց  
զանոնք, որ եկան արևելքէն երկրպա-  
գուծի ըրին նորածին թագաւորին. և  
անով յայտնի եղաւ կամ Կժ յայտնե-  
ցաւ : Սակայն անօրէն հերովդէս լսե-  
լով այս հրաշքներն հասկըցաւ որ մեծ  
բան կայ. վախուռն չարացաւ, և զրկեց  
բեթլէհէմի երկու տարիէն վար եղած  
տղաքը շարդեց : Այս պատճառաւ յնը  
փախուցին եգիպտոս, և յոհաննէսը ա-  
նապատ. որ վեց ամիս առաջ ծնած էր  
զաքարիայէն և եղիսաբէթէն :

Հ. Ե՛րբ մկրտեցաւ :

Պ. Տիբերեայ կայսեր տանը հինգե-  
րորդ տարին. երբ պիղատոս և երկրորդ  
հերովդէս վերականգու էին հրէաստան  
հռոմայեցոյ կողմանէ, յոհաննէս մկրտ-  
տիչ անապատէն եկաւ սկսաւ քարոզել

և աւետիա տալ ամենուն , թէ օծեալն  
 փրկիչ՝ ձեր մէջն է : Այն ժամանակն յն  
 գնաց յորդանան յոհաննէսին , և մկրտ-  
 վեցաւ իր ծառայէն ու սատանային  
 գլուխը ջախջախելով մկրտութե խոր-  
 հուրդն հաստատեց : Եւ ահա բացվե-  
 ցաւ երկինքն . հոգին նբ աղաւնիի ձևով  
 երևցաւ . ձայն եկաւ վերէն . Դա է որ-  
 դի իմ սիրելի : Անկէտե սկսաւ յն  
 քարոզել հրէաստան կենարար վարդա-  
 պետութիւն , և անձեղէն հրաշագործու-  
 թիւն ընելով աշխարհ լուսաւորեց :

Հ . Ե՞րբ ժողովեց առաքեալներն :

Պ . Եկեղեցնայ հիմը գնելու համար  
 տասուերկու առաքեալ ժողովեց ու իրենց  
 յայանեց խորհուրդն արքայութեան , և  
 տվաւ շնորհք հրաշագործութե . որոնց  
 գլուխ դրաւ պետրոս առաքեալ ասե-  
 լով . Դու ես վէմ , և ՚ի վերայ այդը վիմի  
 շինեցից զեկեղեցի իմ : Եւ այս քարո-  
 զութիւն որ սկսաւ ընել յն էր իբր եր-  
 սուն տարւան , և միշտ ամենուն բարե-  
 րարութիւն ընելով հիւանդները կառող-  
 ջացներ և մեռելներուն յարութի կու-  
 տար : Սակայն անօրէն հրէ սներն աստա-  
 ւոր մոլի ըլլալով չէին ուղեր յն խրատ-  
 ները լսել . այլ կեղծաւոր փարիսեցի-  
 ներուն հետ միանալով կուզէին կեր-  
 պով մի յն դատապարտեն վերջնեն ի-  
 րենց մէջէն :

Հ . Ե՞րբ խաչեցաւ :

Պ . Արարիչը սահմաներ էր որ բանն

ԹՅԺ մարդկային մարմնով յաղթէ սատա-  
 նայի բռնութեն . թոյլ տվաւ անօրէն  
 հրէաներուն , որ չար կամօք գնացին  
 պիղատոսի մատնեցին : Եւ գտան իրենց  
 յարմար անօրէն յուգան , որ տասւեր-  
 կու առաքեալներուն մէկն ըլլալով մատ-  
 նիչ եղաւ յնի . վասն զի հրէաներէն  
 գրամ առնելով խօսք տվաւ սր գիշերն  
 երթայ միատեղ մասնէ բարերար վար-  
 դապետն . որովհետև չկատին թէ ուր  
 է . և զինուորները չէին ճանչնար : Ուստի  
 աւագհինգշաբթի վերնատան մէջ զատիկ  
 ընելով գառը կերան , և յն խորհուրդ  
 հաղորդութեն հոն հաստատեց . յետոյ  
 գեթսեմանի սլարտիղին մէջ քաշվեցաւ  
 երբոր աղօթք կրնէր , յուգա անօրէննե-  
 րուն առաջնօրդ ըլլալով գնացին հոն  
 զէնքերով բռնեցին յն և չարչարելով  
 տարին կայիափայի , և պիղատոսի պալա-  
 տը . ուր սկսան չարչարել առանց քննու-  
 թեան . նախ ձողկեցին , սպտակեցին ,  
 փուշ պսակ դրին գլուխն . և ապա պի-  
 ղատոս հրէից հաճոյ ըլլալու համար վը-  
 ճիւռ տվաւ , որ տարին գողգոթայ խաչը  
 հանեցին , ինչպէս որ մարդարէք մար-  
 դարէացեր էին :

Հ . Ի՞նչպէս աւանդեց հոգին :

Պ . Մեծամեծ հրաշքներով , բարձր  
 ձայնով իբր տէր՝ կամաւորապէս աւան-  
 դեց հոգին խաչին վրա : Երկիրս շարժե-  
 ցաւ , և վէմք պատառեցան , արեգակը  
 խաւարեցաւ , և բոլոր սազմոսին մարդա-

րէութիւնը կատարվեցաւ : Եւ ինչպէս  
 եւսեբիոս կը վկայէ թէ գտանք հին գը-  
 րեանց մէջ յունաց, որ քնի ժամանա-  
 կին կը սպատասխանէ : Բիւթանիա տա-  
 տիկ շարժ եղաւ . նիկիոյ մեծ մասն կոր-  
 ծանեցաւ . մեծ խաւարում եղաւ ա-  
 րևու : Յորեկւան վեցերորդ ժամուն  
 գիշեր եղաւ՝ ասողերն երևցան : Նոյն-  
 պէս կը սպտմէ յովսէպոս հրէայն . քա-  
 հանայք տաճարին մէջ սոսանեցան .  
 ձայն եկաւ, որ կըսէր . գնամք աստի,  
 գնամք աստի :

Հ . Երբ թաղվեցաւ :

Պ . Աւագ ուրբաթ իրիկուն յովսէփ  
 արեմաթացին, որ իշխան էր հրէից և կը  
 հաւատար քնի, գնաց հրաման առաւ  
 սիլվատոսէն . յնի մարմինը խաչէն վար  
 առաւ և մեծ սպտուով գերեզման  
 դրաւ : Իսկ մահուանէ ետև յնի հողին  
 իջեալ լիմպոս արդարներուն հողին ա-  
 զատեց, որ ագամայ մեղաց համար սա-  
 տանային գերի էին եղեր . վասն զի Խժ-  
 ութիւր միշտ անբաժանելի էր հողիէն և  
 մարմինէն :

Աւստի երրորդ օրն յարեաւ 'ի մեռե-  
 լոց . և շատ նբց մարմիններն ալ միատեղ  
 յարեան . որոնց գերեզմանները բացվե-  
 ցան յնի մեռած ատենը : Նոյն օրն երև-  
 ցաւ յն տիրամօրն և առաքելոց, մխի-  
 թարեց զամէնը : Նաև քառսուն օր աչ  
 խարհիս վրա կենալով ամէն խորհուրդ-  
 ները սորվեցուց առաքելոց : Ապա խոս-

տանալով իրենց հոգին նք համբարձաւ  
երկինքը ձիթենեաց լեռնէն, և նրա-  
տաւ հօր այ աջ կողմն՝ տէր գոլով երկ-  
նի և երկրի, ինչպէս սաղմոսը մարգա-  
րէացեր էր :

Հ. Երբ եկաւ հոգին նք :

Պ. Զատիկէն յետուն օր անցնելէն  
ետեւ, ինչպէս որ խոստացեր էր փրկիչն  
առաքեց միսթարիչ առաքելոց և ընդ-  
հանուր աշխարհի հոգին նք. երբոր վեր-  
նատան մէջ նստած աղօթք կրնէին պէն-  
տէկոստէին օրն, յանկարծ սաստիկ հո-  
վի նման ձայն եկաւ երկինքէն, և ամէն  
առաքեալներուն վրա երեցաւ հրեղէն  
լեզու. որ էր նշան շնորհաց հոգւոյն սրբ-  
բոյ, որով առաքեալները լեցվեցան, և  
մէկէն սկսան զանազան լեզուներ խօսիլ  
զարմանալի անբանելով. մինչև ամէն-  
քը զարմանային կը մնային կարծելով  
թէ գինով են : Բայց երբոր պետոս ա-  
ռաքեալ սկսաւ քնի գալստեանը վար-  
դապետութիւն ընելով քարոզել և պա-  
տասխանել հրէաներուն այնպէս գեղե-  
ցիկ. որ նոյն օրն իրեք հազար հոգի դար-  
ձան քրիստոնեայ եղան, և քնի եօ-  
թանասուններկու աշակերտներուն հետ  
միացան : Այս քրիստոնեաներուն ամէն  
բանն էր հասարակաց. այսինքն ով որ  
ինչ ունէր կը բերէր առաքելոց կուտար,  
և իրեն ինչ ապրուստ որ պէտք կըլլար՝  
առաքեալները կը հոգային. ուստի ամէն  
քրիստոնեայ էին միասիրտ և քնի սիրովն

իրարու հետ կապված միամիտ անձապաշտութեամբ :

Հ . Ե՞րբ սկսան ցրվիլ :

Պ . Քիչ ժամանակի մէջ առաքեալներն այնչափ հրաշքներով քարոզեցին հրէաստան . մինչ զի հիւանդները և մեռելները ճամբաներուն վրա կը դնէին , որ առաքեալներուն շուքը դպչի , և անով կառողջանային : Ուստի ինչպէս վկայեցին հրէաները՝ բոլոր երուսաղէմ լեցվաւ քնի վարդապետութիւն : Անկէ ետեւ ելան առաքեալներն հողւոյն սրբոյ ազդեկութիւն ամէն մէկը մէյմէկ աշխարհ գնացին քարոզութիւն լուսաւորեցին . ումանք մօտաւոր տեղեր , ոմանք հեռավոր : Եւ այսպէս քիչ ատենի մէջ քնի սբ հաւատքը ծաւալեցին և տասերկու խաչապաշտները լուսաւորելով եկեղեցին հաստատեցին : Բայց չարը բարւոյն հակառակ ըլլալով հրէայք հռոմայեցոց ձեռքով երուսաղէմ հալածանք հանեցին , և աշակերտները շատ նեղեցին . սբ ստեփաննոս քարկոծեցին յամի տեառն 3/4 . նաև յակոբոս առաքեալը գլխատեցին : Սակայն ևս առաւել սխալման պաշտեցին անոնց սբ արեամբն , և աւելի ծաղկեցաւ սբ Հաւատքն :

Հ . Ե՞րբ կործանեցաւ հրէից տաճարն :

Պ . Ինչպէս որ եսայի մարգարէն , և բոլոր անձաշունչ մարգարէացեր էր , թէ անձ իր շնորհքը սկստի վերցնէ հրէան .

րէն, հեթանոսներուն պիտի տայ. և յանուն նորա հեթանոսք յուսասցին : Արոնք փրկիչը խաչելով սարտափելի մեղանչեցին և բոլորովին երեսէ ընկան. հեթանոս թագաւորներուն ալ ատելի եղան իրենց ապստամբ բարբոշն : Աւստի յովսէսոս հրէայ պատմիչ այսպէս կը սրտամէ : Հրէայք ապստամբելով վէտապսիանոս հռոմայոս թագաւորէն, տիտոս որդին եկաւ պաշարեց երուսաղէմ. վերջապէս առաւ քանդեց քաղաքը, և տաճարը բոլորովին կործանեց. վեց բիւր հրէայ սովով ջարդեց. և հարիւր վաթսուն բիւր սրով, նաև տասն բիւր գերի բրաւ : Արովհետև զատիկ էր, ամէն կողմէն հրէաներն հոն էին ժողված. որոնք բրածնին գտան չարաչար պատուհասելով. ուստի յնի քարոզուէն ետև քասուններկու տարի անցեր էր մինչև այս կործանումն, և սողումոնի շինութենէն հազար հարիւր իրեք տարի. իսկ քսանըհինգ տարի ետև դոմեաթիանոս կայսրը դաւիթ մարգարէին ցեղը ջարդեց, որ թագաւորական ցեղէն մարդ չի մնայ. որով կատարեցաւ այն խօսքն որ ըսինքնի համար : Արիւն դորա 'ի վերայ մեր, և 'ի վերայ որդւոց մերոց :

Հ. Ո՞վ հանեց հալածանք :

Պ. Հրէաներէն ետև սկսան հեթանոս թագաւորներն հալածելքնի եկեղեցին. բայց շատ անգամ հրէաներուն և քուրմերուն մատնութիւն կը հալած.

վէին աշակերտներն : Սքեկեղեցնայ առ-  
 ջն գլխաւոր հալածիչն եղաւներոն թա-  
 գաւորն հռովմայ. անկէեաւ ուրիշ թա-  
 գաւորներ անպակաս կը հալածէին,  
 մինչև որ կոստանդիանոս թագաւոր հա-  
 ւատաց : Իսկ հայաստան հալածողներն  
 եղան անանկ արգար թագաւորին որ-  
 դին, սանատրուկ, նաև խոսրով արդատ  
 թագաւորին հայրն, որ շուտ պատու-  
 հասեցաւ : Արդ՝ ինչպէս որ եկեղեցին  
 վկայից արեամբն աւելի ծաղկեցաւ,  
 այսպէս քրիստոնեայ հոգին հալածանք  
 և վիշտ քաշելով կը փայլի անձային շնոր-  
 հօք. բայց պէտք է համբերութիւն և հա-  
 մակերպութիւն գրկել այ տված խաչքնը-  
 ման առաքելոյ. վասն զի յսի և սուրբե-  
 րուն քաշածները մեզի խրատ գրվեցան.  
 Եթէ անմեղներն և սուրբերն այսպէս  
 վիշտ քաշեցին մեղաւորաց համար, հա-  
 պա մեղաւորն որ յաւիտենական փր-  
 կութեան համար ինչ որ քաշէ՝ բան չէ,  
 ըստ խրատու տեսան. ինչ ծառայութի  
 որ ընէք զուրցեցէք. ծառայք անպիտանք  
 եմք. զոր պարան էաք առնել, արարաք :

## Թ . Կ Ի Ր Ա Կ Ի

Հ . Ո՞վ էն մարգարէք :

Պ . Մարգարէք էն ինչ պատգամաւոր . որ քարոզիչ կըլլային ինչ կողմանէ և մարգարէանալով կը քարոզէին հրէից ըլլալիքները . նաև կը խոստանային քսի գալուստը . որ հասարակօրէն քսանըչորս կը համրեն . ոմանք հովիւ էին , այլք հոգւով սքով լուսաւորեալ կը մարգարէանային , և ինչ ծածուկ խորհուրդներուն հասու էին : Կան անծանօթ մարգարէներ ալ , որ գրվածք չունին . ինչպէս կը յիշէ սք գիրքը . բայց գլուխ մարգարէից կըսվի մովսէս մարգարէն ինծատես և ինծամերձ , որ եղաւ առաջին գրող ինծաշնչին : Նոյնպէս սամուէլ անուանի մարգարէ և գատաւոր . նաև եղիա , որ վերացաւ մարմնով և պիտի գայ վկայէ 'ի կատարածի աշխարհիս . որուն աշկերան էր եղիսէ հրաշագործ , որ եղիայի կրկին հոգին առաւ , այսինքն մարգարէութե և հրաշագործութեան . և գաւիթ թագաւոր մարգարէն շատ երևելի էր : Իսկ մարգարէութի գրողներուն չորսը մեծ կըսվին իրենց մարգարէութին երկար ըլլալուն համար . որ էն էսայի , որ կըսվի աւետարանիչ մարգարէ . երեմիա , որ քարկոծեցին . եզեկիէլ , և գանիէլ հրաշագործ : Նաև տասներկու մարգարէք ալ կան . որ

փոքր կրավին իրենց մարգարէութիւնը կարճ ըլլալուն համար . զորօրինակ են՝ ովսէէ , յովէլ , ամովս , աբդիաս , յովնան , միքիայ , նաւում , ամբակում , սոփոնիա , անգէոս , զաքարիա , և մաղաքիաս , որ է վերջին մարգարէ :

Հ . Եւ ո՞վ են առաքեալք :

Պ . Առաքեալներն են քսի ընտրած սասուերկու աշկերտներն , որ միշտ փոքրջին հետ միատեղ էին : Թէպէտ տգէտ ձկնորսներ էին , այլ հոգևով սքով լեցված անձային խորին խորհրդոցն հասուեղան , և անչափ հրաշքով աշխարհը սաւորեցին : Գլուխ առաքեալներուն եղաւ պետրոս , և անոր եղբայրն է՝ անդրէաս , յակոբոս զեբեթիայի որդին , և անոր եղբայրն յոհաննէս , փիլիպպոս , բարթոլղիմէոս , թովմաս , մատթէոս մաքսաւոր . յակոբոս ալփեայ , և զէբէոս կամ թադէոս , սիմոն կանանացի , և յուգայ իսկարիովտացի , որ յսի մատնիչ ըլլալէն ետև տեսաւ որ հրէայք պիտի խաչեն վարդապետը՝ յուսահատեցաւ , ինք զինքը խղդեց . վասն զի առաջ կարծէր թէ քս կազատի հրէաներուն ձեռքէն՝ չի խոչովր . չիյտէր թէ ժամանակն հասեր էր մարգարէութիւն պիտի կատարվէր : Ասոր աեզն ընտրեցին առաքեալները մատաթիա , որ եօթանասուներկու աշակերտներէն էր : Իսկ սօղոս առաքեալ կրավի երեքոս , սան առաքեալ քսէ կոչվեցաւ առա-

քեալ՝ անօթ ընտրութե, և երուսաղէմայ  
ճամբան զարմանալի հրաշքով յափըշ  
տակեցաւ մինչև երրորդ երկինքը: Առա-  
քեալներէն ետև աշակերտներն յաջոր-  
դեցին . անոնցմէ ետև նք հայրապետնե-  
րը, և վարդապետներն հեաղհետէ մին-  
չև ցայժմ:

Հ . Որոնք եղան աւետարանիչ:

Պ . Մատթէոս և յոհաննէս առա-  
քեալներէն էին . իսկ մարկոս և ղուկաս  
աշակերտներուն կարգէն . որ եղան չորս  
աւետարանիչ . բայց նախ մատթէոս  
գրեց աւետարանը յնէն ութը տարի  
ետև երբայեցոց լեզուով երուսաղէմ քա-  
ղաքին մէջ, ինչպէս կը դնէ աւետարա-  
նին նախագրութեանը: Յետոյ մարկոս  
գրեց պետրոս առաքեալին հրամանով  
տասնըհինգ տարի յնէն ետև արէքսանդ-  
րիա քաղաքը եգիպտացոց լեզուով: Ղու-  
կաս որ առաջ բժիշկ էր՝ գրեց պօլոս  
առաքեալին հրամանաւ տասնըօթը տա-  
րի յնէն ետև անախոք քաղաքը ասորի  
լեզուով: Իսկ յոհաննէս գրեց աւետա-  
րանը յիսուսելիք տարի յնէն ետև ե-  
փեսոս քաղաքը յունարէն: Ահա ա-  
սոնք հոգւով նքլ աւետարանեցին աշ-  
խարհի քնի նք վարքը և նք վարդապե-  
տութիւնն, որ է վրկութիւն հաւատա-  
յելոց:

Հ . Առաքեղներն ո՞ւր քարոյնցին, և  
ո՞ւր կատարեցան:

Պ . Պետրոս առաքեալ գողով փոխա-

նորդ քնի և դլուխ եկեղեցւոյ՝ նախ  
 ինքն սկսաւ քարոզել երուսաղէմ, և  
 գործակցութիւն առաքելոց շատ լուսա-  
 ւորեց հաւատացեալներն . յետոյ դրաւ  
 երուսաղէմայ աթոռը յակոբոս եղբայր  
 տեառն, որ էր եօթանասունւերկու ա-  
 շակերաներէն: Հրէաստան ամէն քաղաք  
 պարտեցաւ քարոզեց, և շատ հրաշքնե-  
 րով ծաղկեցուց հինգ տարի: Անկէ ետեւ  
 գնաց անախոք եօթը տարի աթոռն հոն  
 հաստատեց, և հովուելով եկեղեցին շոր-  
 ջեցաւ պոնտոս, ասիա, գաղատիա, կա-  
 պադովկիա, ևն . ամէն տեղ քարոզեց:  
 Եւ նորէն դարձաւ անախոք . անկէ ելաւ  
 երուսաղէմ, ուր հրէայք զինքը բանտ  
 դրին, հրեշտակ զինքն ազատեց բանտէն  
 երկնալով գիշերն . որ անկէ գնաց հռոմ,  
 և հոն լուսաւորելով ժողովուրդն աթո-  
 ռը հաստատեց . միչև կղոզիոս թագա-  
 ւորին ատենն, որ հռոմէն հրէաներն  
 աքսորելով՝ պետրոս ալ նորէն եկաւ ե-  
 րուսաղէմ, ուր առաքելոց ժողովին գը-  
 լուխը նստաւ: Յետոյ դարձաւ նորէն  
 հռոմ և հաստատեց եկեղեցին շատ տեղ  
 աշակերաներ զրկելով և լուսաւորելով .  
 մինչև ներոն թագաւոր հալածանք հա-  
 նեց գլխի վար խաչեց պետրոս առաքեա-  
 լը՝ քսանը հինգ տարի եկեղեցին կառա-  
 վարելէն ետեւ: Տեղը նստաւ լինոս աշա-  
 կերաղ:

Հ. Միւս առաքեալներն ինչ գոր-  
 ծեցին:

Պ. Անդրէաս առաքեալը քարոզէց  
 բարբարոսաց և մինչև մարդակերաց աշ-  
 խարհն . ասպա շրջեցաւ սրոնտոս , և բիւ-  
 զանդիա . յետոյ խաչվեցաւ աքայիա ե-  
 դէաս դատաւորէն յամի տեառն 69 :  
 Յակոբոս մեծն եղբայր յոհաննու՝ շըր-  
 ջեցաւ սպանիա , և դարձաւ երուսաղէմ .  
 հրէայք մատնեցին ագրիսպաս հերովդէ-  
 սին . որ սրով նահատակեց յամի տեառն  
 52 : Յոհաննէս Կոթաբան աւետարանիչ՝  
 յետ փոխման տիրամօրն , որուն կը ծա-  
 ռայէր իբր որդի՝ քարոզէց յունաստան  
 և հաստատեց աթոռն եփեսոս . ուսկից  
 հռոմ տարին կապանօք , և չարչարելով  
 եռացեալ ձեթին մէջ ձգեցին , բան չե-  
 ղաւ . ասպա աքսորեցին սլատոնոս կղզին .  
 ուր տեսաւ տեսիլն յայտնութե , և ան-  
 կէ գնաց եփեսոս աւետարանը դրեց . և  
 իննսուն տարւան ննջեց յամի տեառն  
 100 . բայց մարմինը դերեզմանին մէջ չի  
 գտնուելով կարծրվեցաւ թէ յարութիւն  
 առաւ : Փիլիսպպոս շրջեցաւ ասիա և ըս-  
 կիւթացոց աշխարհն , և ասպա երասպոլիս  
 քաղաքը գլխիվար կախվելով կատարե-  
 ցաւ : Բարթոլղիմէոս շրջեցաւ հայաս-  
 տան , սարսկաստան , մինչև հնոստան , և  
 եղաւ հայր հոգևոր հայոց . շինեց եկե-  
 ղեցի , և կուսաստան . և դրաւ հոգևոց  
 վանքն հրաշագործ սրատկեր կուսին . սս-  
 նատրուկ թագաւորը նահատակեց զինքն  
 յամի տեառն 50 : Թովմաս քարոզէց  
 արևելք մինչև չինուամաչին և հնոստան .

ուր նահատակեցաւ տեղով մօտ ՚ի մատ-  
րաս : Մատթէոս աւետարանիչ՝ աւե-  
տարանը գրելէն ետև քարոզեց մարդա-  
կերաց աշխարհն , և ապա ասորեստան ,  
հերապօլիա քաղաքը կատարեցաւ : Յա-  
կոբոս ալփեան եղբայր մատթէոսի՝ յետ  
քարոզելոյ հրէից և հեթանոսաց՝ նահա-  
տակեցին հրէայք ասորոց երկիրն : Թա-  
դէոս եղբայր թովմայի՝ գնաց եղեսիա  
բժշկեց արգար թագաւորն և մկրտեց  
բոլոր տնօին , նա և սանատրուկ . բայց  
արգարէն ետև թագաւորելով սանատ-  
րուկ՝ ուրացաւ հաւատքը և դիւատեց  
առաքեալը : Սիմոն կանանայի քարո-  
զեց եգիպտոս և ափրիկէ , նաև սարս-  
կաստան . կատարեցաւ հայաստան : Մա-  
տաթիա շրջեցաւ եթովպիա . և ապա  
հրէաստան քարկոծեցաւ : Պօղոս երէք-  
տաստան սռաքեալ՝ շատ տեղ լուսաւո-  
րեց հզօր քարոզութիւն . գնաց կասպանօք  
հռոմ , և արձակեցաւ , ապա ներոնիս  
դիմաց վիճաբանեցաւ սիմոն մոդին հեա-  
բայց աղօթիւք սռաքեալին սատակե-  
ցաւ մոգն՝ ինչպէս կը պատմեն . ուստի  
ներոն նահատակեց պօղոսը սրով , և  
պետրոսը խաչելով նոյն օրն , յամի օրն  
66 : Այսպէս և աշակերաներն ալ մէյ-  
մէկ աշխարհ քարոզելով կատարեցան .  
որոնց յաջորդեցին վարդապետք :

Հ . Ո՞վ են վարդապետք եկեղեցւոյ :

Պ . Վարդապետ եկեղեցւոյ կրօնին  
հին նք հայրապետներն ամենայն ազ-

գոց . որ աշակերտելով քնի աշակեր-  
տացն հեազհեաէ՝ անարանական գրք-  
վածքով ծաղկեցուցին սբ եկեղեցին .  
ինչպէս կրսէ առաքեալն : Եւ զորս եդ  
ան յեկեղեցւոջ այս են . նախ զառա-  
քեալս . երկրորդ՝ զմարգարէս . երրորդ  
զվարդապետ :

Հ . Քանի՞ են վարդապետք եկեղեցւոյ :

Պ . Առաքեալներուն թուովն են  
տասերկու , որ կը տօնենք . այսինքն սբ  
դիոնէսիոս . սբ յուսթէոս . սբ սեղբեստ-  
րոս . սբ աթանաս . սբ կիւրեղ . սբ  
եփրեմ . սբ բարսեղ . սբ գրիգոր նիւսա-  
ցին . սբ գրիգոր անթաքան . սբ եպիփան .  
սբ ոսկեբերան . սբ կիւրեղ աղէքսանդ-  
րացին : Սակայն ամէն ուղղափառ անթա-  
քանք կրտսին վարդապետք եկեղեցւոյ :  
Նաև կան չորս աւետարանչաց թուովը  
չորս վարդապետք եկեղեցւոյ . որոնք են  
ամէն ազգաց երեւելի հին վարդապետ-  
ներն՝ որ գրով և վարդապետութիւն ծաղ-  
կեցուցին եկեղեցին . զորօրինակ յու-  
նացն են՝ աթանաս , ոսկեբերան , բար-  
սեղ , և գրիգոր անթաքան : Լատինա-  
ցոցն՝ մեծն գրիգոր , օգոստինոս , ամբ-  
րոսիոս , և հերոնիմոս : Հայոցն՝ սահակ,  
մեսրոպ , նարեկացի , և շնորհալին : Իսկ  
լուսաւորիչ առաջնորդ հաւատոյ ըլլա-  
լով է գլուխ այս չորսին , և ընդհանուր  
վարդապետ :

Հ . Վարդապետք ի՞նչ հեղինակութի  
ունին :

Պ. Երբ միաձայն կը վարդապետեն հաւատքի վրա՝ կը նոյնանայ անձային աւանդութիւն հետ. և ով որ կը խոտորի անոնց վարդապետութիւն՝ հարկաւ կը մոլորի. ինչպէս մոլորեցան աղանդաւորները լուսեր և կալվին. որ ուղածնուն պէս մեկնեցին անձաշունչը: Ուստի կը մոլորին նաև անոնք, որ կրսեն թէ միայն անձաշունչը կրնգունինք, և վարդապետներուն բանը չենք ընդունիր. վասն զի անձաշնչին մեկնիչները՝ եկեղեցւոյ սբ վարդապետներն են, որ հոգւով սբվ լեցված գրեցին. ինչպէս կը հաստատէ սբ լուսաւորիչ ասելով. Վարդապետութիւն հոգւոյն սբ ՚ի ձեռն մարգարէից, առաքելոց, և վարդապետաց գրով աւանդեցաւ մեզ:

Հ. Ի՞նչ է անձաշունչն:

Պ. Ի սրտոգամ և բան ան զրված. նաև անսրխալ կանոն հաւատոյ և վարուց. որ ըստ պողոսի՝ ան շնչով կամ հոգւով գրեցին մարգարէք և առաքեալք. ինչպէս ասաց մարգարէն. Հոգի տեառն խօսեցաւ յիս, և բան նորա ՚ի լեզուի իմում: Եւ կը բաժնըվի հին և նոր կտակարան: Հինն՝ մարգարէները գրեցին աւետարտելով քսի գալուստը. նախ մովսէս մարգարէն գրեց անապատին մէջ հինգ գիրքը՝ պատմելով ինչպէս ստեղծվին աշխարհիս. որ են ծնունդք, ելք, ղևտացիք, թիւք, և երկրորդ օրէնք. որով կը յայտնէ անա-

րորչագործութիւն, հրէից եգիպտոսէն  
 ելլելն ու անապատէն անցնիլը, օրէնքը  
 ևն. ուստի կըսկըսի ստեղծմանէ աշխար-  
 հի կը պատմէ 3730 տարւան բան՝ ըստ  
 եօթանասնից: Յետուայ գիրքը յետու  
 գրեց. և ամէն դատաւորք և մարգարէք  
 իրենց գիրքը գրեցին. ամէնքը քառասու-  
 նըհինգ գիրք են: Իսկ նոր կտակարանը  
 կաւետարանէ եկած փրկիչը և կը սոր-  
 վեցնէ քսի օրէնքը, որ են քսանը եօթն.  
 Իսկ հին և նոր կտակարան ընդ ամենայն  
 են եօթանասուներկու գիրք:

Հ. Ի՞նչ լեզուով գրվեցան:

Պ. Մովսէս մարգարէն եբրայեցոց  
 լեզուով գրեց հին գրով, որ ինքն էր  
 հնարեր. և այն գիրը մնաց սամարացոց  
 մէջ. յետոյ՝ դերութի գառնալէն վերջն  
 եզր գրիչ՝ քաղզէացոց գրովը գրեց հին  
 կտակարանը. որ երկու հարիւր եօթա-  
 նասուներեք տարի յնէն առաջ պտղո-  
 մէոս փիղագեղփոս՝ եգիպտոս գերի ե-  
 ղած հրէաները զրկեց եղիազար քահա-  
 նայապետին. և անկէ ուղեց ընտիր օրի-  
 նակ Թաննիւզին հանգերձ եօթանասու  
 թարգմանիչով. որ եկան աղէքսանգրիա  
 թարգմանեցին յունարէն շատ գեղեցիկ,  
 որ ըսվեցաւ եօթանասնից թարգմա-  
 նութի: Ապա ասկէ թարգմանեցին մեր  
 Թաննիւզի շատ գեղեցիկ՝ մեր սբ թարգ-  
 մանիչներն յամի ամն 431: Այս նաև ու-  
 թիչ թարգմանութիւն ըստին՝ բուն ե-  
 բրայեցոց օրինակէն: Իսկ նոր կտակա-

րանին աւետարաններն այլևայլ լեզուով  
գրվեցան, ինչպէս ըսինք: Ղուկաս  
գործք առաքելոցը գրեց, որ է վարք.  
յովաննէս իրեք թուղթ գրեց իր աշա-  
կերաներուն, նաև յայանուծէ գիրքն  
ալ գրեց պատ. ևս կղզին յունարէն:  
Պետրոս երկու թուղթ գրեց կաթողի-  
կեաց, այսինքն ընդհանուր. յակոբոս և  
իր եղբայրը յուգայ մէյմէկ թուղթ գրե-  
ցին համառօտ: Այս ամէն թղթերն  
յունարէն գրվեցան:

Հ. Պօղոս առաքեալ ինչ լեզուով գրեց:

Պ. Պօղոս ամենէն աւելի գրեց՝ տաս-  
նըչորս թուղթ զանազան քաղաքներ. ա-  
մէնը յունարէն գրեց, բաց ՚ի եբրայե-  
ցոց թղթէն. որ կըսեն սք վարդապետ-  
ները թէ եբրայեցոց լեզուով գրեց գե-  
րազանց ոճով: Ահա այս ամենայն թղթ-  
թոց մէջ բոլոր քրիստոնէական հաւատ-  
քը, և բարոյական վարդապետութիւնն  
հաստատեցին անձային հոգւովը և շնչո-  
վը, լի իմաստութիւն և շնորհօք: Նաև բո-  
լորն ալ անձաշունչ ըլլալով՝ հին կառկա-  
րանը նորը կը հաստատէ մարգարէանա-  
լով. և նորը կը հաստատէ հինը՝ յայտ-  
նելով կատարումն մարգարէութեանց.  
որովհետև ամենն ալ գրել տվօղն անձ էր,  
ինչպէս ասացքս. ոչ գուք կք, ուք խօ-  
սիցիքն, այլ հոգին սք:

Ապա ուրեմն ինչ հոգւով շարժեցան  
առաքեալք և գրվեցան սք գիրք, նոյն  
հոգւով մենք ալ պիտի շարժինք, և

նոյն հոգւով պիտի կարգանք . զի ամե-  
 նայն գիրք անձաշունչք և օգտակարք .  
 ասաց առաքեալն : Ահա այսպէս է վար-  
 դապետութիւնքնի . ահա լրումն օրինաց  
 և մարգարէիցն՝ է անձաշունչութիւն ,  
 որ այս առաջին տաղաւարին մէջ լսե-  
 ցինք . բայց՝ միայն լսելն օգուտ չունի .  
 այլ մանաւանդ՝ դատապարտութիւն կը  
 բերէ , եթէ անձաշունչութիւն չհետևինք  
 աւետարանին և առաքելոց խրատնե-  
 րուն , նաև անոնց սք վարդացն : Շատ  
 փիլիսոսփաներ այ մեծութիւն պատմե-  
 ցին , բայց իրենց գործքը բարի չըլլալուն  
 համար՝ այն իրենց դատապարտութիւն  
 եղաւ . զի անձաշունչ գործքով պիտի  
 յայտնէ իւր անձաշունչութիւն , ինչպէս  
 երանի տվաւ քսմորն մեր ասելով . ե-  
 րանի այնոցիկ , որք լսեն և առնեն ըզ-  
 բանն այ . զի բանն այ հոգի է և կեանք :

## ՀԱՄԱՌՕՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ժ. ԿԻՐԱԿԻ .

Հ. Ո՞վ է ստեղծօղն երկնի և եր-  
 կրի :

Պ. Յաւիտենական անձ՝ հայր որդի և  
 հոգին սք , մի անձ և իրեք անձն . որ ա-  
 րարչագործեց երկինք և երկիր , նաև բո-  
 լոր աշխարհ :

Հ. Ե՛րբ եղաւ աշխարհս :

Պ. Երբոր կամեցաւ ի՞ծ՝ ոչնչէ ստեղծեց և վեց օրւան մէջ գեղեցիկ կարգաւորեց . անկէ 'ի վեր 5817 տարի է :

Հ. Մենք ուստի՞ եղանք :

Պ. Մեր առաջին ծնողքն են ագամ եւա . որոնք ծնողք չունին . այլ ի՞նչ ձեռքովը և խօսքովն ստեղծվեցաւ ագամ հողէն , եւա ագամայ կողէն :

Հ. Ո՞վ են նախադամեանք :

Պ. Ասոնք են հին հերեօսիկոսներ . որ կրսէին թէ միայն խորայեւացիք են ագամայ որդիք , մէկալ աղգերն են ուրիշ մարդէ շատ առաջ ագամէն :

Հ. Ինչո՞ւ ի՞ծ կամեցաւ , որ բոլոր մարդիկ մէկ ծնողքէ ըլլան :

Պ. Որպէս զի բոլոր մարդիկ մէկ աղգահանու թէ՛ սաւաջ գալով իրար սիրեն և միաբան ըլլան եղբայրսիրու թէ՛ :

Հ. Ի՞նչպէս էին մեր ծնողքը :

Պ. Ա՛ժ բարի և ի՞բ ստեղծեց առջի ծնողքնիս . բայց մեղանչելով կորուսին արգարու թի՛ր :

Հ. Մեզի ի՞նչ թողուցին :

Պ. Եթէ չի մեղանչէին երջանկու թի՛ և անմահու թի՛ պիտի թողուին . բայց հիմա սիզընական մեղք և մահ թողուցին :

Հ. Ինչո՞ւ համար մենք մեղաւոր կը ծնինք :

Պ. Ագամայ մեղաց համար , որ կրավի սկզբնական մեղք . որովհետև մեր սկիզբ

բէն կամ ադամայ մեզի մնացած է :

Հ. Ո՞վ ուրացաւ այս մեղքն :

Պ. Պեղադիոս հին հերեաիկոսն ուրացաւ սկզբնական մեղքն . որուն գէմքն վարդասակտները հաստատեցին՝ թէ ամէն տղայ սկզբնական մեղքով կը ծնի , և նք մկրտութիւն կազատի :

Հ. Ի՞նչ էր ադամայ մեղքն :

Պ. Էր անհնազանդութիւն . որ հպարտանալով կերաւ արգելած սրողէն :

Հ. Ինչո՞ւ համար չի արգելեց :

Պ. Անոր հնազանդութիւնը փորձելու , և իր արտութիւնը յայտնելու համար :

Հ. Ինչո՞ւ համար կերաւ :

Պ. Եւս սատանային փորձութենէն խաբվելով օձին հետևեցաւ ու կերաւ . ադամ ալ կնկանը խեղճին չգիտանալով կերաւ :

Հ. Արդեօք ադամ խաբվեցա՞ն :

Պ. Ադամ շատ խնաստուն ըլլալով սատանայէն չի խաբվեցաւ . հապա կրնկանը խօսքին հետևեցաւ , ու ի՞նչ հրամանը կոխեց : Ադամ ոչ խաբեցաւ կինն խաբեցաւ , ասաց առաքեալն :

Հ. Թէ որ ուրիշ ատեն ուտէր կը մեղանչէր :

Պ. Արդեւքը վերնալէն ետև ուտէր՝ չէր մեղանչէր կրսէ շնորհալին :

Հ. Կրնա՞ր ադամ գէմ կենալ այս փորձութիւն :

Պ. Ա՞՞ իրեն այնչափ շնորհք տվեր էր որ կրնար սատանային յաղթել և չուտել :

Հ. Ո՞վ էն օձեանք :

Պ. Են հին հերեփիկոսներ , որ կըսէին թէ եւայ խաբօղ օձն էր քն , որ երկնքէն բերաւ գիտութի բարւոյ և չարի . ուստի կը պատէին օձը :

Հ. Ագամայ մեղքէն ի՞նչ հետևեցաւ :

Պ. Զմեզ անանկ թշուառ վիճակի մէջ ձգեց , որ հոգւով և մարմնով տկարացանք :

Հ. Ո՞րն է մարմնաւոր տկարութիւնը :

Պ. Ամէն տեսակ ցաւ , վիշտ , և մահ . որով մարդ վերջապէս հող կը դառնայ :

Հ. Եւ ո՞րն է հոգւոր տկարութիւնը :

Պ. Հոգւոր տկարութիւն կը զրկուի մարդ գերբնական պարգևաց հոգւոյն սրբ . մինչ զի՝ սգիտութիւնը կը տիրէ իտացն , տկարութի և չարութիւն կամացն , և անկարգութիւն զգայական բաղձանացն :

Հ. Թէ չի մեղանչէր ի՞նչպէս պիտի ըլլայինք :

Պ. Աճային մասնաւոր շնորհօքն անմահ և անկարօտ պիտի մնայինք՝ սկզբնական արդարութիւն և երջանկութիւն դրախտին մէջ :

Հ. Տգիտութիւն ի՞նչ հետևեցաւ :

Պ. Հետևեցաւ որ մարդուս միտքը խաւարելով գիւրին կը մոլորի , և կը մոռնայ անգիտութիւն . ինչպէս յայտնի է կուսպաշտութենէ , որ շուտով մասաւաշխարհ :

Հ. Անկարգ բաղձանքէն ինչ հետևե-  
ցաւ :

Պ. Հետևեցաւ որ մարդս հոգւոյն մե-  
ծութիւնը չի ճանչնալով իր երջանկուիւր  
մարմնաւոր հեշտութե վրա կը դնէ ան-  
կարգ ցանկութիւն :

Հ. Ի՞նչ է ցանկութիւն :

Պ. Է հակուածն առ չարն , որ զգայա-  
կան հեշտութե հետևելով ան սպառա-  
ւանք կը մտնայ , և յաւիտենական դա-  
տապարտութեան ստորտական կըլլայ :

Հ. Ե՞րբ եղան ազամայ զաւակներն :

Պ. Գրախտէն դուրս իյնէլէն ետև՝  
տարի մի անցաւ եղաւ կային . և ասլա  
հաբէլ :

Հ. Ո՞վ եղաւ առջի մեռնողն աշխար-  
հիս վրա :

Պ. Հաբէլ արդարն . որուն նախան-  
ձեւով կային զարկաւ մեռցուց անմեղ  
եղբայրը :

Հ. Ո՞վ էին կայինեանք :

Պ. Էին հին աղանդաւորք , որ կը  
պատուէին կային իբր գերագոյն զօրու-  
թեանէ եղած . իսկ հաբէլ կը համարէին  
ակար ստեղծողէ եղած :

Հ. Ունեցաւ ազամ ուրիշ որդի :

Պ. Հաբէլի տեղն ան տվաւ իրեն սէթ .  
որուն ցեղին մէջ մնաց անգիտութիւն .  
անոր համար ըսվեցան որդիք ան . իսկ  
կայենի անիծած ցեղն կավէր որդիք մար-  
դոյ՝ մարմնասլաշտ ըլլալներուն համար :

Հ. Ո՞վ էին սէթեանք :

Պ. Էին չին աղանդաւորք, որ կրսէին թէ սէթ քնի տեղն է եկած ու կը պաշտէին . նաև կրսէին թէ կային և հաբէլ ստեղծվեցան հրեշտակներէն :

Հ. Ո՞վ էր նոյ նահապետ :

Պ. Էր սեթայ ցեղէն՝ սիրելի այ բոլոր իր ընտանեօքը . զի անատենը բոլոր աշխարհ ապականեր էր մարմնապատու թք . նաև սեթայ ցեղը կայենի ցեղին հետ խառնակելով գիշացան , որ անարդէր էր :

Հ. Ի՞նչպէս սրատուհասեց ան :

Պ. Զրհեղեղ տալով բոլոր աշխարհ կործանեց չար մեղացնուն համար . միայն տասրանին մէջ մնացող ութը հոգին և կենդանիներն ազատեցան . յամի աշխարհի 1656 :

Հ. Ո՞ւր նստաւ տապանը :

Պ. Տարի մի ջրին վրա մնալէն ետև հայաստան արարատայ լէրան վրա նրստաւ :

Հ. Ուսկից բազմացան մարդիկ :

Պ. Նոյ նահապետին իրեք որդոցմէն . որ են սէմ , քամ , յաբէթ :

Հ. Ո՞րն էր անգրանիկ որդին :

Պ. Յաբէթ . ուսկից եղան հայք , մոսկովք , և ֆուէնիք . սեմայ եղան հրէայք . և քամայ արաբացիք և այլք :

Հ. Ե՞րբ բաժնրվեցան աղգերը :

Պ. Զրհեղեղէն հարիւր տասնըչորս տարի ետև շատ մարդիկ հայաստանէն ելան բաբելոնի աշտարակը շինելու գնա-

ցին. ուր պատժը վերջով լեզունին փոխվեցաւ, և անկէ ցրվեցան եօթանաս սունեւերկու ազգ և լեզու եղան :

Հ. Եւ երբ սկսաւ կռապաշտութիւնը :

Պ. Աշտարակաշինու թենէն քիչ ետև նախ քամայ ցեղէն քանանացիք սկսան պաշտել աստղերը և երևելի մարդիկ . յետոյ ուրիշ ազգաց մէջ տարածեցաւ :

Հ. Ո՞վ կը սեպվի առջի կռապաշտ :

Պ. Բէլ կամ նեբրովթ առջի թագաւորն ասորոց, որ հրաման հանեց իրեն երկրպագութիւններու. նաև առջի կուռքը շինեց նինոս : Իսկ կիկրոք թագաւոր աթենայ եղաւ առջի զոհ ընօղը կուոց եղ մորթելով :

Հ. Ա՞՞ծ որսն հետ ուխտ դաշինք ըրաւ :

Պ. Հայր աբրահամու հետ. որ կռապաշտութե չի հետևելով օրհնը վեցաւ արարչէն. որուն խոստացաւ իմծ տալ մեսիան իր զաւակէն. և ինքն էր սեմայ ցեղէն :

Հ. Ո՞վ են նահապետք :

Պ. Աբրահամ, իսահակ, յակոբ՝ տասերկու որդիքներով. որոնցմէ եղան տասերկու ցեղն իսրայէլացւոց :

Հ. Ինչո՞ւ հրէայք իսրայէլացի կրովին :

Պ. Իսրայէլ իմծատես կը թարգմանի. զի հրէշտակ երևնալով յակոբ նահապետին իբր թէ իմծ տեսնելով իմծատես ըսվեցաւ, և ազգն իմծապաշտ :

Հ. Ո՞ր ցեղէն եկաւ քս :

Պ. Յուզայի ցեղէն՝ ինչպէս որ յակօր  
մարգարէանալով օրհնեց այս որդին .  
որուն ցեղէն էր նաև դաւթ մարգարէն :

Հ. Ո՞ւր գերի եղան իսրայէլացիք :

Պ. Նախ եգիպտոս . ուր գնացին յով  
սէփ գեղեցիկին օրը՝ սով ըլլալուն հա  
մար :

Հ. Ո՞վ ազատեց զանոնք :

Պ. Մովսէս մարգարէն . որ սորվե  
ցուց իրենց անց տված օրէնքն ու պա  
տուիրանները :

Հ. Ո՞վ տարաւ զանոնք աւետեաց եր  
կիրը :

Պ. Յեսու նաւեան . որ մովսէսի անդն  
անցաւ :

Հ. Ո՞վ շինեց երուսաղէմայ տաճարը :

Պ. Դաւիթ մարգարէին որդին սողո  
մոն իմաստուն շինեց շատ գեղեցիկ :

Հ. Ի՞նչ բանի օրինակ էր այս տա  
ճարը :

Պ. Քնի եկեղեցւոյն . որուն մէջ  
պէտք է պաշտել անձ հոգւով և ճշմար  
տութեամբ :

Հ. Ինչո՞ւ բաժնրվեցաւ հրէից թա  
գաւորութիւր :

Պ. Սողոմոնի մեղացն համար , որ  
կուսապաշտ կնիկներուն հետևեցաւ :

Հ. Ե՞րբ բաժնրվեցաւ :

Պ. Սողոմոնի որդուն ռոբովամ թա  
գաւորին օրը :

Հ. Ի՞նչպէս բաժնրվեցան հրէայք :

Պ. Շատ անգամ անց տաճարը կը թու

դուին կուռք կը պաշտէին. յետոյ բարձր  
տեղեր շինեցին և կուռքեր դրին կը պաշ-  
տէին. անոր համար տասերկու կըսոր  
եղաւ Թագաւորութիւնը, և երկու հեր-  
ձուած եղան, յուգայ՝ և խորայէլ:

Հ. Ո՞վ եղաւ սկիզբն այս հերձուա-  
ծին:

Պ. Յերոբոամ Թագաւորն խորայէ-  
լացոց եփրեմի ցեղէն. զի ժողովուրդն  
երուսաղէմ չերթալու համար, որ յու-  
գայի Թագաւորներուն ձեռքն էր,  
կուռք դրաւ որ պաշտէն:

Հ. Ի՞նչ կը նշանակէր այս բանը:

Պ. Հերեւոթիկոսութիւններն ու հեր-  
ձուածներն, որ սխախ ըլլային քսե եկե-  
ղեցնայ մէջ:

Հ. Ո՞վ էին սամարացիք:

Պ. Սամարացիք կամ շամրտացիք էին  
տտորի ազգէն. զի սաղմանատար գերի  
ընելէն ետև՝ ովսէէ Թագաւորն խորայէ-  
լի՝ տիրեց սամարիայի և զասոնք պահա-  
սան զըկեց հրէաստանի. ուստի սամա-  
րացին պահասան կը Թարգմանի:

Հ. Ի՞նչ կրօն ունէին:

Պ. Առաջ կռատաշտ էին. բայց  
հրէաստան կենալով մովսիսական օրի-  
նացն հետեւեցան, և հինգ գիրքը մովսե-  
սի հին գրով պահեցին, որ իրենց մէջ  
մնաց. զի միայն այն գրոց կը հաւա-  
տային. անոր համայ հրէայք չէին խառ-  
նակեր անոնց հետ:

Հ. Ար՞իք կըսուէին հաւատացեալ:

Պ. Հրէից մէջ հաւատացեալ կը համարէին անոնք, որ ւժժապաշտութեամբ մնացին միացեալ յուզայի ցեղին հետ. ուսկից մեսիա փրկիչը պիտի ծնիր:

Հ. Հրէայք կը տպասէին քոյի:

Պ. Այո՛ ինչպէս որ նախապատմեր էին ամէն մարգարէները:

Հ. Ա՛ր ժամանակ եկաւ աշխարհ:

Պ. Ադամէն չորս հազար տարի ետեւ, ինչպէս դանիէլ մարգարէացեր էր ժամանակը:

Հ. Ինչո՞ւ կըսվի մեսիա:

Պ. Յաւիտենական բանն ւժժ մարմին առնելով փրկեց աշխարհս սատանային բռնութենէն. անոր համար կըսվի մեսիա, որ է փրկիչ, և օծեալ ւր:

Հ. Ի՞նչ ըսել է փրկիչ:

Պ. Ըսել է թէ քոյ մեզի նման մարդ ըլլալով փրկութի տվաւ արդարոց. զի յո անուճը կը նշանակէ փրկիչ, և քոյ անուճը օծեալ. ուստի յո քոյ ասելով կիսնացվի մեսիան:

Հ. Ե՛րբ դրվեցաւ անուճը:

Պ. Յո անուճը ծննդէնէ ութ օր ետեւ թլփատութեան օրը դրին՝ ինչպէս որ հրէշտակն ըսեր էր քոյ կուսին. իսկ քոյ անուճն ՚ի սկզբանէ հետէ՝ ւժժ յայտներ էր ադամայ՝ նահապետաց՝ և մարգարէից:

Հ. Ար՞ճն որդին է:

Պ. Քոյ է յաւիտենական որդի հօրայ, և ժամանակաւոր որդի մարիամու կուսին:

Հ. Ինչո՞ւ կըսվի որդի դաւթի :

Պ. Արովհեակ սբ Խժածնայ ծնողքն էին դաւթ մարգարէին ցեղէն, հայրը սբ յովակիմ կամ հեղի՝ էր նաթանայ ցեղէն, մայրը սբ աննա՝ սողումնին ցեղէն, որ նաթանայ եղբայրն էր : Նոյն պէս սբ յովսէփ էր սողումնէն. որ խնամ տանելով մանուկ յնին և ծառայելով կոչվեցաւ Խժածայր :

Հ. Ե՞րբ մկրտեցաւ քսն :

Պ. Երբոր յի՛հաննէս անսպառէն դարձաւ, յս երեսնամեայ եկաւ յորդանան մկրտեցաւ մկրտչէն :

Հ. Ե՞րբ խաչվեցաւ :

Պ. Պիղատոս դատաւորին ատենը չարչարեցաւ և մեռաւ. որ թաղվելէն ետև իրեք օր անցաւ յարութի առաւ, քառսուն օրէն համբարձաւ, և տասն օրէն ետև զրկեց հոգին սբ :

Հ. Ար՞ո՞նք ընտրվեցան իշխան եկեղեցւոյ :

Պ. Տասվերկու առաքեալներն, որոնց գլուխն էր պետրոս, որ վէմ ըսել է իսկ առաքելոց յաջորդներն են բոլոր եպիսկոպոսները և եկեղեցնայ հովիւները :

Հ. Ա՞ր թագաւոր նախ և առաջ հաւատաց քսնի :

Պ. Նախ արգար թագաւոր հայոց հաւատաց, և թուղթ գրեց քսնի. նաև սպատասխան առաւ, և ապա մկրտեցաւ բոլոր անով : Բայց իրեք հօրիւր տարի

Ետև կոստանդիանոս և տրդսոս թագա-  
 ւորներն հաւատալով պայծառացուցին  
 քնի եկեղեցին, և հալածեցին հեթա-  
 նոսներն ու աղանդաւորները : Աւստի  
 արևելք և արևմուտք ուղղափառ հա-  
 ւատքը ծաւալեցաւ սբ սեղբեսարոսի,  
 և սբ լուսաւորչայ քարոզութեն . որոնց  
 մենք սլ աշակերտելով՝ սկտք է սբ վա-  
 րուք միշտ գովէնք զի՛ծ այս երգով . Որ  
 համապատիւ հօր և որդւոյ քարոզեցին  
 զքեզ ( սբ հոգի ) ի՛ծարանքն եկեղեց-  
 ւոյ . յոր մկրտիւք և դաւանիւք՝ համա-  
 գոյ երրորդութի անբաժանելի . որհ-  
 նեմք զքեզ ի՛ծ հարցն մերոց :



# Բ . Տ Ա Գ Ա Ի Ա Ր

Վ Ա Ր Գ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

## Հ Ա Ի Ա Տ Ո Յ



Ժ Ա . Կ Ի Ր Ա Կ Ի

~ Հ . Քրիստոնեայ ես դուն :

Պ . Այո՛ շնորհօքն քնի :

Հ . Ինչո՞ւ ըսիր՝ շնորհօքն քնի :

Պ . Վասն զի քրիստոնեայ ըլլալն է մասնաւոր շնորհք և պարգև ւայ . ինչպէս նաև հաւատացեալ ծնողաց որդի ըլլալը և քրիստոնէից մէջ ծնիլն է շնորհք ւայ . այլև քրիստոնէութիւնը յատուկ ւածային շնորհօքը կը պահվի :

~ Հ . Ի՞նչ ըսել է քրիստոնեայ :

Պ . Քնի հետևող ըսել է . որ առաքեալներն անտիոք քաղաքն սկսան քրիստոնեայ անուանել հաւատացեալները :

Հ. Ինչո՞վ կսվի քրիստոնէայ :

Պ. Մկրտելով և հաւատալով քնի . նաև բարի գործքով հեռուելով քրիստոնէական վարդապետութի : :

Հ. Ի՞նչ է քրիստոնէական վարդապետութի :

Պ. Է վարդապետութի և կրթութի հաւատոյ . որ քսն արն մեր սորվեցուց՝ մեզ փրկելու համար :

Հ. Ի՞նչպէս պէտք է սորվիլ :

Պ. Ամէն ծնողք պարտական են , որ սղոյը միտքը բացվածին պէս այս վարդապետութիը սորվեցընեն ամէն բանէն առաջ :

Հ. Ի՞նչ կը սորվեցընէ վարդապետութի հաւատոյ :

Պ. Կը սորվեցընէ քնի հաւատքը , և կը յայտնէ թէ ի՞նչ վախճանի համար անձ զմեզ ստեղծեր է :

Հ. Ինչո՞ւ համար ստեղծեր է :

Պ. Հաւատքով ճանչնալ , գործքով սիրել , և ծառայել ստեղծողին . և այնպէս արժանի ըլլալ արքայութիը վայելելու . ինչպէս կը սորվեցընէ նք լուսաւորիչ յաճախապատումին մէջ :

Հ. Միայն հաւատքը բուական չէ՞ փրկութի :

Պ. Միայն հաւատքով մարդ փրկութի չի կրնար հասնիլ՝ թէ որ բարի գործք չունենայ . զի հաւատք առանց գործոց մեռեալ են , և գործք առանց հաւատոյ ոչինչ են , կրսեն առաքեալները :

Հ. Ո՛ւր կը պարունակի վարդասպե-  
տութի՞ն հաւատոյ :

Պ. Կը պարունակի հին և նոր կտա-  
կարանին, և անդիր աւանդութի՛ն մէջ .  
որ յայտնեց ձ՛ծ սբ եկեղեցնայ :

Հ. Ի՞նչ է աւանդութի՛ն :

Պ. Աւանդութի՛ն է բանն այն անդիր ,  
որ եկեղեցին պահէր և մեզ հասուցեր  
է . թէպէտ ձ՛ծ աշնչին մէջ չի կայ , սա-  
կայն ձ՛ծ աշնչին հաւատար է ճշմար-  
տութի՛ր :

Հ. Քանի՞ կը բաժնըվի :

Պ. Իրէք , ձ՛ծային , և առաքելական ,  
և եկեղեցական :

Հ. Ո՞րն է ձ՛ծայինը :

Պ. Է՛ աւանդուի միշտ և անփոփոխ  
մնացած ընդհանուր եկեղեցնայ մէջ .  
զորօրինակ ձ՛ծածինն է միշտ կոյս . խոր-  
հուրդք եկեղեցւոյ են եօթն . պատա-  
րագին հացը սխախ ըլլայ ցորենէ , ևն .  
որոնք թէպէտ ձ՛ծ աշնչին մէջ դրած չեն ,  
սակայն նոյն զօրութի՛ն ունին :

Հ. Ո՞րն է առաքելականը :

Պ. Է՛ արարողութի՛ սահման ընդհա-  
նուր եկեղեցնայ մէջ իբր առաքելակե-  
րէն առած . զորօրինակ խաչին և սրբա-  
զան պատկերներուն պատիւ ընել . խա-  
չակնքել , սաք պահել . տօն տօնել , ևն :

Հ. Ո՞րն է եկեղեցականը :

Պ. Է՛ ծէս և սովորութի՛ն , որ ամէն  
եկեղեցի ունի և կրպահէ . զորօրինակ  
ղգեստով պատարադ ընել . աղօթք

ընել գէպ 'ի արևելք . տօնը և սպքն  
աւելցնել կամ՝ պակասցնել . բաղարջով  
կամ հացով սատարագել , ևն : Որ կըր-  
նայ սահմանել և փոխել եկեղեցին ,  
ինչպէս ամէն աղագաց եկեղեցին հին ա-  
տենէն 'ի վեր զանազան ծէսեր սահմա-  
ներ է , կամ ատենով փոխեր է ըստ  
ատելոյն . որպէս հին ատենն արևելք  
մեծ սրաքին շաբաթն ու կիրակին ձուկ  
և հաւկըթեղէն կուտէին . մեր աղգնալ  
բազրասուռնեաց ժամանակն այսպէս  
կընէր . յետոյ փոխեց :

Հ. Ե՞րբ յայտնեցաւ հաւատքին ճըշ-  
մարտութիւն :

Պ. Հին օրինաց ատենը Եթովպացի  
յայտնեց Եթ հին եկեղեցնայ , որ մինչև  
քսի ժամանակը պահեց : Իսկ քս առա-  
քելոց յայտնեց սկզբունքը հաւատքին ,  
և առաքեալք եկեղեցնայ աւանդեցին .  
որ անարատ կը պահէ մինչև 'ի կատա-  
րած աշխարհի :

Հ. Ի՞նչ է հաւատամքը :

Պ. Է հաւաքումն քրիստոնէական  
հաւատոյ , որով կը հաւատանք դիւս-  
ւոր մասանց հաւատոյ՝ ինչ որ քս սոր-  
վեցուց և յայտնեց :

Հ. Ո՞վ շարադրեց հաւատամքը :

Պ. Քսի տասվերկու առաքեալները  
շարադրեցին , և յետոյ ժողովներով նք  
հայրապետները բացատրեցին .

Հ. Ի՞նչպէս շարադրեցին :

Պ. Առաքեալները ժողով ըրին երու-

տաղէմ, և ամենուն հաւանութիւն սկսան  
գրել և յայտնել հաւատացելոց :

Հ. Ո՛վ սկսաւ նախ զուրցել և գրել :

Պ. Ըստ սուանդուտե՛ն նախ պետրոս  
ասաց. հաւատամք ՚ի մի ւնժ հայր ամե-  
նակալ, արարիչն երկնի և երկրի: Երկ-  
րորդ՝ անգրէաս. Եւ ՚ի յմ քմ որդի նո-  
րա միածին ՚ի ւոր մեր: Երրորդ՝ յակո-  
բոս. Որ յղացաւ ՚ի հոգւոյն սբջ: Չոր-  
րորդ՝ բարդուղիմէոս. Ծնաւ ՚ի մարիա  
մայ կուսէն: Հինգերորդ՝ Թովմաս.  
Չարչարեցաւ առ պոնաոս պիղատոսիւ:  
Վեցերորդ՝ Թագէոս. Խաչեցաւ մեռաւ  
և Թաղեցաւ: Եօթներորդ՝ սիմոն. Էջ  
՚ի գժոխս: Ութերորդ՝ յովհաննէս.  
Յերրորդ աւուր յարեաւ ՚ի մեռելոց:  
Իններորդ՝ յակոբոս աւփեայ. Համ-  
բարձաւ յերկինս: Տասներորդ՝ փիլիպ-  
պոս. Նստի ընդ աջմէ ւոյ հօր ամենա-  
կալի: Մետառաներորդ՝ մատթէոս.  
Ուստի գալոց է գատել զկենդանիս և  
զմեռեալս: Երկոտասաներորդ՝ մատա-  
թիա. Հաւատամք ՚ի հոգին սբ, ՚ի սբ  
էկեղեցի կաթուղիկէ, ՚ի հաղորդութի  
սբջ, ՚ի Թողութի մեղաց, ՚ի յարութի  
մարմնոց, և ՚ի կեանս յաւիտենականս:

Հ. Այս վարդապետութիւն ինչ խոր-  
հուրդ ունի:

Պ. Այս օրւան վարդապետութիւնն  
է մեծ խորհրդածութի քրիստոնից. ու-  
րոնք մտածելով լոյս հաւատքին գերա-  
զանցութիւն պէտք է հիանան ւոյ ողորմու-

Թէ՛ր վրա, և վառվին սիրելով ւ՛ծ ճշմարտութի՛ւն . ոչ միայն ըստ որում հեղինակ բնութի՛ն, այլև ըստ որում հեղինակ շնորհաց և հաւատոյ . որով լուսաւորեալ մանկուհիք եկեղեցւոյ՝ ծանօթ եղան ւ՛ծ . ային խորին խորհրդոց : Ուստի ամէն առտու սարասկան ենք , որ հաւատամքն ասելով ներգործութի հաւատոյ ընենք , և աղաղակենք առ երկնաւոր հայրն մեր . Լոյս տուր մօր աչաց խնոց, զի մի երբէք ննջեցից 'ի մահ : Լոյս երբեակ և մի անբաժանելի սբ երրորդուհի՛ զքեզ ընդ երկնայնոց երկրածինքս միշտ փառաւորեմք , 'ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա՛ 'ի հոգիս մեր զլոյս քո խմանալի :

ԺԲ . ԿԻՐԱԿԻ :

Հ . Կնչու՛ ըսիր թէ՛ սբ հայրապետները բացատրելով երկնցուցին հաւատամքը :

Պ . Վասն՛ զի զանազան ժամանակ գլխաւոր հերեաթիկոսներ ելան , որ ուղածնուն պէս կը մեկնէին հաւատամքը . անոր համար պէտք եղաւ որ սբ հայրապետները ժողով ընեն ամէն աթոռէ գան հաւաքին՝ ճշմարտութի՛ր հաստատեն , և մոլորութի՛ր մերժեն նղովեն :

Հ . Ե՛րբ և ո՛ւր եղաւ առջի ժողովն :

Պ . Եղաւ նիկիա յամի ամն 325 . ուր

ժողովեցան իրեք հարիւր տասներու թ հայրասպետ . հոն էր լուսաւորչայ որդին սբ արիստակէս , սբ յակոբ մճբնայ հայրասպետ , սբ աթանաս , և այլ մեծամեծ սբ հայրասպետներ կոստանդիանոսի և արղատայ ժամանակը :

Հ . Ինչո՞ւ եղաւ :

Պ . Աղէքսանդրիայի երևելի երէցն արիստ մոլորելով ուրացաւ քսի իծութիւր . անոր դէմ այս սբ ժողովն եղաւ . ուր նշովեցին արիստը . որ պատուհասելով սատակեցաւ : Ուստի հաւատամքը բացատրելով աւելցուցին այսպէս . Եւ 'ի մի սոր յս որդին իւյ ծնեալ 'ի հօրէ միածին . այսինքն յեւթի հօր . իւծ յսյ , լոյս 'ի լուսոյ . իւծ ճշմարիտ , յսյ ճշմարտէ . ծնունդ և ոչ արարած , համագոյակից հօր . որով ամենայն ինչ եղև , ևն :

Հ . Ե՞րբ եղաւ երկրորդ ժողովն :

Պ . Եղաւ 'ի կոստանդինուպօլիս յամի տն 381 . ուր հարիւր յիսուն հայրասպետ ժողովեցան . հոն էր մեր մեծն ներսէս հայրասպետ , և այլ սբ հայրասպետներ : Ուստի կրակի կոստանդինուպօլսոյ սբ ժողով :

Հ . Ու՞րն համար եղաւ :

Պ . Արիստի աշկերաններէն ելաւ մակեդոն հայհոյիչ հոգւոյն սբյ . որ պատրիարկ էր ստամպօլու , և կուրանար հոգւոյն սբյ իծութին . անոր համար այս սբ ժողովը նշովեց զինքն ու բացատրեց հաւատամքն այսպէս . Եւ 'ի հոգին սբ ,

տրն և կենդանարարն, ՚ի հօրէ ելօղն,  
ընդ հօր և ընդ որդւոյ երկրպագակից և  
փառաւորակից. որ խօսեցաւ մարգա-  
րէիւք ևն:

Հ. Ո՛րն է լուսաւորչայ հաւատամքն:

Պ. Արիտասկէս հայրապետ նիկիոյ  
ժողովքին հաւատամքն յունարէն եր-  
բոր բերաւ լուսաւորչայ. լուսաւորիչ  
հայերէն գեղեցիկ թարգմանելով, և  
աւելի բացատրելով երկնցուց, որն որ  
ամէն օր կըսվի. և յետոյ ասաց՝ Իսկ մեք  
փառաւորեսցուքն:

Հ. Եղա՞ւ ուրիշ ժողով:

Պ. Եփեսոսի ժողովն եղաւ նեստոր  
հերետիկոսին դէմ. որ քնի մարգեղու-  
թիւր կուրանար և անձամբ մարգածին  
կըսէր. զոր նզովեցին չարաչար՝ սք հայ-  
րապետներն: Յետոյ եղաւ սք ժողովն  
քաղկեդոնի եւտիքէս հերետիկոսին դէմ.  
որ քնի երկու բնութիւն ուրանալով շփո-  
թեալ կը դնէր. զոր նզովեց սք ժողովն:  
Յետոյ զանազան ժողովներ ալ եղան  
զանազան հերետիկոսներու դէմ. ինչպէս  
սլիտի բացատրենք ամէն նիւթի մէջ:

Հ. Այս ժողովներն ալ աւելցուցի՞ն  
հաւատամքը:

Պ. Որովհետեւ կոստանդնուսօլոսոյ ժո-  
ղովին մէջ գրեթէ ամէն հարկաւոր բա-  
ցատրութի եղած էր, հարկ չեղաւ նոյն  
ատենն երկնցընելու: Սակայն յետոյ ինը  
գարուն փոտ սլատրիարդն յունաց՝  
Կլուխ գաշէլով ուղեց լատին եկեղեցնայ

զատվիլ՝ սկսաւ քարոզել, թէ հոգին նր  
միայն ՚ի հօրէ ելանէ: Անոր համար արև-  
մուտք ժողովներ եղան լուսագոն և Ֆիօ-  
րէնցայ. ուր էին յոյն պատրիարքներն  
եպիսկոպոսներով և թագաւորը. և միա-  
բան հաւանութիւն հաստատեցին բացա-  
տրութիւն հաւատամքին մէջ. Որ ՚ի հօրէ  
և յորդոյ բղիսի կամ ելանէ. որ ընդու-  
նեցան յոյները, և դաւանեցին պատա-  
րագին մէջ:

Նոյնպէս հայաստան վանական վար-  
դապետն ևս հաստատեց այս ճշմարտու-  
թիւն գեղեցիկ օրինակներով. ինչպէս  
կիրակոս պատմիչ կը վկայէ թէ հայք  
ընդունեցան: Սակայն յոյներն արևելք  
դացածնուն պէս նորէն զատվեցան, ու  
քիչ ատենէն վերցաւ իրենց թագաւո-  
րութիւն ալ մնացին այնպէս: Այս նի-  
ւթիս վրա այսպէս կը խօսի եղևչէ վար-  
դապետ արարածոց մեկնութե մէջ:  
Առաջին անձն չէ ծնեալ յումէքէ. եր-  
կրորդն ծնունդ է առաջնոյն. երրորդն՝  
երկրորդին և առաջնոյն է ելումն և  
բղիսումն. իբր արմատ և ծառ և սրտուղ:

Հ. Քանի՞ են մասունք հաւատոյ:

Պ. Են օտաւերկու. Է Միունի Էժու-  
թե. Է Գործք Էյ, որ է հեղինակ բնու-  
թե. Է Երրորդութի անձանց. Է Մար-  
դեղութի բանին Էյ. Է Չարչարանք և  
մաս՝ քսի. Է Իջանելն ՚ի դժոխս. Է Յա-  
րութիւն. Է Համբարձումն. Է Երկրորդ  
գալուստն. Է Աժութի հոգւոյն նք, և

Գործք Կ, իբր հեղինակի շնորհաց. որ է սրբութի եկեղեցւոյ, հաղորդութի սբց, և թողութի մեղաց. ԺԿ Գործք Կ, իբր հեղինակի փառաց. որ է կեանք յաւիտենից. ԺԸ Գործք Կ, որ փառաւորէ զմարմինս, որ է յարութի մեռելոց:

Հ. Քանի՞ են շարժառիթք հաւատաւիութի:

Պ. Են ութ, որով կը յայտնի հաւատքին ճշմարտութիւնը. Կատարումն գուշակութեց. զի հին օրինաց մէջ ինչ գուշակութի որ եղաւ, նոր օրինաց մէջ ամենը կատարեցան. ք Սքանչեւագործութիք քնի. առաքելոց, և սբց. ք Սքանչելի եղանակ տարածման հաւատոյ տըգէտ և քիչ մարդով, նաև քիչ ժամանակի մէջ. ք Անսասան տևողութի եկեղեցւոյն այնչափ հալածանք քաշելով. Ե Հեղումն արեան անթիւ. նահատակաց, որ քնի հաւատքին համար վկայեցին յայտնի հրաշքներով. ք Սրբութի վարուց քնի և աշակերտացն. Ե Հնութի կրօնիս սկսեալ ադամայ մինչև ցայժմ անայլայլելի. ք Ծաղկիլ եկեղեցւոյ այնչափ ճգնաւորներով, և վարդապետներով:

Հ. Ինչո՞ւ շարժառիթ կըսվին:

Պ. Վասն զի ապացուցութի կը յայտնեն և կը բռնադատեն միտքն՝ որ հաւանի և հաւատայ ճշմարիտ հաւատքին. զի սուտ հաւատքը չի կրնար այնչափ լուսաւոր պատճառներ ունենալ. վն զի սուտը շուտ կը յայտնի, և խաբէութիք

Տէկէն կը խայտառակի. ինչպէս որ եղան  
այնչափ աղանդներ. իսկ ուղղափառ հա-  
ւատքը միշտ միակերպ կայ, և կը ծաղկի  
մանաւանդ հալածանաց ժամանակը :  
Ահա այս ճշմարտութիւն պիտի դատա-  
պարտէ այն քրիստոնէականերն, որ ուղ-  
ղափառ հաւատքով կը սարծին, և գործ-  
քով կուրանան. որոնք պէտք է գողան և  
սարսափին, չըլլայ թէ լսեն քսէ . Ամէն  
ասեմ, ոչ գիտեմ զձեզ . զի ուղղափառ  
և ճշմարիտ հաւատքը, ճշմարիտ ուղղա-  
փառի գործք կը պահանջէ . որպէս զի՝  
գործքն հաւատքին համեմատ ըլլալով  
երկնաւոր փառքն, ալ համեմատ ըլլայ,  
ուր պիտի երթայ վայելէ հաւատա-  
ցեալը :

ԵԳ . ԿԻՐԱԿԻ :

Հ. Արն է առաջին մասն հաւատամ-  
քին :

Պ. Հաւատամք 'ի մի ւծ հայր ամենա-  
կալ, արարիչն երկնի և երկրի :

Հ. Ի՞նչ կը յայտնէ այս բանս :

Պ. Պէտք է նախ և առաջ դաւա-  
նիլ, թէ ւծ է երկնի և երկրի արարիչ  
գերագոյն ւոր և կառավարիչ աշխարհի .  
պարզ հոգի անսահման և յաւիտենա-  
կան . ամէն բան գիտէ, ամէն բան կը

տեսնէ, և ամենայն բանի կարող է: Թա-  
ղէս փիլիսոփային հարցուցին, թէ զինչ  
ինչ իցէ հին աւուրց քան զամենայն .  
պատասխան տվաւ թէ՛ անձ է. վասն զի  
անեղ է. միշտ նոյն է գոյական:

Հ. Ինչո՞ւ չասաց հաւատամք ան:

Պ. Հաւատաւ անձ է ընդունիլ թէ կայ  
անձ ճշմարիտ, որ գեն ու անհաւատն  
ալ կընդունին. բայց հաւատամք անձ  
ասելով կը յայտնէ, թէ քրիստոնէին  
յոյսը և սէրը առ անձ սլախի ըլլայ. և ա-  
նով կըլլայ կենդանի հաւատք, ինչպէս  
սք լուսաւորիչ կը բացատրէ:

Հ. Ինչո՞ւ կըսվի հաւատամք:

Պ. Հաւատամք կըսենք աշխարհաբառ  
ըզուով այսպէս սկսելուն համար. բայց  
հասարակօրէն կըսվի հանճանակ, կամ  
նշանակ, և դաշն հաւատոյ, որովհետեւ  
հաւատամքն է բովանդակութի մասանց  
հաւատոյ, որ եկեղեցին առաջադրեր է  
բացայայտ ամենուն:

Հ. Ի՞նչ կ'իմանաս ասելով. անձ է  
հոգի:

Պ. Կըմբռնեմ և կը հաւատամ, թէ  
անձ է անհուն հոգեղէն իմաստութիւն .  
որուն ոչ երբէք ստեղծական միտքը  
կրնայ հասնիլ զի բնութի է անսահման,  
կատարելութի անչափ, և իմաստութի  
անհուն. և ըստ նարեկացւոյն է՝ Անճառ.  
զօրութի, անհեղ մեծութի, անբաւ բը-  
նութի:

Հ. Ա՞նձ մարմին ունի:

Պ. Ա՛ծ ամենասպարզ էակ ըլլալով ո՛չ մարմին ունի և ոչ ձև, ոչ քանակութի և ոչ որակութի. զի է առանց բաղադրութե. Հոգի է ձ՛ծ ասաց քս: Ասամուտրեցան մարդակերպեայք, որ ըսին թէ ձ՛ծ մարմին ունի. որոնք մերժեցան հին ժամանակը:

Հ. Ինչո՞ւ ձեռք աչք ան կըսվի:

Պ. Աչք ասելով կիմացվի թէ ձ՛ծ ամէն բան կը տեսնէ. ըստ այնմ՝ աչք ան 'ի վերայ արդարոյ. ձեռք ասելով կիմացվի ամենակարողութիին և անչափ մեծութիին. որ ամէն արարածք իրեն զօրութե տակն են:

Հ. Ի՞նչ ըսել է. ձ՛ծ ամէն տեղ է:

Պ. Ըսել է թէ ձ՛ծ թէ երկինքն է և թէ երկիրս է, նաև ամէն տեղ է. մանաւանդ թէ ամէն տեղ իր մեծութեան մէջն է: Ինքն է սլատեալ զամենայնիւ, 'ի ներքոյ ամենայնի, 'ի վերոյ ամենայնի, արտաքոյ ամենայնի, և ամենայն 'ի նմանէ, և ամենայն 'ի նա. ասաց լուսաւորիչ:

Հ. Արդեօք մեր մէջն է:

Պ. Այո՛ վասն զի ձ՛ծ է մեզ դու և կեանք տվողը. ապա իւր ամենակարող զօրութե մեր մէջն է, որով էութե մէջ ենք. թէ չէ՛ ոչինչ կը դառնայինք:

Հ. Ինչո՞ւ կըսվի թէ ձ՛ծ երկինքն է:

Պ. Զի իւր փառքը երկինքն աւելի կը յայանի, անոր համար երկինքը կըսվի. նաև բնակեալ 'ի սբս շնորհօքն. և 'ի

դժսխա կըսվի իբր դատաւ որ արդար. սա-  
կայն ի՞նչ տեղ չի կայ : Առապաշտ փիլիսո-  
փաներն ըսին թէ ի՞նչ ամէն տեղ է,  
միանգամայն տեղ չունի, թէ կուզես  
տեղ խնդրել՝ իրեն մէջ խնդրէ ամէն  
բան. որ է պարառութիւն և չափ ամե-  
նայնի :

Հ. Ա՞նչ վարդապետներն ի՞նչպէս կը  
բացատրեն :

Պ. Եւագր այսպէս կը վկայէ. Հոն  
կըսվի ի՞նչ, ուր կը յայտնին իրեն գործ-  
քը, և ուր աւելի է փառքը. սուաւել  
մերձ է ՚ի զօրս երկնից : Աւստի իբր հե-  
ղինակ բնութիւն ամէն տեղ է :

Հ. Ի՞նչ ըսել է ի՞նչ ամէն բան կը  
տեսնէ :

Պ. Ըսել է թէ ամէն բան ի՞նչ առջին  
յայտնի է՝ թէ ապառնի գալիքները թէ  
ներկայն և թէ անցածները. մինչև մեր  
սրտին ծածուկ խորհուրդներն իրեն  
յայտնի են. ինչպէս կը հաստատէ ա-  
ռաքեալն : Ասան զի ի՞նչ գիտնալովը և  
տեսնելովը կը գոյանայ ամէն բան, առանց  
ի՞նչ գիտութիւն բան չի կրնար ըլլալ. գիտ-  
նալովը կը կամի, և կամելովը կը գիտ-  
նայ և կը տեսնէ. որովհետև ի՞նչ գիտնելն  
է կամիլ և կամիլն է գիտել, որ է ՚ի ա-  
չափառագոյն՝ կրուէ սարգիս շնորհալին :  
Աւստի ասաց իմաստունը. Զիսորդ կայ ՚ի  
ինչ է թէ գու ոչ կամելիք, և կամ որ ՚ի  
քէն չէր կոչեցեալ, զիսորդ պահէր :

Հ. Ի՞նչ ըսել է Ամենակալ :

Պ . Ըսե՛լ է թէ Թէ Թէ ոչ միայն ինչ որ կամենայ կարող է ստեղծել առանց աշխատանաց , այլև ստեղծածները պահել իրենց էութեան մէջ գեղեցիկ կառավարելով ամէն բան : Նաև ինչ որ կը հրամայէ , և թոյլ կուտայ՝ հարկաւ պիտի ըլլայ . զի նովաւ կեամք շարժիմք և եմք :

Հ . Ի՞նչ կխմանաս ասելով՝ Հայր ամենակալ :

Պ . Կխմանամ և կը դաւանիմ , թէ Թէ Թէ ոչ միայն է ամենակարող և ամենակալ ունիող բոլորին , այլև յաւիտենական Հայր միածին որդւոյն . նաև Հայր և նախախնամօղ է արարածոց , մանաւանդ մարդկային ազգի :

Հ . Ի՞նչ կխմանաս ասելով . Արարիչն երկնի և երկրի :

Պ . Կխմանամ և կը հաւատամ , թէ Թէ Թէ ոչ միայն ստեղծեց ոչնչէ երկինք աստղերով և հրեշտակներով , այլև երկիրս բոլոր ամէն բանով , մանր կենդանիներով , և աներևոյթ որդերով :

Հ . Ինչո՞ւ անանկ անպէտ նաև զնասակար կենդանիներն ստեղծեց :

Պ . Իւր ամենակարող իմաստութիւն աւելի փայլելու համար չնչին կենդանիներն ստեղծեց . որոնց վրա անանկ զարմանալի բաներ կան , որ մեծ կենդանիներուն վրա չի կայ . մէկ հաս աւազին վրա ժուռ եկող կենդանիին ներսի մասունքները և շարժող ուղիքն ինչ հանճարով եղեր են . մէկ կաթիլ ջրին մէջ այն .

չափ կենդանիներն որ տեսանք կը սլաք-  
տէին, ինչ իմաստութիւն ստեղծ վեր են :  
Այն ժժմունքներուն վրայի գոյները, և  
հիանալի յատկութիւններն ո՛վ կրնար ընելը  
թէ ոչ ամենակարող ձեռքն ստեղծողին :  
Իսկ փաստակար կարծրված կենդանիներն,  
ինչպէս են օձ, կարիճ, ևն. են առողջա-  
րար դեղ և պիտանի աշխարհիս գե-  
ղեցկութեանը և հարկաւորութեանը .  
մինչ զի՝ դաւիթ մարգարէն հիանալով  
կրսէ . Ո՛րպէս զի մեծ են գործք քո  
մօր . զամենայն ինչ իմաստութեամբ ա-  
րարեր, և լցաւ երկիր ստեղծուածով  
քով :

Հ . Արդեօք ան ստեղծեց մեղքը :

Պ . Որովհետեւ մեղքն ինքնիրեն իր չէ,  
հապա խոտորումն շիտակ կարգէն կամ  
դուրս ելլել ան օրէնքէն . որ սակասուի  
ըլլալով չի կրնար ան ստեղծել մեղքը,  
այլ երբեմն թոյլ կուտայ սկար ստեղծվա-  
ծոց. որ կը խոտորին և կիյնին իրենց ա-  
զատ կամօք : Ա՛՞՞՞ զմահ ոչ արար, և ոչ  
խնդայ ընդ կորուստ կենդանեաց, տասց  
սողմոն :

Հ . Ինչո՞ւ համար թոյլ կուտայ :

Պ . Կրսէ լուսաւորիչ՝ թէ որպէս զի  
լաւը վատթարէն որոշվի, և անարգը  
սրտաւականէն : Նաև անոր համար ան  
թոյլ կուտայ, որ բարիք մի հանէ անկէյ-  
ինչպէս կրսէ սք օգոստինոս, թէ լաւ հա-  
մարեցաւ ան չարիքէն բարի հանել : քան  
թէ ոչինչ չարի թոյլ տալ :

Հ. Կարելի է որ ուրիշ բանի ալ հաւատանք ինչպէս *Կ* :

Պ. Անկարելի է. զի *Կ* միայն է յաւիտենական ճշմարտութիւն և ծայրագոյն բարի. ծայրագունին հաւասար ոչ բարի կրնայ ըլլալ, և ոչ ճշմարիտ :

Հ. Ի՞նչ է *Կ* անուան :

Պ. Սք վարդապետները կրսէն թէ *Կ* անանուն և բազմանուն. իբր զի՝ չի կրնար ըլլալ անանկ անուն, որ կարենայ *Կ* էութիւն յայտնել. ուստի Աճ ասելով *Կ* մային բոլորական գերազանցութիւն կիմանանք և ոչ էութիւն կամ բնութիւն. ինչպէս արեգակն ասելով արեւին բնութիւն չենք կրնար իմանալ, թէ ինչ է. այլ միայն կատարելութիւն կիմանանք, և ոչ էութիւն կիմանանք. որ է ահագին մարմին ունօղ լուսոյ և ջերմութիւն : Այսպէս *Կ* որչափ անուն տանք, միայն կատարելութիւնը կրմբունենք, չէ՛ թէ էութիւն. ինչպէս երբայեցիք Է՛Լ ասելով, և արաբայիք Ա՛Լ լահ ասելով, *Կ* մային հզօր զօրութիւն կիմանան. զի այսպէս կը թարգմանի. ինչպէս յունաց բառը *Թէօս*, և լատինացոյ *Տէուս*, տեսուչ և խնամակալ կը թարգմանի : *Տէս* ճեմ. 1 :

Հ. Արդեօք ունի՞ *Կ* յատուկ անուն :

Պ. Մովսէս մարգարէն ուղեց իմանալ, և երբոր հարցուց. պատասխան տվաւ *Կ*. Ես եմ որ էն. այս անունն աւելի յատուկ *Կ* տալայել է, որ ինքնագոյութիւն կը նշանակէ. ինչպէս մեր մէջ

Է գիրը . որ է անհաղորդական անուն .  
 ուրիշ բանի չի տրվիր :

Հ . Ո՞վ գրաւ ւնայ անունը :

Պ . Կըսէ լուսաւորիչ թէ ւնայ անուն  
 գնօղն ինքն է միայն , և ինքը միայն գի-  
 տէ իւր անունը . տակայն ագամ ստեղծվա-  
 ծին պէս տեսաւ իմացաւ ւնայ ամենակա-  
 ղողութիւնը , կանչեց ասք ասք , կամ հասքէսոյ  
 զմեզ . որ եղաւ մեր մէջ ւնծաւայել անունս  
 ւնծ : Բայց թէ մեր մէջ և թէ այլ ամէն  
 ազգաց մէջ անբաւ անուն կուտան ւնայ  
 յայտնօղ ւնծային կատարելութեց . իսկ  
 ւնծաչնչին մէջ կայ տասն անուն . զորօ-  
 ղինակ՝ ԷԼ , ԷԼՕՏԻՄ . ԷԼՈՏԻ ԿԱՄ ԷԼՕԱՏ ,  
 Սաբաօթ , Էլիբն , Սատտայի , Ագոնայի ,  
 Եաս , ԵէՏԻԷՏ . ԵէՏՕԼԱՏ ԿԱՄ ԵՔԷՏ .  
 վերջի իրեքն աւելի սեփական են ւնայ .  
 ինչպէս մեր մէջ՝ ւնծ , որ էն , է :

Այս ւնծային անճառելի անուանք կը  
 պարտաւորեն զմեզ , որ ըստ գերազան-  
 ցութեն՝ գերազանց պաշտօն մատուցա-  
 նենք ւնայ . անգագար փառաբանելով իւր  
 ամենակարող զօրութին : Հրէայք երեսի  
 վրա կիյնէին հին ատենը՝ երբոր տարին  
 անգամ մի քահանայապետն ւնայ անճա-  
 ռելի անունը կուտար ԵՔԷՏ . որ գրած  
 էր քառամանեկին վրա : Նոյնպէս կը սոս-  
 կային հեթանոսներն ւնայ անունէն .  
 Գաղենոս այսպէս կըսէ . Ո՞վ ստեղծօղ  
 յարգեմ զքեզ յաւէտ յայտնելով զգե-  
 ղեցկութիւն ստեղծուածոց քոց . քան  
 զոճելով հարիւրաւոր ցուլս պատարագ

կամ ծխելով՝ ի տաճարս քս զբազմագին  
խուհկս :

ԺԴ. ԿԻՐԱԿԻ :

Հ. Հաւատաւք ՚ի մի ւծ , ասելով  
ինչ կիմանաս :

Պ. Հաւատաւով կը դաւանիմ թէ մի  
է ւծ ամենակալ, մի է ծայրագոյն բա-  
րին, և մի ւծ է սկիզբն ամենայն արարա-  
ծոց . ուստի ոչ երբէք շատ ւծ կրնան  
ըլլալ . ինչպէս մոլորեալ կռպաշաները  
կը հաւատային . և ոչ երկու ւծ կրնայ  
ըլլալ՝ բարի ւծ , չար ւծ . ինչպէս սար-  
սիկները և մանկքեցի հին հերետիկոսնե-  
րը դրին . որոնք իրենց բանովը խայտա-  
ռակեցան :

Հ. Ինչո՞ւ չի կրնար ըլլալ :

Պ. Ասան զի թէ որ մէկ ստեղծողէն  
կամ մէկ ծայրագունէն աւելի ըլլար ,  
մէկզմէկ եղծանելով և ոչ մէկը կրնար  
ըլլալ ւծ՝ կամ ստեղծող . ինչպէս կրսէ  
տերառուղիանոս . Ա՛ծ եթէ չիցէ մի՛ ոչ  
ևս է : Ուրեմն պէտք է ծայրագոյն բա-  
րին մի ըլլալ . որպէս զի հնար ըլլայ ա-  
մէն բան անկէ առաջ գալ և գոյանալ :  
Տր ւծ մեր ւոր մի է : Ես եմ ւոր ւծ , և  
չիք այլ ոք :

Հ. Հտապ ինչո՞ւ կրովի՛ ւծ աստու-  
ծոց . և ւոր տերանց :

Պ. Նախ կըսվի նկատմամբ սրբ, որ  
 անձամբ և անձանման ըլլալով երբեմն  
 անձ կըսվին. զորօրինակ աւետարանը կը  
 բերէ. Ես ասացի թէ անձք իցէք: Երկ-  
 րորդ՝ այս բանը կեղծէ կը մերժէ հե-  
 թանոսներուն հնարած չանձները. հաս-  
 տատելով թէ անոնք ալ արարչին ստեղծ-  
 վածն ըլլալով մի է անձ:

Հ. Ա՞նձ քանի՞ անձն ունի:

Պ. Երեք անձն՝ հայր, որդի, և հոգի  
 սր. երեք անձն ալ կատարեալ անձ մէկ  
 բնութիւն, մէկ կարողութիւն, և մէկ իշխա-  
 նութիւն. Ուստի կը դաւանինք. Երեք ան-  
 ձինք և մի բնութիւն մի անձութիւն:

Հ. Ի՞նչպէս կըլլայ մէկ անձ:

Պ. Ձի երեք անձինք թէպէտ զանա-  
 զան են անձնաւորութիւնք. բայց մի և նոյն  
 բնութիւն, և նոյն խոսք անձութիւն ունին.  
 զորօրինակ արեգակն ունի լոյս և ջերմու-  
 թի որ իր էութիւնէ չեն զատվիր. անոր  
 համար մի է արեգակը: Սակայն այս խո-  
 րին խորհրդին խելք չի հասնիր, և ոչ  
 օրինակով կրնայ մարդ հասու ըլլալ:

Հ. Ա՞նձային անձանց ո՞րը մեծ է:

Պ. Երեքն ալ հաւասար են նոյն անձու-  
 թիւն նոյն մեծութիւն նոյն խմաստութեամբ  
 և ամենակարողութիւն. ուստի հայր կըս-  
 վի աւաջին անձն. որդի երկրորդ անձն.  
 և հոգի երրորդ անձն:

Հ. Հայր անձ ի՞նչ աւելի բան ունի:

Պ. Բաց ՚ի հայրութիւն աւելի բան չու-  
 նի հայր անձ. որդին որդիութիւն ՚ի զատ

աւելի բան չունի . իսկ հոգին ելողու-  
թենէ 'ի զատ աւելի բան չունի : Իբր  
զի՛ հօր ւոյ բանն կամ խմաստութիւն է  
որդին միածին՝ ւծ յւոյ , լոյս 'ի լուսոյ :  
Իսկ հօր և որդւոյ սէրն է հոգին սբ՝ յա-  
ւիտեանական ելումն կամ բղխումն :

Հ. Ի՞նչ յատկութի ունին :

Պ. Անձնեւորութի և հայրութի յա-  
տուկ է հօր ւոյ . զի չէ ծնած , այլ ծնող  
որդւոյն . որդիութի յատուկ է որդ-  
ւոյն . զի ծնեալ է 'ի հօրէ յաւիտեա-  
կան ծննդեամբ . և ելողութի կամ բղ-  
խումն է հոգւոյն սբոյ : Ուստի առաջին  
անձն կոչի հայր՝ անձին և պատճառ .  
Երկրորդ անձն կրտսի՛ որդի՛ բան՝ և պատ-  
կեր հօր . երրորդ անձն կրտսի՛ հոգի՛ սէր՝  
և պարզև հօր և որդւոյ :

Հ. Կարելի՞ է օրինակով բացատրել :

Պ. Ինչպէս որ մեր հոգին մէկ է , և  
ունի միտք և կամք որ չեն զատվիր  
հոգւունմէ , նաև մտքէն բան կը ծնի և  
կամքէն սէր . այսպէս հայր ւծ ունի  
բան և սէր . որ է որդի և հոգի , թէպէտ  
ւծութիւր մէկ է : Սակայն մեր հոգին  
ստեղծական ըլլալով միտքն ու կամքը  
յատկութի են . իսկ ւծ անստեղծ էակ  
և հոգի ըլլալով բանն ալ ւծ է , սէրն  
ալ . և այսպէս իրեք անձինք կորոշվին , և  
մէկ բնութիւն ւծ կը մնայ յաւիտեան :  
Ինչպէս մակաբերեցին նաև կուսպաշա-  
ներն . որոնց մէջ կար այսպիսի բան .  
Նախ ւծ . և ասրա բան և հոգի ընդ նո .

սին . . երեքեան ամենևին համաբուճք  
և միասնակեանք : Տէս սոնա . մ . ք :

Հ . Ի՞նչ ըսել կուզէ երևելեաց և ա-  
ներևութից :

Պ . Ըսել է թէ ի՞նչ է արարիչ ոչ միայն  
զգալի եղածներուն , որ կը տեսնենք և  
կը շօշափենք . այլև աներևոյթ և անմար-  
մին էակներուն , որ աչքի տակ չեն իյ-  
նիր . ինչպէս են հրեշտակները և մեր  
հոգին :

Հ . Որո՞նք են աւելի կատարեալ  
ստեղծվածք :

Պ . Թէպէտ ամէն արարածք բարի և  
կատարեալ են , ինչպէս վկայեց . Եւ-  
ետես ի՞նչ զի բարի է . սակայն հրեշտակ-  
ներն և մեր հոգին անմարմին ըլլալով ա-  
ւելի ազնիւ և կատարեալ կըսվին : Ա-  
նոր համար կարպոկրատէս հին հերեօի-  
կոսը դատապարտեցաւ . զի կըսէր թէ  
հրեշտակները մարմին ունին : Նարե-  
կացին հոգիանիւթ կը կոչէ հրեշտակ-  
ները :

Հ . Յորո՞ւմ կը կայանայ մարդուս գե-  
րազանցութիւնը :

Պ . Զի ունի անմահ հոգի իմացական  
ազատ կամեցող և ինքնիշխան , որով և  
կըսվի սրտկեր ի՞նչ . ըստ այնմ . ըստ  
սրտկերի ի՞նչ արար զմարդն : Հնոստան-  
ցոց հին գրեանքը մէջ այսպէս գրած է .  
Դնենք բիւրաւոր մեծ ամաններ լեցուն  
ջրով . որոնց մէջ արեգակը ծագելով .  
թէպէտ մէկ է , բայց նոյն կետին մէջ

կը բազմանայ ամաններուն մէջ երևնալով իրարու նման, այս ամաններն են մեր մարմիններն. արևն է սլառկեր գերագոյն էին. սլառկերք արևու են մեր հոգիք ստեղծեալք՝ ի նմանութի միոյն անյ:

Հ. Ինչո՞ւ կըսվի սլառկեր անյ:

Պ. Վասն զի է աննիւթ և անմահ. որ ատտի կեանս զանձ սիրելով և ծառայելով կը միանայ անյ հետ, և կը ժառանգէ յաւիտենական երանութեամբ:

Հ. Մարդս քանի՞ մեծութի ունի:

Պ. Երկու. կարողութի ճանաչման, և կարողութի կամեցման կամ ընտրութե. զի լուսով մտաց ճանչնալով բարին, ազատ կը կամի՝ կընտրէ՝ և կը ժառանգէ բաղձալին:

Հ. Ինչո՞ւ տվաւ անձ այս կարողութիները:

Պ. Անոր համար որ ստեղծվածներէն ստեղծողը ճանչնանք, անցաւոր բաները թողունք ծայրագոյն բարւոյն փափաքինք. բոլոր բաղձանքնիս առ անձ գեղով, ազատ կամօք սիրելով և սլառակելով միանանք արարչին հետ յաւիտեանս յաւիտենից: Այսպէս կը խօսի գաղենոս իմաստասէր. ճշմարիտ բարեպաշտութին կայանայ ճանաչել զիս ինքն, և ուսուցանել այլոց զմեծութի բարութեն՝ անյ կարողութե և իմաստութե. բարութին փայլի ի հաւասար տրամաբաղսութե պարգևացն, իմաստութին ի գերազանց պարգևս. և կա

լողու թիւն 'ի մեծ ագործու թէ խորհրդոց  
լւրոց :

ԺԵ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ. Ո՛րն է հաւատամքին երկրորդ  
մասն :

Պ. Եւ 'ի յս քս որդին իւր միածին  
տր մեր :

Հ. Ի՞նչ ըսել կուզէ :

Պ. Անմիջապէս յսի անուներ գնելով  
կը յայտնէ, թէ քրիստոնեայն ինչպէս  
որ կը հաւատայ, թէ ւծ ստեղծեց  
ոչնչէ աշխարհս, այսպէս ալ պիտի դա-  
ւանի, թէ որդին ւծ փրկիչ եղաւ և  
ազատեց մարդս սատանային գերուէն,  
ինչպէս ասաց իմաստունը. Ոչ գեղք և  
ոչ սպեղանիք բժշկեցին զնոսա, այլ քո  
տր բանդ, որ զամենայն բժշկէ. քանզի  
կենաց և մահու գու ունիս իշխանու-  
թիւն :

Հ. Անուհս յս քս ի՞նչ կը նշանակէ :

Պ. Ինչպէս վերն ըսինք յս եբրայեցոց  
ըզուով փրկիչ կը նշանակէ. որ կըսվի  
էշուահ, կի՛ յէսու. իսկ քս կամ մա-  
շուահս և կամ մեսիա, օծեալ ըսել է .  
Այս անուամբ մարդարէները խոստա-  
ցեր էին փրկիչը. իսկ գանիէլ մարդարէն  
օծեալ և առաջնորդ կանուանէ :

Հ. Հրէից գրքերուն մէջ ի՞նչպէս կը հաստատեն :

Պ. Ոչ միայն մարգարէներուն, այլև ուրբիներուն գրոց մէջ ալ կայ անունս մեսիա : Ուստի ուրբի մօզէ մայմոնիտը կը գրէ, թէ թագաւորն մեսսիահճ գալոց է. ով որ չի հաւատայ ոչ միայն կուրանայ զայլ մարգարէս, այլև զնոյն իսկ զօրէնս և զվարդապետն մեր մովսէս :

Հ. Ինչո՞ւ կըսվի մեսիա կամ օծեալ :

Պ. Որովհետև հին օրինաց ժամանակը հրէաները կօծէին թագաւորները, և քահանայապետները. իսկ յն այս ամէն մեծութի ունենալուն համար օծեալ անուանեցաւ :

Հ. Յն ևս օծվեցա՞ւ մարմնաւոր օծմամբ :

Պ. Ոչ. զի օծումն յնի. քնի էր անձային. որ իւր անձութեամբն էր օծեալ և էր միշտ անբաժանելի :

Հ. Չարչարանաց և մահուան ժամանակը չի բաժնըվեցա՞ւ :

Պ. Ոչ երբէք. զի այս օծումն էր ներքին և էական, որով և անձութիւնն էր միշտ մարմնոյն հետ թէ չարչարանքին ատենը, թէ թաղման, և թէ յարութի : Ուստի կըսէ շարականը. Չանապական զանձացեալ մարմին սպատեալ սբ կտաւօք և եդ ՚ի գերեզմանի :

Հ. Ինչո՞ւ ասաց, Յն քն օրն մեր :

Պ. Վասն զի յն քն որդին միածին նոյն բնութք և նոյն կատարելութեամբ :

ԹՅՈՒՄՆԻ ԿՐԻՍՏՈՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ  
 և ԵՐԿՐԻ՝ ՀՐԵՇՊՈՒԿԱՅ և մարդկան :

Հ. Ինչո՞ւ մեր տր կըսվի :

Պ. Զի փրկիչ ըլլալով իւր յատուկ  
 արեամբը գնեց, և զմէզ իրեն ժողո-  
 վուրդ և զաւակ ստացաւ, և տր եղաւ  
 մարդկան ազգի : Անոր համար երբոր  
 թումայ առաքեալ յարութենէ ետև  
 տեսաւ քսի վէրքն՝ ազաղակեց . Տր իմ  
 և ԹՅ իմ :

Հ. Ո՞րն է երրորդ մասն հաւատամ-  
 քին :

Պ. Որ յղացաւ ՚ի հողւոյն նբյ . ծնաւ  
 ՚ի մարիամայ կուսէն :

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի :

Պ. Յաւիտենական բանն ԹՅՈՒՄՆԻ  
 մանեալ ժամանակն որ եկաւ, խոնար-  
 հեցաւ ՚ի հայրական ծոցոյ, մարմին ա-  
 ռաւ, մարդ եղաւ մեր փրկութեան հա-  
 մար :

Հ. Ուսկից մարմին առաւ :

Պ. Ի մարիամայ կուսէն . այսինքն  
 մաքուր արիւնէն ԹՅՈՒՄՆԻ մարմին յօ-  
 րինեց՝ բանական հոգի տվաւ, և բանն  
 մարմին եղաւ, անձնաւորեց մարմինն,  
 եղաւ ԹՅ և մարդ անճառելի և անհա-  
 տանելի եղանակաւ :

Հ. Ինչո՞ւ ասաց ՚ի հողւոյն նբյ :

Պ. Զի աւետման օրը երբոր աւետիս  
 տվաւ գաբրիէլ հրեշտակ նբ կուսին, և  
 ողջունելով ասաց . Ուրախ ըր բեր-  
 կրեալդ, անատենը նբ կոյսն երբ ա-

րակուսեալ զարմացաւ . պատասխան  
տրվաւ հրեշտակը . հոգի սբ եկեացէ 'ի  
քեզ : Ուստի գործակցութիւն հոգւոյն  
սբջ փրկիչն եկաւ նոյն կէսին մաքրեալ  
կուսին սբ արգանտը բնակեցաւ , կամ  
յղացաւ հոգւովսբւ . զի բնակողն էր  
որդի այ և ւծ :

Հ. Արդեօք եղան այ փոփոխութի  
կամ այլայլութիւն :

Պ. Ոչ երբէք փոփոխութի եղաւ մար-  
դանալովն . զի սբ վարդապետներն այս-  
պէս կրսէն . Եղաւ որ ինչ ոչ էր՝ առանց  
կորուսանելոյ զոր ինչ էր . ինչպէս թա-  
գաւորը կրնայ ըլլալ զօրապետ առանց  
կորսընցնելու թագաւորուիլ և առանց  
փոխվելու :

Հ. Ի՞նչ ըսել է ծնաւ 'ի մարիամայ  
կուսէն :

Պ. Ըսել է թէ անձն որդւոյն այ մնա-  
լով միշտ ինչ որ էր . առաւ մարդկային  
բնութիւն . որով ւծութիւնն միացաւ  
մարդկութեան հետ անբաժանելի և  
անշփոթ միաւորութեամբ , և նոյն  
ւծային անձն յղացաւ և ծնաւ 'ի մա-  
րիամայ ւծածնէն :

Հ. Ուրեմն մի և նոյն անձն է՞ որդին  
այ և որդին մարիամու :

Պ. Այո՛ , նոյն իսկ անձն է ւծային  
ծնեալն 'ի կուսէն , ճշմարիտ ւծ և ճրջ  
մարիտ մարդ , կատարեալ ւծ , և կա-  
տարեալ մարդ , որդի այ և որդի մար-  
դոյ :

Հ. Ուրեմն կոյս մարիամ է մայր ւայ :

Պ. Այո՛, ամենայն իրօք . ինչպէս ասաց եղիսարէթ . Եւ ուստի՞ է ինձ այս , զի եկեսցէ մայր ւան իմոյ առ իս . ուստի եփեսոսի նք ժողովն ընդդէմ՝ նեստորի սահմանեց թէ նք կոյսն է ւածածին : Եւ դրիգոր ւածարանն ասաց . եթէ ոք ոչ ւածածին զմարիամ իմանայցէ , հեռի է յւածու թենէն : Ի քեզ եմք ապաւինեալ քնի մայր ւայ մերոյ . կրսէ շարականը :

Հ. Ինչո՞ւ կրսվի ւծ և մարդ :

Պ. Զի ւծային անձն ըլլալով , բոլոր ւծու թին ունէր , և կատարեալ մարդ ըլլալով , կատարեալ մարդկային բնութին ունէր . ինչպէս կը վկայէ շարականը . Բանն թանձրանայ՝ ի մարմնի , մարմնանայ անմարմինն , միացեալ բնութի ի յերկուց . Ա՞ծ մարմնով վասն իմ իսաչեալ . մերով բնութիս մեռանի , ւծ անմահ խոստովանի : Սք վարդասպետք կրսեն , թէ քն բանն ւծ այնչափ խոնարհեցաւ վն մեր փրկութե մինչև մարդկային բնութի առաւ մարդ եղաւ . հասկա մենք մեր փրկութե համար ո՞րչափ պիտի խոնարհինք , քանի՞ պիտի ամրջանանք երբոր մեր ւորը կը տեսնենք այսպիտի խոնարհութե մէջ : Ուստի սէտք է բոլոր այս շարթու այս սքանչելի խորհրդին վրա մտածենք , և խոնարհինք առաջի ւայ և դողանք որ քիչ բանով կայլայլինք և կը հպարտանանք . վայ է մեզ եթէ քնի խոնարհութեը և հեզութեը

չհետևինք որ սասց . Ուսարուք յինէն  
զի հեզ եմ և խոնարհ սրտիւ :

ԺԶ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ . Քսի անն մեր քանի՞ անձն ունէր :

Պ . Մի միայն անձն ունէր . Թէպէտ  
կատարեալ մարդկային բնութիւն ու  
նէր, բայց մարդկային անձն չունէր . այլ  
ածային անձն լէցուց մարդկային անձին  
տեղը :

Հ . Կարելի՞ է օրինակով բացատրել :

Պ . Խորհուրդս անձառելի ըլլալով  
մարդու միտք չի հասնիր, և օրինակ չի  
յարմարիր : Սակայն վարդապետներն  
ասանկ օրինակ կուտան . ինչպէս որ  
մարդուս հոգին ու մարմինը միանալով  
մէկ անձն եղած է, այսպէս քսի ածու-  
թին ու մարդկութիւնը միանալով մէկ  
ածային անձն կայ, մարդկային անձն չի  
կայ : Անոր համար չարչարանքը մարդ-  
կային բնութիւնն ինչ համարեցաւ, ըստ  
այնմ . Ա՞ծ մարմնով վասն իմ խաչեալ .  
յարեաւ ան, համբարձաւ ան . ևն :

Հ . Այս խորհուրդ ինչ կը կոչվի :

Պ . Խորհուրդ մարդեղութե, կամ  
խորհուրդ բանին մարմնացելոյ կրավի .  
զի բանն ան մարմին առնելով մարմնա-  
ւորութի, ներմարդութի նաև անօրէ-

նութիւն կոչվեցաւ այս խորհուրդ՝ ըստ  
 արց հարց :

Հ. Ո՞վ ուրացաւ մարդէղութիւն քնի :

Պ. Նախ և առաջ հեթանոսք կուս-  
 պաշտութիւն կուրանալով ուրացան, և  
 հրէայք գայթակղելով չընդունեցան.  
 Թէպէտ ուղենային կրնային անձանչէն  
 հաստատել և հաւատաւ. այլ անոնք ալ  
 կուրացան. ինչպէս առաքեալն ասաց :

Հ. Ի՞նչպէս կրնային հաստատել :

Պ. Հրէայք անապաշտ ըլլալով շատ  
 դիւրին կրնային հասու ըլլալ թէ մար-  
 դարէներուն գուշակութենէն, թէ ա-  
 ւանդութենէն, և թէ իրենց պատմիչ-  
 ներէն. ինչպէս յովսէպոս հրէայ պատ-  
 միչ քնի գործքերը և հրաշքները կը  
 հաստատէ : Փիլոն հրէայ իմաստասէր  
 նոյնպէս վկայելէն ետև կրսէ. առաւել  
 դիւրին է ան մարդ ըլլալ, քան թէ մար-  
 դու ան ըլլալ :

Հ. Արդեօք կուսպաշտներուն մէջ ևս  
 կային գուշակութիւնք :

Պ. Կուսպաշտութիւն հին ժամանակը՝  
 հելլենացոց և հռոմայեցոց մէջ կուսանք  
 կային Սիբիլա անուամբ. որ իբր մար-  
 դարէանալով քնի վրան այսպէս. Բար-  
 ձրեալն ան իջցէ յերկիր, և մարմին  
 զգեցեալ ի կուսէն շրջեցի ընդ մարդ-  
 կան, առնելով նշանս և արուեստս. չար-  
 չարեացի և մեռցի մահուամբ խաչին և  
 յարիցէ երեքօրեայ, ևն : Ար կը բերեն  
 հին վարդապետները, մանաւանդ որո-

գինէս հեթանոսաց գէմ կը հաստատէ  
քնի մարգեղուծիը՝ հեթանոսաց խօսքե-  
րով:

Հ. Ի՞նչ հերեօնիկոսուծի ելաւ մար-  
գեղուծի վրա:

Պ. Հին ատենէն ՚ի վեր շատ զանազան  
հերեօնիկոսուծիներ ելան. բայց գլխա-  
ւորն են նեստորիներ և եւտիքէսիներ: Նես-  
տորի գէմ եփեսոսի նք ժողովը հաստա-  
տեց թէ՛ Բանն մարմին եղև և բնակե-  
ցաւ ՚ի մեզ ճշմարտապէս: Իսկ եւտի-  
քէսի գէմ քաղկեդոնի նք ժողովը հաս-  
տատեց. Որ ՚ի կերպարանս ան է, զանձն  
ուհայնացոյց զկերպարանս ծառայի ա-  
ռեալ: Արդ՝ կերպարանն ան կը յայանէ  
անձային բնուծին, և կերպարան ծառայի՝  
մարգկային բնուծին. ապա մի և նոյն  
անձն քնի ունէր երկու բնուծի: Ասան  
զի նոյն է ան և մարգ ասել քն, և նոյն  
երկու բնուծի. կրսեն հայոց հայրա-  
պետները:

Հ. Ո՞վ էին այս հերեօնիկոսներն:

Պ. Նեստոր այր սատանայամիտ աշա-  
կերա մապուկատացի ազանգաւորին,  
խորամանկու թպտորիարգ նստաւ ստամ-  
պօլ: Եւ յամի ան 430. սկսաւ սորվեցը-  
նել թէ մարիամ չէ անձանն, այլ մար-  
գածին և քն երկու անձն ունի, անոր  
համար դատապարտեցաւ նախ՝ հռովմ  
և աղէքսանգրիա, յետոյ ՚ի նք ժողովը  
եփեսոսի 431 ին: Իսկ եւտիքէս վանա-  
հայր էր ստամպօլ. որ նեստորի գէմ

գրել ուղեց . այլ տոգէտ ըլլալով ընկաւ  
 ուրիշ մտլորուծի . այսինքն դրաւ թէ քն  
 մէկ բնուծի ունի շփոթեալ : Ար դատա-  
 պարատեցաւ նախ 'ի ստամայօլ , ապա 'ի  
 քաղկեդոն 451 ին :

Հ . Ո՞վ էր ապողինար հերեաիկոս :

Պ . Ապողինար երէցն՝ հակառակելով  
 մարդեղուծի՝ սորվեցուց , թէ քն բա-  
 նական հոգի և մարդկային միտք չունի .  
 որ կոստանդինուպօլսոյ առջի ժողովին  
 մէջ նշովեցին , և հաստատեցին թէ քն  
 բաց 'ի անուծի , որ էր բոլորովին հոգի  
 և բան , ունէր նաև մարդկային հոգի և  
 միտք . ըստ այնմ . Տրտում է հոգի իմ  
 մինչև 'ի մահ . Անոր համար կըսէ մեր հա-  
 լատաւիքը . Որով էառ մարմին , հոգի ,  
 միտք , և զամենայն որ ինչ է 'ի մարդ :

Հ . Արդեօք ունէր քն մարդկային կամք :

Պ . Այո՛ ինչպէս ասաց . ոչ իմ կամք ,  
 այլ քոյդ լիցի : Սակայն ելան միակա-  
 մեան հերեաիկոսներ , որ եւտիքէսի մտլո-  
 րուծեր հետևելով ուրացան քնի մարդ-  
 կային կամքը . և ինչպէս որ քնի բնու-  
 թիը շփոթեալ կը դնէին , ասանկ ալ կամ-  
 քը : ՍԷ վարդապետք զանոնք դատա-  
 պարաւելով հաստատեցին ճշմարտուիը :  
 Ըստ այնմ վանական վարդապետն կըսէ .  
 Որպէս արեգական լոյսն ընդ իւր միա-  
 լորէ զամենայն լոյս անշփոթ , այսպէս  
 բնուծի կամք և կիրք և ներդործուծի  
 ընդ անայինն միաւորեալ է 'ի քն ճըշ-  
 մարտուծի :

Հ. Ո՞վ էն առաջօրեան հերետիկոսք :

Պ. Ապեղէս եղաւ առաջին, որ ասաց թէ քս ճշմարտապէս մարմին չունէր. այլ իր մարմինն աստղերէն կազմած էր, որ բերաւ երկնքէն. ուստի առաջօք և առերևոյթ էր. այսինքն աչքի կերևնար, չէ թէ իրօք մարմին էր. որուն հետևեցան առաջօրեանք յերրորդ դարուն և դատապարտեցան :

Հ. Ո՞վ էր յուլիանէ աղիկառնացին :

Պ. Յուլիանէ առաջօրեանց հետևելով յամի ան 430 սինդեց՝ թէ քսի մարմինն էր անապական և անմահ. որ սբ վարդապետք հերքելով հաստատեցին թէ քսի մարմինը ճշմարտապէս կրեց, հոգնեցաւ, անօթեցաւ, լացաւ, և չարչարեցաւ : Շնորհալին կրսէ. նզովեալ է ՚ի մէնջ յուլիանէ և աղանդ նորա : Նոյնպէս յոհան իմաստասէր ժողովով դատապարտեց. և անոնց դէմ գրեց դեղեցիկ ճառը : Թէպէտ մոլորեալ յոհան մայրագոմեցին և սարգիս աշկերտը հետևեցան այս աղանդին, այլ շուտով հերքեցան մեր վարդապետներէն :

Հ. Ո՞վ էր սևերոս անախոքացին :

Պ. Սևերոս հակառակ յուլիանէի սինդեց թէ՛ քսի մարմինը ոչ էրբէք կրավի անապական : Այս մոլորութիւնը նախ հայ սբ վարդապետներն դատապարտեցին բանիւն. թէ մայր քո ծնցի մարմին անտխեղծ : Ուստի քսի մարմինը կրավի անապական՝ ըստ որում անօթութիւն միա-

ցեալ էր իրեն հետ, և միշտ անփակելի պահէց. և կըսվի կրական, վասն զի չարչարեցաւ և մեռաւ:

Հ. Ո՞վ էր պետրոս կնափոս, այսինքն թափիչ:

Պ. Էր պատրիարք անաիոբայ, որ հետևեցով եւտիքէսի՝ դրաւ թէ քս թծուծք չարչարվեցաւ, որ թծաչարչար ըսվեցաւ: Ասոր համար կըսեն թէ սք թծը խաչեցարով երդեց թծաչարչար մտօք: Հայերը կը նղովեն այս հերեափկան, ինչպէս յայանի է սք վարդապետներուն գրեանքէն. որոնք բոլոր այս հերեափկոսները դատապարտելով մերթեցին:

Հ. Ի՞նչ պատճառով այսքան մոլորութիւք եղան մարդեղութիւ խորհրդին վրա:

Պ. Պատճառն է մարդուն իր խելաց հաւնիլն, զի որչափ աւելի հպարտանայ մարդ, այնչափ աւելի մեծ կըլլայ կործանումն. և որչափ հերեափկոս եղեր էն, բոլորն ալ հպարտութեւ սատանային խորխորտան ընկեր էն, և այսպիսի զարհուրելի գիւական աղանդներ հնարեր են. Անոր համար կը խրատեն սք վարդապետք, թէ քրիստոնեայն պէտք է միշտ այ երկիւղն ունենայ սրտին մէջ. զի թծ չուզէր վիճաբանութի և հակառակութի. այլ խոնարհ երկրպագութիւն և ծառայութիւն, հնազանդ ըլլալով սք եկեղեցնայ. սր է անսխալ կանոն հա-

ւատոյ և սիւն հաստատութե՛ ըստ աւ-  
ստփելոյն :

ԺԷ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ . Ո՞րն է չորրորդ մասն հաւատամ-  
քին :

Պ . Չարչարեցաւ առ սոնտոս պիղոս-  
տոսիւ խաչեցաւ , մեռաւ , և թաղեցաւ :

Հ . Ի՞նչ ըսել կուզէ :

Պ . Յայանի կը գաւանի , թէ քն մեր  
փրկութե՛ համար մարմին առնելով չար-  
չարեցաւ և տանջեցաւ , ինչպէս որ մար-  
գարէնները նախագուշակեր էին . բոլոր  
գուշակութիւնները կատարելէն ետեւ ա-  
տաց . ամենայն ինչ կատարեալ է : Նաև  
կռասպաշտներուն գրքին մեջ ալ կար այս  
գուշակութիւնը , թէ փրկիչ անմահ թա-  
գաւոր չարչարեալ վասն մեր . որպէս հին  
վարդապետք կը բերեն :

Հ . Ո՞ր չարչարեցաւ քն :

Պ . Չարչարանոց սկիզբն եղաւ գեթ-  
սէմանի պարտէզին մեջ , ուր առանձնա-  
ցաւ յն աշակերաներովն . և մտածելով  
բոլոր չարչարանքներն այնչափ վշտացաւ ,  
որ արիւն քրտինք կը թափէին մարմի-  
նէն : Եւ հոն յուգայի մատնութե՛ թա-  
փեցան զօրքը սուսերովք և բրովք , բրո ,  
նեցին տարին չարագործի նման :

Հ. Այլ ո՛ւր տեղ չարչարեցաւ :

Պ. Եւկրորդ՝ կայխափայ քահանայապետին տունը չարչարեցաւ . ուր անիրաւ դատաստան ըրին, և երկու տւտ վկայով հրէայք ամբաստանեցին և դատապարտեցին առանց քննութեան անմեղ գառն ի՞յ . ծեծեցին, ապտակեցին, թըքին, նախատեցին, և ամենայն կերպով վշտացուցին . այլ նա բերան չի բացաւ, ըստ մարգարէութեան . Եղէ ես մարդ որ ոչ խօսի :

Հ. Այլ ո՛ւր տեղ չարչարեցին :

Պ. Պիղատոս դատաւորին տունը . ուր նորէն ամբաստանեցին հրէայք ասելով թէ հակառակ է կայսեր և հռոմայեցոց արութեան . ուստի նորէն ձաղկեցին, փուշ պտակ դրին գլուխը՝ և դատապարտեցին : Պիղատոս տեսնելով յո՛ր անմեղութիւն ու զեցազատել . հրէայք աղաղակեցին՝ բարձ ՚ի մէնջ, վերցուր մեր մէջէն . տո՛ւր մեզի բարաբբա մարգասպանը, ՚ի խա՛յ հան զդա : Եւ այսպէս պիղատոս ալ երեսպաշտութիւն ընելով հրէից կամքը կատարեց, և վճիռ տվաւ որ խաչվի :

Հ. Ինչո՞ւ համար խաչվեցաւ :

Պ. Մարգարէներուն խօսքը կատարելու համար յո՛ կամեցաւ խաչին վրա մեռնիլ : Իսկ հրէայք խնդրեցին պիղատոսէն որ խաչին վրա մեռնի անարդական մահւամբ, որով աւելի նախատվի . զի անատենը անարդ էր մահ խաչին :

Հ. Ի՞նչպէս տարին գողգոթայ լեռը :

Պ. Խաչը կանակը ավին, երուսաղէմայ մէջէն անցընելով տարին գողգոթայ լեռը չարաչար տանջանօք խաչեցին :

Հ. Ինչո՞ւ աւազակներուն հետ խաչեցին :

Պ. Անօրէն հրէաներն աւելի անարգութիւն տալու համար երկու գող գտան, և անոնց մէջը խաչեցին վեցերորդ ժամուն :

Հ. Ո՞րչափ մնաց խաչին վրա :

Պ. Խաչին վրա դամիւած ողջ մնաց իբր չորս ժամ. և ապա բարձր ձայնով աւանդեց հողին :

Հ. Հրէայք ի՞նչ կրնէին :

Պ. Անբաւ բաղմութիւն խաչին բոլորը կեցած շարունակ կը նախատէին կծու խօսքերով. մինչև լեղի խառնած քացախով ավին որ խմէ. զի ծարաւ էր այն՝ որ այսչափ դետեր և ծովեր ստեղծեր է :

Հ. Քանի՞ բան խօսեցաւ քն խաչին վրա :

Պ. Ութը. Եւ ներելով թշնամիներուն ասաց. Հայր թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն : Բ Ասաց բարի աւազակին. Ամէն ասեմ քեզ՝ այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին : Գ Մայրը մխլթարելով և յոհաննէս իրեն տալով ասաց. Կին դու ահա՛ որդի քո : Դ Յոհաննէսին տալով մայրն ասաց. Ահա մայր քո : Ե Մարգարէութիւնը կատարելով ասաց. Ծարուի եմ : Զ Ամէն բան

լինցնելէն ետև ասաց . Ամենայն ինչ  
կատարեալ է : է Մարգկային բնութի  
կերբը յայանելու համար ասաց . Է՛լի  
էլի լամա սաբաբթանի , որ է . Աճ իմ  
ած իմ ընդէր թողեր զիս : Ե Վերջն  
բանն ասաց . Հայր 'ի ձեռս քո աւան-  
դեմ զհոգի իմ :

Հ . Ի՞նչ խորհուրդ ունի :

Պ . Այս բանն ութը երանութիւնն  
կը յայանէ երանելեաց . որոնք աշխար-  
հիս մէջ քնի խաչին վրա մահանալով  
ներեցին թշնամեաց . փափաքեցան ար-  
քայութի . անաճնայ զաւակ գրվէցան .  
ծարաւեցան և վշտացան անաչին կամքը  
կատարելու համար . վերջապէս բարի  
մահամբ ան ձեռքն յանձնեցին իրենց  
հոգին : Եւ այսպէս լսեցին քնի բեր-  
նէն . Եկայք օրհնեալք հօր իմոյ ժա-  
ռանդեցէք զպարաստեալ ձեզ զար-  
քայութիւն : Այսօր ընդ իս իցէք ի  
դրախտին :

Հ . Ինչո՞ւ քս բարձր ձայնով աւանդեց  
հոգին :

Պ . Վասն զի ինքը ան ըլլալով մահու  
և կենաց , մահն իշխանութի չունէր  
քնի վրա . ուստի երբոր կամեցաւ՝ ա-  
զատութեամբ և բարձր ձայնով աւանդ-  
տվաւ բանական հոգին՝ հօր ան ձեռքը :  
Անոր համար զունկիանոս հարիւրասպեան  
հասկըցաւ որ հասարակ մարդու մահ  
չէ , ուրեմն ան է ասելով հաւատաց  
քնի . ինչպէս կը վկայէ աւետարանը :

Հ. Ինչո՞ւ այսչափ չարչարանքով մե-  
ռաւ :

Պ. Մարդկային մարմնով սատանային  
յաղթելու համար, որովհետեւ ԽԾ վրձ-  
ուեր էր որ ագամայ մեղքն այսպէս քա-  
ւէ. յս ալ վասն փրկութե մարդկան  
սիրով յանձ էր առեր այս վճիւր. որ-  
պէս զի ագամայ պատիժն ինքը քաշէ, և  
իւր մահւամբ բոլոր մարդիկ յաւիտենա-  
կան մահւանէ ազատէ : Թէ չէ՝ միայն  
մէկ լոկ հրամանով կարող էր փրկել  
զմեզ. կրտէ մեծն կիւրեղ :

Հ. Ինչո՞ւ քս կըսվի գառն Կայ պատա-  
րագեալ :

Պ. Որովհետեւ հին օրինաց ատենը  
եզներն ու ոչխարները մորթելով զոհ  
կրնէին որ իրենց մեղաց թողութի ըլլայ.  
Յս քս իւր անգին արիւնը թափելով  
սրբեց մեղքէն բոլոր ախեղերս. և իբր  
գառն Կայ զոհ, և պատարագ եղաւ հօր  
Կայ. ինչպէս սասց շնորհալին. Չհինն 'ի  
նորս փոխելով, զստուերն 'ի լոյս ճշմար-  
տելով, փոխան գառին ինքն գողով,  
գառն Կայ նուիրելով :

Հ. Ուրեմն քնի մահն էր պատարագ :

Պ. Ճշմարտապէս քս պատարագ ե-  
ղաւ անչափելի արդեամբք. որով ագա-  
մայ և ամէն մեղաց թողութի եղաւ. նաև  
արքայութե գուռը բացվեցաւ արդար-  
ներուն. որոնք առաջ զուրկ էին Կայ տե-  
սութէն : Որովհետեւ յսի անձն էր ԽԾ,  
արդիւնքն եղաւ անսահման. ինչպէս կը

վկայէ ոսկեբերան . Բաղմօք առաւել  
քան զոր պարտական էսք վճարեաց քն .  
և այնչափ առաւել , որչափ առ կայլակ  
փոքրիկ անդունդ անհուն :

Հ . Ո՛րչափ է քնի մեր վրա ունեցած  
սէրը , և մեր փրկութե՛ն դի՛նը :

Պ . Չափ չունի ո՛չ քնի սէրը , և ո՛չ  
մեր գինը . որովհետև քնի արեանը գինն  
ենք , որ լծ էր անսահման և անչափ ,  
վասն անչափ սիրոյն այսպէս չարչարե-  
ցաւ . ուստի նք վարդապետներն այսպէս  
վկայեցին : Որպէս իւր էր մարմինն՝ իւր  
էր և ամենայն կիրք մարմնոյն , սպտակն ,  
թուքն , սպակն՝ ի վիշոց , քացախն , լե-  
ղին , բևեռքն , խոցն , խոցումն տիգին :  
Զի եթէ փառք՝ բանին և մարմնոյն , և  
եթէ անարգանք՝ բանին և մարմնոյն :

Հ . Քնի մեռնելու ատենն ի՞նչ եղաւ :

Պ . Բոլոր աշխարհ խաւարեցաւ և  
սասանեցաւ տհազին երկրաշարժութե՛ք .  
մինչև աստուածները բացվեցան , նաև  
տաճարին վարսագուրը վերէն ՚ի վար սլա-  
տեցաւ . որ նշան էր հին օրինաց խա-  
փանմանը : Յետոյ ղինուոր մի տիգաւ խո-  
ցեց քնի կողն . ուսկից բղխեց արիւն և  
ջուր . որ կը նշանակէր խորհուրդ հաղոր-  
դութե՛ն , և խորհուրդ մկրտութե՛ն՝ կրտեն  
հին նք վարդապետք :

Հ . Երգեօք քնի հոգին երբոր մար-  
մինէն բաժնըվեցաւ՝ հե՛տն էր լծու-  
թիւր :

Պ . Եղան ոմանք որ ըսին թէ իրեք

օրւան մէջ զատված էր ԿՅԹԻՆԻՆ Ը .  
 սակայն սբ եկեղեցին հաստատեց ,  
 թէ քս մեռնելէն ետև ԿՅԹԻՆԻՆ Էր  
 միշտ անբաժանելի թէ հոգիէն՝ և թէ  
 մարմինէն . զի ինչ որ առաւ , ոչ եր-  
 բէք թողուց : Նարեկացին կրտէ թէ՛  
 Աճուքն ՚ի գերեզմանին արթուն էի , և  
 մարմնոյն մեռելու թէն ՚ի քուն : Նոյն-  
 պէս շնորհալին . Ուստի հոգի իւր մարդ-  
 կային , զոր աւանդեաց առ հայր յերկին .  
 հանդերձ բնութիւն ԿՅԹԻՆԻՆ Է՞՞ ՚ի հո-  
 գիան՝ որ ՚ի բանալին . էր բովանդակ և ՚ի  
 մարմին , մինչ բաժանեալ եղև հոգին :

Հ . Ի՞նչպէս թաղվեցաւ :

Պ . Թէպէտ քսի մահն էր անարդա-  
 կան , բայց թաղումն եղաւ թագաւորա-  
 կան . ազնիւ կտաւով և անուշահոտ խուն-  
 կերով պատեցին ԿՅԹԻՆԻՆ մարմինն և  
 դրին վիմափոր գերեզմանին մէջ շատ  
 մեծարանօք . ուր մարդ չէր թաղված :

Հ . Ո՞վ կատարեց յսի թաղումն :

Պ . Յովսէփ արեմաթացին . որուն հե-  
 արն էր նիկողեմոս և ուրիշ ազգականները  
 քսի ինչպէս կը պատմէ սբ աւետարանը :

Հ . Կարճ հեթանոսաց մէջ ծանօթու-  
 թի մահւանը քսի :

Պ . Այո՛ ինչպէս կոստանդիանոս թա-  
 գաւորին վարուցը մէջ կը դրէ , թէ Նրի-  
 թրէա սիբիլայն , որ կրտէր իրեն հա-  
 մար թէ ջրհեղեղէն ետև վեցերորդ ալ-  
 դէն է . յայտնեց սրատմունին իջման քսի ,  
 և է ստիքած այրն այսպէս . Ի՛հոսս ի՛րի-

«ԴՕ» Բէ՛աւ Ի՛ի՛ս «ԴԻ» . Ձի քրտնեացի  
 երկիր . Եւ եկեսցէ երկնից Թագաւոր .  
 Հասեալ 'ի գաատէ զամենայն մարմին .  
 Եւ տեսցեն զԽԾ մարդիկ . Չբարձրեալն  
 հանդերձ սքվք . Չմարմնազգեացն . Եւ  
 եղիցի յայնժամ նշան , Փայտն եղիցի  
 եղջիւր ցանկութե . Արանց բարեպաշ-  
 տից կեանք . Չրով լուսաւորեալ զհաւա-  
 տացեալս երկոտասան աղբիւրս . Գաւա-  
 զան հովուիչ տիրեսցէ . Սա ԽԾ մեր .  
 Փրկիչ անմահ Թագաւոր չարչարեալ  
 վասն մեր :

Հ . Կայ ուրիշ օրինակ :

Պ . Կան զանազան գուշակութիւք հին  
 հեթանոսաց գրքերուն մէջ . քայց լակտան .  
 տիտս կը բերէ յայտնի այս օրինակս .  
 հացեն Խյ ապտակս . . Թուքս Թունա-  
 ւորս . . տաճարին վարագոյր սրատառես-  
 ցի . գիշեր եղիցի . զերիս աւուրս ննջեալ  
 և այլն :

Հ . Քրիստոնեայն ինչպէս պիտի պա-  
 տուէ քնի չարչարանքն ու Թաղումը :

Պ . Պէտք է քրիստոնեաբար ապրելով  
 կամքն ու ցանկութիւր խաչ հանէ , աչ-  
 խարհ արհամարհէ և մարմինն անարգէ  
 առաքեալին խրատին պէս իբր գերեզմա-  
 նին մէջ Թաղվելով . որպէս զի հոգին  
 մնայ յաւիտեանս յաւիտենից : Ահա այս  
 վարդապետութիւր գրվի ամենուս սրտին  
 մէջ՝ Թէ այս շաբթու , և Թէ միշտ , որպէս  
 զի քնի խաչին ճամբայէն գուրս չելենք .  
 զի այն ճամբան միայն կը տանի յեր-

կինս, ինչպէս որ եկեղեցին կաղաղակէ .  
Ճանապարհ և կեանք քն, առաջնորդեալ  
հոգւոց մերոց յերկրէ ելանել յերկինս :

ԺԸ. ԿԻՐԱԿԻ :

Հ. Ո՞րն է հինգերորդ մասն հաւատամքին :

Պ. Էջ 'ի դժոխս . յերրորդ աւուր յարեալ 'ի մեռելոց :

Հ. Ի՞նչ ըսել կուզէ :

Պ. Որչափ ժամանակ որ քնի մարմինը գերեզմանին մէջն էր, հոգին էր լիմպոսուր գնաց որ արդարներուն հոգին աղատէ սատանային գերութիւնն, և իծային տեսուէ արժանի ընէ . ըստ սյնմ . Քրովբէական կառօքն ստորիջեալ 'ի դժոխս, կենագործեաց հզօրեղապէս ղերամս արդարոց :

Հ. Ի՞նչպիսի տեղ էր լիմպոս :

Պ. Վարդապետները լիմպոս անուամբ կիմանան խաւար բանան, ուր արդեւլած էին արդարոց հոգիք զուրկ իծային տեսութիւն սատանային իշխանութիւն տակն . անոր համար դժոխք կըսվի :

Հ. Արդեօք արդարներն ու մեղաւորները մէկ տեղ էին :

Պ. Ոչ . զի արդարոց տեղն էր գոգն արբահամու . ուր յուսով իծային տես-

սուրժէ մխիթարեալ էին արդարներն ,  
ինչպէս էր զազարոս . իսկ մեղաւորաց  
տեղն էր դժոխք տեղի յաւիտենական  
տանջանաց . ուր էր մեծատունն որ յա-  
ւիտեան կը տանջի . անոր համար հայր  
աբրահամ ասաց մեծատանը , թէ վիհ  
մեծ է և ընդարձակ միջոց է մեր մէջն ու  
ձեր մէջը :

Հ . Ինչո՞ւ արդարներուն հոգին հոն  
փակված էին :

Պ . Ա՛ճ ամենաբարին արդար դատաս-  
տանաւ վճռեր էր , որ արքայութե՛ն դու-  
ռը քնի մահաւմբ և յարութե՛ք բացվի ,  
որ ադամայ մեղքը փակեր էր . ուստի հոն  
արդէլված մնացին մինչև քնի յարութե՛ք  
և համբարձմամբ բացվեցաւ արքայութե՛ն  
դուռն . ըստ այնմ . Որում սպասէին արդէ-  
լեալքն 'ի մեղսատէր բանտին՝ ազատե-  
ցուցիչ յուսոյ դալատեան ևն :

Հ . Արդեօք քն ազատեց նաև մեղա-  
ւորաց հոգին :

Պ . Հին ատենը եղան ոմանք որ կար-  
ծեցին , թէ քն մեղաւորներն ալ փրկեց-  
տակայն եկեղեցին հաստատեց թէ միայն  
արդարներուն հոգին ազատեց , մեղա-  
ւորները մնացին դժոխքն յաւիտեան .  
ինչպէս էր կային , սողոմացիք , մեծա-  
տունը , յուգայ , և ամենայն մեղաւորք :

Հ . Ի՞նչ է աւերումն դժոխոց :

Պ . Քն դժոխքն աւրեց ասելով՝ պիտի  
չիմանանք նիւթական տեղը կամ բանտը ,  
այլ բռնութիւն սատանային և մահու

աւրեց, որով որդարոց հոգիք ազատե-  
լով սատանայէն՝ արքայութեան արժանի  
եղան, և անկէ ետև իշխանուի չունեցաւ  
որդարոց վրան. ըստ այնմ. Նա զգժոխս  
գերեաց մահուամբն իւրով և զհզօրն  
կապեաց:

Հ. Ի՞նչ ըսել կուզէ յերրորդ աւուր  
յարեաւ ՚ի մեռելոց:

Պ. Ըսել է թէ կը հաւատանք, թէ  
քն գերեզման մտնելէն ետև երրորդ օրը  
յարեաւ ՚ի մեռելոց, գերեզմանէն ելաւ  
փառաւորապէս երևեցաւ իճաճնայ և  
առաքելոց՝ միսիթարեց զամէնքն, ինչպէս  
կըսէ շարականը. Ուրախ լէր և բերկրեալ  
մայր և կոյս. քանզի ծնեալն ՚ի կուսէդ  
ոյսօր վերադին յարութիւն ծնաւ ՚ի կոյս  
գերեզմանէն:

Հ. Այս իրեք օրն ի՞նչպէս կը համբերն:

Պ. Որովհետև ուրբաթ իրիկուն թաղ-  
վեցաւ յս, նոյն ցորեկը օր կը սեպվի. շաբաթ  
ամբողջ օրն ալ մնաց, իսկ կի-  
րակի առտուն յարութի տունելով կի-  
րակին ալ երրորդ օր կը սեպվի: Անոր  
համար քն յարութեանը օրինակ բերե-  
լով յօնան մարգարէն, որ իրեք օր ձկան  
փորը մնաց, առաց՝ թէ յօնանու նման  
իրեք օրէն ետև յարութի պիտի առ-  
նեմ:

Հ. Ո՞վ էին յարութեան վկայք:

Պ. Առաքեալներն ու աշակերտներն որ  
ամէն տեղ հաջակեցին. նաև քն իւզո-  
բեր կանսոնց և առաքելոց իրեք անգամ

երևնալով հաստատեց: Թէպէտ հրէայք  
կաշառ տվին գերեզմանին քով սպասող  
զօրականներուն, որ ըսեն թէ աշակերտ-  
ներն եկան գիշերը գողցան. սակայն  
յարութէ օրը հրէշտակ և մարդիկ իրար  
խառնըվելով աւետիս տվին աշխարհի, և  
բերկրեցան. Ը այնմ. Այսօր հրէշտակք  
'ի բարձունս ուրախանան ընդ մարդկան-  
օրք իջեալ 'ի յերկնից տան զաւետիս  
աշխարհի, ցնծացէք այսօր քս յարեաւ  
'ի մեռելոց:

Հ. Ինչպէս հաւատարմացուցին ամ-  
մէն ազգաց:

Պ. Ճշմարիտ վկայութե համար ամմէն  
կերպ չարչարանք քաշելով առաքեալ  
ներն՝ ընտրեցին մեռնիլ վն վկայութե  
քսի. ուստի անբաւ հրաշքներով ճշմար-  
տեցին յսի յարութիւնը. զի ան էր ի-  
րենց հետ:

Հ. Քրիստոնեայն ինչպէս պիտի մաս-  
նակից ըլլայ քսի յարութեը:

Պ. Նախ պիտի մահն յանձն առնէ ո՞ր  
յարութեը վկայելու համար. ինչպէս  
դարեդին նախարարն ըրաւ: Երկրորդ՝  
պիտի մեռնի մեղք չընելու համար. որ-  
պէս զի քսի հետ յարութի առնելով նոր  
կեանք սկստի ինչպէս կաղօթէ եկեղեցին.  
Տուր մեղ ար մահու քս նմանել մեռե-  
լութե մեղաց. զի և կենաց քոց հաղոր-  
դիլ արժանացուք:

Հ. Ո՞րն է նոր կեանքն քրիստոնէին:

Պ. Ի առանց մեղաց քրիստոնէաբար

ասարիւլ անձպաշտու թիւ . վասն զի մեղան չեւով ասարիւր՝ կեանք չէ . ինչպէս էր սաւուղին կեանքը . իսկ նոր կեանքն է ըստ քնի ասարիւլ :

Հ . Ե՞րբ պէտք է այս նոր կեանքս սկըսիլ :

Պ . Երբոր տղան կը սորվի վարդապետութի հաւատոյ , և ճանչնալով գերազանցութիւր կըսկըսի ծառայել անյ առանց մեղաց : Նաև երբոր մեղաւորը կատարեալ զղջմամբ յարութիւն կառնէ , ու ըրած առաջադրութիւր պահելով բարեպաշտութիւն նոր կեանք կըսկըսի , ըստ այնմ . Նորոգեցարուք նորոգութիւն կենացս այսօր յարութիւն քնի նոր ժողովուրդք :

Հ . Ո՞րն է վեցերորդ մասն հաւատամքին :

Պ . Համբարձաւ յերկինս . նստաւ ընդ աջմէ անյ հօր ամենակալի :

Հ . Ի՞նչ ըսել է :

Պ . Ըսել է թէ քն յարութիւն ետև քառսուն օր մնաց աշխարհիս վրա , և առաքելոց ամէն հարկաւոր բաները սորվեցնելէն ետև՝ աշակերտներն առաւ ձիթենեաց լեռն ելաւ , և օրհնելով զամէնքն սկսաւ վեր ելելով համբառնալ յերկինս , և նստաւ ընդ աջմէ հօր անյ :

Հ . Ինչո՞ւ քառսուն օր մնաց :

Պ . Զի այնչափ ժամանակի մէջ աշակերտները կըթըվեցան քնի վարդապետութիւն . և այնպէս զօրացան , որ հա

ւաաքը քարոզելու համար ոչ տանջանքէ  
կը վախնային, և ոչ մահւանէ՝ հոգե-  
դաշտտենէ ետև :

Հ. Ի՞նչ ըսել է՝ նստաւ ընդ աջմէ  
ւնջ հօր :

Պ. Ըսել է թէ քն չարչարվելով ա-  
մէն իշխանութի ունեցաւ. ար և գա-  
տաւոր ըլլալով մարդոյ, հրեշտակաց, և  
բոլոր աշխարհի՝ նստաւ ընդ աջմէ ծնո-  
ղին, խոստանալով աւաքել հոգին ար  
աշխարհ. ինչպէս կերգէ եկեղեցին.  
Եկայք լուսադդեացք յօրհնութի նոր  
օրհնեսցուք զար. քանզի մարմինն որ ՚ի  
մէնջ էաւ ՚ի հրեշտակաց երկրագոյու-  
աւնու ՚ի որովքէից և ՚ի քրովքէից :

Հ. Ի՞նչ կը սորվեցնէ այս խոր-  
հուրդը :

Պ. Կը սորվեցնէ թէ մեր գլուխը ար  
և թագաւոր՝ նստաւ հօր ւնջ աջ կողմն  
յեա յալթելոյ սատանայի, և մեզ տեղ  
պաարաստեց երկինքն. ուր սլտի ըլ-  
լայ մեր ամէն փափաքն ու ցանկուիը.  
ուստի դարձեալ կերգէ եկեղեցին.  
Ընդ քեզ յարուցեր յուսով յանմա-  
հութի զմահացու բնութիս. որով նըս-  
տար ընդ աջմէ հօր գլուխդ եկեղեցւոյ  
հրաւիրելով զանդամս քո ՚ի նոյն միու-  
թիւն :

Հ. Քանի՞ արժանապատուութիւն  
ունեցաւ քն :

Պ. Ըստ անձաբանից վեց. ան գլուխ  
եկեղեցւոյ. ք թագաւոր. ք Դատաւոր.

դ Քահանայ . և Միջնորդ . զ Բարե-  
խօս . Ը այնմ . Մի միջնորդ այ և մարդ-  
կան մարդն յն քն : Վն որոյ յանուն  
յնի քնի ամ ծուներ կրկնեսցի երկնաւո-  
րաց և երկրաւորաց և սանգարամետա-  
կանաց . և ամենայն լեզու խոստովան  
լիցի , թէ Տր է յն քն 'ի փառս այ հօր :

Հ . Քրիստոնեայն ի նչպէս պիտի պա-  
տուէ քնի յարութիը :

Պ . Բարի քրիստոնեայն միշտ քնի  
թափած արիւնը մտածելով , պիտի ջա-  
նայ որ հոգին նորէն չի մահանայ , այլ  
քնի հետ կենդանի մնայ , և փափաքա-  
նօք երկինքն ըլլայ իր սիրտն ու հոգին .  
ուր պիտի թագաւորէ յաւիտեան : Ահա  
այս մտածութիք պիտի պատուենք քնի  
նք յարութիը և համբարձումը . և պի-  
տի աղաղակենք ը եկեղեցնայ . կենդա-  
նարար քո յարութիդ անմահ թագա-  
ւոր՝ կենդանացո՞ղմեռեալս մեղօք , կեն-  
դանական գործովք բարեաց ըստ լու-  
սաւոր քոց պատուիրանաց . վասն որոյ  
գթա՞ 'ի մեզ մարգասէր փրկիչ :

ԺԹ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ . Սրն է եօթներորդ մասն հաւա-  
տամբին :

Պ . Ուստի գալոց է գատել զկենդա-  
նիս և զմեռեալս :

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի :

Պ. Ըսել է թէ 'ի կատարածի աչխարհիս երկնքէն պիտի իջնի քս մեծ փառօք և բազում զօրութիւնք . մինչ զի՛ աշխարհ պիտի սասանի և անցնի, գերեզմանները պիտի բացվին, մեռելներն յարութի պիտի առնեն : Անատենը թագաւորն թագաւորաց, որ այնչափ խոնարհեցաւ առաջ աշխարհիս վրան, ահաւոր տեսլեամբ դատաստան պիտի բանայ, և բոլոր ազգ մարդկան դատելով ամէն մէկին արդար հատուցում պիտի ընէ ըստ իւրեանց գործոց :

Հ. Ի՞նչ ըսել կուզէ ըստ իւրաքանչիւր գործոց :

Պ. Ըսել է թէ արդարներուն բարի գործքը քննելով և դատելով՝ իրենց յաւիտենական հանգիստ պիտի տայ . և չարագործները դատելով յաւիտենական պատիժ պիտի տայ, ինչպէս ասաց քս . Որոց բարիս գործեալ իցէ 'ի յարութի կենաց, և որոց զչար արարեալ 'ի յարութիւն դատաստանաց : Ուրեմն արդարներն յարութիւն պիտի առնեն՝ որ փառաւորին . իսկ մեղաւորները պիտի յառնեն՝ որ դատասպարտին :

Հ. Երբոր մարդ կը մեռնի՝ կըլլայ դատաստան և հատուցում :

Պ. Այո՛ կըլլայ . բայց հիմակւան դատաստանը կրավի առանձնական, և հատուցումն մասնական . իսկ վերջի դատաստանին հատուցումն է բոլորական :

Իբր զի՝ հիմա արդարները միայն հոգւով  
կուրախանան երկինքը, և մեղաւորները  
հոգւով կը տանջին դժսիքը. իսկ բոլո-  
րական հասուցման ատենը հոգւով և  
մարմնով: Ուստի ասաց շնորհալին .  
Օգնեա՛ և ինձ քո այսօր յառաջին ճա-  
նապարհին, այսինքն մեռած ժամանա-  
կըս . և ՚ի միւտանգամ գալստեանդ քո  
օգնեա՛ ինձ :

Հ . Ի՞նչ վճիռ պիտի տայ վերջի գա-  
տաստանին :

Պ . Արդարոց պիտի ըսէ . Եկայք օրհ-  
նեալք հօր իմոյ ժառանգեցէք զարքայ-  
ուժի . զի քաղցած էի՝ զիս կերակրեցիք .  
հիւանդ էի՝ զիս տեսիք . որովհետեւ աղ-  
քատներուն ըրիք այսպիսի աղէկուժի .  
ինձի ըրած եղաք : Իսկ մեղաւորներուն  
պիտի ըսէ . Երթայք յինէն անիծեալք  
՚ի հուրն յաւիտենական . զի քաղցած  
էի՝ ինձի կերակուր չի տվիք . հիւանդ  
էի՝ զիս չի նայեցաք : Անոնք պիտի ըսեն .  
Երբ տեսանք զքեզ անօթի և հիւանդ :  
Պիտի ըսէ քո . որովհետեւ աղքատներուն  
չըրիք, ինձի չըրած կը սեպվիք . Ուստի  
և երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւիտե-  
նականս, և արգարքն ՚ի կեանս յաւիտե-  
նականս :

Հ . Ո՞վ ուրացաւ տաանձնական դա-  
տաստանը :

Պ . Նախ ուրացան հաղարամեան հե-  
րեափկոսներն՝ քոն աշակերտաց ժամա-  
նակը, և ասպա կոյանադիրք ուրացան .

որ կրտսէին թէ ամէն հոգիք պիտի սպասեն մինչև վերջին դատաստան, և անատենը հազար ասորի աշխարհիս վրա պիտի ուրախանան. յետոյ պիտի ըլլայ ընդհանուր դատաստան: Իսկ նր վարդապետներն այս մոլորութիւր դատասպարտեցին առաքեալին խօսքովը. թէ՛ Կայմնայ մարդկան միանգամ մեռանել, և յետ այնորիկ դատաստան: Նաև ասաց շնորհալին. Քեզ միշտ մերձ ծանիր, քուն մահու եկեալ. քննող դատաւոր:

Հ. Հայոց սուրբ վարդապետներն ինչ կարծիք ունէին:

Պ. Աւելի բացայայտ հաստատեցին այս ճշմարտութիւր. ինչպէս կը վկայէ և լամբրոնային. Աթոռ դատաստանի և ճշգրիտ իրաւանց է այժմ յերկինս: Եւ շարականը կրտսէ. Յանժատման հոգւոյս 'ի մարմնոյս, 'ի քակտիլ գեղեցիկ շնուածոյս, զարհուրիմ 'ի սպառնալեաց թագաւորին. զի սրահանջէ յինէն զտաղանդ պատուիրանին:

Հ. Աւանձնական դատաստան ըլլալով աւելորդ չըլլար ընդհանրականը:

Պ. Ոչ. որովհետև բոլոր մարդն է գործողը բարի կամ չար՝ հոգին ու մարմինը միատեղ. պէտք է նախ հոգւով երթայ առանձնական դատաստան. երկրորդ հոգւով և մարմնով երթայ ընդհանրական դատաստան. ինչպէս կը հաստատէ գրիգոր սկեռացին. Հաւատաւ և յայս՝ թէ յարութի և դատաս-

տան ոչ հոգւոյ միայն է լինելոյ՝ ըստ որում ոմանց թուեցաւ . այլև մարմնոց . Սակայն վորդապետները շատ անգամ գատաստան ասելով վերջինը կիմանան . որովհետև ընդհանուր և համուշխարհական է , բայց միշտ կենթագրեն և առանձնականն :

Հ . Կայ ուրիշ յայտնի օրինակ այս բանիս վրա :

Պ . Մխիթար կաթուղիկոս ժողովով հաստատեց այսպէս . Եկեղեցի հոյաւտանեայց այսպէս ունի և քարոզէ , թէ յետ չարչարանացն տեսաւն անգեղջ մեղաւորք գնան 'ի դժոխս , և արդարք յարքայութի հոգւով . այլ զկնի վերջին գատաստանի գնասցեն հոգւով և մարմնով :

Հ . Ե՞րբ պիտի ըլլայ վերջին գատաստան :

Պ . Աւարբեալներն ուղեցին իմանալ քնէն . բայց քն չի յայտնեց ժամանակը . միայն նշան տվաւ թէ աշխարհիս վերջն որ մօտենայ , սէրը պիտի պակօի ու ատելութիւնը տիրելով ամէն տեղ կռիւ սասանութիւն պիտի ըլլայ . նեւը գալով բոլորովին պիտի գիշանան մարդիկ . ի՞նչ ալ պիտի պատուհասէ աշխարհս՝ մինչև արեգակը պիտի խաւարի , և լուսինը լոյս չպիտի ունենայ , և երկնային զօրութիւն պիտի շարժին : Ամէն բան անցնելէն ետև քնի նշան որ խաչը պիտի երևնայ երկինքը , և յայտնի

այիտի տեանեն քն, որ երկնային փառօք  
կուգայ դատել զկենդանիս և զմեռեալս,  
այսինքն թէ նոր մեռնողները և թէ հի-  
ները, կամ հաւատքով կենդանի ար-  
դարները, և մեղօք մեռեալները: Ուս-  
տի հաւատամքին մէջ աւելցուց կոս-  
տանդնուպօլսոյ նբ ժողովը. Որոյ թա-  
ղաւորութեան ոչ և ղիցի վախճան:

Հ. Արդեօք ներելի մեղքով մեռած  
հոգիներն ո՞ւր կերթան, որովհետև ծանր  
մեղաւոր չէն որ դժոխքն երթան. ար-  
դար չէն որ արքայութիւն երթան. հասա-  
լինչ վիճակի մէջ են:

Պ. Սբ վարդապետներն հաստատե-  
ցին թէ այսպիսի ննջեցեալք կերթան  
միջական աեղ մի իբր բանտարկեալ.  
ուր կը կրեն ժամանակաւոր սպառիժ,  
նաև կընդունին օժանդակութիւն եկեղեց-  
նայպատարագով աղօթքով և ողորմու-  
թիւն, մինչև որ սպառիժը կատարվի երթան  
արքայութիւն:

Հ. Հայոց վարդապետքն ի՞նչպէս  
հաստատեցին:

Պ. Շատ բացայայտ հաստատեցին թէ  
գրուածով, և թէ սովորութիւնք բոլոր  
ազգին, որ այնչափ սպտարագներով,  
հոգուհացով, գերեզման օրհնելով, և ո-  
ղորմութիւնք քաջ կը հաստատեն այս ճշ-  
մարտութիւնը:

Հ. Թէ որ այսպէս է՝ ինչո՞ւ ոմանք  
վէճ կընեն այս բանիս վրա:

Պ. Այն վէճն է տգիտական, որ կը-

նեն տեղին վրա. չէ թէ իրին վրա. մանա-  
ւանդ թէ անուանը վրա. վասն զի չեն ու-  
զեր քաւարան ըսելու. որ է թարգմա-  
նութի լատին բառին *խոսակետ*. զի  
քաւարանը մեր մէջ սրբազան տեղ կը  
նշանակէ : Ուստի անունէն փախչելով,  
ճշմարտութիւն ալ ուրանալ կերենան :

Հ. Կայ յայտնի օրինակ այս ճշմար-  
տութիւն :

Պ. Անբաւ օրինակ կայ, բայց երկու-  
քը բաւական ըլլան, լուսաւորիչ կըսէ  
յաճախաստուածին մէջ. Չհաւատա-  
ցելոց մեղուցեւոց, և խոստովանողաց,  
և հրաժարելոց յաշխարհէ. և նոցա կա-  
տարեցին յիշատակք քնի սպասարա-  
գան, և աղօթիւք, և գթովք անան-  
կաց. զի հանգուցեալքն նորոգեցին նո-  
րոգութիւն կենացն անվախճանից : Եւ  
չնորհալին. Ահեղ խորհուրդ քահա-  
նային՝ բազկատարած կայր 'ի բեմին՝ ա-  
ռաջի սուրբ սեղանոյն. հուր շիջանի,  
խաւար մերժի, արամեալ հողիքն ու-  
րախանան. զի թողութիւն մեզաց լի-  
նի, ողորմած տէր ողորմեա հողուցն մեր  
ննջեցեւոց :

Հ. Ի՞նչ կը սորվեցընէ :

Պ. Այս վարդապետութիւն կը սորվե-  
ցընէ ամենայն քրիստոնէից, որ խաղա-  
ղասէր հողուով հնազանդին ամենայն  
ճշմարտութեց հաւատոյ՝ առանց վիճե-  
լու բառի վրա, և առանց իրարու հետ  
հակառակելու. վասն զի հակառակու-

Թին է սերմն տատանայի, որ սերմանե-  
լով քրիստոնէից մէջ ազգ ազգի հետ  
կը ձգէ, և հերձուած կը հանէ քսի ան-  
դամոց մէջ: Խրատ ըլլա՛ ամենուս, որ  
սիրով և ջերմեռանդութե՛ք իրար շահինք  
և անդադար յիշենք զմեր ննջեցելոց հո-  
գին: յուսալով թէ՛ որ մի ամենքնիս  
պիտի երթանք միատեղ վայելենք քսի  
անձառելի տեսութին և անլերջանալի  
ուրախութիւնն երկնից, բարեխօսութե՛ք  
տիրամօրն. ինչպէս եկեղեցին կաղօթէ.  
Ա՛ճածին անարատ մայր տեառն և կոյս  
նք, բարեխօսեա՛ առ որդիդ քո միտ-  
ծին. զի փրկեսցէ զմեզ 'ի սպառնա-  
լեաց գեհենոյն, և սարգէսցէ մեզ  
զերկնից արքայութիւն, և հանգուսցէ  
զհոգիս մեր ննջեցելոց:

## Ի. Կ Ի Ր Ա Կ Ի

Հ. Ա՛րն է ութերորդ մասն հաւա-  
տամբին:

Պ. Հաւտամբ 'ի հոգին նք:

Հ. Ի՞նչ ըսել է:

Պ. Ըսել է թէ անանկ կը դաւանինք  
հոգին նք, ինչպէս հայր և որդի. զի է  
նոյն բնութե՛ք և յծութե՛ք հոգի յայ և յծ.  
ըստ այնմ. հոգի տեառն խօսեցաւ:  
հոգին նք էր միշտ, և է, և եղիցի. ոչ

սկսեալ և ոչ դադարեալ, այլ միշտ ընդ հօր և ընդ որդւոյ կարգեալ և թուեալ:

Հ. Ինչո՞ւ կըսվի հոգի նրա:

Պ. Հոգի նրա ասելով կիմացվի ինքիւր մէն նրա հոգի, և ոչ թէ անանկ նրա հոգի, ինչպէս են ստեղծական հոգիք, որ շնորհօք սրբացուցեալ են, իսկ հոգին նրա էութիւն և իսկութեամբ նրա է:

Հ. Ո՞վ ուրացաւ անթիւն հոգւոյն սրբոյ:

Պ. Մահեղոնեան և եւնոմեան հերեափկոսներն, որ դատասարտեցան, և նրա հայրասկաններն հաստատեցին, թէ հոգին նրա է ան ճշմարիտ կատարեալ անձնաւորութեամբ հաւասար հօր և որդւոյ: Ասանկ հայհոյիչներուն համարասաց քն, թէ մի թողցի նմա, որով յայտնի ըրաւ անթիւն հոգւոյն նրա, կըսէ լամբրոնացին:

Հ. Այս հերեափկոսներն ինչո՞ւ կըսվին հոգեմարտ:

Պ. Զի հոգւոյն սրբոյ դէմ մարտ զընեւելով ուրացան անթիւն, և կըսէին թէ հոգին որդւոյն արարածն ըլլալով յորդւոյ ելանէ: Արոնց դէմ նրա ժողովն կոստանդինուպոլսոյ աւելցուց այսպէս. Հաւատամբ ՚ի հոգին նրա տէրն և կենդանարարն, ՚ի հօրէ ելողն, ընդ հօր և ընդ որդւոյ երկրպագակից և փառաւորակից: Տէս ժբ կիր:

Հ. Հոգին նրա ինչպէս կը սրբէ զմեզ:

Պ. Տալով մեզ ո՞ր շնորհքը, որով լուսաւորեալ կարգարանանք, ըստ այնմ՝ Առաքեաց անձ զհոգի որդւոյ՝ ՚ի սիրտս մեր :

Ն. Ի՞նչ է շնորհքն :

Պ. Է գերբնական սարգև, որ ձրի կուտայ անձ արգեամբք քնի. որպէս զի կարենանք անով փրկու[թէ] հասնիլ :

Ն. Քանի՞ կը բաժնուի :

Պ. Երկու, շնորհք սրբացուցման, և ներգործական : Սրբացուցմանը մեզի հետ ըլլալով մեզքէ կը սրբէ զմեզ, արգար և ո՞ր կրնէ առաջի այ. իսկ ներգործականն է ներքին օգնութի. որով անձ զմեզ կը զարթեցնէ և կը նսպաստէ, որ բարեգործութի ընենք :

Ն. Ի՞նչպիսի միջոցով անձ կուտայ իր շնորհքը :

Պ. Ազա[թքով] պատարագով և խորհուրդներով կըստանանք շնորհքն, որով միայն կրնանք ստանալ յաւիտեանական երանութիւնն :

Ն. Կայ՞ ուրիշ զանազանութի :

Պ. Աճաբանները զանազան կը բաժնեն, զորօրինակ՝ արտաքին և ներքին շնորհք, ներգործական և ունակական. ձրիատուր և հաճոյարար : Արտաքինն է գործ նախախնամութեն այ, որ արտաքուստ կօգնէ փրկութի. իսկ ներքինն է նոյն իսկ ներգործական շնորհքն :

Ն. Ո՞րն է ունակական և ձրիատուր :

Պ. Ունակականը կըսվի սրբարար, և

Հնորհք օրդէգրու թէ հոգւոյն նք, նաև  
օծու թի հոգւոյն . որ կը հեղու 'ի հո-  
գին : Իսկ ձրիատուրն է Հնորհք գխու-  
թէ, հաւատոյ, հրաշագործու թէ, մար-  
գարէու թէ, ևն . ինչպէս կը համրէ ա-  
ռաքեալն :

Հ . Այս վարդապետութիւնը ինչ կը  
սորվեցնէ :

Պ . Նախ՝ կը սորվեցնէ թէ առանց  
սրբարար Հնորհաց և հաւատոյ կրնայ  
մարդս բնականաւաքինութիւն բարեգոր-  
ծութի մի ընել . ուստի մեղաւորներուն  
և անհաւատներուն ամէն գործքը մեղք  
չէ . թէ չէ՝ անոնց ըրած ողորմութիւնն  
ալ, պարտք հատուցանելն ալ մեղք սի-  
տի սեպվէր :

Հ . Մեղաւորը կրնայ՝ առանց Հնորհաց  
մահուչափ մեղքէն հեռանալ :

Պ . Անհնարին է . զի առանց Հնորհաց  
տկար է մարդ . սակայն ներելի մեղքէն  
կրնայ հեռանալ . ուրեմն առանց մաս-  
նաւոր Հնորհաց ոչ մեղաւորն կրնայ ար-  
գարանալ, և ոչ արգարն կրնայ յարա-  
տեւել յարգարութի . ապա միշտ պէտք  
է Հնորհք խնդրել :

Հ . Ինչպէս կարգարանայ մեղաւորն :

Պ . Մեղաւորն ճշմարիտ զըջմամբ  
կարգարանայ՝ երբ կուտայ իծ ունակա-  
կան Հնորհքը . որով չէ թէ կը գոցվին  
մեղքերը, հասա՛ կը ջնջին և կը սրբին .  
անանկ որ անսրը՝ սք կըլայ :

Հ . Ինչո՞ւ ըսիր վասն արդեանցն քսի :

Պ. Վասն զի շնորհքն է պտուղ ջար-  
չարանայն քնի . որ իբր գլուխ եկեղեց-  
ւոյ կը հեղու շնորհքն անդամոց վրա :  
Զի 'ի լուսթէ անախ նորա մեք ամենե-  
քին առաք շնորհս փոխանուկ շնորհաց .  
զի օրէնքն 'ի ձեռն մովսիսի տուան . շը-  
նորհքն և ճշմարտութիւնն 'ի ձեռն յսի  
քնի եղեն :

Հ. Հարկ է մեզ գործակից ըլլալ ան-  
ային շնորհացն :

Պ. Այո՛ հարկաւոր է որ երբ անձ ազ-  
գուսն կրնէ շնորհօք , բարեգործութիւն  
ընելու , պէտք է որ այն բարի խորհրդին  
հետեւելով ջանանք աղէկ սկսելու և կա-  
տարելու . անկէետև ան շնորհքն առաջ  
կը տանի բարի գործքը , և կարգիւնա-  
ւորինք :

Հ. Ի՞նչ կը նշանակէ գործակցու-  
թիւնը :

Պ. Գործակցութիւն է այն , որ երբ  
անձ շնորհքով կիմացընէ մարդուն հե-  
տեւիլ բարւոյն . մարդը ևս իր կողմանէ  
ետ չի կենայ՝ կը հետևի ներքին շարժմա-  
նը . գործակից կըլլայ անային շնորհաց  
առաքինական գործք գործելու :

Հ. Կրնայ մարդ գէմ գնել անային  
շնորհացն :

Պ. Մարդուս կամքն ազատ ըլլալով,  
երբոր միտքն անանկ կը լուսաւորի ան  
շնորհօքը՝ մինչև կրնայ բարին ճանչնալ  
և հետևիլ . անատենը կամքը խոտորե-  
լով կրնայ չհետևիլ . և այսպէս ներքին

չարժմանն ընդդիմանալով կը զսկըլի առաքինութէ շատ անգամ կամաւոր կուրութիւն: Եւ երբեմն ի՞նչ առիթներ կուտայ վարձք առնելու համար, մարդուս կամքն աշխարհային բաներով զբաղած ըլլալով կը կորսընցնէ առիթը, և կը մնայ թափուր 'ի շնորհաց և 'ի բարեաց: Ուրեմն պէտք է միշտ ջանալ և հետևիլ ձեռքին ազգեցութեանց. որ չըլլայ թէ ձեռքին շնորհաց զուրկ և խաւար մնանք, և կամաւոր կուրութեամբ խաւարն արտաքին երթանք՝ բաժին ըլլալով դիւայ. ուր լալ աչաց է և կրճեւատամանց. այլ մանաւանդ լուսով շնորհաց լուսաւորեալ որդիք լուսոյ ըլլանք և մասնակից փառացն անմահից երջանկութիւն՝ աղօթելով այսպէս. Շնորհեա՛մեզ տէր զգաստութիւն արթուն լինել ըստ դռնապանին. զի 'ի բաղխել նք փեսայիդ՝ բացցուք զսիրտս քոց մտից՝ ընդքեզ և հօր քո և հոգւոյդ լինել օթևան:

### Ի Ա . Կ Ի Ր Ա Կ Ի

Հ. Մտեօք կարելի է մարդոյ արդիւնաւորիլ յաւիտենական երանութիւնը:

Պ. Այո՛ կրնայ արդիւնաւորիլ գործակից ըլլալով ձեռքին շնորհաց և հե-

տւեւելով առաքինական գործոց, ինչպէս ըսինք. վասն զի երբոր մարդս այ տված առիթները և նպաստը կը գործածէ, անհնար է որ անարդիւն մնայ. զի այն շնորհքն անոր համար կուտայ ի՛նչ, որ ժամանակաւոր վաստակովն յաւիտենական վարձ առնէ. ինչպէս ասաց քս հաւատարիմ ծառայողին. Ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ. որովհետեւ 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր, մեւտ յուրախութի տեառն քո: Եկա՛յք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք, և ես հանդուցից զձեզ:

Հ. Յաւիտենական երանութիւնը կրաս լի՞ շնորհք:

Պ. Է մասնաւոր և գերագոյն շնորհք. նաև անհուն պարգև այ. որ վասն քսի արդեանցն կուտայ ի՛նչ ընտրելոց առ 'ի ժառանգել և տեսանել զի՛նչ. որ է յաւիտենական երանութի:

Հ. Քրիստոնեայն ի՞նչ պիտի համարի զինքն:

Պ. Պէտք է զինքն համարել ոչինչ առանց ի՛նչ շնորհաց. զի ոչինչ բարի ունի, և ոչինչ կարողութիւն և զօրութիւն. սակայն ամէն բանի կարողութիւն կրնայ ունենալ շնորհօքն քսի: Այս պատճառաւ ամէն սքք իրենց ոչընչութիւն ճանչնալով, այնչափ կը խոնարհէին առաջի այ, մինչև զիրենք միայն դատապարտութի արժանի կը համարէին. ինչպէս կրտեր առաքեալն, նաև

լուսաւորիչ, նարեկացին, և այլք :

Հ. Որովհետեւ ԹՃՅԻՆ շնորհքը սլատ-  
րաստ է ամենուն հասնելու, ինչո՞ւ ամէնքը փրկութեան չեն հասնիր :

Պ. Նախ՝ առաքեալն կը սլատասխանէ : Ո՞վ խորք մեծութե՛ն և խմաստութե՛ն ԹՅ. որպէ՛ս զի առանց քննելոյ է դատաստան նորա և առանց զննելոյ ճանապարհ նորա : Երկրորդ՝ կը սլատասխանէ սք օգոստինոս . Բարի է ԹՃ, արդար է ԹՃ, կարող է զմանս առանց արդեանց բարութեան ազատել, վասն զի բարի է . ոչ զոք կարող է առանց արդեանց չարութե՛ն դատապարտել, վասն զի արդար է :

Հ. Ի՞նչ ըսել կուզէ :

Պ. ԱՃՅԻՆ բարութի՛նը միայն իւր անհուն ողորմութե՛ն կամի և կը նախասահմանէ զանոնք, որ շնորհօք լուսաւորեալ առաքինի ըլլան ու փրկութե՛ն հասնին, լսելով յի բերնէն . Ճառանգեցէք ըզսլատարաստեալն ձեզ զարքայութիւն ՚ի սկզբանէ աշխարհի : Որ կըսվի գիր կամ գպրութի կեհաց, հրաւիրանք, և ընտրութի ԹՅ. ինչպէ՛ս կըսէ աւետարանը . Բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք :

Հ. Ո՞վ են անարգեալք :

Պ. Անարգեալ կըսվին որդիք կորուսեան, և անզեղձ մեղաւորք . որ անարժան ըլլալով փառացն ԹՅ՝ կըլլան արժանի դատապարտութե՛ն իրենց մեղացն

համար : Ուստի ձձ զիրենք անարդեր է  
 և վճռեր է որ չի խափանէ անոնց մեղ-  
 քը . այլ թոյլ է տվեր . ինչպէս ատաց .  
 Բարձի թողի զնոսա երթալ զհետ կա-  
 մաց սրտից նոցա : Սակայն մինչև որ մե-  
 զօք արժանի չըլլան դատասպարտութե ,  
 ձձ չի դատասպարտեր զանոնք : Արդա-  
 րութիւն անմահ է , իսկ ամբարիշտք ձե-  
 ոօք և բանիւք կոչեցին զմահ առ իւ-  
 րեանս , և դաշինս կուեցին ընդ նմա . ա-  
 տաց իմաստունն :

Հ . Ո՞վ ուրացաւ այս վարդապետու-  
 թիւնը :

Պ . Հեթանոսք և աղանդաւորք ուրա-  
 ցան ասելով . Թէ որ նախատահմանու-  
 թի կայ , ուղեմ չուղեմ կամ պիտի  
 փրկըվիմ , և կամ պիտի դատասպարտիմ .  
 ուրեմն ուզածս կընեմ : Պատասխան  
 գրեցին ՚ք վարդապետք թէ՛ Ամիա և  
 վտանգաւոր է այն հիւանդն որ կըսէ .  
 կամ պիտի ազատիմ , և կամ պիտի մեռ-  
 նիմ . թէ որ պիտի ազատիմ , ես զիս չի  
 նայիմ ալ կազատիմ . թէ որ պիտի մեռ-  
 նիմ , ինչ որ ընեմ փուճ է . ուրեմն ու-  
 զածս ընեմ : Ահա ինչպէս որ այն հի-  
 ւանդը հարկաւ կը մեռնի . նոյնպէս այն  
 ըսողն ալ կը դատասպարտի :

Հ . Քրիստոնեայն ի՞նչ պէտք է ընել :

Պ . Արովհետև չիտէ նայ վճիռը , թէ  
 ի՞նչպէս պիտի ըլլայ իր վիճակը . ուրեմն  
 պէտք է առաքեալն խօսքին հետեւելով ,  
 ասիւ և դողութիւն զփրկութիւն անձանց

գործել ծառայելով ւայ . զի բարեգործութիւն միայն կրնայ փրկիլ ւային շրնորհացն գործակից ըլլալով : Իսկ եթէ ւային շնորհքը թողու, և իր չար կամացն հետևի՝ հարկաւ կը կորնչի . ուստի ասաց քս : Թէ որ կամիս մտանել ՚ի կեանս, սրահէ պատուիրաններն : Բարի եղբր կը փրկըվիս : Չփառաւորիչս իմ փառաւորեցից, և որ արհամարհէն զիս՝ անարգեսցի :

Հ . Ո՞րն են նշան նախասահմանութիւն և անարգութեան :

Պ . Աճաբաններն ութը նշան կը գնեն : ւայ հոգևոր ըլլալ, և ստէպ ապաշխարելով հաղորդվիլ, նշան է թէ փրկութիւն կը հասնի . իսկ ով որ պաղ է հոգևորին, առանց խոստովանութիւն տարլինելով կը մնայ՝ նշան է անարգութիւն : ք Նախանձ ունենալ փառացն ւայ և փրկութեան ընկերին, բարի նշան է փրկութիւն . ասոր հակառակն՝ ով որ ւայ մտքէն հաներ է, և կատէ ընկերը չար նախանձով գէշ նշան է : ք Ստէպ մտածել ւային բարութիւն, և խօսիլ հարցընել ւայ վրա՝ է բարի նշան . իսկ ով որ զինքն աշխարհի մասներ է, և մարմնաւոր բաներով միտքըն ընկղմեր է միշտ գէշ բաներ խօսելով, գէշ նշան է : ք Յաճախել ւայ սուներ, հոգևոր գրեանք կարգալ, հոգևոր մարդկանց հետ կենսակցիլ, և փափաքելով լսել ւայ բանն, է բարի նշան, ով որ ասոր հակառակը կրնէ՝ նշան է կորու-

տեան : Ե՛ Արհամարհել սուտ աշխարհս ,  
 Ի՛յ սիրովը վառվիլ՝ բարեգործ ողորմած  
 ըլլալով բարի է վախճանը . ով որ աշխարհի  
 օրվեր է սիրար , անգուժ ագահ և զրկօղ  
 է , գէշ է վախճանը : ի՛ ճշմարիտ խո-  
 նարհուժք ով որ Ի՛յ երկիրդն մէջ կը  
 սրահէ զինքը , բարի նշան է . ով որ հը-  
 սարտուժք Ի՛յ ահը գողը սրտէն հաներ  
 է , գէշ նշան է : Ե՛ Ով որ աղէկ տեղեր  
 և բարի ընկերաց հետ կենակցելով ամե-  
 նուն բարի օրինակ է և աղէկուժի ընեւ  
 կուղէ վասն Ի՛յ , է բարի նշան . իսկ ով  
 որ չար ընկերի հետեւելով լաւը կատէ  
 չար սրտով , անիրաւուժք և խաբէուժք  
 կը վարվի . է չար նշան : Ե՛ Ով որ ջերմե-  
 ոանդ է ո՛ր անձաճնայ և ո՛րք , բարի նշան  
 կուենայ նախասահմանուժէ . իսկ ով  
 որ ասոր հակառակը հայհոյանք և ա-  
 նէճք է բերանը՝ նշան է անարգուժէ :  
 Արգ՝ ահա այս վարդապետուժիը պէտք  
 է գրվիլ ամէն մարդու սրտին մէջ , և ա-  
 մէն իրիկուն պէտք է քննել , թէ ար-  
 դեօք այսօր իմ վարքս և գործքս բարի  
 եղաւ , թէ չար . արդեօք ընտրուժէ՞  
 գործք գործեցի , թէ անարգուժեան .  
 արդեօք բարի է նշանս , թէ չար , որով  
 հետև յաւիտենական է կորուստը , և  
 յաւիտենական է երանուժիւնն . ապա  
 պէտք է աղաղակենք . Չքեզ աղաչեմք  
 տէր անսասանելի սրահեա՛ զոտս մեր՝ ՚ի  
 քո ո՛րք ՚ի սպառուիրանիդ : Մի՛ զիս անտես  
 առնէր , այլ օգնեա՛ ինձ մարդասէր :

## Ի Բ . Կ Ի Ր Ա Կ Ի

Հ . Որն է իննեքորդ մասն հաւատամքին :

Պ . Ի սբ եկեղեցի կաթուղիկէ :

Հ . Ի՞նչ ըսել կուզէ :

Պ . Որովհետեւ եկեղեցին է մայր ամենայն ուղղափառ քրիստոնէից, պէտք է նայն հաւատաքով հաւատաւ, ինչպէս հաւատացինք հողւոյն սբ . զի հողւով սբ ի կր կառավարի եկեղեցին :

Հ . Ի՞նչ կը նշանակէ անուանել եկեղեցի :

Պ . Այս բառ յունարէն ըլլալով կը նշանակէ ժողով կամ միաբանութի հաւատացելոց և մկրտելոց :

Հ . Ի՞նչ ըսել է կաթուղիկէ :

Պ . Այս ևս է յունարէն, որ կը նշանակէ ընդհանրական, զի կաթուղիկէ եկեղեցին ամէն տեղ և ամէն ժամանակ կայ : Ուստի ամենայն ուղղափառ քրիստոնեայ որ աշխարհ ըլլայ՝ է մասն ընդհանրական եկեղեցւոյ՝ թէ՛ արդար ըլլայ և թէ՛ մեղաւոր . թէպէտ մեղաւորը կրտլի հիւանդ և անսբ անդամ կամ մասն . իսկ արդարը՝ սբ և առողջ անդամ : Աստ ով որ կրտէ, թէ ես կաթուղիկէ կամ ընդհանրական եկեղեցւոյ մասն չեմ, արտաքոյ եկեղեցւոյ եմ ըսել է . որով առանց վրկուծեան կը մնայ :

Հ . Ինչո՞ւ եկեղեցին ըսվեցաւ ընդ հանրական :

Պ . Որպէս զի որոշվի հին եկեղեցիէն . որ կըսվի սինագոգիայ , այսինքն հաւաքումն ինչևիցէ բանի . ինչպէս է հրէից ժողովը : Այս սինագոգիան էր մասնաւոր , հրէից ազգէն միայն ժողովեալ իսկ եկեղեցին քնի՝ կըժողվի ամմէն ազգէ , և ամմէն երկրէ :

Հ . Ե՞րբ խափանեցաւ հին եկեղեցին :

Պ . Մարգարէներն յայտնի դրեր են , թէ մինչև քնի ժամանակը սլիտի տև էր հին եկեղեցին . և անկէ մինչև ՚ի կատարած աշխարհի՝ քնի եկեղեցին կը տևէ : Նոյնպէս տեղէն յայտնի է . զի հրէից եկեղեցին միայն հրէատտան փակված էր . իսկ քնի եկեղեցին ընդ բոլոր աշխարհ ծաւալած է . ապա հին եկեղեցին խափանեցաւ՝ նոր եկեղեցին քնի յաջորդեց . և ՚ի կատարածի աշխարհի կը վերջանայ ՚ի վերին եկեղեցին անգրանկաց , ըստ այնմ . Հինն օրինակ քեզ և նման , դու խորանին գերագրական :

Հ . Ի՞նչ է կաթուղիկէ եկեղեցին :

Պ . Է միաբանութիւն ուղղափառ հաւատացելոց . որ սփռեալ են ընդ բոլոր աշխարհ , և միացեալ հաւատով և հպատակութիւն ընդ միով գլխով , որ է փոխա , նորդ քնի :

Հ . Ի՞նչ ըսել է ընդ միով գլխով :

Պ . Որովհետև եկեղեցին սփռեալ

ընդհանուր է, պէտք է մէկ գլուխ ունենայ և մէկ հայրապետի իշխանութեամբ Երևայ: Որ և է անգամ քնի, ապա աներևոյթ գլուխն եկեղեցւոյ է քն. իսկ երևելի գլուխն է իւր փոխանորդը:

Հ. Ինչո՞ւ կրավի առաքելական:

Պ. Զի քն առաքելաշնորհն կազմեց եկեղեցին, և անոնցմով հաստատուեցաւ իսկ անոնց յաջորդներն են եպիսկոպոսներն որ կը կառավարեն եկեղեցին՝ առանց միջահատուածէ: Իբր զի՝ եպիսկոպոսներն առաքելաշնորհն առին ձեռնադրութիւն, և մէկզմէկ ձեռնադրելով հետզհետէ՝ պիտի հասնին մինչև 'ի կատարած աշխարհի, ըստ այնմ. Որպէս առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ. դնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ: Ես ընդ ձեզ եմ մինչև 'ի կատարած աշխարհի:

Հ. Ո՞վ եղաւ հիմն եկեղեցւոյ:

Պ. Ընդհանրապէս ամէն առաքելաբեր կրավին հիմունք եկեղեցւոյն քնի. բայց մասնաւորապէս քն պետրոս առաքելին վրա շինեց իւր եկեղեցին, գլուխ դնելով միւս առաքելաշնորհուն վրա. ըստ որում ասաց պետրոսի. Դու ես վեմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ: Նոյնպէս կը հաստատէ շարականն ստեղծով. Որ գերագոյն ընտրելոց առաքելոցն դասուց անուանեցեր լինել զե-

րանելին զպետարոս, գլուխս սբ հաւատոյ  
հիմն եկեղեցւոյ : Աէմ անվանելի 'ի  
դրանց դժոխոց :

Հ . Ուրեմն պէտք է հաւատալ ընդ-  
հանրական և առաքելական եկեղեցւոյ :

Պ . Այո՛ ամենայն իրօք, և ամենայն  
հաւատոյ բանի մէջ հնազանդելով պի-  
տի հաւատանք եկեղեցւոյ . որ կառա-  
վարեալ հոգւով սբով կը սորվեցնէ հա-  
ւատացելոց զճշմարիտ հաւատօքը քսի-  
ուստի ճշմարիտ եկեղեցին քսի է սբ,  
մի, ընդհանրական, և առաքելական :

Հ . Ճշմարիտ եկեղեցւոյն նշանները  
քանի՞ են :

Պ . Չորս են . Միութիւն, Սրբու-  
թիւն, Ընդհանրականութիւն, և Առա-  
քելականութիւն . անոր համար աւել-  
ցուցին կոստանդնուսոլոսոյ հաւատամ-  
քին մէջ : Հաւատամք 'ի մի, սբ, կա-  
թուղիկէ, և առաքելական եկեղեցի :  
Եւ մեր ժամագիրքը կրսէ . Աղաչեա-  
ցուք զամենակալն ձձ վասն միայնոյ՝ սբ՝  
կաթուղիկէ՝ և առաքելական եկե-  
ղեցւոյ :

Հ . Ո՞ր եկեղեցին ունի այս նշաններս :

Պ . Միայն հռոմէական եկեղեցւոյ  
վրա կերևնան այս նշաններս . որ է մի՛  
ընդ ծայրագոյն քահանայապետաւ, սբ՝  
վարդապետութիւն, կաթուղիկէ կամ ընդ-  
հանրական՝ ըստ որում ամէն աշխարհ  
ծաւալած է արևելք արևմուտք, հիւ-  
սիս հարաւ, վարի աշխարհ, վերի աշ-

խարհ . և առաքելական՝ անընդհատ յա-  
ջորդութիւն պետրոսէն սկսեալ մինչև ներ-  
կայ քահանայապետն :

Հ . Ուրեմն գլուխ է ամենայն եկե-  
ղեցեաց :

Պ . Այո՛ , առանց արտաքսելու ուրիշ  
ուղղափառ եկեղեցիները . որչափ որ ի-  
րեն հետ միացեալ են՝ անոնք ալ ունին  
այս նշաններս . զի անոր մասն են : Անոր  
համար հայոց սբ վարդապետները կա-  
նուանեն հռովմէական եկեղեցին , Ա-  
ռաջին , մայր , և գլուխ ամենայն եկե-  
ղեցեաց . ինչպէս ասաց շնորհալին . և  
կը հաստատէ ժողովն մսիթար կաթու-  
ղիկոսին . Եկեղեցին հռովմայ գլուխ է  
ամենայն եկեղեցեաց . որոյ գլուխ է  
սրապն . նմին իրի կաթուղիկոսն հայոց ,  
և այլ սրատրիարգունք են ՚ի ներքոյ  
իշխանութեան նորա : Այսպէս հա-  
տատեցին առաջին և երկրորդ ժողովքն  
նիկիոյ :

Հ . Եկեղեցին քանի՞ յատկութիւն  
ունի :

Պ . Երէք . Երևելիութի , Անպակա-  
սելիութի , և Անսխալութիւն : Երևե-  
լիութեամբ յայտնի է լեառն տեառն .  
առ որ պիտի գան արևելից և արևմտից  
հեթանոսք՝ ասաց մարգարէն : Ապա ծա-  
ծուկ միաբանութիւնն է դատապարտե-  
լի . զորօրինակ են աղանդաւորք , և ֆա-  
մասոնք . որոնք խաւար կը սիրեն . զի ով  
որ չար կը գործէ՝ խաւար կը սիրէ և

կատէ ըյսն , որ չարութիւնը չի յայտնը  
վի՛ ասաց տէրը :

Հ . Ի՞նչ է անպակասելիութիւն :

Պ . Եկեղեցին քնի ոչ երբէք պակասե-  
ցաւ 'ի սկզբանէ հետէ , և ոչ պիտի պակ-  
սի , ապա ետքէն ելած աղանդաւորնե-  
րուն՝ լուտերականներուն և կալվինա-  
կաններուն միաբանութիւնը ոչ է ճշը-  
մարիտ եկեղեցի , վասն զի նոր հնարած է :

Հ . Ո՞րն է անսխալութիւն :

Պ . Եկեղեցին քնի է անսխալ կանոն  
հաւատոյ և բարի վարուց . ինքն է օրէնք  
դիտող և մեկնող անձաշնչին . մինչ զի՛  
դրունք դժոխոց չեն կարող յաղթելու ,  
ինչպէս ասաց քն պետրոսի . կասող է  
և արձակող յերկինս և յերկրի . նաև ա-  
րածող և կառավարող ոչխարացն քնի ,  
ըստ այնմ . Կեցո՛ զորդի ծառայի քո , զոր  
'ի հռովմայ գահիցն վերասպատուեցեր .  
ուր եզին զվէմն հաւատոյ հիման սբ ե-  
կեղեցւոյ : Արդ՝ ով որ ճշմարիտ զաւակ  
է եկեղեցնայ՝ պիտի ջանայսբ և արդար  
ըլլալու ասպաշխարութբ . որպէս զի մե-  
ռած և փթտած անգամ չըլլայ մեղօք ,  
որ ասպականեալ պիտի կտրի և անվախ  
ճան գեհեհնին արժանի պիտի ըլլայ . ըստ  
այնմ . Ամենայն ծառ , որ ոչ առնէ  
զարտուղ բարի՝ հատանի և 'ի հուր ար-  
կանի , ասաց յոհաննէս մկրտիչ : Նաև  
միշտ պիտի աղօթէ սբ եկեղեցնայ պայ-  
ծառուէ համար ասելով . Բարեխօսու-  
թբ սբ անձանին պահեսցէ զեկեղեցի

իւր սբ, և 'ի միւտանդամ գալտուեան  
իւրոյ նորոգեացէ 'ի փառս :

ԻԳ. ԿԻՐԱԿԻ

Հ. Որն է տասներորդ մասն հաւա-  
տամբին :

Պ. Ի հաղորդութիւն սբց :

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի :

Պ. Երկու խորհուրդ կը սորվեցնէ .  
նախ՝ քն գլուխ ըլլալով երկնային և  
երկրային եկեղեցեաց՝ քրիստոնեայն պի-  
տի հաւատայ թէ հաղորդութիւն ունի  
սբց, որ են երկինքը . այսինքն մասն և  
բաժին ունի սբց արդեանցն և փառայն,  
երբոր կարգարանայ . որովհետև վերին  
յաղթական եկեղեցին է արքայութի և  
Թագաւորութի սբց և հրեշտակաց . բա-  
րի քրիստոնեայն հաղորդակից ըլլալով  
կը յուսայ յետ մահուանն երթալ մա-  
նակցիլ և միանալ ընդ քնի և ընդ սբց  
յաւիտեանս յաւիտենից :

Հ. Որն է երկրորդ խորհուրդը :

Պ. Երկրորդ՝ ամէն ուղղափառ քրի-  
ստոնեայ մէկ եկեղեցնայ զաւակ ըլլալով  
իրարու հաղորդութիւն ունին . ինչպէս  
կըսէ յոհաննէս . հաղորդութի ունիմք  
ընդ միմեանս, զի մկրտութի մեղաւորը  
հաղորդութի ունի սբց . վասն որոյ և

կեղեցնայ աղօթքն ամենուն վրա կը տա-  
րածի. զի էն զաւակ քնի և եղբայր մի-  
մեանց, բոլորը ժողովեալ 'ի ծոցնք ե-  
կեղեցնայ. որ է արդարոց հանգիստ, մե-  
ղաւորաց քաւարան, նքց ժողովարան,  
և տունն ինչ :

Հ. Ո՞րն է մետասաներորդ մասն :

Պ. Ի թողութի մեղաց, 'ի յարութի  
մարմնոց :

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի :

Պ. Այս մասն կը յայտնէ, թէ քրիս-  
տոնեայն պէտք է հաստատութիւն հաւա-  
տայ և հաւանի ճշմարտութե, թէ մե-  
ղաւորը խոստովանելով և ապաշխարե-  
լով կը գանէ թողութի մեղաց. որովհե-  
տե ճշմարտութին յայտնելու է, թէ ով  
որ կապաշխարէ՝ փրկութե կը հասնի.  
ինչպէս որ խորհրդոց մէջ կը բացատ-  
րենք յետոյ :

Հ. Միայն ապաշխարելով կըլլայ թո-  
ղութիւն :

Պ. Այո. սակայն ճշմարիտ ապաշխա-  
րութիւնը պիտի ըլլայ հաւատով յուսով  
և սիրով. որով արգարացեալ մեղաւորն  
փրկութե կը հասնի, և յաւիտենական  
կենաց ժառանգ կըլլայ. որ խոստացաւ  
անձ սիրելեաց իւրոց, ըստ այնմ. Ոչոր-  
միս ամենեցուն, զի յամենայնի կարող  
ես, և անտես առնես զմեղս մարդկան ա-  
պաշխարութեամբ :

Հ. Ի՞նչ ըսել կուզէ 'ի յարութիւն  
մարմնոց :

Պ. Ըսե՛լ է թէ կը դաւանինք որ վերջի դատաստանին օրը ան հրամանաւ 'ի սկզբանէ հետէ բոլոր մեռնողներն յարուածիւն պիտի առնեն նոյն մարմնով, որով ապրեցան աշխարհիս վրա. և դատաստան պիտի երթան պատասխան տալու. ինչպէս կըսէ դանիէլ մարգարէն. Յարիցեն մեռեալք, ոմանք 'ի կեանս՝ և ոմանք 'ի նախատինս :

Հ. Ո՞վ ուրացաւ այս ճշմարտութիւնը :

Պ. Հին ատենէն 'ի վեր շատ աղանդաւորներ, մանաւանդ մարմնապաշտանհաւատներն ուրացան, որ ամէն ազգ գործքով կը դաւանի թէ և կուտայաշտ ըլլայ : Եւռան մարդիկ իրենց նախնեաց համար հոգուհաց կընեն և կաղօթեն : Տէս պոնա. մ. ք. Սահայն մասնաւորապէս հակառակօղ եղան սատուկեցիք, որ ոչ յարուածիւն կընդունէին, ոչ հոգի, և ոչ հրեշտակ կայ կըսէին : Որոնք ուզեցին քսի հետ հակաճառել. այլ յս մէկ խօսքով զանոնք պապանձեցուց անձանցէն օրինակ բերելով. Ես եմ ասէ անձ արբահամու. թէ որ արբահամու հոգին չըլլար ու օր մի յարուածիւն չառնէր՝ անձ պիտի ըլլար մեռած դացածներուն անձ, կամ արբահամու փրթտած մարմինին միայն անձ պիտի ըսվէր. որ ինքն է կենդանեաց անձ և տէր : Իսկ յարուածիւն որ ըլլայ, ոչ էրիկմարդ կը փրնալու և ոչ կնիկմարդ, այլ ամէնքն

էն յարութե՛ն որդիք հրեշտակաց նման :  
Ուստի այս ճշմարտութիւնն ուրացողնե-  
րը ոչ զգիրս գիտեն , և ոչ զգորութիւն  
այ . տասց քս :

Հ . Այս ազանգաւորներն ինչո՞ւ սա-  
ղուկեցի ըսվեցան :

Պ . Ասոնք հրեայ էին , որ սագովկ տ-  
նուամբ ազանգաւորին հետևելով գրին  
թէ ոչ դատաստան կայ , և ոչ հատու-  
ցումն , ոչ հրեշտակ և ոչ հոգի . որպէս  
զի առանց խիղճմտանաց իրենց ցանկու-  
թիւնը կատարեն , ինչպէս հիմակվան ան-  
ւածներն ալ կըսեն : Սակայն քս յայտնի  
հաստատեց թէ դատաստանին օրը պի-  
տի ելլեն գերեզմանէն . որոնք որ քարի  
գործեր են , յարութեան կեանքը պիտի  
մանեն . և որոնք որ չար են գործեր՝ ՚ի  
յարութիւն դատաստանաց . և դատա-  
պարտութե տեղը մտնելով յաւիտեանս  
յաւիտենից պիտի տանջուին . ուր լալ  
աչաց է և կրճաւէլ ստամանց . ուր որդն  
ոչ մեռանի . և հուրն ոչ չիջանի :

Հ . Ի՞նչպէս պիտի յարութիւն առ-  
նեն ծովը խղզըվածները , զի ոմանց մար-  
մինը ձկները կերան , և ոմանց՝ գազան-  
ները :

Պ . Յակոբ մ՛ծբնայ հայրապետը սա-  
տասխան կուտայ , թէ անմիտ՝ գուն թէ  
որ ափիդ մէջ հող ունենաս՝ կրնաս մե-  
ջի մանր բաներն որոշել զատել . ապա  
ւած չի՞ կրնար աշխարհիս մէջէն գտնել և  
հանել մարմիններն , ու յարուի տալ . վս

զի այս աշխարհ որ մեզի մեծ կերևնայ, այ  
 առջին կէտի չափ է . ինչ դժւարութի  
 կայ ամենակարող զօրութի հրամայել  
 հրեշտակաց գտնել տալ, նաև ձկանց  
 կենդանեաց մարմինէն մարդուն մարմի-  
 նը ժողվել յարութիւն տալ: Եթէ և  
 զկիկէլ մարգարէն գերեզմաննոցին մէջ  
 ձգած սահորները կրցաւ այ հրամանաւ  
 մէկ տեղ բերելու և շունչ սալով յա-  
 րուցանելու, ինչ դժւարութիւն կրնայ  
 ըլլալ այ, որ տէր է կենոց և մահու-  
 ըստ այնմ. Եւ զմեզ ընդ քնի յարուցէ  
 և յանդիման կայուցէ:

Հ. Ինչ օրինակ կրնայ տրվիլ:

Պ. Պօղոս առաքեալ ցորենը կը բերէ  
 օրինակ. որ եթէ սմանկ մաքուր տեղ  
 պահվէր որ չի փթտիր, ամենևին չէր  
 բուսներ և կը մնար ինչպէս որ էր. բայց  
 հողին մէջ ցանկելով կապահանի. այս-  
 ինքն ցորենի բնութիւնը փոխվելով երբ  
 կը մեռնի, և անով կրսկրսի ծլիլ և խո-  
 տի բնութիւն փոխվելով նորոգիլ և յա-  
 րութիւն առնել: Այսպէս մարդս մեռ-  
 նելով և թաղվելով կապահանի և հող կը  
 դառնայ. բայց նոյն հողը յարութի առ-  
 նելով և հոգուն հետ միանալով կը փո-  
 առորի յաւիտենական կենդանութի:  
 Սերմանի ասպականութի մարդս հողին  
 մէջ, և յառնէ փառօք այ հրամանաւ-  
 ըստ առաքելոյն:

Հ. Այս վարդապետութիւն կայ օ-  
 տար ազգաց մէջ:

Պ. Գրեթէ ամէն ազգաց մէջ կայ ինչպէս տեսանք հին կռապաշտներուն գրքին մէջ. եպիստոպիք հաւատալով յարութիւն մեռելոց՝ մեռելները դեղերով կը պահէին, որ մինչև հիմա կան. նոր կռապաշտները տեսանք որ մեռելնին շատ պատուելով կը թաղեն: Նոյնպէս հին բանաստեղծներն յայտնի կը գրեն յարութեան վրա. զորօրինակ:

Գործ է անգուծ անօրինի,  
ցրուել զնշխար մահկանացուի.  
զի հող ոսկերք մահացելոց.  
գարձցին 'ի լոյս նման վերնոց:

Հ. Այս վարդապետութիւնն սխիւտ սորվինք:

Պ. Քրիստոնէայն մեծաւ յուսով սխիւտի զօրանայ, թէ այս թշուառ ողորմելի մանմինս օր մի սխիւտի փառաւորի և պայծառանայ իմծային լուսովն, եթէ աշխարհիս վրա մահացեր է. եթէ անցաւոր սուտ բաներով չէ խաբվեր. եթէ առաքինի և պարկեշտ է ապրեր. եթէ հոգեւէր և իմծապաշտ եղեր է: Ուստի վայ այն մարմնապաշտներուն, որ փտելի մարմնոյն պատիւ տալով այնչափ կը սիրեն. չիտեն թէ քիչ ատենէն հող սխիւտի ըլլայ, և յարութե օրը սև գարշելի սխիւտի երևնայ ահաւոր բեմին քսի: Ահա մեծ խրատ քրիստոնէին, և մեծ խրատ ամենուս. որ ոչ երբէք պէտք է մտքէ հանել թէ այս շաբթու, և թէ բոլոր մեր կենացը մէջ: Յիշեա՛ ըզ-

վախճան քո, և յաւիտեան ոչ մեղիցես . ստաց իմաստունն :

ԻԴ . ԿԻՐԱԿԻ

Հ . Որն է վերջին մասն հաւատամքին :

Պ . Եւ 'ի կեանս յաւիտենականս :

Հ . Ի՞նչ ըսել է :

Պ . Ըսել է թէ քրիստոնէայն ինչ դաւանութիւն որ հաւատաց տանըմէկ մասն հաւատամքին, նոյն դաւանութիւն պիտի հաւտոյ այս վերջի մասն ալ . այսինքն է թէ քրիստոնէաբար ասլի և իծապաշտ մեռնի . արժանի կրլլայ յաւիտենական կենաց, ի՞նչ հետ միանալով և ժառանգելով անճառ քարին միշտ և անպակաս : Ի ժամանակի այցելութեան իւրեանց սպայծառացին, և թաղաւորեցէ նոցա տէր յաւիտեան . ստաց իմաստունն :

Հ . Ի՞նչպիսի պիտի ըլլայ այն յաւիտենական կեանքն :

Պ . Ամենայն երջանկութիւն և փառօք լի, միշտ իծատեսութե մէջ զմայլած կը մնայ հոգին առանց կորսնցնելու բնաւ . զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ : Բայց լոյս անարգեալ մեղաւորներուն, որ իծային

տեսու թե՛նէն զուրկ պիտի մնան յաւիտեանս յաւիտեանից :

Հ . Ի՞նչ խնդիրներ ելան այս նիւթիս վրա :

Պ . Հին ժամանակը մարդակերպեան հերետիկոսները գրին թէ աշխարհիս մէջ բնական զօրութիւն կրնանք ձեռն տեսնել . որ է անհնարին , ինչպէս կը հաստատեալ առաքեալը : Բնակեալ 'ի լոյս անմատոյց . զոր ոչ ոք ետես 'ի մարդկանէ , և ոչ տեսանել կարօղ է : Ուրեմն մարդարէներուն երևցողը հրեշտակ էր ձոյ կողմանէ , որ մարմնաւոր կերևնար . զի հոգին չերևնար :

Հ . Ինչու կրօնի մովսէս ձեռն տես :

Պ . Մովսէս մարդարէն շատ փափաքեցաւ տեսնելու ձեռն , որ էր անհնարին . սակայն քարի ետեւէն փառքը տեսաւ՝ ոչ բնական զօրութիւն , այլ ձեռնային զօրութիւն՝ որչափ որ կրնար բնութիւնը զօրեւ . անոր համար կերպարանքն անանկ լուսաւորեցան , որ մարդ երեսը չէր կրնար նայիլ :

Հ . Արդեօք պօղոս առաքեալ տեսաւ ձեռն :

Պ . Պօղոս ինքն կը յայտնէ , թէ յափրջտակեցաւ մինչև երրորդ երկինքը . տեսաւ և լսեց այնպիսի անձառեւիտ , որ ակն ոչ ետես , և ունկն ոչ լուաւ , և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ . ուստի հոգւով և ձեռնային զօրութիւն միայն կրցաւ ձեռն տեսնել , որչափ որ հնար էր ստեղծա-

կանին. սակայն չի կրցաւ սրտովել:

Հ. Ի՞նչ կարծիք կայ ենովքայ և եղիային վրա:

Պ. Այս սքերը մարմնով վերացան երկինքը, ինչպէս կըսեն ոմանք նաև յոհաննէս աւետարանչին համար ևս. որ վերջի աշխարհիս պիտի գան. ենովք պիտի վկայէ բնական օրինաց վրա, եղիա՝ մովսիսական օրինաց վրա, և յոհաննէս՝ քրիստոսի օրինաց վրա, ինչպէս կարծիք է վարդապետաց: Սակայն ասոնք անտեսութեամբ երանելի չեն, այլ միջական վիճակի մէջ են անձանութեղ՝ և չեն անմիտութար. որ ոմանք հրեշտակաց մօտ կը դնեն. ըստ այնմ շնորհքով վերինն երուսաղէմ՝ ՚ի բնակարանս հրեշտակաց, ուր ենովք և եղիաս կան ծերացեալք աղաւնակերպ ՚ի դրախտին եգեմական պայծառացեալ արժանապէս:

Հ. Ի՞նչ մտքով կըսվի ան տեսանելի:

Պ. Տեսանելի կըսվի աչօք հոգւոյ. և այն՝ մէկմը հաւատքով, մէկմալ՝ լուսով փառացն ան. ըստ այնմ. Լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Երանի որ սք են սրտիւք. զի նոքա զան տեսցեն: Իսկ ոսկեբերան կըսէ թէ՛ հոս ոչ ոք կրցաւ ան տեսանել, հոն մօտ եղօղնէրը կը տեսնեն, որչափ կարելի է:

Հ. Ի՞նչ մտքով կըսվի ան անտեսանելի:

Պ. Սք վարդապետք կը կոչեն ան ան

տեսանելի, անխմանալի, անհասանելի,  
 քնական զօրութիւն. կամ նաև ինչպէս Թոմ  
 իւր էութիւնը կը տեսնէ՝ անհնարին է որ  
 ստեղծվածը կարենայ այնպէս տեսնել,  
 թէ չէ՝ Թոմ պիտի ըլլայ. ՉԹոմ ոչ ոք երբեք  
 ետես, ասաց յոհաննէս: Սակայն  
 միջնորդութիւն լուսոյ փառաց դէմ յան-  
 դիման կը տեսնեն Թոմ՝ սքերը և հրեշ-  
 տակներն, ինչպէս ըսինք. և այս մտքով  
 ասաց շնորհալին. Չի լոյսն անտեսի  
 մանալի մաքուր հոգւոց տեսանելի:

Հ. Ի՞նչ հերետիկոսութիւն ելաւ:

Պ. Անովմեան հերետիկոսներն ըսին  
 թէ մենք Թոմ էութիւնը կրնանք տեսնել  
 և հասու ըլլալ. որոնց դէմ սք վարդա-  
 պեաները գրեցին և հաստատեցին, թէ  
 Թոմ է անտեսանելի, անխմանալի, և ան-  
 հասանելի: Իսկ պաղամեան հերետի-  
 կոսներն ըսին թէ ՚ի հանդերձեալն Թոմ  
 չենք կրնար տեսնել. միայն Թոմային լոյս  
 մի կը տեսնենք: Ասոնց դէմ ևս գրեցին  
 սք վարդապետները, թէ տեսանի սք եր-  
 բորդութիւն մաքրեցելոցն մտք: Այսպէս  
 կը հաստատէ լուսաւորիչ:

Հ. Ո՞վ են հազարամեայք:

Պ. Ասոնք կըսվին յունարեն իիւլիաս,  
 զի՛ որոնց գլուխն էր կերինդոս աղան-  
 դապետն, որուն դէմ գրեց աւետարա-  
 նը յոհաննէս աւետարանիչ: Ասոնք կը-  
 սէին թէ վերջի յարութեան ատենը ար-  
 դարներն հազար տարի պիտի թագաւո-  
 րեն աշխարհիս վրա ամէն մարմնաւոր

հեշտութիւն : Այս հերետիկոսին համար  
ժողով ըրին առաքեալներն յերուսա-  
ղէմ, և գատապարտեցին :

Հ. Ո՞վ ասոնց հետևեցաւ :

Պ. Պասկիաս անուամբ սրբակաց եպիս-  
կոսոսն, որ միամտութիւն կարծեց թէ՛  
չէ թէ մարմնաւոր հեշտութիւն պիտի ու-  
րախանան արդարները . այլ հոգւոր ու-  
րախութիւն պիտի թափաւորեն հազար  
տարի աշխարհիս վրան : Այս կարծիքն ևս  
մերժեցաւ նք վարդապետներէն :

Հ. Ո՞վ հետևեցաւ ասոր կարծեացը :

Պ. Սիւրիստրատոս վկայն . որ դրաւ  
թէ նբերն հիմա չեն տեսներ անձ ար-  
քայուէ մէջ, և մեղաւորները չեն տան-  
ջըվիր . հապա կը մնան կայանքին մէջ  
հանգիստ մինչև վերջին գատոստանը .  
ուր կը լլայ հատուցումն հոգւով և մարմ-  
նով . ինչպէս կը սլատմէ յայսմաւուրքին  
մէջ : Եւ ասոր հետևողները կոչվեցան  
կայանագիրք :

Հ. Եկեղեցին ինչ որոշեց :

Պ. Սուրբ Եկեղեցին ժողովքով մեր-  
ժեց այս վարդապետութիւն . և նք վար-  
դապետները հաստատեցին քնի խօսքովն  
որ ասաց . Այսօր ընդ իս իցես 'ի դրախ-  
տին . և լուսաւորիչ ասաց . Փռութամ ե-  
լանել 'ի մարմնոյս և առնուլ զկեանսն  
յաւիտենից : Այսպէս վկայեցին ամէն  
նբերը . զորօրինակ՝ Պսակեցար 'ի քնե-  
զանթառամ զսլատկն : Ելին 'ի կամարն  
երկնից խառնեցան 'ի գունդ զուարթ-

նոց : Ժառանգեցիք սլատրաստեալ ձեզ զարքայութիւն . համարձակութի ունիք բարեխօսել առ տէր վասն անձանց մերոց : Ասա ո՞վ մտորդ՝ փոխանակ սուրբերուն վիճակին վրա հակաճառելու , ջանա՞ որ դուն սք ապրիս , ու նոյն երջանկութե արժանի ըլլաս . միշտ միտքդ բեր որ ի՞նչ պիտի ժառանգես , եթէ բարի ըլլաս . և ի՞նչ պիտի կորսնցնես , եթէ չար ըլլաս . որուն անհաճոյ է այսպիսի հակառակութի . քանի՞ հակառակասէրք այսպիսի հոգւով իրար ատելով հիմա դժոխքը կը տանջին : Ուրեմն մեզի ևս խրատ ըլլայ որ այս բանս միշտ մտածելով ուղղինք , և արքայութե փափաքով վառվինք հանապազ և ազազակենք . Զողորմութե քո զգուռն բաց մեզ տէր , և արժանի արա՞ զմեզ լուսեղէն յարկաց քոց ընդ սքս քո :

### ԻՆՆՆ . ԿԻՐԱԿԻ

Հ . Լ . Ե . Կ . հաւատամքին խօսքերէն ինչ հասկըցար :

Պ . Այսչափ հասկըցայ որ արարիչն ի՞նչ աշխարհին մէջ ինչ խորհուրդներ որ յայտներ է , բոլորը համառօտ կը սարունակի հաւատամքին մէջ . անոր համար ամէն սլատրագի մէջ ասելով կը

դաւանինք արարինք երկնի և երկրի. խորհուրդ մը երրորդութեան, և մարդեղութեան՝ այլովքն հանդերձ:

Հ. Ո՞րն է հօր մայ գործքը:

Պ. Հասարակօրէն արարչագործութիւն հօր մայ կրնծայի, թէսկէտ հասարակ է երկոց անձանց:

Հ. Ո՞րն է որդւոյն մայ գործքը:

Պ. Է փրկագործութիւն, որ իւր չարչարանքով փրկեց զաշխարհս սատանային գերութենէն:

Հ. Ո՞րն է հոգւոյն սրբոյ գործքը:

Պ. Սրբացուցումն և արդարացուցումն շնորհօք. զի իւր շնորհօքն սրբեց զաշխարհս, և արդարացուց:

Հ. Հաւատամքին վերջն ի՞նչ դաւանութիւն կայ:

Պ. Նիկիոյ մը ժողովը հերեակոսմէրուն նշովք տալով մը հայրապետք յաւելած ըրին հաւատամքին ետքն, որ լուսաւորիչ բացատրելով թարգմանեց հայերէն. և կրսովի հաւատամքէն ետև պատարագին մէջ:

Հ. Ի՞նչպէս կրսկրսի:

Պ. Իսկ որ ասենն էր երբեմն. այսինքն անոնք որ կրսեն թէ ժամանակ կար որ որդին չի կար. և երբեմն հոգին չի կար՝ կամ թէ ոչնչէ՛ կի՛մ այլ գոյութեանէ եղան որդին մայ և կամ մը հոգին, ինչպէս ըսին արիոս և մակեդոն, և անոնք որ փոփոխական կը գնեն. բոլոր այս հայհոյիչները կը նշովէ կաթուղիկէ

և առաքելականն նր եկեղեցին :

Հ . Ի՞նչպէս պիտի հաւատանք խորհրդոյ երրորդութեան :

Պ . Ճշմարիտ հաւատով, աներկբայ յուսով, և ծայրագոյն սիրով . վասն զի յայտնօղն լինէ . և կը պարտաւորէ ըզմեզ որ խելքէ վեր եղած բաները չի քննենք, այլ խոնարհ հնազանդութեամբ հաւատանք ինչ որ կը սորվեցընէ եկեղեցին . յուսանք ողորմութեւր, և սիրենք :

Հ . Հաւատքն ի՞նչ կը պահանջէ մեզմէ :

Պ . Կը պահանջէ որ փափաքինք տեսնելու արքայութե մէջ զայն ճշմարտութիւներն, որ հաւատացինք ճշմարտութեան . ինչպէս կը փափաքէր առաքելալը . Յանկամ ելանել ՚ի մարմնոյս, և լինել ընդքսի :

Հ . Ի՞նչ ըսելու է անոնց, որ կուզեն յայ գաղանեացը խելք հասցընել :

Պ . Ասանկ մարդիկ կամ խելաց պակասութիւն ունին, և կամ հաւատքի . որ աստաւոր և մոլի ըլլալով չեն ճանչնար իրենց տկարութիւնն ու կուրութիւնն . նաև կամին յայ բանը գիտնալ խելքով : Ուստի ասաց սողոման . եթէ ոտքերնուս տակն եղած բաները չենք կրնար քննել, և հասկընալ, հասլա որ ինչ յերկինս է լինային խորհուրդներն ո՞վ կրնայ քննել ո՞վ է մարդ, որ գիտիցէ զխորհուրդս յայ : Ուրեմն բարի քրիստոնեայն պէտք է որ խոնարհի և հնազանդի :

Հ. Որն է քրիստոնէին առաջին պարտքը :

Պ. Առջի պարտքն է ոչ միայն նոյ ծառայութի ընել, այլև իւր քրիստոնէութիւնը նշանով յայտնել, և գործքով խոստովանիլ :

Հ. Ի՞նչ նշանով կրնայ քրիստոնէայ երևնալ :

Պ. Սբ խաչին նշանով, խաչակիւղեւում զմեզ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն նբյ. որ է հին աւանդութի. ըստ այնմ. Սբ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ քում նբյ :

Հ. Ի՞նչ խորհուրդ կը յայտնէ :

Պ. Խաչակիւղեւում երկու գլխաւոր խորհուրդ կը դաւանինք. խորհուրդ նբ երրորդութե, և խորհուրդ մարդեղութե : Ասան զի նախ իրեք անձանց անունը տալով կը դաւանինք. երկրորդ՝ խաչին նշանով կը դաւանինք, թէ քսի խաչովը փրկեցանք :

Հ. Ե՞րբ պէտք է երեանիս խաչակիւղեւը :

Պ. Առաւօտուն ելած ատեննիս, և իրիկւան պառկելու ժամանակը. նաև գլխաւոր բանի մէջ. մանաւանդ վտանգաւոր ատեն, և մեղանշական առիթներու մէջ. ըստ այնմ. Սբ խաչիւս աղաչեսցուք զաէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց. և սովաւ յաղթեսցուք անորէն թշնամւոյն :

Հ. Ինչո՞ւ համար ասանկ ատեն պէտք է խաչակիւղել :

Պ. Ձի հաւատով և սրտանց կարգա-  
լով զանունն սբ երրորդութե՛ կը հաւա-  
ծի դէն, կը վերնայ փորձութիւնն, և  
կուգայ անձային օրհնութիւնն ու յաջո-  
ղութիւնը: Նաև պէտք է ստէպ հոգևոր  
բաներ մտածել, անձաշունչ և հոգևոր  
գրեանք կարգալ հարկաւոր ժամանակ:

Հ. Ի՞նչպէս պէտք է կարգալ անձա-  
շունչը:

Պ. Անանկ ուշադրութե՛ որ շահ ելլէ  
հոգւոյդ, ան սէրը վառի սրտիդ մէջ, ու  
հաւատքդ յոյսդ զօրանայ անձային սքան-  
չելիքը մտածելով:

Հ. Ինչո՞ւ հաւատամքին մէջ բան չի  
խօսեցաւ անձայնչին համար:

Պ. Բաւական է որ եկեղեցին կը յի-  
շէ. զի եկեղեցին կը պահէ և կը մեկնէ  
անձաշունչն հաւատարմութե՛ ՚ի սկզբա-  
նէ հետէ:

Հ. Ո՞րն է քու դաւանանքդ:

Պ. Հաւատամ բոլորով սրտով միոյ  
ան հօր և որդւոյ և հոգւոյն սբ. հաւա-  
տամ փրկագործութեան մարդկան մա-  
հուամբ և շնորհօքն քսի. հաւատամ  
առաքելական սբ եկեղեցւոյ, և ինչ որ  
յայտներ է կրնգունիմ. յուսամ թէ  
այս հաւատքիս մէջ ապրելով ալքայու-  
թե՛ արժանի կըլլամ. ամէն:

Հ. Ի՞նչ ըսել է բառս ամէն:

Պ. Եբրայական բառս Ամէն, այսպէս  
եղիցի ըսել է:

Հ. Ի՞նչ է աղօթքն :

Պ. Է ամբարձումն մտաց առ ձեռն . և է ամենահարկաւոր հաւատացելոց : Այլ զի աղօթքն է ժիշոց , որով ձեռն կը հաղորդէ մեզ իր շնորհքն . անոր համար քի պատուիրեց որ աղօթք ընենք . որպէս զի փորձուած է ազատինք :

Հ. Ե՞րբ պէտք է աղօթել :

Պ. Ամէն հարկաւոր ժամանակ , մանաւանդ առաու իրիկուն :

Հ. Աղօթքի ատեն ի՞նչ պէտք է ընել :

Պ. Պէտք է ըլլալ ի ներկայութեանն անոր , իբր անոր առջին ելած . հաւատալով թէ ձեռն ամէն տեղ է : և կը լսէ աղօթքը . և երկրպագութի ընելու է անոր որ կը տեսնէ մեր սրտին ծածուկը : Անոր համար նքերն աղօթք ըրած ատեննին կըսէին . ձեռն սրտագէտ ամենայնի , ողորմեա :

Հ. Արդեօք ինչ որ խնդրենք կուտայ ձեռն :

Պ. Աղօթքն ըստ կարգի ըլլալէն ետեան հնարին է որ չի կատարէ ձեռն . վասն զի ինքն է խոստացեր , թէ խնդրեցէք և առնուցուք :

Հ. Աղօթքն ինչ բանի կը նմանի :

Պ. Լամբերտացին ռակիէ լարի կը նմանցնէ աղօթքը . որուն մէկ ծայրն անոր

փակած է . որչափ որ կը ջանանք աղօթ-  
քով ձեռ գէտ 'ի մեզ ձգել , այնչափ  
գէտ 'ի ձեռ վեր կելլենք :

Հ . Քանի՞ բան պէտք է աղէկ աղօթք  
ընելու :

Պ . Գլխաւորն են չորս . ուշադրու-  
թի , վստահութի , մաքուր գիտաւորու-  
թի , և յարատեւութի :

Հ . Ո՞րն է ուշադրութի :

Պ . Է խորհել և մտածել ինչ որ կը  
խօսի այ հետ . և բերնով աղօթածը՝  
սրտով պէտք է առ ձեռ ուղղել եռան-  
դեամբ :

Հ . Կրնայ աղօթել առանց պրոկուան-  
քը շարժելու :

Պ . Թէ որ սրտանց աղօթէ սլանալով  
և ամբառնալով միտքը , կրլլայ սլաքա-  
կան աղօթք . որ շատ ընդունելի է այ .  
ինչպէս աննա կաղօթէր տաճարին մէջ ,  
որով խնդիրքն առաւ այմէ . իսկ որոնք  
ծուլութի կրնեն ցնդած մտքով առանց  
խմանալու՝ անվարձ կը մնան , և շատ ան-  
գամ կը պատժուին :

Հ . Ի՞նչ է աղօթել վստահութի :

Պ . Հաստատ յուսով պէտք է վըս-  
տահ ըլլալ , թէ ձեռ կը լսէ և կը կատա-  
րէ մեր խնդիրքը :

Հ . Ո՞րն է մաքուր գիտաւորութի :

Պ . Է կարգել և վերաբերել աղօթքն  
'ի փառս այ վասն յաւիտենական փրկ-  
կութե մերոյ . նաև պատշաճ ե երբեմն  
խնդրել ժամանակաւոր բարիս :

Հ. Ի՞նչ է յարատևութի :

Պ. Է աղօթել միակերպ առանց ձանձրանալու, և առանց ասդին անդին նայելու, անկատար չի ձգելով աղօթքը. նաև պէտք չէ շատախօս ըլլալ երկար խօսքերով կամ այլոց առջին կեղծաւորելով. այլ առանձին տեղ ծածուկ սրտին մէջ պէտք է աղօթել առ հայր, որ կը հասուցանէ յայտնասէս. ինչպէս սորվեցուց քս :

Հ. Որո՞ւն անուամբ պէտք է աղօթել :

Պ. Անուամբ յսի քսի տեառն մերոյ. զի միայն քսի արդեամբք կրնանք ընդունիլ ինդիրքնիս. ինչպէս որ սբելը կաղօթէին միշտ յսի անուան յիշելով :

Հ. Սբերն ի՞նչ կերպ աղօթք կրնէին :

Պ. Ո՛չ միայն մտադրութի և յարատևութի կաղօթէին, այլև շատ անգամ սլոբական աղօթքով կը վերանային ան առջին, և այնպէս վստահութեամբ ըլլ յիշէին անձային մեծամեծ բարեքն. նաև մտածելով մարդուն աստերտախտութիւնը կը սպառնալին ջերմեռանդութի, և մեղայ գոչելով. որով ան ընդունելի կըլլար աղօթքը. ինչպէս կրնէր սբ գրիգոր նարեկացին :

Հ. Աղօթքներուն գլխաւորը որն է :

Պ. Հայր մերն է, որ տերունական կըսվի. զի քս տերը սորվեցուց :

Հ. Ինչո՞ւ հայր մեր կըսվի :

Պ. Ասան զի հօր ան հետ խօսելով և

ողորմութեն ասպակնելով իրեն կը գի-  
մենք և կը կարգանք ստեղծողն . որ ոչ  
միայն ստեղծեց մեզ, այլև հայր եղաւ  
մեզ: Նաև անճառելի անունը մը կոչե-  
լով եօթը խնդիրք կընենք ասելով .  
Հայր մեր որ յերկինս . սուրբ եղիցին  
կամք քո որպէս յերկինս և յերկրի . ըզ-  
հաց մեր հանապազորդ սուր մեզ այսօր .  
և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մէք  
թողումք մերոց պարտասանաց . և մի  
տանիր զմեզ 'ի փորձութիւն . այլ փրկ-  
կես զմեզ 'ի չարէ . զի քո է արքայու-  
թիւն և զօրութիւն և փառք յաւի-  
տեանս ամէն :

Հ . Ի՞նչ պիտի մտածենք հայր մերն  
սկսած ատեննիս :

Պ . Եզիչէ վարդապետը կը սորվեցնէ  
ասելով . սիլ մարդ մտածէ թէ ինչ մեծ  
բան է, որ անքեզի հայր կը կոչես, և  
իրեն զաւակ ըլլալով կը համարձակիս  
խնդիրք ընելու . բայց լաւ գիտնաս որ ի-  
րեն մեծութիւնը յարմար ծառայութիւն  
և զաւակութի պիտի ընես . որպէս զի  
վերինք և ստորինք գիտնան, թէ ան զա-  
ւակն ես :

Հ . Ա՞ծ ի՞նչպէս զմեզ իրեն զաւակն  
ըրաւ :

Պ . Անհուն ողորմութեն և բարի կա-  
մօքն ընտրեց զմեզ, և արքայութի տա-  
լով մասնակից ըրաւ ժառանգութեան  
սքանչելի փառացն . ուստի ինչպէս կըսէ  
առաքեալը՝ մասնակցութի ունինք յի

հետ . որ զմեզ իրեն եղբայր անւանեց ,  
և հօրն երկնաւորի զաւակ :

Հ . Ի՞նչ մտքով ըսիր . հայր մեր որ  
յերկինս . թիժէ անձ ամէն տեղ չէ :

Պ . Այո՛ իւր անհետւթիւն ամէն տեղ  
ներկայ է և ամէն բան կը տեսնէ . սա-  
կայն երկինքն աւելի իւր փառքն յայտ-  
նելու համար յերկինս կըսվի . ուր պի-  
տի երևնայ անձ իւր սիրելեացն այն փառ-  
քերուն մէջ :

Հ . Ինչո՞ւ հայր մեր կըսենք . և չենք  
ըսեր հայր իմ :

Պ . Որովհետև ամէն քրիստոնէայք  
շնորհօք որդի այ եղած են , և մէկ հօր  
զաւակ ըլլալով ամէնքն եղբայր են . բո-  
լորը մէկ արքայութիւն պիտի ժառան-  
դեն , և մէկ սիրով կապված պիտի ըլլան  
թէ հոս . և թէ 'ի հանդերձեան . անոր  
համար հայր մեր կըսենք : Ապա վայ է  
մեզ , թէ որ մէկզմէկ ատելով անձ հայրն  
մեր խաբենք , և այն ատելի ըլլանք . վասն  
զի ատելութիւն սիրօղ մարդը չի հաւա-  
տար թէ անձ մէկ է և արքայութի կայ .  
զի ինչպէս կրնան մէկ այն զաւակ ըլլալ  
և մէկ արքայութի ժառանգել երկու  
հակառակ մարդիկ . ուրեմն ջանանք ըլ-  
լալ որդի այ միաբան սիրով . և շնորհա-  
կալ ըլլանք անձային ողորմութեն ատե-  
լով : Որ անմարմնոց հոգեզինաց դա-  
սակցեցեր քն սբ զեկեզեցի . որք ընդ  
նոսին համաձայնեալ փառաւորեմք սբ  
ղերրորդուիդ սրովբէական սրբօսացու-

## Ի Է . Կ Ի Ր Ա Կ Ի

Հ . Ի՞նչ է առաջին մեր խնդիրքը :

Պ . Սբ եղիցի անուն քո : Ահա այս է մեր առաջին խնդիրքն, որով կը փափաքինք իջ անձառելի անունը սբ պահելով և ծառայելով բարեգործութեւ որպէս զի քրիստոնէից իմաստաւորութիւնը տեսնելով ամէն ազգ և ժողովուրդ փառաւորելով զսօս սբ անեն անունը . և ամէն աշխարհ ծունր կրկնեսցէ իջ անուանն, ըստ այնմ . Զի տեսցեն ըզգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր, որ յերկինս է . ասաց քս : Ուրեմն չարագործաց անօրէնութեամբն իջ անունը կը հայհոյի . ինչպէս կը արանջայ իմաշունչը, թէ ձեզի համար իմ անունս կը հայհոյի հեթանոսաց մեջ . իսկ բարեգործաց առաքինութեամբն կը փառաւորի . որովհետև ամենուն հայրն է :

Հ . Եկեսցէ արքայութի քո՝ ասելով ի՞նչ կը խնդրենք :

Պ . Երկրորդ՝ կը խնդրենք ստեղծողէն, որ թագաւորէ շնորհօք մեր սրբաին մեջ . որպէս զի չըլլայ թէ անառակութիւն զաւակութի ելլենք, և սատա-

նան տիրէ մեր վրա. անոր համար պէտք է ահով գողով խնդրենք, որ որչափ տրկար մարմնոյն մէջն ենք անձային նախախնամութիւնն ու թագաւորութիւնն ըլլայ մեր վրա. և մեռնելէն ետև թագաւորենք արքայութե մէջ :

Հ. Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի՝ ասելով ինչ կը խնդրենք :

Պ. Երրորդ՝ կը խնդրենք այ ձեռնատուութիւնն, որպէս զի ամէն գործքերն ուս մէջ այ կամքը կատարենք այնպիսի պատրաստութեամբ. ինչպէս հրեշտակները և սքերը կը կատարեն այ կամքը փառաւորելով զամ. Ուրեմն պէտք է հնազանդիլ իրեն պատուիրանացն, համբերել ամենայն վշտացն, որ կուտայ. և ուրանալով զմեր կամքն՝ միայն անձային կամացն համակերպիլ :

Հ. Ո՞րն է անձային կամքն :

Պ. Անձային յատուկ կամքը կըսվի կամք բարեհաճութե. որ ըստ առաքելոյն, է բարի՝ հաճոյ՝ և կատարեալ. անա այս մտքով կըսենք. Եղիցին կամ քո որպէս յերկինս և յերկրի :

Հ. Քանի՞ նշան կայ անձային կամացն :

Պ. Հինգ արտաքին նշան կը գնեն. անհրաման. ք խորհուրդ կամ խրատ. ք Արգելումն. ք Թոյլաուութի. Է Գործողութի : Ուստի առաջին նշանով կամացն՝ իբր աէր կը հրամայէ մեզ բարի ըլլալ, և չարէն հեռանալ. երկրորդ՝ խորհուրդ և խրատ տալով կուզէ որ հեռանիք

բարւոյն . երրորդ՝ կարգիլէ որ չարութի չընենք . չորրորդ՝ երբեմն թոյլ կուտայ երկրորդ կամօքն վասն բարի վախճանի . հինգերորդ՝ գործողութիւն կամի և կրնէ բարին . ըստ այնմ . Ետես լծ զամենայն զոր արար , և ահա բարի են յոյժ :

Հ . Ի՞նչպէս պիտի հետևինք լծային կամացն :

Պ . Բարի քրիստոնեայն երբոր կը տեսնէ և կիմանայ վերի նշաններով , թէ ինչ հրամանն է ինչևիցէ գործք՝ մէկէն պիտի ջանայ կատարելու . կամ թէ այն բանն որ լծ արդէլեր է՝ պիտի չընէ . և երբոր թոյլ կուտայ նեղութիւն կամ վիշտ դալու , պիտի սիրով ընդունի աւսելով . Արդար է տէր և զարդարութիւն սիրէ . թէ որ արժանի չըլլայի , կամ՝ թէ որ ինձի օգուտ չըլլար՝ չէր զրկեր լծ այս վիշտս . վասն զի առանց լծային կամացն տերև չի շարժիր . և ինչ որ կընէ լծ՝ է բարի և շահ փրկութեան մերոյ :

Հ . Չհաց մեր հանասլազորդ տուր մեզ այսօր՝ ասելով ի՞նչ կը խնդրենք :

Պ . Չորրորդ՝ կը խնդրենք ստեղծողէն մեր ամէն օրւան հացը հոգւոյ և մարմնոյ . որպէս զի մարմնաւոր հացով մարմիննիս սնուցաւ առնու . և կենդանի մնալով օրհնէ զլծ , ըստ այնմ . Աեցցէ անձն իմ օրհնէ սցէ զքեզ . նաև հոգւոր հացով առողջ մնայ հոգինիս . որ է բանն ինչ և մարմին քսի . ուստի այնպէս պիտի

որ ապրի քրիստոնեայն , որ ամէն օր ար-  
ժանի ըլլայ ի՞ծային հացին . ինչպէս էին  
առջի քրիստոնեաներն :

Հ . Եւ թող մեզ զպարտիս մեր , որ-  
պէս և մեք թողումք մերոց պարտապա-  
նաց՝ ասելով ի՞նչ կը խնդրենք :

Պ . Հինգերորդ՝ կը խնդրենք ողորմա-  
ծէն ներումն մեր սխալանաց . որովհետեւ  
մարդկային բնութիւն միշտ պակասաւոր  
ըլլալով՝ միշտ գէպ 'ի չարը կերթայ և կը  
մեղանչէ . պէտք է անդադար ոչ միայն  
ներում խնդրել , այլև ներել ընկերին  
սխալանացն : Ահա այս է պայմանն , որ  
եթէ մենք ներենք մեր ընկերին , ի՞ծ ալ  
մեզի կը ներէ . եթէ մենք չի ներենք ու-  
րիշին պարտուցն , ի՞ծ ալ մեզի չի ներէ ,  
կը մնանք պարտական յաւիտենական  
դատապարտութե : Այն այն քրիստո-  
նէին , որ ամէն օր հայր մեր ասելով ինչ  
խօսք կուտայ թէ կը ներեմ պարտապա-  
նացս , և գործքով չի ներելով ի՞ծ կը  
խաբէ : Անոր համար կըսեն սուրբերը ,  
թէ ով որ ոխս ունի ընդ ընկերին , դաշ-  
նակից է սատանայի . զի այնպիսին ինք-  
զինքը կը դատապարտէ , որչափ անգամ  
որ հայր մեր կըսէ :

Հ . Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութի՝  
ասելով ի՞նչ կը խնդրենք :

Պ . Աեցերորդ՝ կը խնդրենք ի՞ծային  
նախախնամութէն , որ ազատէ զմեզ ա-  
մէն փորձութի . որովհետեւ անդադար  
սատանան՝ աշխարհ՝ և մեր մարմինը մե-

զի փորձու թիւներ կը լարեն . որպէս զի ապականեն մեր հոգին , պէտք է ոչ միայն աղօթել , որ ձեռք թոյլ չի տայ . այլև արթուն և զգաստ կենալ միշտ պատերազմելով թշնամեաց հետ . ուստի ասաց յն առաքելոց . Արթուն կացէք , և աղօթս արարէք . զի մի անկանխելի փորձութիւն :

Հ . Այլ փրկեալ զմեզ 'ի չարէ' ասելով ինչ կը խնդրենք :

Պ . Եօթներորդ . կը խնդրենք , որ ամէն չարէ պահէ զմեզ ձեռք . այսինքն նախ՝ մեղքէ , որ է ամենէն մեծ չար . երկրորդ՝ չար ընկերէ , չար սովորութիւն , չար կենսակցութիւն , և այլ ամենայն անկարգուէց , որ կը հակառակին ձեռքին օրինաց և բարի վարուց . որպէս զի ազատ ըլլալով արժանի ըլլանք երանական տեսութիւն . ուր կատարեալ ազատութիւն է չարէն :

Հ . Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն՝ ասելով ինչ կը մտալ թե՛նք :

Պ . Մտալ թե՛նք կը փառաւորենք ձեռքին մեծ վայելչութիւն . զի ինքն է միայն տէր արքայութիւն , և զօրութեան . և իրեն միայն կը վայելէ փառք յաւիտեանս . որուն զմեզ արժանի ընելու համար խնդրեցինք , և այս խօսքով կը վերջացնենք . որ միայն մատթէօսի աւետարանին մէջ կայ այս վերջին մասն բոս մեր թարգմանութեան , զուհասու մէջ

չի կայ . զի այլևայլ ժամանակ սորվե-  
ցուց քն այս աղօթքը :

Հ . Հայր մերէն ետև ինչ աղօթք պէտք  
է ընել :

Պ . Շատ սուրբեր զանազան աղօթք-  
ներ շիներ են այլևայլ ժամանակի հա-  
մար . ինչպէս սուրբ գրիգոր նարեկա-  
ցին դրեթէ ամէն բանի համար զօրաւոր  
աղօթքներ շիներ է . նոյնպէս շնորհալին  
քսանըջորս ժամու վրա շարագրեց հա-  
ւատով խոստովանիմը . սակայն հասա-  
րակօրէն հայրմերէն ետև Ողջոյնը կը-  
սենք խնդրելով անձամբ միջնորդու-  
թիւնն . որպէս զի ներկայացնէ ան մեր  
խնդիրքը , և օգնական ըլլայ մեզ :

Հ . Ո՞վ շարագրեց ողջոյնը :

Պ . Այս աղօթք իրեք մասն կը բաժ-  
նուի . նախ՝ դաբրիէլ հրեշտակն ուրա-  
խակցելով անձամբ ասաց . Ուրախ լեր  
բերկրեալդ տէր ընդ քեզ . կամ որ նոյն  
է , ողջոյն քեզ մարիամ լի շնորհօք տէր  
ընդ քեզ : Երկրորդ մասն ասաց եղիսա-  
բէթ այցելու թէ օրն . Օրհնեալ ես դու  
'ի կանայս , և օրհնեալ է պտուղ որո-  
վայնի քո : Իսկ մնացեալ մասն նք եկե-  
ղեցին յօրինեց ասելով . Սրբուհի մա-  
րիամ մայր անյ , բարեխօսեալ վասն մեր  
մեղաւորացս այժմ և 'ի ժամու մա-  
հուան մերոյ , ամէն : Սակայն մեր հին  
վարդապետները այսպէս թարգմանեցին  
ողջոյնը . Ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ  
քեզ . օրհնեալ ես դու 'ի կանայս , և

օրհնեալ է պտուղ որովայնի քո յն . սրբուհի կոյս մարիամ մայր քնի՝ բարեխօսեալ անգագար վասն մերոյ փրկութեան . ամէն :

Հ . Ի՞նչ պիտի խորհինք այս աղօթքն ասելով :

Պ . Նախ պիտի խորհինք անճառելի խորհուրդ մարդեղութիւն քնի . երկրորդ՝ խորին խոնարհութիւն և սքանչելի մտքութիւն տիրամօրն . երրորդ՝ անգառնալի բարեխօսութիւն սք կուսին , որ պիտի ընդունինք . ինչպէս նարեկացին այսպէս խորհելով կը շարագրէր անճառնայ աղօթքներն :

Հ . Արդեօք պէտք է յաճախ աղօթել :

Պ . Սք աւետարանէն սորվեցանք , որ կրտէ . պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս առանց ձանձրանալու . և ժամերգութեան մէջ կրտէնք՝ ՚ի գիշերի և ՚ի տունջեան և յամենայն ժամու անգագար փառաւորեմք . զի որչափ շատ աղօթենք , անճ չի ձանձրանար . և ամէն աղօթք իրեն ընդունելի են , թէ հրասպարակական աղօթք կամ ժամերգութիւն , թէ առանձնական , և թէ սրաքական՝ երբ բարի հոգին անջ հետ կը խօսակցի եռանդեամբք : Սակայն եղան միամիտներ՝ որ ըսին , թէ յաճախ ողջունել սք կոյսն՝ անպատուութիւն է . որ է խօսք ագիտական . զի ինչպէս որ մէկ բոսկին մէջ անբաւ Տէր ողորմեալ կրտէն ամէն ազգ և ժողովուրդ՝ անճ չի ձանձրանար , այլ կը

փառաւորի . այսպէս հրեշտակային ող-  
 ջունով յաճածինն ստէպ մեծարելով, և  
 կուսական ծնունդն յիշելով կը փառա-  
 ւորի տիրամայրն . զի հրեշտակային ող-  
 ջոյն է մարգեղութեանն յայն, և ոչ հա-  
 սարակ մարգկային ողջոյն : Ուրեմն և մեր  
 բերանն ալ միշտ սլիտի սովորի կարգալ  
 հայրն երկնաւոր՝ ինդրելով անպակաս  
 իւր անհուն ողորմութիւն . նաև ողջունե-  
 լով մեծարանօք սբ կոյսն՝ ինդրել ան-  
 գառնալի բարեխօսութիւն . Ընկալ տէր  
 զաղաչանս մեր բարեխօսութեան սբ յաճա-  
 յինն : Փառաւորեալ և օրհնեալ միշտ սբ  
 կոյս յաճածին մարիամ մայր քսի, մատո՛  
 զաղաչանս մեր որդւոյ քո և յայ մերոյ :

### ԻԸ . Կ Ի Ր Ա Կ Ի

Հ . Ինչ է պաշտօնը :

Պ . Պաշտօնն է արժանաւոր մեծա-  
 րանք և երկրպագութիւն, որ կրնձայեմք  
 իւր ծայրագոյն գերազանցութեւը հա-  
 մար, և մեր իրեն հստատակ ըլլալնուս հա-  
 մար . ըստ այնմ . Եթէ տէր եմ՝ ո՛ւր  
 է փառք իմ, և եթէ հայր եմ՝ ո՛ւր է  
 պատիւ իմ ասէ տէր ամենապալ :

Հ . Քանի՞ բան կը պահանջվի :

Պ . Իրեք . նախ՝ սլիտի ըմբռնենք մըս-  
 քով յաճային գերազանցութիւնն . եր-

կրորդ՝ պիտի հստատակինք յօժար կտուօք  
 և խոնարհութիւն իշխանութեան բարձրե-  
 լոյն . երկրորդ արտաքին շարժմամբ խո-  
 նարհելով գլուխնիս և ծունր գնելով  
 ւայ՝ գետինը պիտի պագնենք . ուսկիցե-  
 լած, է բառս երկիրագագութիւն . որ յոյ-  
 նը կրսէ Փոստինիս , և լատինն Արօ-  
 սայի :

Հ . Քանի՞ կերպով կըլայ երկրագագութիւն :

Պ . Իրէք . ինչպէս հայր արահամն՝  
 այլ կերպով երկրագագութիւն ըրաւ ւայ,  
 այլ կերպով հրեշտակաց, և այլ կերպով  
 մարգկան . ուստի հոգևորական երկրագագութիւն  
 իրէք կը բաժնըլի . նախ՝ յարգութիւն  
 երկիրագագելով կը պատուենք հրեշտակներն  
 ու սուրբերը . երկրորդ՝ գերյարգութիւն  
 կամ մեծ յարգութիւն երկրագագութիւն  
 կընենք ւածածնայ . երրորդ՝ պաշտօնով,  
 կամ գերազանց յարգութեամբ  
 երկրագագութիւն կընենք միայն  
 ւայ ասելով՝ փառք և երկրագագութիւն  
 հօր և որդւոյ և ւրջ հոգւոյն այժմ  
 և միշտ :

Հ . Ինչպէս պիտի պատուենք ւածածինը  
 և ինչպէս նբերը :

Պ . Գերյարգութիւն պիտի պատուենք,  
 ինչպէս ամենայն քրիստոնեայք միշտ կը  
 պատուեն տիրամայրն կատարելով տօնախմբութիւններն,  
 և ջերմեռանդ երկըր պագութիւն  
 աղօթելով և վերապատուելով,  
 ինչպէս ըրին սուրբերը . և ինչպէս

շարականը Մեծացուցէնէրով կը պատ-  
ուէ ամէն օր նք կոյսը : Իսկ սուրբերը  
կը յարգենք ամէն օր իրենց յիշատակը  
կատարելով և բարեխօս ունելով առ-  
ած :

Հ . Ո՞վ ուրացաւ այս ճշմարտու-  
թիւնը :

Պ . Նախ՝ նեստոր հերետիկոսն , և ա-  
պա լուտեր ալանդապետն . որոնք ու-  
րանալով ուղեցին վերցընել անձնայ  
պատիւը . նոյնպէս կալվինական հերե-  
տիկոսներն դրին թէ անարգանք է քնի՝  
բարեխօս բռնել սուրբերը և ալօթել .  
բայց նք ժողովները նզովելով այս ա-  
լանդաւորներն հաստատեցին թէ պէտք  
է երկրպագութիւն ընելով գերյարգել  
անձնայ , և յարգելով սուրբերը բա-  
րեխօս ունել առ անձ . ըստ այնմ . Ա-  
պաւինիսմք՝ ի քո բարեխօսութիւնդ ան-  
անձին մարիամ . Աղաչանօք անձնին , և  
յոհաննու կարասպետին : Ուստի փառք  
են քնի , որ սուրբերը բարեխօս ըլլան , և  
օգնեն մեզ . ինչպէս հին ասեմէն ի վեր  
ամէն եկեղեցի աւանդութիւն կը պահէ  
այս սովորութիւնը :

Հ . Ի՞նչ է յարգութիւն պատկերաց :

Պ . Որովհետեւ պատկերն է , որ կե-  
րևցընէ իր նախատիպը կամ տէրը , ուս-  
տի սրջափ գերազանց է պատկերին տէ-  
րը՝ նոյնչափ յարգելի է պատկերը վեր-  
բերական պատուով , և երկրպագութի-  
ւնով յնի պատկերնէ յարգելի ծայ-

բագոյն երկրպագութեամբ, անձամբ  
 պատկերը դերյալագութիւն, և սրբոցն յար-  
 ցութիւն. զի են սրբազան պատկերք: Ա-  
 նոր համար երբ յուլիանոս ուրացողն  
 իր անարժան պատկերը հայաստան զըր-  
 կեց որ ժամը դնեն պաշտեն, նք յուսիկ  
 ոտքին տակն առաւ սրտուեց. զի էր ու-  
 րացողի պատկեր. և կռապաշտական  
 գործք, և ոչ սրբազան պատկեր:

Հ. Ո՞վ էին պատկերամարտք:

Պ. Ութերորդ դարուն հերետիկոսներ  
 էլան, որ պատկերաց թշնամի ըլլալով  
 յոյն թագաւորները մոլորացուցին, և հա-  
 լածանք հանեցին այրելով նք պատկեր-  
 ներն, որ դատապարտեց թ ժողովն նի-  
 կիոյ 787 ին. և հաստատեցին նք վար-  
 դասպետները թէ սրբազան պատկերներն  
 արժան է պատուել օրինաւոր երկրպա-  
 գութիւն, ինչպէս կրսէ նք բարսեղ. Ըզ-  
 պատկերս յայտնի պաշտեմք, որպէս ու-  
 սաք ՚ի նրց առաքելոց:

Հ. Ինչո՞ւ սրգեւած էր հրէից:

Պ. Անոր համար հրէից արգելք դը-  
 րաւ, որ հեթանոսաց նման կուսքեր  
 չչինեն ու պաշտեն, ինչպէս սորված էին  
 եգիպտացոցմէ. որոնք անապատին մէջ  
 ոսկիէ հորթ շինեցին պաշտեցին ասելով  
 ահա անձք քո խորայել: Քրիստոնեայն  
 նախատալին կրնէ երկրպագութիւն. չէ  
 թէ փայտին կամ կտաւին հրէից պէս:  
 Ուստի բոլորովին արգելած չէր հրէից.  
 զի հրամայեց ան մովսէսի, որ տապա-

նակին վրա երկու քերոբէ շինեց, և իբր  
 Թճային նշան կը յարգէին զանոնք. ու-  
 րեմն ևս առաւել քրիստոնէայք օրի-  
 նաւոր կարգաւ կը յարգեն սբ պատկեր-  
 ները: Սակայն արևելեան ազգաց մէջ  
 այնչափ յաճախուածիւն չի կայ պատկե-  
 րաց, թէպէտ շատ կը յարգեն, եւրո-  
 պացոց մէջ աւելի է:

Հ. Ի՞նչպէս պիտի պատուենք քնի  
 խաչափայտը:

Պ. Խաչափայտն երկու նշանակուածի  
 ունի. մէյնը իբր պատկեր քնի կը համա-  
 րի, և անատենը պէտք է երկրպագուածի  
 ընել ինչպէս քնի. ըստ այնմ. Եկայք  
 երկրպագեսցուք Թճային սբ նշանիս.  
 խաչի քո քն երկրպագեն արարածք ա-  
 մենայն: Երկրորդ՝ բուն խաչափայտին  
 մասն ըլլալով նոյնպէս պէտք է երկր-  
 պագանել ըստ որում քնի արեամբն  
 ներկած. ըստ այնմ. Սա է զէն յաղ-  
 թուած սրեալ արեամբ որդւոյն Թճ. սա  
 է սեղան սրբուածի, և ՚ի սմա է պատա-  
 րագեալ քն գառն Թճ:

Հ. Ի՞նչպէս պիտի պատուենք սուր-  
 բերուն նշխարքը:

Պ. Սուրբերուն նշխարքը սրբազան  
 յարգուածամբ պէտք է պատուել ուխտ  
 երթալով և բարեխօս ունեւլով, ինչպէս  
 կըսէ շարահանը. Երկրպագեմք առաջի  
 տևողական նշխարաց ճգնաւորին քնի և  
 պատուական վկային: Իսկ քնի մարմի-  
 նը կը սրաչտենք Թճային երկրպագութիւն.

ըստ այնմ. Եկայք հաւատացեալք երկրը-  
սագեացուք քնի նյ մերոյ :

Հ . Ո՞վ ուրացաւ այս ճշմարտութիւնը :

Պ . Նախ անօրէն պատկերամարտ-  
ներն անարգելով գրին թէ հարկ չէ պա-  
տուել սուրբերուն նշխարքը . յետոյ  
լուտերական և կալվինական հերետիկոս-  
ներն . բայց սբ եկեղեցին զամէնքն ալ  
գատապարտեց հաստատելով այս ճշ-  
մարտութիւնն քանիւ մարգարէին . Պա-  
տուական է առաջի տեառն մահ սբց  
իւրոց . պահէ զամենայն ոսկերս նոցա,  
և մի ՚ի նոցանէ ոչ կորիցէ : Եւ լուսա-  
ւորիչ կըսէ . Նշխարք ոսկերաց սբց՝  
փրկութիւն ընծայէն ՚ի ժողովս հաւա-  
տացելոց : Անոր համար մովսէս մարգա-  
րէն յովսէփ գեղեցիկին մարմինը պա-  
տուով հանեց եգիպտոսէն հեար տա-  
րաւ . և եղիսէի մարմինը մեռելին մօտե-  
նալով ողջացուց :

Հ . Արդեօք կայ իծածնայ նշխարքը :

Պ . Ածածին մարմնով վերափոխեցաւ  
երկինքը . ուստի ուրիշ նշխարք չի կայ,  
բայց եթէ մագերը, գօտին և լաչակը  
թողուց եկեղեցնայ . ինչպէս գտան իր  
տուփը հրաշքով, և տօնը կը կատարվի .  
նաև սբ տունը լուէթօ քաղաքն ըլլալով  
մեծ ուխտատեղի է եւրոպիա . ուր շատ  
հրաշք կըլլայ : Արդ՝ թէ այս սբ բաներն  
իծածնայ, և թէ պատկերը գերյարգու-  
թեամբ պատուելով երկրպագութիւն  
կընենք, ըստ նարեկացւոյն՝ ծունր կըրկ-

նեցի արժանապատիւ քումք սլատ,  
կերի :

Հ . Քրիստոնէ այն ինչպէս պիտի կա-  
տարէ իր ջերմեռանդութիւնը :

Պ . Նախ՝ պիտի մաքուր ըլլայ մեղքէ՝  
խոստովանելով և զղջալով . երկրորդ՝  
հողին պիտի զարդարած ըլլայ անձաբա-  
նական առաքինութիւն . այսինքն հաւա-  
տով յուսով և սիրով :

Հ . Ինչո՞ւ ըսիր անձաբանական :

Պ . Զի այս առաքինութեց անմիջա-  
կան առարկայն ան է . ուստի բարի  
քրիստոնէայն պիտի հաւատայ յանձ  
կենդանի հաւատքով, պիտի յուսայ  
տեսնել և վայելել զանձ, և պիտի սիրէ և  
զմայլի յաւիտեանս յաւիտենից : Ահա  
այս է հիմն քրիստոնէութեան և սկիզբն  
անձապաշտութեան, և առանց այս առաքի-  
նութեց ոչ ճշմարիտ քրիստոնէութիւն  
կրլլայ, և ոչ անձապաշտութի :

Հ . Ինչպէս պիտի ըլլայ ճշմարիտ  
հաւատացեալն :

Պ . Որչափ դժւար պարագայի մէջ  
ըլլայ՝ պիտի հաստատութիւն հաւատայ,  
թէ ան իրեն մօտն է չի թողուր զինքը,  
և ամենակարող ըլլալով կրնայ ամէն  
չար ի բարին դարձնել : Ինչպէս արբա-  
համ երբոր մէկ հատիկ զաւակը պիտի  
զոհեր՝ հաւատաց թէ ան կարող է յա-  
րութի տալ, կամ նաև մեռելէն զաւակ  
տալ, ինչպէս որ խոստացեր էր : Քրիս-  
տոնէին աղօթքը և ջերմեռանդութիւնը

պիտի այսպիսի կենդանի հաւատքով ըլ-  
լայ, որ է միշտ անփոփոխ, և կարող է  
լեւները փոփոխելու. ըստ ասելոյ սբ  
աւետարանին: Իսկ յոյսը նման ըլլալով  
նաևու խարսխի՝ անփոփոխ կը մնայ աչ-  
խարհիա ալէկոծութեց մէջ և ապահով  
նաև իւր սէրն է միշտ վառած թէ յաջո-  
ղութե և թէ ձախորդութեան մէջ. թէ  
տրամութեան, և թէ ուրախութեան  
մէջ. ուստի չի կայ բան որ կարենայ  
թուլցնել անոր սիրան անձպաշտութե.  
զի միշտ կապված և միացեալ է այ հետ,  
ինչպէս կը հաստատէ իմաստունն: Ած-  
փորձեաց զնոսա, և եգիտ արժանիս իբ-  
րև զոսկի ՚ի բովս քննեաց զնոսա, և  
իբրև զողջակէզ զոհի ընկալաւ զնոսա:

Հ. Ինչպէս է թոյլ քրիստոնէին հա-  
ւատքը:

Պ. Թոյլ քրիստոնէին հաւատքն ալ  
տկար ու մեռած է. և փոփոխական ըլ-  
լալով ալէկոծեալ ծովու կը նմանի՝ ինչ-  
պէս կըսէ յակոբոս առաքեալ. քիչ մի  
բանով կը շփոթի, և երկմտելով կը յու-  
սահատի, մինչև զինքը կը սպաննէ: Ոմանք  
այսպիսեաց կը ջանան հաւատքն իրենց  
խելքին յարմարցնել, և անձային դադա-  
նեացն խելք հասցնել, որոնք չիյտեն՝  
իրենց սունն ինչ կայ, ինչպէս կըսէ սո-  
ղոմոն: Ոմանք ալ ուղած բաներուն կը  
հաւատան չուղածնուն չեն հաւատար-  
հոգևոր բաներնին սովորութե պէս ընե-  
լով ջերմեռանդ քրիստոնէաները ծաղը

կրնեն միամտի տեղ դնելով, չկտեն թէ իրենք սատանային ծաղը են եղած . և մեռեալ հաւատքով ինչ գործք և աղօթք ընեն՝ Ծայ ընդունելի չէ, ինչպէս կայէնի նր . անուամբ միայն քրիստոնեայ են և գործքով ուրացող, որպէս ասաց սողմոն . Ուրանան գիտել զքեզ ամբարիշտք . Բայց զօրութեամբ բազկի քո տանջեցան :

Հ . Ո՞րն է բարի քրիստոնէին ներգործութիւն հաւատոյ, որ ամէն անգամ սկիտի ընէ առաջի Ծայ :

Պ . Ա՞՞ծ իմ և ամենայն ինչ, հաւատամ բոլորով սրտիւ ամենայնի, զոր ինչ միանգամ յայտնեալ էս, և սլատրատ եմ մեռանիլ քան երկբայիլ . զի անսըխալ ճշմարտութիւնդ յայտնեցեր զամենայն . որ ոչ կարես խաբել, և խաբիլ : Դաւանիմ և հաւատամ թէ միշտ էիր, և էս . և լինիցիս յաւիտեան . գուրով մի միայն ԾԾ յերիս անձինս զանազանեալ հաւասար մի բնութ՝ և մի Ծծութ, հայր որդի և հոգի սբանփոփոխ և անայլայլելի ինքնագոյ և համագոյ : Հաւատամ թէ էս արդար վարձահատոյց՝ արդարոց արքայութիւն տալով, և մեղաւորաց դատապարտութիւն յաւիտենական : Հաւատամ և դաւանիմ, թէ որդին ԾԾ վասն փրկութեան մերոյ մարգացաւ, և ծնաւ յանարատ կուսէն մարիամայ . չարչարեցաւ և մեռաւ վասն մեր և յերրորդ աւուր յարեաւ : Հաւատամ ա

մենայն ճշմարտութե , զոր դաւանի և քարոզէ ընդ հանրական կաթողիկէ և առաքելական սբ եկեղեցի : Ահա փափաքիմ կեալ և մեռանիլ 'ի սոյն ճշմարտութեան :

Հ . Ո՞րն է ներգործութի յուսոյ բարի քրիստոնէին :

Պ . Ա՞ճ իմ , յոյս իմ , առ քեզ դիմեմ , ո՞վ ծայրագոյն բարի և յաւիտենական երանութիւն . վստահացեալ յանհուն ողորմութիւն և յանսուախոսամունս քո յուսամ հաստատութե , [թէ վասն արդեանց տեառն մերոյ յսի քսի շնորհէլոց ես [թողութիւն ամենայն մեղաց իմոց , և շնորհս յարատեութեան 'ի բարին մինչև ցմահ՝ փրկելով զիս 'ի յաւիտենական մահուանէ : Ահա առաջադրեմ հաւատարմութե ծառայել արարչիդ զամենայն աւուրս կենաց իմոց վասն փրկութեան իմոյ :

Հ . Ի՞նչպէս է ներգործութիւն սիրոյ անձասիրին :

Պ . Ա՞ճ իմ , սէր իմ , բարերար և մարդասէր , սիրեմ զքեզ յամենայն անձնէ իմմէ 'ի վեր քան զամենայն՝ ոչ միայն վասն անչափ բարերարութեանց , զոր արարեր և զոր առնես հանապաղ . այլ և զի ես աղբիւր սիրոյ , գլխովին սէր , և արժանի անհուն սիրոյ : Սիրեմ զքեզ և երկիրպագանեմ բոլորով սրտիւ իմով . աենչամ զի տիեզերք ամենայն ընդ իս սիրեսցեն և ծառայեսցեն քեզ . սի .

րեմ վասն սիրոյ քո զընկերս իմ իբրև  
 զիս, և կարեկցիմ ամենեցուն. զի են  
 ստեղծուածք անարատ ձեռաց քոյ և  
 պատկեր արարչիդ : Սիրեմ վասն սիրոյ  
 քո և զայնոսիկ, որ զիս վշտացուցին, և  
 ներեմ ամենեցուն ճշմարիտ սրտիւ՝ որ  
 պէս ցանկամ ընդունիլ յողորմութենէ  
 քումմէ ներումն սխալանաց իմոց, մաղ  
 թելով 'ի քէն տեր բարի առնել բարե  
 րարաց իմոց և ատելեաց : Ո՛վ աղբիւր  
 անսպառ սիրոյ տուր ինձ բաց 'ի քէն ոչ  
 ինչ սէր ինդրել. այլ 'ի քեզ լուղիլ և  
 մնալ այժմ և միշտ և յաւիտեանս յա  
 շխտենից :



# Գ . Տ Ա Ղ Ա Ի Ա Ր

Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Ի Թ . Կ Ի Ր Ա Կ Ի

Տ . Միայն հաւատքով և աղօթքով կրնանք փրկութեան հասնիլ :

Պ . Հաւատքը և ջերմեռանդութիւնը քրիստորէին՝ բաւական չեն առանց բարեգործութեան . զի հաւատք առանց գործոց մեռեալ են՝ ասաց յակոբոս առաքեալ . ուստի հարկաւոր է որ բարի քրիստոնեայն իմծային պատուիրանները գիտնայ և սպահէ . որպէս զի չխոտորի և չմոլորի ի այ ճամբայէն . որովհետեւ հաւատքը կը լուսաւորէ միտքը . իսկ պատուիրանը գնացքը և վարքը շակեւով շիտակ կը տանի՝ իմծային ճամբայէն չհանելով : Անոր համար կըսվի բարոյական .

զի մարդուս բարբը և վարբը կուղղէ. ըստ  
այնմ. Ճրագ են բանիք քո ոտից իմոց, և  
լոյս տան շաւղաց իմոց: Պատուիրանք  
տեառն լոյս են և լոյս տան աչաց. եր-  
կիւղ անսբ է և մնայ յաւիտեան:

Հ. Ի՞նչ է պատուիրանը:

Պ. Է օրէնք ան կամ կանոն, որ կը  
պարտաւորէ գործել բարին, և կարգե-  
լու գործել չարն. ուստի կայ ստորասա-  
կան պատուիրան, որ կը պարտաւորէ  
բարի գործել և բարի ըլլալ. և կայ բա-  
ցասական պատուիրան, որ կարգիւ է չա-  
րու թիւնը:

Հ. Ամէն մարդ կը պարտաւորի՞ պա-  
հէլու:

Պ. Ամէն խելահաս մարդ պարտական  
է պահելու և կատարելու անձային պա-  
տուիրանները. և ովոր զանցառութիւն կը  
պակասի, պարտական կը մնայ անձային  
օրինաց դէմ. և թէ որ ամէն պատուի-  
րանները պահէ, մէկը միայն չի պահէ,  
ամէն օրինաց պարտական կը մնայ՝ ըստ  
յակոբայ առաքելոյ:

Հ. Ամէն ազգ ունի՞ պատուիրան:

Պ. Ինչպէս առջի կիրակին յայտնե-  
ցինք, թէ ստեղծօղն ամէն մարդու սր-  
տին մէջ բնական օրէնք և պատուիրան  
գրեր է. նաև նոյն իսկ խիղճմտանքը  
բնական օրէնք ըլլալով կանոն կուտայ  
մարդուն, որ բարւոյն մտենայ և չարէն  
հեռանայ: Ասկէց շարժեցան ամէն ազ-  
գաց գիտուններն ու քուրմերը՝ իրենց

ժողովուրդին օրէնք և պատուիրան գրին,  
որ շնտակ կանոնէն չի խտարելով բարի  
ըլան :

Հ . Ի՞նչպէս են արդեօք կռասպաշա-  
ներուն պատուիրանները :

Պ . Զարմանալի պատուիրաններ կան  
հին հեթանոս գիտուններուն գրեանց  
մէջ . որոնք բնական լուսով փծային  
դրած օրէնքներն որոշելով պատուիրե-  
ցին ժողովուրդին : Գտանք հեթանոսաց  
մէջ այսպիսի օրէնքներ . Մեռցի զա-  
ւակն , որ երիցս անհնազանդ դաւա-  
ծնողացն . Անարդեսցի ստախօսն . Ի  
սկիզբն տարւոյն պահեսցին ածնք զա-  
ւուրս տասն . ևն : Հնաստանցոց մէջ կայ  
այսպիսի հին օրէնք . Հողի է փծ . Մի-  
րեա՛ զառաքինութիւն վասն իւր . Մա՛հ  
կանացու լէր իմաստուն , ևն : Եգիպտա-  
ցոցն է այսպէս . Պատուեա զծնողս քո .  
Մի՛ յայաներ զխորհուրդ , ևն : Մինասի  
պատուիրանն է . Մի՛ երգնուր յիծ մա-  
նուկ դու . մի՛ քններ զօրէնս . Օրէնքն  
յայանէ անանուն զայն , որ չունի բարե-  
կամ , ևն : Սողոնին է . Օրինազանցն  
մեռցի . Հարսն առաջնորդեսցէ կոյր փե-  
սային ևն : Պիւթագորասին է . Գործեա՛  
զայն , որ ոչ տանջէ զխիղճ քո . Մի՛  
ննջեր յառաջ քան զքննել երիցս ըզ-  
գործս քո աւուրն . Հարց ցքեզ . ո՛ւր էի-  
զինչ արարի . և զինչ ունիմ առնել .  
Եթէ զայստօսիկ սահես , յեա բարձման  
կենաց քոց՝ երբ մարմին քո գաունայ ՚ի

աարերս, դու մնաս անմահ անապական  
 և չկարիցես այլևս մեռանիլ : Ահա աս-  
 կէց յայանի է անձադիր օրինաց գերա-  
 զանցութիւնն, որ է աղբիւր և սկիզբն  
 ամենայն պատուիրանաց . մինչ զի կոյր  
 հեթանոսներն ալ ճանչցան և հրամայե-  
 ցին ամենայն զգուշութիւն . անանկ որ օ-  
 րինազանցը մէկէն կը դատապարտվէր,  
 ինչպէս կը բերեն հնախօսներն :

Հ . Քանի՞ են անձային պատուիրան-  
 ներն :

Պ . Ինչպէս առաջ ըսինք, անձ ամենա-  
 բարին հրէից համար տաւր պատուիրան  
 տվաւ մովսէս մարգարէին՝ քարէ տախ-  
 տակի վրա գրած սինայ լեռը . որ ըսվե-  
 ցան տասնաբանեայ պատուիրան, և  
 պատգամ անց :

Հ . Ասա՛ կարգաւ :

Պ . ան . Ես եմ տէր անձ քո . մի ունի-  
 ցիս զայլ անձ առաջի իմ :

Բ . Մի առնուցուս զանուն անց քո ընդ-  
 ունայն :

Գ . Յիշեա՛ սրբէլ զօր շաբաթուն :

Դ . Պատուեա՛ զհայր քո և զմայր :

Ե . Մի սպանաներ :

Զ . Մի շնար :

Է . Մի գողանար :

Ը . Մի սուտ վկայեր :

Թ . Մի ցանկար կնոջ ընկերի քո :

Ճ . Մի ցանկար ընչից այլոց :

Հ . Ի՞նչ կերպով տվաւ անձ այս պա-  
 տուիրաններն :

Պ . Գերազանցութիւնն յայտնելու համար , և անսխալօքս անձային սրատգամ ըլլալն խնայելու համար՝ իր ձեռքովը գրեց երկու կողմն ալ երկու քարէ տախտակներուն . նաև ստեղծելի ձայներով , և ասագին երևութներով ավաւ նոյն սրածառին համար . ուստի նր գիրքը կը վկայէ թէ՛ Ժողովուրդն տեսանէր ըզձայնն և զճառագայթան և զբարբառփողոյն և զլեռան ծխեալ , զահի հարաւ :

Հ . Մովսէս մարգարէն ի՞նչ ըրաւ :

Պ . Աճաշունչը կը սրտմէ թէ այս ստորագիւղի ձայներն ու հրաշալի փայլատակներն ըլլալէն ետե՛ կ'ջ տէր 'ի լեռան սինա հրով , ուր անձային ասաւորագայլ փառքը կերևնար լեռանը վրա . իսկ մովսէս Ժողովուրդը լեռան տակը շարեց և ինքն անձային հրամանովն ելաւ լեռան վրա : Մովսէս կը խօսէր և հրեշտակն անկողմանէ սրատախտակուար : Ուստի խորայն լացիք այս սրատուիրանները ոչ միայն քարէ տախտակին վրա գրած տեսան , այլև ականջովն լսեցին . և այնչափ խռովեցան , մինչ զի՛ ըսին մովսէսի թէ , Դու խօսեաց ընդ մեզ՝ և լուիցուք . և մի խօսեացի ընդ մեզ անձ , գուցէ մեռանիցիմք :

Հ . Բուն անձանչին մէջ ի՞նչ կարգով կը գնէ սրատուիրանները :

Պ . Մեր Աճաշունչին մէջ այս կարգով կը գնէ . ան . Ես եմ՝ տէր անձ քո որ հանի զքեզ յերկրէն եգիպտացուոց 'ի սա-

նէ ծառայութեան . մի եղիցին քեզ այլ  
 աստուածք բաց յինէն : ք . Մի արաս-  
 ցես գու քեզ կուռս ըստ ամենայն նմա-  
 նութե . որ ինչ յերկինս 'ի վեր , և որ  
 ինչ յերկիր 'ի խոնարհ , և որ ինչ 'ի  
 ջուրս 'ի ներքոյ երկրի . մի երկիրագա-  
 նիցես նոցա , և մի պաշտեսցես զնոսա . . .  
 ք . Մի առնուցուս զանուն տեառն ւայ  
 քո 'ի վերայ սնտեսաց . . . ք . Յիշեսցի՛ր  
 զօրն շաբաթուց սրբել զնա . . . մի գործ  
 ծեսցես 'ի նմա զամենայն գործ քո դու  
 և ուսոր քո և դուսոր քո , ծառայքո ,  
 և աղախին քո . . . ք . Պատուեա՛ զ՛այր  
 քո և զմայր քո . զի քեզ բարի լինիցի ,  
 և զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ  
 երկրին բարութե , զոր աէր ւած աացէ  
 քեզ : ք . Մի սպանաներ : ք . Մի շնար :  
 ք . Մի գողանար : ք . Մի սուս վկայեր  
 զընկերէ քումէ : ք . Մի ցանկանար  
 ասն ընկերի քո , և մի անգոյ նորա : Մի  
 ցանկանար կնոջ ընկերի քո , և մի ծա-  
 ռայի նորա . և մի աղախնոյ նորա , և մի  
 եղին նորա . . . և մի ամենայնի զինչ ըն-  
 կերի քոյ իցէ :

Հ . Ո՛րն է լրումն պատուիրանաց :

Պ . Ըստ սբ աւետարանին բոլոր պա-  
 տուիրաններուն լրումն է երկու բան .  
 Սիրել զւծ , և զընկերն . վասն զի ւծա-  
 սէր մարդը ամէն պատուիրաններն ան-  
 թերի կը կատարէ , և ինքզինքը չար  
 գործքերէն հեռու կընէ : Նոյնպէս եղ-  
 բայրասէր մարդը ոչ ատելութիւն կընէ ,

ոչ գողութիւն, ոչ ստութիւն և ոչ ուրիշ չարութիւն, որ կը հակառակի ընկերսիրութեան: Անոր համար ստաց առաքեալը թէ լսումն օրինաց սէր է:

Հ. Ի՞նչպէս կը վկայէ աւետարանը:

Պ. Սիրեսցես զտէր ւծ քո յամենայն սրտէ քումմէ՝ և յամենայն անձնէ քումմէ՝ և յամենայն մտաց քոց: Այս է մեծն և առաջին ստուգութիւնը: Երկրորդն նման սմին. սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո: Յայս երկուս ստուգութիւնս ամենայն օրէնք և մարդարէք կախեալ կան: Ահա այս է մեր գլխաւոր սարսքն, որ ունինք առ ւծ. պիտի սիրենք ւծ ամէն բանէն վեր, և պիտի սիրենք ընկերը մեզի պէս. ջանանք լաւ պահելու այս երկու ստուգութիւններն. որով ամէն ստուգութիւնները պահած կըլլանք և ւոյ սիրելի, նաև աշխարհիս մէջ պանծալի. որ այս շաբթու պէտք է սկսինք զմեզ կրթելու, և կատարելութեան հետևելու, ինչպէս քո խրատ կուտայ. Եղերուք կատարեալ, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է:

## Լ. Կ Ի Ր Ա Կ Ի .

Հ. Որն է առաջին պատուիրան , և ի՞նչ կը պարտաւորէ :

Պ. Ես եմ տէր ւծ քո , մի ունիցիս զայլ ւծ առաջի իմ : Այս պատուիրան կը պարտաւորէ ամէն մարդ և ամէն ազգ , նաև անհաւատ մարդ , որ ճանչնայ իւր ստեղծողն , և արժանաւոր պաշտօն մատուցանելով ծառայէ և երկիր , պագանէ բոլոր սրտով : Նաև սիրէ զընկերն իբրև զանձն :

Հ. Եւ ի՞նչ բան կարգիլէ :

Պ. Ամենայն կերպ կռապաշտութիւն կարգիլէ . որ չըլլայ թէ հին հեթանոսներուն նման ձեռագործ բաները պատանք , կախարդական բաներու հաւատանք , հերեօնիոսութեանց հետեինք . աշխարհի և աշխարհային բաներու սէր տանք : Ուստի սուրբ վարդապետներն աշխարհասէր և արծաթասէր մարդը կռապաշտի կարգ կը դնեն :

Հ. Ի՞նչ ըսել կուզէ սիրել զւծ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ :

Պ. Որովհետև արարիչն է վերջին վախճան և ծայրագոյն բարի , մարդս բոլոր անձին և մտացն զօրութիւն պիտի ճգնի ջանայ սիրել զւծ ՚ի վեր քան զամենայն . ամենեւին բան մի պիտի չուենայ սիրելի հաւասար ւյ . կամ մէկ բանի համար չպիտի անանկ ջանայ , ինչպէս ւյ ծառայելու յամենայն սրտէ , և

ամենայն հոգւով. երբոր ի՞ժ միտքը բերէ՝ ամէն բան ոչինչ պիտի երևնայ աչքին, և ամենայն բան նաև իւր կամքը և անձը զո՞հ պիտի ընէ ի՞յ. ինչպէս հայրաբրաճամ զո՞հ ըրաւ մէկ հատիկ սիրահան զաւակն, որ շատ կը սիրէր. և ի՞յ սիրոյն համար ծնողական սէրը և գութը մոռցաւ, իբրև դահիճ՝ եղածի պէս իւր զաւակին. թէպէտ սիրաբ կը կտրուէր :

Հ. Աճսիրութեան օրէնքն ի՞նչ կը պարունակէ :

Պ. Այս պատուիրանին մէջ կը պարունակի կրօնն հանդերձ ի՞ժաբանական աւաքինութիւն. զի ի՞ժասէրը պիտի ըլլայ կրօնասէր, հոգեսէր, և ժամասէր. նաև պիտի ունենայ կենդանի հաւատք, հաստատուն յոյս, և վառեալ սէր, ինչպէս էին նր մարտիրոսներն. որ զարհուրելի ասնջանքներուն մէջ անանկ վառված էին ի՞ժային սիրով, որ բոլոր աշխարհ ոչինչ կերևնար իրենց. նաև իրենց մարմինը կարհամարհէին ի՞յ սիրոյն համար :

Հ. Ի՞նչ կը հակառակի այս պատուիրանին :

Պ. Աճսիրութիւն կամ ի՞ժպաշտութիւն կը հակառակի կուսապաշտութիւն կամ մարմնապաշտութիւն, անհաւատութիւն, աւելորդապաշտութիւն, մոգութիւն, հմայութիւն, կախարդութիւն, և սնտախապաշտութիւն, նաև փորձել զի՞ժ,

և սիմոնականութիւն, երբոր հոգևոր բանը ստրկով կընեն: Ահա ասոնք ամէնը կը հակառակին այս ւածային պատուիրանին:

Հ. Ի՞նչ է աւելորդապաշտութիւն:

Պ. Է այնպիսի գործողութիւն, որ պատշաճ եղանակաւ ւնյ պաշտօն չընծայելով կըլլայ սուտ կրօն կամ սուտ ւածապաշտութիւն. զի աւելորդապաշտք սուտ բաներու և սրբապ գործողութեանց հաւատալով բան կը գուշակեն. աչքի շարժելուն, և կենդանեաց ձայնին զօրութիւն սալով կը հաւատան. կամ ասանկ աւելորդ բաներէն շարժելով ջերմեռանդութիւն կընեն. բարի ժամ՝ չար ժամ կը նային ու անանկ կըսկըսին գործքը. ուստի կը մեղանչեն: Ահա այսպիսի բաներն են աւելորդապաշտութիւն և սնոտիապաշտութիւն. որոնց երբեմն կը զուգընթանան կուսապաշտական և կախարդական բաներ, որ շատ մեծ մեղք են:

Հ. Ի՞նչ է կախարդութիւն:

Պ. Է գիւական գործք, որ սատանային անուամբ կերպ կերպխաբէական գործքեր կընեն. երբեմն կը ջանան հրաշք գործել կամ հիւանդ առողջացընել խաբէութեմ. որ կըսվի մոգութիւն. երբեմն կը ջանան գուշակել գաղտնիք կամ կորսրված բան գանել, որ կըսվի հմայութիւն. իսկ երբոր ուրիշը կը կատեն ինաս սալով, կըսվի կախարդու-

Թիւն : Ասոնք ամէնն էն մեղք ընդ-  
դէմ իծապաշտութեան . ոչ միայն ը-  
նօղները կը մեղանչեն , այլև ընեւ տվօղ-  
ներն և հաւատացողներն . ինչպէս որ  
նք վարդապետները կը դատասպարտեն :

Հ . Թէ որ հոգևոր բան խօսելով կամ  
սաղմոսելով գուշակութիւն կամ մոգու-  
թիւն ընեն մեղք կըլլայ :

Պ . Ինչ բան որ ընեն ոչ պէտք է հա-  
ւատալ և ոչ պէտք է մօտենալ . զի կամ  
խարէութիւն է ըրածնին , և կամ սա-  
տանայութիւն . ինչպէս սլատմեցին՝ մէ-  
կը աղօթք ընելով կախարդութի կընէր-  
ետքը ետևէն եղան հասկըցան որ յնին  
անուճը տված ատենը՝ ոտքը գետնին  
զարնելով կանարգէ եղեր նք անուճն :  
Ուստի մինչև հիմա ոմանց մէջ ալ կայ  
աղօթել , որ շունչ տալով կը թքնեն  
ցաւած տեղն . որ է աւելորդապաշտու-  
թիւն . վասն զի թէ որ ըրածն աղօթք  
է՝ ինչպէս կըսեն , ինչ պէտք է շունչ  
տալ կամ թքնել , միթէ թուքը աւե-  
տարանին խօսքէն և աղօթքէն աւելի՞ զօ-  
րաւոր է , քաւ լիցի . և ինչ հարկ կայ  
ծածուկ ընել : Այսպիսի բաներն , որ  
անոնք անխնաս կը սեպեն , մենք կը դրա-  
նենք , որ կուսպաշտութենէ մնացած  
բաներ են :

Հ . Ինչո՞ւ կըսեն թէ սյս արուեստը  
սողմոնէն ելած է :

Պ . Այդ է ռամկական խօսք . զի սո-  
ղմոն իմաստուն էր , բայց չի կայ գրած ,

Թէ կախարդ էր : Ապա կախարդութիւնը հին եգիպտացիներէն ելած է , որ սատանայական զօրութեամբ զարմանալի բաներ կրնէին իբր հրաշք . ինչպէս փարաւոնի առջին իրենց գաւազաններն վիշապ երևցուցին . անոնցմէ հրէաներուն մէջ ալ մտաւ , ուր վհուկ (Ճաաի) կնիկը սաւուղին երևցուց կախարդութիւն սամուէլի մարմինը . որով բոլորովին անարգեցաւ սաւուղ , և պատուհասելով սպանվեցաւ . զի այսպիսի բաներու ետեւէ եղօղը շուտով կը պատուհասի :

Հ . Արդեօք մեղք է կորսրված բանը հարցընել , և գեղի համար Նուսխա կամ համայնի գրել տալ , և վրան սրահել :

Պ . Սաւուղ Թագաւորը գուշակութիւն ընել տալու համար գնաց վհուկին . սակայն ան զինքը շուտով պատուհասեց . ուստի անհաւատ կը սեպվի այն քրիստոնեայն , որ հաւատալով սատանային զօրութիւնը կերթայ կը հարցընէ որ ըլլալիքներն իմանայ . Թէպէտ կախարդին ըրածն է խաբէութի : Նոյնպէս անհաւատ կը սեպվի այն , որ քնի աւետարանը , սբ խաչը , և սբց նշխարքները կը Թողու կերթայ կախարդներուն : Անոր համար երբոր յուգայ մակաբէ իր զօրքին վրա գաւա այսպիսի խաբէական նուսխաներ , շատ նեղացաւ , և ողորմութիւններ տվաւ , որ մեղքերնուն Թողութիւն ըլլայ :

Հ. Արդեօք այս սրատուիրան կարգիլէ՞, որ սրատկերները և նբց նշխարքը չի սրատուենք :

Պ. Ո՛չ երբէք կարգիլէ, ինչպէս առաջ ըսինք. զի այսպիսի սրատիւ և ջերմեռանդուի ինչ կերթայ՝ չէ թէ դիւին. վասն զի սրատկերքն են սրբազան և սուրբերն են բարեկամք քսի և սիրելիք. անոր համար նբ եկեղեցին դրաւ, և սրատուիրեց քրիստոնէից, որ փոխանակ կախարդական բաներու, քսի խաչին՝ աւետարանին՝ և հրաշագործ սրատկերաց՝ նաև նշխարաց ուխտ երթան ջերմեռանդութի ընեն. որոնք թէ որ աներկբայ հաւատով յուսով և սիրով երթան՝ անհնարին է թէ չառնուն. ինչպէս կը հաստատէ նբ լուսաւորիչ : Ուստի աչքով տեսած ենք, որ ոչ միայն քրիստոնէայն, այլև այլազգիք քրիստոնէին հաւատքով և փափաքանօք ուխտ դնացին՝ հրաշքը տեսան. անոր համար շատ անգամ հիւանդներնուն վրայ աւետարան կարգալ կուտան, և նբ նշան բանալ կուտան :

Հ. Եղբայրսիրութեան սրատուիրանն ի՞նչ կը սրարտաւորէ :

Պ. Յոհաննէս աւետարանիչն իձային սիրոյն նշան դրաւ եղբայրսիրութիւնը. թէ որ մէկը եղբայրսիրութի չունենայ՝ իձ սիրութի ալ չունենար. զի եղբայրն որ կը տեսնէ՝ չի սիրէ, այլ կատէ ինչ սրատուիրանացը գէմ. հասցա իձ ի՞նչ :

պէս կրնայ սիրել, որ չի տեսնէր. անոր համար այս երկուսն իբր մէկ պատուիրան դրաւ ի՞ծ. որ սկզբնաբար կը վերաբերի առ ի՞ծ. և երկրորդաբար առ ընկերն. որով կը պարտաւորինք թէ ներքին ներգործութեամբ սիրենք զընկերս, և թէ արտաքին ներգործութեամբ կարեկցելով ցաւակից ըլլանք այլոց, օգնելով իրենց հոգևոր և մարմնաւոր կարօտութեանցն:

Հ. Ի՞նչպէս սիրելու է թշնամին:

Պ. Աճապաշար կը պարտաւորի սիրել նաև թշնամին՝ միշտ ազէկ խօսելով, նշան մարդասիրութե՛ն ցցընելով, ողորմութի՛ տալով, և ցաւակից ըլլալով նեղութե՛ն, և պակասութեանն, որով թշնամացաւ. նաև աղաչելով զի՛ծ, որ զինքը շահէ և շնորհք տայ. որպէս զեբարի ըլլայ: Այսպէս պատուիրեց քնտէրն մեր. բարի՛ արարէք ատելեաց ձերոց, և աղօթօ արարէք ՚ի վերայ նոցա:

Հ. Ի՞նչ կը հակառակի եղբայրսիրութեան:

Պ. Անողորմութիւն, անգթութիւն, տատելութի՛, և դայթակիլութի՛. զի ի՞ծասէր և եղբայրասէր մարդն ողորմած պիտի ըլլայ՝ ուրիշի կարօտութե՛ր հասնելով, գութ պիտի ունենայ հեռաւորաց և մերձաւորաց՝ խրատելով, քաներնուն գրանրվելով. անոնց օգտին համար աշխատելով. ևն: Կաև ամենևին ատելութիւն պիտի չընէ. թշնամին տեսնէ բա-

րևելով և անուշ խօսելով պիտի շահի. որով կըլլայ նման հօրն երկնաւորին, որ արև կը ծագէ և անձրև կուտայ արդարոց և մեղաւորաց, կըսէ տէրն :

Հ. Ի՞նչ է գայթակղութիւն :

Պ. Գայթակղութիւն է չար մեղք հակառակ եղբայրսիրութեան. զի փոխանակ ընկերը շահելու՝ կը ձգէ, և մեղացը պատճառ կըլլայ. մանաւանդ թէ՛ Կայ ձեռքէն կը հանէ սատանային կը մատնէ. անոր համար վայ տվաւ քն այսպիսիներուն. որոնք կամ ուրիշին պատճառ տալով, համարձակութիւն ընելով՝ կը կորսնցնեն. կամ չար օրինակ տալով և գլխէ հանելով կատականեն. և կամ չար ընկերըլլալով գէշ բաներու և գէշ տեղերու կը սորվեցնեն խեղճ անմիտ աղաքը : Այսպիսիներուն կըսէ քն, թէ շատ աղէկ էր որ վզերնին քար կապէին ծովն իյնէին, քան թէ մէկ սղօտիկին գայթակղութիւն տային : Եթէ ուն քո գայթակղեցուցէ զքեզ, հատ ընկեալնա՛ ի քէն. լաւ իցէ քեզ կաղ մտանել՝ ի կեանսն յաւիտենից, քան երկուս ոտս ունել՝ և անկանել ի գեհէն ի հուրն անշէջ. ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի : Ահա այս սոսկալի վճիռը քնի՝ ըլլայ մեզի խրատ և կրթութիւն ոչ միայն այս շաբթըւան համար, այլ և միշտ, որչափ կապրինք աշխարհիս վրան, ամէն իրիկուն այսպէս

տղաղակելով. Եւ մի տար սասանու-  
թեան զոտս մեր փրկիչ, այլ ամրա-  
ցո հաստատուն հաւատով յանձինս  
մեր զյոյս զսէր և զհաւատս մինչև յա-  
ւիտեան:

### ԼԱ. ԿԻՐԱԿԻ:

Տ. Ո՞րն է երկրորդ պատուիրանն ւնյ:  
Պ. Մի առնուցուս զանունն ւնյ քորնդ-  
ունայն: Այս պատուիրան կը պարտա-  
ւորէ, որ ամենևին ւնյ անճառելի անու-  
նը սուտ խօսքի մէջ, պարաս պեղը, և  
անչահ զրուցներու մէջ չլիջվի. նաև ով  
որ ւնյ անուանը վրա օրինաւոր երգում  
ըրեր է, պէտք է որ պահէ. և ով որ ւնյ  
ուխտ ըրեր խօստացեր է, պարտական է  
որ կատարէ:

Տ. Ի՞նչ կը հակառակի այս պատուի-  
րանին:

Պ. Հայհոյութի, սուտ երգումն, և  
ուխտազանցուի: Իբր զի՝ չէ թէ միայն կը  
պատուիրէ՝ որ ւնյ անունը պէտք չեղած  
տեղը և հասարակ խօսակցութեց մէջ  
բերան չառնէ, այլև թէ որ հարկաւոր  
և պատշաճ տեղը բերանն առաւ եր-  
գում ըրաւ, պէտք է կատարէ բարե-  
պաշտ եղանակաւ. զի այսպիսի տեղը, և  
ճշմարտութեան համար երգում ընելն

արգելած չէ. Երդնուցու, էթէ կենդա-  
նի է տէր ճշմարտութիւն, և իրաւամբք, և  
արդարութիւն. ասաց մարգարէն :

Հ. Ի՞նչ է հայհոյութիւն :

Պ. Է նախատինք անուանն անի և սբայ-  
որոնք որ չար սովորութիւն լեզուինն սոր-  
վեցուցեր են գէշ խօսքերու մէջ և ա-  
նէծքի մէջ անուանը տալու, որ են  
հայհոյիչ. վասն զի ով որ ըսէ թէ կու-  
ղեմ այս բանն ընել ընդգէմ կամացն  
անի, կամ ով որ անուանը մարդու տայ՝  
է հայհոյիչ և թշնամի անի : Թէ որ ան-  
ազնայ, և թէ որ սուրբերուն անուանն  
յիշելով ըսէ թէ իմ սուրբս այն ինչ  
մարդն է՝ հայհոյիչ է սբերուն. և թէ  
որ չսիրած մարդիկը ծաղրելով և երես-  
նին թքնելով թշնամանէ, հայհոյիչ է  
արարածոցն անի. իսկ էթէ սբ տեղերն և  
սրբազան բաներն անարգելով անհաւատ  
խօսքեր խօսի, հայհոյիչ է սրբազան բա-  
ներուն : Ահա այս ամէն հայհոյութիւն  
առ անի կերթայ, և այնպիսի հայհոյիչք  
տարագիր են արքայութեն անի, ըստ ա-  
ռաքելական վճռին :

Հ. Ի՞նչ է սուտ երգումն :

Պ. Որովհետեւ երգումն է վկայ կոչել  
զանի. և ինչպէս որ անի ճշմարիտ է, իր  
սբ անուանն ալ ճշմարիտ տեղը միայն պի-  
տի յիշի, և միայն ճշմարտութիւն վրա  
երգում պիտի ըլլել. ուստի ով որ  
սուտ տեղը սովորութիւն ընելով երգում  
կրնէ, կը մեղանչէ անի պատուիրանին

գէմ, և ով որ երգում կընէ որ այս ինչ բարի կամ անինաս բան ընէ, թէ որ չընէ՝ պարտական կը մնայ, և ուխտազանց կըլլայ: Սակայն թէ որ գէշ բան ընելու համար երգում ըրաւ, պէտք չէ կատարել, այլ զղջալ երգումին համար, որ մեղանչէց:

Հ. Ի՞նչ է ուխտազանցութիւն:

Պ. Ուխտն է խոստումն առ ւած. իսկ ուխտազանցութիւն է պակասիլ խոստմունքէն. որ է խաբել ւած, և ստել ւոյ. ուստի շատ տեղ ւած վայ կուտայ հրէից, որ թողուցին իրենց ուխտը, և ինչ խօսք որ տվին մարգարէներուն՝ չկատարեցին. անոր համար անարգվեցան և ւոյ աչքէն ելան: Աստուծոյ ևս առաւել քրիստոնեայն պարտական է ամենայն զգուշութեամբ պահել ուխտը, և կատարել խոստմունքը. զի երբոր միանգամ խոստացաւ ինք զինքը պարտական ըրաւ. կամ պէտք չէր թեթևութեամբ ուխտել, և կամ թէ որ ըրաւ, պիտի կատարէ, թէ չէ ուխտազանց կըլլայ: Ուստի ով որ ներդրութի մէջ կը խոստանայ կամ ողորմութի տալու, կամ հոգևոր գործք կատարելու, և կամ ուխտ երթալու, պէտք է որ չուշացնէ՝ յարմար ատեն կատարէ, թէ չէ ուխտազանց կըլլայ կը մեղանչէ: Վայ այն կրօնաւորաց և կուսանաց, որ ւոյ առջին ուխտ ըրեր խոստացեր են ուր աստիճան, և գործքով անառակուն կը հետևին: Վայ և այն քրիս-

տոնէին, որ մկրտութիւնս է ըրեր այ  
հաւատարիմ մնալու, և չար գործքով  
այ անունը կը հայհոյէ. ինչպէս կըսէ  
ածաչունչն. զի այնպիսին կըսվի ուրա-  
յող. ուստի թէ՛ խօսքով, և թէ՛ գործ-  
քով ուրացութիւն առաջին պատուիրա-  
նին դէմ ըլլալով է անհաւատութիւն:

Հ. Որն է երրորդ պատուիրանն այ:

Պ. Յիշեա՛ սրբէլ զօր շաբաթուն:

Այս պատուիրան կը պարտաւորէ ամէն  
քրիստոնէայ, որ կիրակին և աօն օրերը  
ոք անցընէ. ոչ միայն մարմնաւոր գործ-  
քի հետ չըլլայ, այլև առանց մեղաց և  
հոգևոր բաներով անցընէ ժամանակն.  
Ինչպէս եկեղեցական պատուիրանը կը  
հրամայէ՝ պատարագ տեսնել. հոգևոր  
գրեանք կարդալ, խրատ լսել, ևն:

Հ. Արդեօք գիր գրելը մնաս ունի:

Պ. Ըստ ինքեան գրել կարդալ շա-  
բադրել, և ուրիշ մտաւոր գործոց պա-  
րապիլը չաւրէր կիրակին, սակայն քրիս-  
տոնէայն պէտք է հոգևոր բաներու հետ  
ալ ըլլալ, և հոգին մտածելով այ բա-  
րիքն յիշել. որ է ասել, թէ կիրակի օր-  
ւան ժամանակն այ համար ծախէ, և  
ստեղծողին ընծայէ. որովհետև այս պա-  
տուիրանը ավաւ ած, որ մարդիկ վեց օր  
աշխատէլէն ետև եօթներորդ օրն հան-  
գիստ կենալով յիշեն, թէ առաջ ոչ  
աշխարհք կար և ոչ մէնք կայինք. արա-  
րիչն իւր բարութիւն յայտնելով վեց օր-  
ւան մէջ ստեղծեց աշխարհս, և եօթնե-

բորդ օրն հանգեաւ . և այսպէս նոյն օրն  
 անցրին : յիշելով շնորհակալութեամբ  
 անցրին :

Հ . Արդեօք վաճառականութի ընելն  
 արդիւանձ է :

Պ . Սք եկեղեցին զօրութեամբ այս սլա-  
 տուիրանին արդիւեց ամէն տեսակ վա-  
 ճառականութի , և տօնավաճառ ( Փա-  
 զար ) . ուստի քրիստոնեայն ոչ պէտք է  
 խանութ բանալ , և ոչ բան ծախել . բայց  
 եթէ բռնի կամ մեծ հարկմ' ըլլայ , և  
 կամ քիչ ժամանակի համար թոյլ տը-  
 լուութիւն կրլայ բարի վախճանաւ : Քն  
 տէրն մեր շաբաթ օր բժշկութիւն ընե-  
 լուն համար կեղծաւոր հրէաները զին-  
 քը կը բամբասէին , անոր համար յան-  
 դիմանեց զանոնք , թէ դուք հարկաւոր  
 տեղը խիղճ չէք ընէր' շաբաթ օրը ձեր  
 անասուններուն համար կաշխատէք , ևս  
 առաւել պէտք է մարդ բժշկել և բարե-  
 գործութիւն ընել վասն այ :

Հ . Աերևնայ թէ մարդս դատարկ բա-  
 ներու հետ ըլլալու տեղը՝ ալ աղէկ է որ  
 խանութը նստի բանի կիրակի օրն :

Պ . Ասն հաւատքի թոյլ մարդիկ որ  
 այսպէս կրսեն . բայց մեծապէս կը սրխա-  
 լին , և կրկին կը մեղանչեն այս սլա-  
 տուիրանին դէմ՝ չար օրինակ տալով ի-  
 ռենց զաւակաց և ծառայից . փոխանակ  
 անոնց բարի օրինակ տալու՝ պատարա-  
 դի և խրատի տանելու , որ միշտ սար-  
 տական են . իրենք կրլան անոնց մե-

դայն ալ սրտաճառ : Այսպիսիներուն կրակ սարգիս շնորհալին. դուն որ ծնողքէդ չտեսածդ կրնես, հապա զուակդ քեզմէ տեսնելով այդպիսի չար գործք ինչ չընէր : Անոր համար պատուիրեց ի՞նչ, [Թէ ո՛չ դուն, ո՛չ զուակդ, ո՛չ ծառագ, և ո՛չ օտարականդ. [Թող տաս որ աշխատի : Ապա կը մեղանչեն անոնք, որ իրենց կամքը կատարելու համար բանւորները բանեցնել կուտան կիրակի օրը, երբոր հարկ և բռնութիւն չի կայ. զի միայն հարկն երբեմն օրէնքը կը լուծանէ, և ոչ կամակորութիւն :

Հ. Արգէլած է կիրակին ուրախութեանցընելու :

Պ. Որովհետև պատուիրանը կը հըրամայէ նբ պահել և հանգիստ կենալ. պէտք է որ հոգևոր պարտքը կատարելէն ետև ուրախութեամբ անցընեն օրը, կամ ընտանեացն հետ, և կամ բարեկամաց. բայց չէ [Թէ բոլոր օրն ուտելու խմելու հետ ըլլալ. որ նբ օրն որկրամուտութե և արբեցութե անցընելով կրկին կը մեղանչեն ի՞նչ դէմ : Ապա վայ է անոնց, որ գինէտան մեջ արբեցութեամբ և անչա՛հ խօսքերով կանցընեն կիրակին. և անոր համար ի՞նչ պատուհասին կը հանգիստին : Այսպիսիներուն խրատ կուտայ առաքեալը, [Թէ չէք գիտեր որ դուք տաճար էք հոգւոյն նբ. արդ մի խանգարէք հոգւոյն նբ տաճարը արբեցութե և անառակութե :

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի այս պատուիրանը :

Պ. Այս է խորհուրդն՝ որ ամէն աշխատանքին վերջն հանգիստ է . մանաւանդ հոգևոր աշխատանքին . զի հոս է տեղի աշխատանաց առաքինական գործքերով, և երկինքն է տեղի հանգըստեան ընդ անջակէս քս չարչարանքէն ետև մտաւիրէն փառացը մէջ : Շնորհակին կրտէ թէ անձ այս պատուիրանը տալով, յոյս տվաւ մեզի թէ պիտի հանգչինք երկինքը, ըստ այնմ . Ուստի ետ մեզ յոյս հաստատուն յետ հանգստեանն շարաթուն, թէ աստ գործել գործ անյանգ է հանգչիլ ընդ անջ :

### ԼԲ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ. Ո՞րն է չորրորդ պատուիրանն անջ :

Պ. Պատուէա՛ զհայր քո և զմայր : Այս պատուիրան կը պարտաւորէ ամէն զաւակ, որ պատուէ և մեծարէ իրեն հայրն ու մայրը . սիրէ զանոնք սրտանց, և հնազանդի անոնց կամացն . նաև օգնէ հարկաւորու թէ ժամանակն :

Հ. Ինչո՞ւ համար կը պարտաւորինք մեծարել և պատուել մեր ծնողքն :

Պ. Որովհետև յետ անոնք են պատճառ մեր աշխարհ գալուն, և մեր

կենացը աէր կը սեպլին . պէտք է մեզմէ ընդունին մեծարանք պատիւ և հնազանդութիւն . ինչպէս որ ամէն ազգաց մէջ օրէնք կար ծնողքը պատուելու . և ով որ անպատուութի կը ընէր կըսպաննէին . իսկ ի՞նչ հրէից պատուիրէց . թէ ով որ կը բամբասէ իր ծնողքը մահու վախճանեացի :

Հ . Ի՞նչպիսի մեծարանք պիտի ընենք :

Պ . Պէտք է ներքին պատուով սրբտանց մեծարել խոնարհ հնազանդութիւն և սիրով . չէ թէ ահամայ էբբ սովորութի կամ մարդկային նկատման համար . զի այս կերպով ի՞նչ օրէնքը չի կատարէր . վասն զի բարի զաւակը միշտ յիշելով ծնողացն երախտիքը և աշխատանքը՝ զինքն պարտական կը ճանչնայ , և ինչ որ ընէ՝ քիչ կերևնայ իրեն . անոր համար ամօթով և ակնածութեամբ կը խօսի ծնողացն հետ , ինչպէս որ կը վայլէ . զի ծնողաց երախտիքն անչափ է զաւակաց վրան , մինչ զի՝ ինչ որ ընէ զաւակը ծնողքին՝ քիչ է , և միշտ պարտական կը մնայ :

Հ . Ի՞նչպէս պիտի օգնութիւն հասնինք մեր ծնողացն :

Պ . Պէտք է որ ամէն կերպ օգնութիւն ընենք . մեզմէ առաջ զանոնք հոգանք թէ ապրուստի կողմանէ , թէ հոգուստի կողմանէ , և թէ հոգևոր հարկաւորութիւն կողմանէ :

Հ. Ով որ չի կատարէ այս պատուիրանն ինչ պատիժ կառնէ :

Պ. Անէծք կրնդունի ստեղծողէն . զի պատուիրեց անձ , թէ պատուեալ զհայրքո՛ւ և զմայր , որ քեզ բարի ըլլայ , և երկայնակեաց ըլլաս աշխարհիս վրան . ուրեմն ով որ չընէ՝ կարճատև կըլլայ , աղէկու թիւն չի տեսնէր , և անէծքով չարաչար կը կորսըվի թէ՛ ինքն , և թէ բոլոր զաւակները կամ տունը :

Հ. Թէ որ զաւակն ուրանայ իր ծնողքն ուրիշն առջին՝ կը մեղանչէ :

Պ. Մեծապէս կը մեղանչէ պատուիրանին դէմ՝ թէ որ հարկաւոր պատճառ մի չունենայ . կամ ով որ ծուռ կը նայի ծնողքին , և պաղ սրտով կը խօսի՝ կը մեղանչէ . և սառաւել՝ թէ որ խնդայ ծնողաց մահուանը վրան ժառանգութիւնն առնելու համար . և այսպիսի անսուակ զաւակներն աղէկութի՛ն չեն տեսնէր , այլ չարաչար կը կորսըվին . ինչպէս շատերը տեսանք :

Հ. Ծնողաց անհնազանդ զաւակն ինչ կըլլայ :

Պ. Անհնազանդ զաւակն , որ չար կամքով կը հակառակի ծնողացն և չի հնազանդիր , նոյնպէս անէծք կառնէ ստեղծողէն . և աղէկութիւն չի տեսնէր , մանաւանդ՝ երբոր ծնողացն անէծքն ալ կառնէ՝ մոխիր կըլլայ , կը դատապարտի . ուստի բարի զաւակը չէ թէ միայն ծնողացն հրամանը պիտի կա-

տարէ , այլև թէ և հրամայած չըլլայ , բայց գիտնայ թէ անոնց կամքին դէմ է՝ պէտք չէ որ ընէ . մանաւանդ՝ աղջիկ տղաք գիտեն որ ծնողաց կամքին դէմ է օտարի երևնալ և համարձակուի ընել , կամ չափազանց զարդարանքի ետևէ ըլլալ , ամենևին պէտք չէ որ ընեն . թէ չէ անէծքի տակ կիյնին , և աղէկուի չեն տեսներ . զի անձ է պատուիրօղը , և անձ է վրէժխնդիր , որ շուտով կը պատուհասէ :

Հ . Միայն զաւակները կը պարտաւորին :

Պ . Այս պատուիրանն ոչ միայն զաւակները կը պարտաւորէ , այլև աշկերտները , հպատակները , ծառաները , և աղախինները կը պարտաւորէ իրենց գլխաւորին հնազանդ ըլլալու , և պատուելու :

Հ . Գլխաւոր ասելով ի՞նչ կիմանաս :

Պ . Գլխաւոր անոնք են , որ Աճ մեծ գրէր է . ինչպէս ժողովուրդը պարտական է պատուելու և հնազանդելու թագաւորին , եպիսկոպոսին , և քահանային . աշկերտը պարտական է հնազանդելու և պատուելու վարդապետը , և ծառայն պարտական է հնազանդելու իր տիրոջը , ևն :

Հ . Ինչո՞ւ պարտական ենք վարդապետները պատուելու :

Պ . Զի վարդապետը , և վարպետը երկրորդ ծնօղք կը սեպվին . որ այնչափ

հոգ քաշելով կըրթեր մեծ ցուցեր և բան սորվեցուցեր են . անոր համար սղատոն փիլիսոփան կըսէր , թէ ծնողքիս սարտական եմ , զի իմ ըլլալուս պատճառն է . իսկ վարպետիս կրկին սարտական եմ , զի ազէկ ըլլալունս պատճառն է :

Հ . Ի՞նչպէս սարտական ենք պատուելու մեծաւորներն :

Պ . Որովհետեւ անձ գրեւ է զանոնք մեր վրա՝ պէտք է որ կոյր հնազանդինք բարի և անիշտա բաներուն , մանաւանդ հոգևոր մեծաւորաց . որոնք են փոխանորդ քնի , կը կառավարեն զմեզ և կը ջանան մեր փրկութեան համար . ուստի ասաց քո . Որ ձեզ լսէ , ինձ լսէ . և որ զձեզ անարդէ , զիս անարդէ : Ուրեմն պէտք է քաղցրութեամբ լսենք , և խոնարհութեամբ հնազանդինք մեր մեծաւորաց :

Հ . Ի՞նչպէս սարտական ենք օգնելու :

Պ . Մեծաւորներն են մեր գլուխը , սարտական ենք ոչ միայն զանոնք սիրելու և պատուելու , այլև օգնութի հասնելու անոնց կարօտութիւնը որպիսի կերպով որ ըլլայ . զի ինչպէս որ մենք անոնցմէ կընդունինք օգտակար խրատ , ուսումն , և հոգևոր բաները , իրաւունք է որ մենք ալ անոնց ժամանակաւոր բաներով երախտագէտ ըլլանք . ինչպէս որ հին բարեպաշտներն առաքեալներուն կընէին :

Հ. Ի՞նչպէս հարատակը տիրոջը պիտի հնազանդի :

Պ. Ամենայն քրիստոնէայն պարտական է հնազանդիլ մարմնաւոր իշխանին , որ զինքը կը կառավարէ . և երբեմն աղօթք ընել պէտք է անոնց համար , ինչպէս կը պատուիրէ առաքեալն : Ասան զի Խի կարգադրութիւն իշխան դրված են , և կը հոգան ժողովուրդը . անոր համար քի տէրն մեր հրամայեց , թէ տուք զկոյսերն կայսեր . և ինքն ալ հնազանդ է . զաւ մեզի օրինակ տալու համար :

Հ. Ի՞նչպէս պիտի հնազանդի ծառայն տիրոջը :

Պ. Ծառայն կամ գերին պէտք է անանկ հնազանդիլ և պատուել իր տէրն , ինչպէս Խի հրամանը զինքն է պարտաւորեր , ըստ որում կը սորվեցընէ առաքեալը , թէ մի՛ ակամայ , այլ յօժարութեամբ իբրև Խի հնազանդելով , որպէս զի պատուիրանը կատարելով վարձք առնու ստեղծողէն . նոյնպէս աղախինը պարտական է տիկնոջն ամէն խօսքին հնազանդելու առանց վշտացնելու , թէ չէ՝ պարտական կը մնայ օրինացն Խի :

Հ. Այս պատուիրան կը պարտաւորէ՞ նաև ծնօղքն :

Պ. Ինչպէս որ զաւակը պարտական է ծնօղքը և մեծը պատուելու , սղսպէս ծնօղքն ալ պարտական են խնամ ունենալու և հոգալու զաւակը , քահանայն զժողովուրդը , վարպետը զաշկեր-

տը , և տէրն իր ծառայն :

Հ . Ծնօղքն ինչ խնամ պիտի ընէ զաւակին :

Պ . Նախ և առաջ միտքը բացված ին պէս՝ սրտատական է որ քրիստոնէական վարդապետութիւն և հոգևոր բաներ սորվեցնելով միշտ բարի կրթութիւն տայ , և բարի մեծցնէ զաւակը . անկէ ետև կարգաւ գրէլ սորվեցնէ . նաև կրթել տայ զինքը վարպետին՝ արուեստ և խելք սորվեցնելով . մինչ զի՝ ամէն բանէն աւելի պիտի ջանան ծնօղքն որ զաւակն ըլլայ մարդ կատարեալ ամենայն հարկաւոր ուսմամբ , և բարի քրիստոնեայ : Որ ծնօղք որ այս ջանքս չունենար՝ կը մեղանչէ այս անձային պատուիրանին գէմ : Նաև անոնք որ իրենց զաւակը կը ծախեն , կամ մարդ զմարդ կը ծախէ , այս պատուիրանին գէմ կը մեղանչեն : Տէս պոնտոս . 153 :

Հ . Այլ որոնք կը պարտաւորին :

Պ . Այս պատուիրանը կը պարտաւորէ նաև եղբայր և քոյր . իբր զի՝ փոքր եղբայրը սրտատական է հնազանդ և հլու ըլլալ մեծ եղբորն , և փոքրիկ քոյրն մեծ քրոջն . մանաւանդ՝ երբ ծնօղքը մեռած կամ ծերացած են : Նոյնպէս մեծ եղբայրն պարտական է եղբայրները և քոյրերը պահէ և խնամէ . և մեծ քոյրը սղտիկները հոգայ և բարի կրթութիւն մեծցնէ . վստն զի մեծ եղբայրը հօր աւել կանցնի , և կը պարտաւորի բոլոր

ընտանիքն հոգալու . և մեծ քոյրը մայր  
 սեպվելով պարտական է բոլոր տունը  
 հոգալու , և ամենուն աղէկութիւնը ջա-  
 նալու . ուստի ով որ պակասի՝ կը մե-  
 ղանչէ այս պատուիրանին դէմ : Իսկ ե-  
 թէ ասոնք ալ չըլլան , մերձաւոր ազգա-  
 կանները ծնողաց տեղ կանցնին , և նոյն  
 պարտաւորութե տակ կըլլան :

Հ . Արդեօք այր և կին կը պարտա-  
 ւորին :

Պ . Որովհետև ամուսնացեալք առա-  
 ջի ան դաշնագրելով իրարու խօսք կու-  
 տան . այրը կըսէ տէր եմ , և կինը՝ հնա-  
 ղանդ եմ . նոյն կէտին այս օրինաց տա-  
 կը կիյնին . ուստի կինը որչափ որ կեն-  
 դանի է՝ պիտի հնաղանդ և հպատակ ըլ-  
 լայ էրկանը՝ երբոր իրեն մեղանչական  
 բան չի հրամայէր , թէպէտ այրը ծեր և  
 անկար ըլլայ . նոյնպէս այրը պարտական  
 է կնիկը պահելու և հոգալու , թէպէտ  
 կնիկն հիւանդ և անպիտան ըլլայ . ուս-  
 տի ասոնք թէ որ պակասին , կրկին կը  
 մեղանչեն . մէյմը ան պատուիրանին  
 դէմ , մէյմ՝ ալ ամուսնական իրաւանց  
 դէմ , որ իբր ուխտ դաշինք են ըրած ի-  
 ըրար չի ձգելու : Անոր համար առաքեա-  
 լը մեծ խորհուրդ կոչելով քսի և եկե-  
 ղեցնայ օրինակ բերաւ . տապ վայ ա-  
 նոնց որ անառակութեամբ այս սք օրէն ,  
 քը կեղծանեն : Մանաւանդ՝ վայ այն  
 տղոցն որ անհնաղանդ կըլլան իրենց  
 ծնողացը և վարպետին . ասպա պիտի ջա-

նանք որ այս վայերուն արժանի չըլլանք .  
այլ բարի և հնազանդ ըլլալով մեծե-  
րուն օրհնէնքն առնենք , և անով ԹՅ  
օրհնութի և շնորհացն արժանի ըլլանք .  
որ ասաց . լաւ է հնազանդութի քան  
զլուս , և զպատարագ :

ԼԳ . Կ Ի Ր Ա Կ Ի .

Հ . Ո՞րն է հինգերորդ պատուի-  
րանն ԹՅ :

Պ . Մի սպանաներ : Այս պատուի-  
րան կը պարտաւորէ ամէն մարդ , որ ա-  
մենեւին մարդ չսպաննէ , ոչ վիրաւորէ ,  
և ոչ զարնէ . զի ինչպէս որ ԹԾ է միայն  
արարիչ , որ ստեղծեց մարդը . նոյնպէս  
իրեն ձեռքն է միայն կեանք մարդոյ . եր-  
բոր կամի , կառնու իր տված հոգին . և  
սրչափ կամի՝ այնչափ կեանք կուտայ .  
ըստ այնմ . տէր մեռուցանէ , և տէր կե-  
ցուցանէ :

Հ . Մարդս իրեն տէր ըլլալով կրնայ  
զինքն սպաննել :

Պ . Կան անհաւատներ , որ օրինաւոր  
կը համարին անձնասպանութիւն , և շատ  
անգամ յուսահատեալ զիրենք կըս-  
պաննեն . որով իրենք զիրենք կը պա-  
տուհասեն . սակայն մարդս իրեն տէր  
է . ոչ էք անձանց տէր , ասաց ՆՐ ԳԻՐ .

քը : Այն ժամանակը կըլլար իրեն տէր ,  
 թէ որ կարենար մէկ մասն ստեղծել .  
 ուրեմն իր տէրը զինքն ստեղծողն է . ա-  
 սպա չի կրնար ոչ միայն զինքն սպան-  
 նել , հասպա և ոչ իսկ մէկ մատը կրնայ  
 կտրել :

Հ . Արդեօք անառողջանալի հիւանդն  
 որ կը տանջուի օրէն է մեռցընել :

Պ . Ոչ որ կարող է մարդու գպչիլ ,  
 թէև հոգեվարք ըլլայ . զի ան է տվեր  
 այն շունչը , և ան պիտի առնէ : Տեսանք  
 ազգ , որ թանձրամտութիւն գործք ողոր-  
 մութի կը համարին այնպիսի հիւանդը  
 մեռցընել . սակայն այ գէմ կը մեղան-  
 չեն : Տես պոնտ . 153 :

Հ . Թէ որ մէկը գիտնայ թէ զինքը  
 պիտի մեռցընեն , կրնայ գեղ առնէ ու  
 մեռնի :

Պ . Ո՛չ երբէք կրնայ իրեն կամ ուրի-  
 շին մահուանը սրտածառ ըլլալ . ուստի  
 թէ որ գիտնայ թէ սովամահ պիտի  
 զինքն սպաննեն , եթէ կերակուր չուտէ ,  
 կը մեղանչէ այ պատուիրանին գէմ : Նաև  
 անոնք , որ բժշկին տված գեղը չեն առ-  
 ներ , և արգելած բանը կրնեն ու կը  
 մեռնին՝ անձնասպան կըլլան , և կը գա-  
 տապարտին :

Հ . Թէ որ գիտնայ թէ թշնամին զին-  
 քը պիտի բռնէ մեռցընէ , կրնայ կրակ  
 տալ եղած տեղին :

Պ . Թէ որ նաւին մէջ գտվի , ուր որ  
 փախչելու ճար չի կայ , և գիտէ որ պի-

տի բռնըմբ՝ ոչ երբէք կրնայ նաւին կրակ տալ, և ոչ կրնայ նմանապէս պատերազմին տեղը վառօգով իր վրան այրել զի ինքն իրեն կամ այլոց մահուան պատճառ ըլլալով անգէմ կը դործէ: Ուրեմն պէտք չէ ինք զինքը վտանգի մէջ ձգել և միշտ սարտական է իր կեանքը պահելու, որչափ որ կրնայ զի ան աւանդ տվեր է մարդուս անվնաս պահելու թէ հոգին և թէ կեանքը:

Հ. Մարդս զինքն պաշտպանելու համար կրնայ զուրիշն սպաննել:

Պ. Որովհետև մարդս սարտական է զինքը պաշտպանելու ամէն վտանգէ, թէ որ անանկ պարագայի մէջ գտնուի որ ուրիշ ճար չի կայ՝ աւազակը զինքը պիտի մեռցնէ, անատենը միայն կրնայ զինքը պաշտպանել սպաննելով թշնամին, որպէս զի իր կեանքն ազատի. բայց թէ որ սպրանքը տալով կամ ուրիշ միջոցով կրնայ ազատելու, եթէ սպաննէ, կը մեղանչէ այս պատուիրանին գէմ:

Հ. Այլ ինչ կը պարտաւորէ այս պատուիրանը:

Պ. Կը պարտաւորէ քրիստոնէայն, որ անիրաւ չարախօսու թիւ և զրպարտու թիւ ուրիշին անուհը չի մեռցնէ, և ընկերը չվիրաւորէ, կամ ամենեւին չար չի կամենայ. վասն զի այնպիսի անիրաւ մարդիկ մարդասպանաց կարգէն են, և ըստ առտքելական վճռին՝ զրկուած են արքայ

ութէն: Ուրեմն չարախօսը և զրպարտօ-  
ղը մինչև որ ընկերոջն անուներ չի շակէ  
և սիրտը չի շահի, այ սպառուհասէն չա-  
զատիր:

Հ. Ո՞րն է վեցերորդ պատուիրանն  
այ:

Պ. Մի շնար: Այս պատուիրան կար-  
գիլէ ամենայն անկարգ ցանկութիւն և  
մարմնաւոր մեղքերն՝ ո՛չ գործքով և ո՛չ  
մտքով գործել. նաև կը պարտաւորէ հե-  
ռու վախճիլ ամէն առիթներէն թէ կե-  
նակցութեամբ, թէ հայեցուածով, և  
թէ չար խորհրդով:

Հ. Ի՞նչ է զեղխութիւն:

Պ. Է անկարգ հեշտութիւն, որ կը  
գրգռէ մարդն հետևիլ շնութե, պուանը-  
կութե, անառակութե, և այլ ամենայն  
մարմնական ամօթալի մեղաց, որ կը հա-  
կագրին ընդդէմ ողջախոհութեան, և  
մարդն անասնոց անբանից կարգը կը դա-  
սեն. ինչպէս կըսեն սբ վարդապետք:

Հ. Ի՞նչպէս պիտի զգուշանանք:

Պ. Ոչ միայն անկարգ տեսութենէ և  
խօսակցութե պէտք է հեռանալ, այլև  
այնպիսի բաներէն, որ չար խորհուրդ կը  
լերեն, և կը պղտորեն մարդուս միտքը-  
ինչպէս են՝ գարշելի պատկերներ, գէշ  
գրվածներ, մարմնական երգեր, և ան-  
կարգ խաղեր՝ պարելով և դաչելով  
անզգուշութե և հեշտութե. ահա այս-  
պիսի բաներով սատանան կը մանկ մար-  
դուն սիրան ու գերի կընէ զինքն ցան-

կուծի : Ուրեմն այսպիսի առիթներէն  
անանկ պէտք է փախչիլ, ինչպէս օձէն  
և վիշապէն . անոր համար ասաց քս .  
Թէ որ տչքդ կամ ձեռքդ քեզ կը գայ .  
Թակղեցնէ նայելովդ կամ շոշափելովդ՝  
հանէ աչքդ , և կտրէ ձեռքդ . այսինքն  
հեռացիր նոյն անկարգ բաներէն . զի  
լաւ է մէկ աչքով կամ մէկ ձեռքով  
արքայուծի երթաս , քան երկուս ու-  
նենաս ու դժոխքն երթաս տանջիս յա-  
ւիտեան :

Հ . Այս պատուիրանը լաւ պահելու  
համար ի՞նչ պէտք է ընել :

Պ . Պէտք է ըլլալ պարկեշտ՝ խօսքով,  
նայվածքով, հագուստով, և ամենայն  
շարժմունքով . պէտք է ըլլալ զգուշա-  
ւոր՝ ամէն տեղ ջերթալ և ամենուն հետ  
անտարբեր չտեսնելիլ, ծածուկ չհօսակ-  
ցիլ և չյաճախել ազգականաց և բարե-  
կամաց աները . պէտք է ըլլալ արթուն՝  
անուշ խօսքերով չի խաբւիլ և չի մեղմա-  
նալ . այլ քաջասրտուծի յայլթել մար-  
մնոյ և ցանկուծեան . նաև պէտք է ըլ-  
լալ չափաւոր ուտելու և խմելու . զի  
շատ մարդիկ ուտելով խմելով կորեր են .  
անոր համար ըսին սբերը . Թէ այն մարդն  
որ գինին ու կինը չի կրցան խաբել, և  
ոչ սատանան կրնայ խաբելու :

Հ . Ի՞նչպէս պէտք է պարկեշտ ըլլալ :

Պ . Վարդապետները կրսեն, Թէ պար-  
կեշտ մարդն ինքնիրմէն կամրջնայ . Թէ և  
քովը մարդ չըլլայ՝ այն անը և իր մարդ-

կութին իրեն ամօթ կը բերեն որ մեղան, չական բան չընէ, թէ ինքնիրեն դաշտլով, և թէ ուրիշին. զի մարմին մարդոյ տաճար է հոգւոյն. ահա տաճարն ւնայ կապականի չար ցանկութիւն, և անարատ կը մնայ պարկեշտութիւն ու ամօթխածութիւն. ուրեմն ամենայն մարդ այր և կին, երիտասարդ և կոյս՝ սխալի ջանայ այս անձային սպառնալիքներ լաւ սկսեալու, ամենայն տեսակ անկարգութեանց հետու կենալով, ոչ ինքնիրեն պատճառ տալով և ոչ օտարին. որպէս զի ինչպէս որ տաճար եղեր է հոգւոյն սբայ, նոյն տաճարը զարգարէ առաքինութիւն և շնորհօք հոգւոյն սբայ:

Հ. Ի՞նչ է ողջախոհութիւն:

Պ. Է այնպիսի առաքինութիւն, որ կը հակառակի մարմնական մեղաց, և անարատ կը պահէ հոգին ամենայն դարձելի մեղքերէն, և գործքերէն. վասն զի ողջախոհ մարդուն սիրտը մաքուր ըլլալով գէշ մտքով ուրիշին չի նայիր և չի խօսակցիր. անկարգ մարդիքներէն և անկարգ տեղերէն հեռու կը փախչի. և այնպիսի պարկեշտ շարժմունք ունի՝ որ սրչափ անպարկեշտ մարդ ըլլայ գիմացինը՝ կամուշնայ իրմէն. և այս առաքինութիւն այնչափ ազնուական կընէն մարդը, մանաւանդ մանուկ տղան և կոյսն, որ հրեշտակի նման կերևնան ամենուն. և են իբր երանեալ հոգի, ինչպէս որ նմանցուց քն ողջախոհ հոգին: Սբ ամբրոսիոս այսպէս կըսէ.

Ամօթխածուծին գունաւորեալ զերեսս՝  
 առնէ զձեզ գեղեցիկ յոյժ հեռի լինե-  
 լով 'ի տեսութենէ մարդկան . որպէս  
 վարդ առանձնացեալ . գեղեցկութիւն  
 ձեր չեն բնաւ ներքոյ անկեալ սուտ դա-  
 սողութե մարդոյ . գեղեցկութի ասեմ  
 առաքինութե . զոր ոչ հիւանդութի կա-  
 րէ եղծել, ոչ հասակ գիտէ խամրել, և  
 ոչ խակ մահ զորէ յախշտակել . կոյսն սրա-  
 տարագ է ան, որում ընծայի ձեռամբ  
 մօրն :

## ԼԻ • ԿԻՐԱԿԻ •

Հ • Ո՞րն է եօթներորդ պատուիրանն  
 ան :

Պ • Մի գողանար : Այս պատուիրան  
 կը պարտաւորէ՝ ամենեկին այլոց բանին  
 չի գաչիլ, ոչ գողնալ և ոչ պահել ընդ-  
 դէմ կամայ տիրոջը : Իսկ թէ որ գող-  
 ցած և գտած ըլլայ, պէտք է տիրոջն հա-  
 տուցանել :

Հ • Ի՞նչ կը պարտաւորէ դարձեալ :

Պ • Կը պարտաւորէ առուտուրին մէջ  
 խաբէութիւն չընել, զրկանք չընել, և  
 վաշխառութեամբ անիրաւութի չընել .  
 ուստի կըմեղանչեն այս պատուիրանին  
 դէմ նախ՝ անոնք որ կը գողնան ուրիշին  
 բանը, և մինչև որ տեղը չի դնեն՝ թողու-

Թիւն չեն կրնար գանել. երկրորդ՝ կը մեղանչեն անոնք, որ խաբէու թիւ ուրիշին բանը կըյափշտակեն, իրենց գէշն աղէկի տեղ կուտան, և ուրիշին աղէկ բանը՝ յած գընով գէշի տեղ կառնեն. ասոնք ալ մինչև հատուցում չընեն չեն կրնար թողու թիւն գանել. երրորդ՝ կը մեղանչեն անոնք, որ աղքատը կամ տկարը կը զրկեն, ուրիշին ընելու վաստակը՝ քաշեն իրենք կընեն, և թող չեն տար որ ուրիշն ալ առաջ գայ. չորրորդ՝ կը մեղանչեն անոնք, որ չարաչար շահ առնելով ուրիշին ապրանքը կը փթտեցնեն, և աղքատին արիւնը քաշելով կը կողոպտեն. այսպիսիք շատ մեծ սրտաւաւորու թեան տակ ըլլալով շուտով կը շարժեն այ արգար սրտուհասն իրենց վրա ինչպէս կըտէ նք գիրքը, և ինչպէս շատ օրինակներ եղած կան:

Հ. Կայ ուրիշ պարտաւորու թիւն:

Պ. Դարձեալ՝ կը պարտաւորէ այս պատուիրանն, որ ամէն մարդու վարձքը արդարու թիւ տան ժամանակով և առանց զնասու՝ թէ աշխատաւորի, և թէ ծառայի: Ապա կը մեղանչեն, որոնք որ բանւորին և ծառային վարձքը կը կըտրեն, կուշացնեն, և գէշ ատակ կուտան: Նոյնպէս կը պարտաւորին ամէն ծառայ և բանւոր, որ միամտու թեամբ և աղէկ սրտով աշխատին, չէ ակամայ և ծուլու թիւ. սյլ և իբր թէ իրենց գործքն է այնպէս պիտի սրտանց աշխատաւորն. որ

պէս զի ան սպասուիրանը կատարելով  
առածնին արդար վաստակ ըլլայ, ու ի-  
րենց և զաւակացն օգուտ բերէ :

Հ. Թէ որ մէկն երթայ դատաւորին  
մասնէ անիրաւ տեղն ընկերն ու սարկէ  
հանէ, կը պարտաւորի՞ հատուցանելու :

Պ. Որովհետեւ սպաճառ եղաւ անոր  
վնասին և զրկանացը. կը պարտաւորի  
հատուցանել, և մինչև որ հատուցում  
չընէ՝ չի կրնար արդարանալ. զի գողն և  
գողակիցն, զրկողն և սպաճառ եղողն  
միապէս կը պարտաւորին. և եթէ հա-  
տուցում չընէն, կը գատասպարտին :

Հ. Թէ որ վաճառականները խօսք  
դնեն իրարու հետ որ ծանր գնով ծա-  
խեն իրենց սպրանքը կը մեղանչէն :

Պ. Թէ որ ամէնքը միաբանին աւելի  
արժողութիւն ծախելու, անանկ որ ժողո-  
վուրդը նեղը կիյնի կերթայ կառնէ. այս  
կըլլայ զրկանք և մեղք ընդդէմ արդա-  
րութեան. նոյնպէս թէ որ ամէն արուես-  
տաւոր խօսք դնեն որ շատ գնով բանին  
բանը, կը մեղանչեն. զի է զրկանք ընդդէմ  
արդարութեան, և այսպիսի անարդար վա-  
տակն՝ արդար վաստակն ալ կը փճա-  
ցնէ, և ողորմելի կընէ ընօղն : Աւերեա-  
ցէ զամենայն երկիր անօրէնութիւն. և  
խարդախութիւն կործանեացէ զաթոռս  
թագաւորաց. ասաց սողոմոն :

Հ. Թէ որ շատ մարդիկ մանեն այ-  
գին, և ամէնքը քիչ քիչ բան գողնան  
կը մեղանչէն :

Պ . Գողութիւնը միշտ գողութիւն է . տակայն նիւթը քիչ ըլլալով թեթեւ կը լայ . իսկ թէ որ ամենուէն գողցածը մէկտեղ բերելով երևելի բան ըլլայ , ամենն ալ կը մեղանչեն այս պատուիրանին գէմ : և մինչև որ հատուցում չընեն , չեն կրնար արդարանալ :

Հ . Թէ որ մէկը չգիտնալով գողունի բանը գնէ՝ ի՞նչ պիտի ընէ :

Պ . Թէ որ գիտնալով գնէ , կը մեղանչէ արդարութե՛ գէմ , որչափ որ քովը կը սրահէ . իսկ թէ չգիտնալով գնէ , յետոյ Թիւն իմանայ , պէտք է տալ տիրոջը . բայց հարկ է որ Թիւն ալ բոլոր վնասն ա՛նոր քաշէլ չի տայ :

Հ . Երբոր քանի մի անձինք միաբանեալ ցած գնով կը գնեն ծանրագին բանը կը մեղանչե՞ն :

Պ . Մեծ անիրաւութի է միաբանիլ ուրիշին վնաս տալու հա՛նար՝ ծանրագին բանն աժան գնելով . ուստի ոչ միայն ամէն միաբանօղններն ալ կը մեղանչեն , այլև որոնք որ պատճառ եղան այսպիսի անիրաւութե՛ . պէտք է որ հատուցանեն , թէ չէ պարտական կը մնան Թիւն պատուիրանին :

Հ . Ո՞րն է ութերորդ պատուիրանն Թիւն :

Պ . Մի սուտ վկայեր : Այս պատուիրան կարգիլէ , որ սուտ խօսքերով վկայութիւն չի տայ և յանդուգն դատողութիւն սուտ բան ընկերին վրա յարմարե՛

լով շի զրոյարտէ. զի քն տրն մեր պարտա-  
ւորեց, թէ եղիցի ձեր բանն այոն այո՝  
և ոչն ոչ. նաև ձեր բերանը միշտ ճշմար-  
տութիւն խօսելու սորված ըլլայ:

Հ. Ի՞նչ կը հակառակի այս պատուի-  
րանին:

Պ. Առանձնական դատողութիւն և  
հրապարակական դատողութիւն. որ է խո-  
տորնակ և ստուծք դատաստան կտրել  
ուրիշին վրա: Առանձնականը կը պարու-  
նակէ ստուծիւն, յայտնութիւն գաղ-  
տնեաց, քսութիւն, բամբասանք, նա-  
խատինք, և ծաղր: Իսկ հրապարակա-  
կանը կը պարունակէ ամբաստանութիւն,  
և սուտ վկայութիւն. ասոնք ամէնն  
են այ պատուիրանին դէմ:

Հ. Ի՞նչ է ստուծիւն:

Պ. Է խաբէութիւն, երբ ստախօսը  
եղծանելով ճշմարտութիւնը կը ջանայ հան-  
դերձ գիտամօք խաբել զընկերը և ծու-  
ռը ճշմարտի տեղ հաւտացնել, որ է մեծ  
մեղք. մանաւանդ ծանր նիւթերու մէջ.  
զի ոչ միայն կը հակառակի ճշմարտու-  
թեան, այլև ընկերութեան մէջ՝ հաւա-  
տարմութիւնը կեղծանէ. Բերան ստա-  
խօս սպանանէ զանձն, ասաց իմաստունն:  
Եւս առաւել՝ մեծ մեղք կըլլայ եթէ եր-  
գումով ըլլայ սուտը, նաև այլոց վնաս  
բերէ:

Հ. Ի՞նչ է յայտնութիւն գաղտնեաց:

Պ. Է յայտնել ուրիշին ծածուկ խօս-  
քը կամ գործքը. որ է անհաւատարմու-

Թիւն և մատնուԹիւն, երբ անկէց փնաս  
կուգայ ընկերին . ուստի պարտական է  
ուրիշին խորհուրդը ծածուկ պահելու .  
Թէև հարցընեն, պէտք է լուել և երկդի-  
մի պատասխան տալ :

Հ. Ծածուկ բան մտիկ ընելը մեղք է :

Պ. Աստուծոյ պատուիրանին դէմ կը  
մեղանչեն, որոնք ուրիշին ծածուկ խօս-  
քը ականջգրուԹեամբ մտիկ կընեն, ու  
կեւէն ուրիշին ալ կը յայտնեն . ուսկից  
չատ չարիք կը ծագի, որոնց պարտական  
կը փնայ ականջ դնողը : Նոյնպէս կը մե-  
ղանչէ ով որ ուրիշին անտուկը կը բա-  
նայ, ԹղԹերը կը կարգայ . նաև ծա-  
ծուկ բաները դուրս կը հանէ : Այսպիսի  
անիրաւներն ինչ պատճառ որ տան՝ չեն  
կրնար արգարանալ զի միշտ չար է գործ-  
քը, և չարաչար հետևանք կեւէն . ինչ  
պէս ամէն մարդ գիտէ, և ամէն ազգի  
մէջ արգելած է :

Հ. Ի՞նչ է քսուԹի :

Պ. Է չարախօսուԹիւն, երբ քսուն  
չար խօսքերով կը ջանայ տարաձայնու-  
Թի և սպառնի ձգել բարեկամաց և ազ-  
գականաց մէջ . որ սատանայական գործք  
ըլլալով բանաստեղծի կըսվի, Թէպէտ և  
ճշմարիտ խօսքը պատմէ և ճշմարիտ պա-  
կասուԹիւնը յայտնէ, միշտ է մեղք . զի  
կը քակէ բարեկամուԹիւնը . մանաւանդ  
երբոր այսպիսի քսուԹիւն կըլլայ մեծա-  
մեծաց առջին ուրիշին անունն աւրելով  
այ դէմ կը մեղանչէ . և մինչև որ չարդա-

բացընէ նոյն անձը, և անուներ չլինէ չի  
կրնար ազատիլ պարտաւորութենէ :

Հ. Ի՞նչ է բամբասանքը :

Պ. Է անիրաւ բռնաբարութիւն այ-  
լոց համբաւին . որ է ծանր մեղք ընդ-  
դէմ իջ պատուիրանին . անոր համար ա-  
սաց առաքեալը , թէ բամբասողք զար-  
քայութիւնն իջ ոչ ժառանգեն . զի ըն-  
կերին անուեն աւրելով մարդասպան  
կրլլան . թէ և իրենց թէթեւ մեղք երև-  
նայ , և հասարակ խօսակցութեան տեղ  
դնելով խօսին , կը մեղանչեն : Ոմանք  
անցած գացած բան է ասելով կրօնական  
ուրիշին բանը պատմել , երբեմն մեռած-  
ներու վրայով իբր անվնաս բանի տեղ  
դնելով կը բամբասեն . բայց ինչ որ ըսեն՝  
փուճ է . միշտ իջ պատուիրանին դէմ  
կը մեղանչեն , և արքայութեն տարագիր  
կրլլան . պէտք է որ խօսքը ետ առնուն և  
աւրածնին շինեն : Ի բամբասանաց խնայե-  
ցէք զլեզու , զի շշուէ՞ գաղանի՞ գատարկ  
ոչ անցցէ . ասաց սողումն :

Հ. Թէ որ իր անձը բամբասէ կը մե-  
ղանչէ :

Պ. Ինչպէս որ պարտական է մարդ-  
իր անձն ողջ պահելու , այսպէս ալ  
պարտական է իր անուներ չաւրելու թէ  
խօսքով , և թէ գործքով . ուստի կը մե-  
ղանչէ ով որ իւր անուներ կաւրէ ուրիշին  
առջին : Բայց թէ որ խոնարհութեան  
համար իր պակասութիւնը վրա խօսի՞ չի  
մեղանչէր զի այնպիսի խօսքը չէ թէ

անուներ կաւրէ, այլ կը շինէ:

Հ. Միայն բամբասօղը կը մեղանչէ:

Պ. Այ միայն բամբասօղը կը մեղանչէ  
 Ի՞նչ պատուիրանին դէմ, այլև ով որ պատ-  
 ճառ կըլլայ բամբասանաց. և ով որ մտիկ  
 կընէ բամբասանքը. մանաւանդ ով որ  
 հաճելով մտիկ կընէ ու կը խնդայ, և չի  
 խափանէր՝ երբոր կընայ. [Թէ որ չի կընայ՝  
 պէտք է հեռանալ անկէ և չհաճիլ. զի  
 կանոն էր սուրբերուն՝ որ երբ ուրիշին  
 պակասութիւնը կը լսէին՝ իրենք իրենց  
 կըսէին, [Թէ դուն մի ըներ: Գարձեալ՝  
 կը մեղանչէ ընդդէմ արդարութեան ով  
 որ լսած բամբասանքը կելլէ չգիտցողին  
 կը պատմէ՝ և մեծասպէս կը ստորաւորի  
 առաջի Ի՞նչ. իսկ [Թէ որ գիտցողի պատմէ՝  
 կը մեղանչէ ընդդէմ սիրոյ: Ուստի իբր  
 վարդապետներն ըսին [Թէ բամբասօղը,  
 լսօղը, և պատմօղը միասպէս դատապար-  
 տութե՛ն արժանի են:

Հ. Ի՞նչ կըլլայ նախատինք և ծաղը  
 ընօղը:

Պ. Ով որ նախատինք տալով կը վշտա-  
 ցընէ ընկերը, կամ պակասութիւն առաջ  
 բերելով ծաղը կընէ, կը մեղանչէ Ի՞նչ պա-  
 տուիրանին դէմ. զի քս վճռեց, [Թէ ով  
 որ անարդէլով մորոս և յիմար ըսէ ընկե-  
 րին, պարտաւոր կըլլայ գեհէն հրոյն:

Հ. Ի՞նչ է ամբաստանութի և սրւտ  
 վկայութի:

Պ. Է ինասել ընկերին զրպարտելով և  
 պակասութիւնը առաջ բերելով հաստա-

տել ասենի մէջ . ով որ սուտ կը վկայէ  
 սարտական կըլլայ ամէն վնասին , պէտք  
 է հատուցանել , և պէտք է յետս կո-  
 չել ըրած վկայութիւնն . որպէս զի  
 ազատի սարտքէն : Ահա այս վարդա-  
 պետութիւն պիտի սորվինք արդար ապ-  
 ըլլառանց մարդու վնաս տալու . ինչ-  
 պէս քս օրենք տվաւ . թէ այն բանն որ  
 չես ուզեր որ ուրիշները քեզի ընեն , դուն  
 ուրիշին ամենեին չընես : Գատաւոր ար-  
 դար , որ հաստատեցեր 'ի մեզ դատող  
 բնութիւն զմիտս մեր . շնորհեա՛սմա դատել  
 զանձինս իրաւամբք և արդարութիւն .  
 ինչպէս 'ի մեզ ար ողորմութիւն :

### ԼԵ . ԿԻՐԱԿԻ :

Հ . Ո՞րն է իննէրորդ պատուիրանն ւնյ :

Պ . Մի ցանկար կնոջ ընկերի քո : Այս  
 պատուիրան կը դատապարտէ զանոնք ,  
 որ ներքին հաւանութիւն կը ցանկան այ-  
 լոց կանանց , և չար մտքով կը տեսնելին  
 և կը խօսակցին . զի այս ոչ միայն է չար  
 ցանկութիւն և մտաւոր շնութիւն , այլև է  
 անիրաւութիւն և անարդարութիւն ընդ-  
 դէմ ընկերին , և խանգարիչ օրինաց բնու-  
 թեան :

Հ . Ի՞նչ պէս պիտի զգուշանան :

Պ . Որովհետև ամէն մարդ մէկ բնու-

Թեան վիճակելով և մարդկային ընկե-  
րութիւն կասարկած ըլլալով իրարու հետ,  
չար սիրտ և դէշ խորհուրդ պիտի չունե-  
նան իրարու վրա . ևս առաւել քրիս-  
տոնեայն , որ սբ մկրտութիւն եղբայր են  
իրարու և որդէգիր այ : Ապա ինչպէս  
որ այրը եղբայր կը համարի ընկերին և  
բարեկամին , այսպէս կիինն ալ քոյր կը  
համարի , և զաւակը՝ զաւակ . թէ չէ՞ գա-  
զան կըլլայ մարդ , և գազանի նման որո-  
շումն և ընտրութիւնն չունենար : Ու-  
րեմն պէտք է բարի և մաքուր սրտով  
խօսակցիլ այլոց ընկերին հետ , և ողջա-  
խոհ նայել ամենայն պարկեշտութիւն .  
ինչպէս կը վայլէ բարի մարդու և բարի  
քրիստոնէին : Եղերուք սբ , զի ես սբ եմ  
ասաց յծ :

Հ . Միայն մարդիկ կը պարտաւորին :

Պ . Ոչ միայն մարդիկ , այլև կանայք .  
որոնք կրկին պարտաւորած են՝ մէյմը  
չերենալ զարգարված օտար մարդկանց ,  
մէյմ՝ ալ չի նայել անզգուշութիւն և չի  
ցանկալ որ դիւրափոփոխ և տկար բնու-  
թեան վիճակած ըլլալով դիւրաւ կը  
խորտակին . պէտք է միշտ ահով գողով  
և աղօթքով տղրիլ որպէս զի ստտանայա-  
կան փորձութեան մէջ չիյնին : Շատ մար-  
դիկ միայն մտածելով այս բանս թէ՛  
կորած պարկեշտութիւն ետ չի դառնար ,  
մեծամեծ փորձութիւններէ ազատեցան  
և առաքինի պարկեշտ եղան :

Հ . Այլ որոնք կը պարտաւորին :

Պ. Այս պատուիրանն կը պարտաւորէ  
 դարձեալ մանկամարդերն՝ թէ արու և  
 թէ էգ, որ ուրիշի զաւակաց ետեւէն ըլ-  
 լալով չի ցանկան, և չի նային իրարու-  
 չար խորհրդով զի ցանկու թիւ՝ պատրաս-  
 տական կրակ է. եթէ զգուշութի չըլ-  
 լայ՝ մէկէն կը բռնկի, և չարաչար կայ-  
 րէ թէ սիրտը, և թէ հոգին. նաև շատ  
 անգամ փոքրիկ պատճառով մի կամ սա-  
 կաւ տեսութեամբ և խօսքով մեծամեծ  
 չարիք և խայտառակութիւնք եղած են:

Հ. Միայն մանկամարդէք կը պարտա-  
 ւորին զգուշանալ:

Պ. Ցանկութիւնն այնպիսի կրակ է,  
 որ ոչ միայն երեսասարդը և մանկամար-  
 դը կայրէ, այլ և սուրբերը, և ծերերը՝  
 թէ որ չըզգուշանան. ինչպէս դաւիթ  
 մարգարէն ընկաւ անզգոյշ նայելով մի-  
 և սողոմոնն ծերութեան ժամանակն ա-  
 ութնութեանն ետ չի կենալով վտանգեցաւ.  
 Իսկ երկու չար ծերերն հետաքրքրութի  
 շուշանը տեսնելով չարաչար խայտառա-  
 կեցան, և դատասարտեցան մանուկ  
 դանիէլէն. որ պարկեշտութի զորդար-  
 ված ըլլալով խայտառակեց շուն ծերե-  
 րը. որուն վրա այսպէս կը խօսի սարգիս  
 շնորհալին. թէ որ տարիքով մանուկ ես  
 և միտքդ արթուն է և պարկեշտ, ման-  
 կուիդ քեզ վրաս չի կրնայ բերել. ինչպէս  
 էր դանիէլ, նաև յովսէփ գեղեցիկն  
 որոնց պարկեշտութիւնը չի կրցաւ յաղ-  
 թելու չար ցանկութիւնն. իսկ թէ որ

տարիքով ծեր ես, և միաքդ արթուն չէ  
անսարկեշտութիւն, ծերութիւնդ քեզ  
օգուտ չընէր. ինչպէս էին չար ծերե-  
րն, որ չարաչար կորան, և սարսական  
մնալով ի՞նչ սատուիրանին դատասպարա-  
ցան :

Հ. Որն է տաներորդ սատուիրա-  
նըն ի՞նչ :

Պ. Մի ցանկար ընչից ընկերի քո: Այս  
սատուիրան կը սարտաւորէ ամէն մարդ,  
որ ամենեւին չի ցանկան ուրիշին բանին՝  
ոչ ներքին հաւանութիւն, և ոչ արտա-  
քուստ աչք դնելով:

Հ. Ի՞նչպէս կը սատուիրէ բուն սատ-  
գամը :

Պ. Աճաշունչն այսպէս կը գրէ. Մի  
ցանկանար տան ընկերի քո, և մի անդոյ  
նորա. մի ցանկանար կնոջ ընկերի քո. և  
մի ծառայի նորա, մի աղախնոյ, և մի  
եզին նորա, և մի իշոյ նորա, և մի իմի  
զինչ ընկերի քո իցէ: Ուրեմն ընկերոջը  
բանին վրա սէտք է ուրախանալ որպէս  
թէ իւրն է, և ոչ թէ ցանկալ որ է ի՞նչ  
դէմ մեղք:

Հ. Ի՞նչ կը սարտաւորէ:

Պ. Կը սարտաւորէ ոչ միայն չի ցան-  
կալ և չի ջանալ ուրիշին լաւ բանն իրեն  
քաշել՝ ոչ գործքով և ոչ մտքով. այլև  
կը սարտաւորէ, որ ամէն մարդ ինչ վի-  
ճակ և ինչ բան որ ունի գոհ ըլլայ. ա-  
մենեւին չի տրտնջայ ոչ ալ քատութեանը  
վրա, և ոչ նեղութիւն. զի ի՞նչ է կարգա-

գրողը . ինչ բան որ մեր փրկութեանը յարմար և մեղի օգտակար տեսնէ, զայն կուտայ . անոր համար և այս պատուիրանը գրաւ որ իւր սուրբ կամացն հնազանդ ըլլանք :

Հ . Ի՞նչ կը հակառակի այս պատուիրանին :

Պ . Յանկութիւն, նախանձ, և տրտմութիւն այլոց բարեացը վրան . ուստի ոչ միայն ցանկացօղները կը պարտաւորին, այլև նախանձօղներն ուրիշին մեծութեանը և փառացը վրան . և անոնք՝ որ կը ջանան ուրիշին փառքը պղտիկցընելու, և այլոց աղէկ բանը վար զարնելու . որ է չարամտութիւն և չարսրտութիւն, հակառակ կը գործեն իծային կամացն և պատուիրանացն :

Հ . Ինչո՞ւ համար տրտմօղն ալ կը մեղանչէ :

Պ . Վն զի այս տրտմութիւն չար կամաց առաջ կուգայ . ինչպէս վաճառականը կը տրտմի այլոց վաստակին վրա . և արուեստաւորը չուզէր որ ուրիշը բան ծախէ, միայն իրեն համար կը ցանկայ . որոնք հակառակ գործելով իծային պատուիրանաց կը մեղանչեն . Յոյս անշնորհակալին իբրև զսառն ձմերայնոյ հալեսցի, և ծորեցցի իբրև զջուր անպիտան . ասաց իմաստունն :

Հ . Արդեօք մեղաւորին բարութեանը վրա տրտմիլը մեղք է :

Պ . Թէ որ մեղաւորին և անարժանին

բարեացը վրա տրտմի և ցանկայ չար մտօք  
ըստ որում ինքը չունի, կը մեղանչէ .  
կամ թէ չար կուղէ անոնց՝ ընդդէմ կը  
գործէ այս պատուիրանին, զի ավօղն ան  
է . ինչպէս կամի, որուն կամի, և երբ  
կամի կուտայ : Սակայն եթէ տրտմի թէ  
մեղաւորն անց ապերախտ ըլլալով աւելի  
չարութի պիտի ընէ այն մեծութիւնը, ան-  
ատենը պէտք է անց յանձնել սրտցաւու-  
թիւն : Այլև ամէն մարդ պիտի ջանայ բարի  
գործքով ժառանգ ըլլալ անց բարեացը՝ չէ  
անցողականին, այլ անանց բարեացն և  
երկնաւոր շնորհացն . Զի ամենայն տուրք  
բարիք և ամենայն սարգևք կատարեալք  
ի վերուստ են իջեալ :

Հ. Այս անձային պատուիրանները պա-  
հօղն ինչ սարգև կառնէ :

Պ. Ինչպէս որ չիսպահօղը, և պատուի-  
րանազանցը կը դատապարտի յաւիտե-  
հական պատժով, այսպէս և պատուիրա-  
նապահը կը պսակի յաւիտեհական երա-  
նութիւն և անանց բարեօք, որպէս վճռեց  
քի : Եթէ կամիս մտանել ի կեանս, պա-  
հեա՞ զպատուիրանս :

Հ. Պատուիրանապահն ինչ կըսվի :

Պ. Ճշմարիտ պատուիրանապահքրիս-  
տոնեայն՝ է երանելի և երջանիկ . ամե-  
նև ին տեղէ մի երկկուզ չունենար, ոչ մար-  
մին կը նայի՝ ոչ փառք և ոչ մեծութի .  
միայն անց սիրով վառված ուրիշ հոգ  
չունի, բայց եթէ անց ծառայել, և ստեղ-  
ծողին ընդունելի գործք գործել, ամե-

նայն ժամ միտքը բերելով ինչ ըրած բա-  
 ըիքը և խոստացած երանու թիւնը՝ գոհ  
 և ուրախ կապրի որպէս երանեալ հոգի.  
 նաև անգադար փառք տալով կը խնդրէ  
 ստեղծողէն յարատեւել ՚ի բարին ասելով  
 Յաւէլ ՚ի մեզ քոր ամենակալ զհաւատ,  
 զոյս, զտէր և զամենայն գործս առա-  
 քինուէ. նաև միշտ և հանասպազ հաս-  
 տատ մնալով ՚ի պատուիրանսպահու թէ  
 քո՝ լինել արժանի խոստացեալ բարեաց,  
 և երկնից արքայու թեան :

### ԼԶ. ԿԻՐԱԿԻ :

Հ. Ի՞նչ է խիղճմտանքը :

Պ. Է գատու մն մտաց, որ կորոշէ թէ  
 այս բան է բարի, պէտք է ընել. և այս  
 բան է չար, պէտք չէ ընել. ահա այս է  
 բնական օրէնք և որդ մտաց, որ ազգա-  
 րարութի կընէ պահելու ինչ պատուի-  
 րանները, և հեռու կենալու չարա-  
 գործութի. որ է մեղք ընդդէմ ուղիւ  
 կանոնաց և օրինացն ինչ :

Հ. Ունի՞ ամէն մարդ :

Պ. Ամենայն մարդու սրտին մէջ ա-  
 տեան գրեթէ է իծ. ուր ինքն իրեն գա-  
 տաստան կընէ, որ միտքը կամ բանը  
 կորոշէ գատը. ու ըստ փիլիսոփայից է  
 յայտնի նշան անմահութեան հոգւոյն .

և ուրացողն այս ճշմարտութեան, է ուրացող գոյութեանն ւայ. ուստի կրսէ կիկերոն փիլիսոփան, թէ՛ Գոյ ՚ի մարդն այնպիսի կարողութիւն, որով գիմէ ՚ի բարին և խորշն ՚ի չարէն:

Տ. Քանի՞ է խիղճը:

Պ. Խիղճը թէպէտ մէկ է, բայց չորս կերպ կրնայ փոխվիլ. որ կրավի ւա Ուղիղ, երբ միտքը բարին՝ բարի կը գատէ. և չարը՝ չար. ք Մոլար, երբ միտքը բարին չար կը գատէ, և չարը բարի. ք Երկբայ, երբ միտքը կախ կը մնայ չի կրնայ որչէլու. ք Խղճահար, երբ միտքը մոլորելով ընդունայն երկիւղէ՝ մեղք չեղած բանը մեղք կը համարի:

Տ. Ի՞նչ կանոն ունին:

Պ. Եթէ խիղճն է ուղիղ՝ անհնար է գործել հակառակ. զորօրինակ թէ որ գատէ, թէ զուր տեղն ընկերն յանդիմանել է մեղք, ընդդէմ խղճին կը մեղանչէ՝ եթէ յանդիմանէ: Եթէ խիղճն է մոլար՝ նոյնպէս չի կրնայ խղճին դէմ գործել. զոր օրինակ թէ որ գատէ թէ բարի վախճանի համար ընկերն յանդիմանել որ ուղի մեղք է, կը մեղանչէ եթէ յանդիմանէ. թէպէտ ըստ ինքեան մեղք չէ: Եթէ խիղճն է երկբայ. պէտք է ասպահով կողմին հետևիլ. զորօրինակ թէ որ երկբայի ուրբաթ գիշեր, թէ արդեօք կէս գիշեր անցած է, թէ չէ. կը մեղանչէ եթէ միա ուտէ. զի ասպահով է չուտելը: Եթէ խղճահար է պէտք է խոս-

տովանահօրն հետևելու և ինքն իրեն բան  
չընել. որպէս զի չի մտորի. ըստ այնմ.  
ուհնկնդիր լերուք առաջնորդաց ձերոց :

Հ. Կան անխիղճ մարդիկ :

Պ. Ամէն կատարեալ մարդ բնականա-  
պէս ունի խիղճ, և առանց խիղճմտանաց  
մարդ չի կայ. բայց կան անօրէն մարդիկ  
որ մեղօք բնական լոյսը խաւարեր են. և  
մեկգի դրեր են խիղճը. որպէս զի հա-  
մարձակ մեղանչեն առանց խղճի. այս-  
պիսիները կըսվին անօրէն, և անսօ-  
րանց յաւիտենական հուրը չսլիտի  
մարի, և որդն՝ որ է խիղճը, չսլիտի մեռ-  
նի: Ասաց անզգամն՝ ի սրտի իւրում,  
Թէ ոչ գոյ ամ. ասականեցան և սղծե-  
ցան, ըստ մարգարէին:

Հ. Ի՞նչ է մեղքը:

Պ. Է անհնազանդութիւն ամային  
պատուիրանաց, երբ կամքը կը խոտորի  
յուզիկ կանոնէն ընդգէմ խիղճմտանաց  
գործելով. որ կը բաժնըվի սկզբնական,  
և ներգործական:

Հ. Ո՞րն է սկզբնականը:

Պ. Սկզբնական մեղքն՝ ադամայ կանց-  
նի մեղ. և ամէն աղայ սկզբնական մեղ-  
քով կը ծնի. վասն զի եթէ ադամ մնար  
սկզբնական արգարութե մէջ, նոյն արգա-  
րութիւնը կանցնէր որդւոց որդի, և ա-  
մէն աղայ նոյն արգարութե կը ծնիր.  
Իսկ ադամ մեղանչելով, մեղքն ալ իբր  
հիւանդութիւն մեղի կանցնի, և մինչև  
որ նոր ադամայքնի նք աւազանը չի մկըր-

արվի, չի կրնար նոյն մեղքէն ազատելու:

Հ. Ո՞րն է ներգործականը:

Պ. Ներգործական մեղքը կամօք և ներգործութիւն կը գործեն մարդիկ երբոր չափահաս կըլլան. որ կըլլայ չորս կերպով. այսինքն խորհրդով, խօսքով, գործքով և զանցառութիւն:

Հ. Ներգործական մեղքը քանի՞ կը բաժնուի:

Պ. Երկու. մահացու, և ներելի. մահացուն կամ մահուչափն է հակառակ օրինաց, որ մահացնելով հոգին կը զըկէ ՚ի շնորհէն կենաց. իսկ ներելին է պակասութիւն բարութեան:

Հ. Ե՞րբ կը մեղանչէ մահացօրէն:

Պ. Երբոր մարդս կամակար մտօք անպատուիրանը կը խորտակէ ծանր սարսափով. անոր համար յաւիտենական պատժոց արժանի կըլլայ մահուչափ մեղանչօղն:

Հ. Ի՞նչ է գործք ներելի մեղաց:

Պ. Ներելի մեղքը թէպէտ չի բառնար շնորհքը, բայց կը տկարացնէ և կը տրամադրէ կամքն առ մահացու մեղքը. անոր համար իբր մեծ չար պէտք է սոսկալով հեռանալ փոքրէն, որպէս զի ազատ մնայ մեծ մեղքէն. ինչպէս կը խրատեն սբ վարդապետք:

Հ. Ի՞նչ պատիժ կը բերէ ներելին:

Պ. Ներելի մեղքին պատիժն է ժամանակաւոր. բայց ժամանակաւոր ըլլալու համար պէտք է յաճախել, և սո-

ժորուժիւնն ընել . զի սովորուժեամբն  
 ներելին շուտ կը փոխվի՝ մահացու կըլ-  
 լայ ու յաւիտենական գատապարտու-  
 թեան արժանի կընէ հոգին . զորօրինակ  
 փոքր գողուժք շատ մեծ աւազակներ  
 եղած են . թեթեւ սուտ մի յաճախելով  
 կամ փոքրիկ ատելուժիւնն ընելով մե-  
 ծամեծ չարուժիւնք հեռուեր են : Անոր  
 համար կըսէ իմաստունը թէ՛ որ անարգէ  
 զփոքրն , փոքր փոքր կործանեացի :

Հ . Ո՞րն է վտանգաւոր մեղքն :

Պ . Վտանգաւոր և ինասակար մեղք  
 կըսվին անոնք , որ ծուլուժք և զանցա-  
 ուուժք կը դործըվին , իբր թեթեւ բանի  
 տեղ դնելով զանց կառնուիք . որով կամ-  
 քը ուղիղ կարգէն խոտորեալ կը մնայ ,  
 և քիչ քիչ սպականելով անողջանալի  
 կըլլայ :

Հ . Ո՞րն են զանցաուուժքի դժխաւոր  
 մեղքերն :

Պ . Են հոգևոր զանցաուուժք . ինչ  
 սկէս ծուլուժք սրտարագ տեսնել , ա-  
 ղօժքը ձգել , մտածական չընել , ձան-  
 ձրանալ , ան սրտաուրանները կատա-  
 բելու . և այլ այսպիսի չար սովորուիներ ,  
 որ հոգին ան սիրոյն սրաղէցնելով անպի-  
 տան կընեն . և այնպիսին ոչ տաք և ոչ  
 սրաղ , այլ դաղջ անուանեց յովհաննէս  
 աւետարանիչն , և գատապարտուժեան  
 արժանի դասեց :

Հ . Մահացու մեղքն ինչո՞ւ համար կը  
 զրկէ հոգին ՚ի շնորհաց :

Պ. Վասն զի հակառակ ըլլալով անձայնին օրինաց՝ կարհամարհէ անձայնին պատուիրանը, և կեղծանէ սէրն ընկերին. անոր համար մի միայն մահացու մեղք բաւական է դատապարտելու հոգին: Առ հասարակ տուելի են ան անբարշտեան և անբարշտութի իւր, ըստ սողմանի:

Հ. Ուսկից կառնելի մեծութիւն մեղաց:

Պ. Մեղաց մեծութիւնը կը չափվի գերազանցուէ օրէնսդրին. ուստի օրէնք գնօղը որչափ աւելի գերազանց ըլլայ, այնչափ աւելի կը պարտաւորի օրինազանցը. զի թէ թագաւորին դրած օրէնքը ով որ զանց առնէ դատապարտութե արժանի կըլլայ. հապա երկնի և երկրի թագաւորին օրէնքն անարդօղը, և իւր բարեւեր կամացն հակառակօղն որպիսի մեծ գաղապարտութե արժանի չըլլար. և քանի՞ դժոխք պէտք է որ զայնպիսին դատապարտէ յաւիտեանս յաւիտենից. ինչպէս կըսեն նք վարդապետք: Ահա այս պէտք է ըլլուլ ամենուս մեծ խրատ միշտ մտածելով ան մեծութիւր և մեր անարդութին. անհուն բարութիւր, մեր ապերախտ չարութին. որպէս զի խոնարհեալ զաւիտեալ և ողբանք առաջի ան. և արտասուօք խնդրենք զողորմութին. զի հոգի խոնարհ ան ոչ արհամարհէ: Ընդ իւր զարբերիցն արտասուս զմարդկան բարձօղն արտասուաց, պաղատեսցնէք արտասուօք, մաքրել զմեզ ՚ի մեղաց:

1,2. ԿԻՐԱԿԻ :

Հ . Վլխաւոր մեղքերն ի՞նչ են :

Պ . Ե՛ն գլուխ և աղբիւր ամենայն մեղաց . զի անոնցմէ կը ծնին ամէն մեղքերը . և դատապարտութիւն արժանի կընեն մկրտեալ հոգին , որ սիտի ժառանգեր յաւիտենական երանութիւնն :

Հ . Եւ քանի՞ են :

Պ . Եօթն են . հպարտութի, ագահութի, բզջխոհութի, նախանձ, բարկութի, սրկրամոլութի, և ծուլութի :

Հ . Հպարտութի ի՞նչ մեղք կը ծագին :

Պ . Փառասիրութիւն, սնախառութի, յանդգնութի, և սարժանք . որովհետև հպարտ մարդը փառք կը սիրէ , պատիւ կը փնտրուէ , սնտախ բաներով զինքը կը մեծցընէ, և կը սարժի գոռոզնալով . նաև յանդգնութիւն և մեծ մեծ խօսելով մարդու չի հաւնիր , և միայր կը գնէ թէ իրեն նման մարդ չէ եկած աշխարհ . սակայն շուտով կը կործանի և խայտառակ կըլլայ . զի ան ամբարտաւանից հակառակ կայ , տայ շնորհս խոնարհաց :

Հ . Ի՞նչ է հպարտութիւն :

Պ . Է անկարգ բաղձանք գերազանց ըլլալու ամենէն վեր . որով մարդը մեծամտելով չուզէր մեծին հնազանդիլ . նաև կարհամարհէ զուրիշն և միայն

զինքը մեծ, խմաստուն, և արժանաւոր  
կը ճանչնայ, որ է մեծ խելագարութիւն  
եղծիչ սիրոյ ընկերին, ուստի և հակա-  
ռակ ւնյ:

Հ. Ինչո՞ւ կըսվի ծնօղ ամենայն մե-  
ղայ:

Պ. Զի գրեթէ ամէն մեղք հպարտու-  
թիւն առաջ կուգայ. հպարտ մարդն ա-  
գահ և անգութ կըլլայ, կը նախանձի  
ուրիշին և կատէ չուզէր այլոց վրա ա-  
ղէկ լսել, շուտ կը բարկանայ, և ամե-  
նայն անկարգութի կընէ չար կամքը կա-  
տարելու համար. որ այնչափ գերազանց  
գրեւ է, և իբր կուռք կը սրաշակ. ուստի  
կըսվի կամապաշտ: Այսպէս էր նաև սա-  
ղայէլն, որ մտացը վրան հպարտանալով  
ասաց՝ թէ ես ալ կը գնեմ իմ աթոռս ամ-  
պերէն վեր ու կըլլամ նման բարձրելոյն.  
անոր համար նոյն կետին պատուհասե-  
լով սանդարամետական եղաւ, և դա-  
տապարտեցաւ դժոխքը:

Հ. Ի՞նչպէս կընանք ազատիլ այս  
գիւական օխտէն:

Պ. Խոնարհելով և աղքատանալով.  
այսինքն ամէն գործքի մէջ խոնարհ ըլլա-  
լով ո՛չ զինքը և ո՛չ գործքը մեծցընելով,  
աղքատ և օտարական համարելով զինքն  
աշխարհիս վրա. ամենուն առջին ցա-  
ծասիրտ և պարկէշտ երևնալով: Եթէ  
լաւ գործք ալ ընէ, և զինքը գովեն,  
պէտք է ւնյ ընծայել. և ոչընչութիւնը  
խոստովանել ըստ առաքելոյն, թէ լինչ

ունիս որ չես առած . զի ամէն բան  
 անձ է ավեր . եթէ առեր ինչո՞ւ կը պար-  
 ծիս իբրև չառած , կամ թէ իբրև քեղ-  
 մէ ստեղծած : Անոր համար մեծամեծ  
 սքերն որ իմաստութիւն լեցված էին միշտ  
 մարդկային ոչընչութիւն մտածելով կը  
 խոնարհէին առաջի ան . թէ որ նեղու-  
 թիւն և ազքատութիւն ունենային , զի-  
 բրենք արժանի համարելով կրտէնի դաւիթ  
 մարգարէին նման . բարի է զի խոնարհ  
 արարեր զիս . քեզ միայն վայելէն փառք  
 և ոչ մարդոյ : Զի ամենայն տուրք բարիք  
 և ամենայն պարգև կատարեալի վերուստ  
 են իջեալ :

Հ . Ի՞նչ է ագահութիւն :

Պ . Ըստ առաքելոյն՝ է երկրորդ կուս-  
 պաշտութիւն . զի չարաչար զօրանալով ան-  
 կարգ բաղձանքը մեծութե՛ն՝ իբր կուռք  
 կը պաշտէ արծաթն ու ոսկին . անոր  
 համար դատապարտութե՛ն արժանի կըլ-  
 լայ . նաև հոս իբր դատապարտեալ հո-  
 գի գիշեր ցորեկ կաշխատի արծաթսի-  
 րութեան համար , ոչ կը վայելէ , և ոչ  
 կը հանգչի , որ է նշան յաւիտենական  
 դատապարտութեան . վասն զի ագահին  
 սիրան ոսկիի սիրով վառած և կապված  
 ըլլալով՝ ուրիշ բան չի կրնար սիրել ու ա-  
 նով ուրախանալ , միայն նոյն ախտով կը  
 պարարի , և կը քարանայ սիրտը . ոչ բա-  
 րեգործութի կրնայ ընել , և ոչ ողորմու-  
 թիւն . որով ան ողորմութենէն ալ զուրկ  
 կը մնայ :

Հ . Ի նչպէս կրնանք ազատիլ այս ջարու թէն :

Պ . Ողորմած և դժած լլալով, ուրիշին բանին գանըվելով, միսի թարու թի և բարի խրատ տալով, կարօտու թիր հոգալով, և այլ բարեպաշտական գործքեր ընելով. որպէս ղի չըլլայ թէ սէր արծաթին և աշխարհիս խանգարէ մեր սիրտն ու հոգին. և թշնամի ընելով այ յաւիտենական գատասպարտու թի կորսըվինք . ղի սէր աշխարհիս թշնամու թի է առ ւծ, ըստ առաքելոյն :

Հ . Ի նչ է բղջախոհու թիւն :

Պ . Է անկարգ բաղձանք մարմնաւոր հեշտու թէց՝ գէշ մեղքերու գէշ խօսքերու և գործքերու ետևէն ըլլալով. որով հոգին կապականի չար մեղքով և անառողջանալի կըլլայ. որ կը հակառակի վեցերորդ պատուիրանին այ . տես հոն : Այս մեղքն այնչափ գարշելի և ամօթալի է, որ սուրբերը կամըշնային յիշելու քրիստոնէից. ղի քրիստոնէական մաքուր և սք հաւաստին ջի վայէր որ այսպիսի գարշելի մեղք գրվի կամ յիշվի իրենց մէջ, ինչպէս կրսէ առաքեալն : Եւս առաւել այն ամենասպիւծ գարշելի մեղքը սողոմական երբ կը գործեն անհաւատու թի արու ընդ արու խայտառակելով. որ երկինքը կը բողոքէ, և ւծային բարկու թին յերկիր կիջեցնէ, ինչպէս իջեցուց կրակ և այրեց սողոմ գոմոր . ուր արուադէոք հոգւով և մարմնով գատա-

պարտեցան . ըստ այնմ . Արդէս սողոմե  
գոմոր պօռնկեցան զհետ ընկերացն մար-  
մնոց , կան առաջի օրինակ՝ զյաւիանեա-  
կան հրոյն ընկալեալ զգառաստան :

Հ . Ի՞նչպէս պիտի ազատինք այս գար-  
շէլն մեղքերէն :

Պ . Մահացուցմամբ , որ կըլլայ մեր  
զգայութիւնն ու մարմնաւոր ախորժակը  
մահացընելով , չար պատճառներէն և  
առարկաներէն հեռու փախչելով . նաև  
ալօթիւք խնդրելով ստեղծողէն ըստ գաւ-  
թի . Զսիրտ սք հաստատեա՛ յիս անձ և  
զհոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի խմուս :  
Մի՛ ընկենուր զիս աք յերեսաց քոց , և  
զհոգի քո սք մի՛ հաներ յինէն : Ահա այս-  
պիսի կրթութիւն ջանանք սք մնալու չար  
ախտերէն , որ ապականելով հոգին դժո-  
խային կընեն . ապա ինչպէս մաքրեցանք  
քնի արեամբն , նոյն մաքրութիւն պիտի  
պահենք և իրեն յանձնենք մեր հոգին .  
որպէս զի փառաւորէ երանական տեսու-  
թիւն ՚ի յաւիտեան : Փառաւորեանդ փա-  
ռօք երրորդութիւն սք , փառաց արժանի  
արան զճնեալս աւազանաւն երկնային քո  
ժառանգութեդ :

## ԼԷ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ . Ի՞նչ է նախանձն :

Պ . Է արամութի ուրիշին բարեացը վրա . որ նախ իր անձն այրելով կը ցաւի , և չարութի չուզէր լաւութիւր , բարի անունը , վաստակը , և մեծութիւր տեսնելու , համարելով թէ այն է իրեննուազութի . անոր համար երբոր չար և ձախորդութիւն կը սրտահալի այլոց՝ կուրախանայ . չէ թէ իրեն օգուտ կըլլայ անկէ , այլ միայն իր չար կամքը կը հանգչի :

Հ . Ի՞նչ բանի կը նմանի :

Պ . Սուրբ վարդապետներն սատանայի կը նմանցընեն . որ նախանձելով ադամայ փառացն , որ իրեն զնաս չունէր , դրախտէն դուրս իյնելուն պատճառ եղաւ . նոյնպէս մեր երջանկութեւր նախանձելով միշտ կը ջանայ զրկելու չար մեղոք : Այսպէս եղաւ նաև կային . որ անմեղ եղբայրը մինչև որ չըսականնէց՝ սիրաւ չի հանգչէցաւ : Ասլա ամէն նախանձոտ նման ըլլալով սատանայի և կայեհի , դատաւարտութե արժանի են . ինչպէս անոնք դատաւարտեցան՝ նախանձոտն ալ սլիաի դատաւարտի :

Հ . Ի՞նչ մեղք կը ծնի նախանձէն :

Պ . Նախանձին ծնունդքն են՝ ատելութիւն , տրտունջ , չարախօսութիւն , զրպարտութի , ուրախութի ՚ի չարն , և

արամուծի՛ի բարին այլոց : Ահա ասոնք  
ամենն են ընդգէմ ան և եղծիչ սիրոյ  
ընկերին :

Հ . Ի՞նչ է պատճառն :

Պ . Վասն զի նախանձոտ մարդը ցա-  
ւելով ուրիշին բարեացը վրա՝ նախ կըս-  
կըսի արանջալ և անարժան համարելով  
ընկերն՝ միայն զինքն արժանի կը տեսնէ  
ամէն բարեաց . և ապա անօրէնութիւն ան  
գէմ հայհոյելով կըսէ, թէ ինչո՞ւ ան  
զի չիտար ու այնպիսիներուն կուտայ բա-  
րեքը . և այսպէս կըլլայ արանջօղ և հայ-  
հոյիչ նման սագայէլին :

Հ . Ի՞նչ է չարախօսութիւնն :

Պ . Է չար խօսել և նուաստացնելով  
աւրել ընկերին անունը . ուստի չարա-  
խօսը շատ անգամ սուտ խօսքերով չար  
կը խօսի , և կը զրպարտէ անմեղն զուր  
տեղը պարտաւոր երեցնելով . և երբ փնաս  
կուգայ անոր , կըսկըսի ուրախանալ խնդ  
թէ որ բարի ըլլայ՝ նօրէն կը արամի : Ա-  
հա ասով նախանձօտը կըլլայ մարմնաւոր  
սատանայ . զի այսպիսի գործք միայն  
սատանային կը վայէ . ըստ այնմ . Նա-  
խանձու բանասարկուին եմուտ մահ յաշ-  
խարհ :

Հ . Ի՞նչպէս պիտի ազտախնդ այս չար  
ախտէն :

Պ . Եղբայրսիրութիւն ընելով , և բա-  
րի սիրտ ունենալով ամենուն վրա . այն-  
պէս պէտք է ուրախանալ այլոց բա-  
րեացը վրան , որպէս թէ յատուկ մերն

ըլլար. և այնպէս պիտի տրամփինք վշտացը վրան, որպէս մեր անձին սպատահած ըլլար. և թէ յայանի պակասութիւնը առնենք ընկերին, պէտք է բարին մեկնելով աղէկ խօսինք, և անունը մեծցրնենք. թէ որ կը զըստարտեն, պէտք է պաշտպանենք և արգարացնենք, ինչպէս քրիստոնէական օրէնքը կը պահանջէ:

Հ. Ի՞նչ է բարկութիւն:

Պ. Է անկարգ բաղձանք և բորբոք վրէժխնդրութեան վասն տեսած զնասին: Այս չար բաղձանք վրէժխնդրութեան երբոր սաստիկ կըլլայ՝ ոչ միայն դատասպարտելի կընէ մարդն, այլև դիւահարի և դազանի նման կընէ. անանկ որ մարդկութիւնը կը մոռնայ դազանի պէս կըսկըսի խածնել և վշտացնել ընկերին:

Հ. Ի՞նչ է պատճառն:

Պ. Վասն զի բարկասիրան ունի ծածուկ հպարտութի և գոռոզութի. երբոր փոքրիկ անարգանք մի կըզգայ ուրիշէն, մէկէն սիրաբ կը բորբոքէ, փքանալով վրէժխնդիր կըլլայ չարաչար, և կը մեղանչէ. որուն ատենը դժօրբի նման կուիւ և հայհոյանքն անպակաս են. մանաւանդ երբ յիշոցատուութի կըլլայ:

Հ. Ի՞նչ է յիշոցատուութիւն (Քիւֆիւր):

Պ. Է հայհոյանք ընդդէմ այ և ընկերին. զի բարկացողն դազանացեալ կը մոռնայ զինքն, ու կըսկըսի բարկութեան մէջ գէշ խօսքեր բերնէն հանել. որ երբեմն

անուանն ալ յիշելով կը հայհոյէ . և  
 երբեմն ընկերին գարձընելով գէշ խօս-  
 քը կը նախատէ յիշոցասուուածք, որ է  
 գատապարտելի չար մեղք . ինչպէս կըսէ  
 շնորհալին :

Հ . Ի՞նչ է գեղը :

Պ . Այս չար ախտին գեղն է հեղու-  
 թիւն և քաղցրութի, ինչպէս խրատ կու-  
 տայ առաքեալը, թէ մէկմէկու հետ քաղ-  
 ցըր և հեղ եղիք ներելով և շնորհելով  
 իրերաց սրտկասուէ : Նաև խորհելով, թէ  
 մենք ալ շատ անգամ այդ գէմ կը մեղան-  
 չենք, չի բարկանար, կը ներէ . շատ անգամ  
 մենք ալ ուրիշին սիրտը կը վերաւորենք,  
 համբերութի կը տանին՝ չեն բարկանար .  
 պէտք է մենք ալ համբերենք անոնց սր-  
 կասութեն, որ շատ անգամ մեղի աղէ-  
 կութի և բարեկամութի ըրեր են . ուրե-  
 մըն մէկ սրտկասուէ համար չի վայլէր որ  
 այսչափ տարւան բարեկամութիւննիս  
 սուրենք այդ գէմ գործելով . որուն կը-  
 սենք ամէն օր . Թող մեզ զպարտիս մեր,  
 որպէս և մէք թողումք մերոց պարտա-  
 պանաց :

Հ . Ի՞նչ է համբերութիւն :

Պ . Է ծնունդ հեղութե և խոնարհու-  
 թե. զի հեղ և խոնարհ մարդը միշտ համ-  
 բերելով առաքինութե համ կը բերէ  
 թէ իր անձին, և թէ ընկերին . որով և  
 սիրելի կըլլայ այդ և մարդոյ . զի քն զին-  
 քըն օրինակ ավաւ բարի քրիստոնէից  
 ասելով . հեղ եմ և խոնարհ սրտիւ . և

րանի անոր որ քսի նման ըլլալով երջանիկ կապրի, և երջանիկ կը մեռնի՝ արժանի ըլլալով երանութեանն քսի, որ ասաց երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեացեն զերկիր:

Հ. Սուրբերը չէի՞ն բարկանար:

Պ. Սուրբերուն բարկունն էր նախանձայուզութի փառացն ան, և ոչ թէ ատաւոր բարկութի. որոնք ան սիրով վառված ըլլալով երբոր կը տեսնէին մարդիկ չարութեան ետեւէ եղած՝ սաստիկ կը վիրաւորէին. ինչպէս էր մովսէս, որ տեսնելով թէ իսրայէլացիք հորթ կը սպառէին, սատգամաց տախտակը զարկաւ գետինը կոտրեց. եղիա կրակ խճեցուց երկրնքէն երեց յիսուն մարդը աքայտբու, և մատաթիա կուռքին երկըրպագութի ընող հրէայն ոտքին տակն առաւ սատկեցուց: Նոյնպէս բարի քրիստոնեայն երբոր կը տեսնէ չարագործը՝ կը ցաւի և կը բարկանայ, որ ան դէմ կրնէ. և թէ իրեն գէշութիւն ընեն, կը ցաւի բարկանալով անոնց չարութեանը վրա չէ թէ վրէժխնդիր ըլլալով. զի կանոն կուտայ քս. թէ այն բանն որ չես ուզեր որ քեզի ընեն՝ դուն ուրիշին մընէր. և այն բարի բանն որ կուզես քեզի ընեն, դուն ջանայ այլոց ընելու:

Հ. Ի՞նչ է որկրամոլութիւնն:

Պ. Է անկարգ բաղձանք ուտելու խըմելու, և մարմնաւոր ուրախութեան. որ հակապրելով բարեխառնուե, մարմնա-

արշա կընէ որկրամօլը, վասն զի թէպէտ սկիզբն այնչափ շնասահար չերեհար այս ախարը, սակայն երբոր կը տիրէ՝ բոլորովին մարդկութի կը հանէ՝ նման խոզի շահեւորութի, և արբեցութի: Այնպիսի մարդը ծառայ ասպականութի կը կոչէ պետրոս առաքեալ. զի որով իւրբ յաղթի ոք, նորին և ծառայ է: Իբր շուն դառնայ ՚ի փսխած իւր, և իբր խող լուացեալ՝ ընդ տիրմ թաւալեալ:

Հ. Ի՞նչպէս կըլլայ մահու չափ ծանր մեղք:

Պ. Երբոր որկրամօլն այնչափ ուտելու խմելու կլնի, որ շնաս կը բերէ մարմնոյն և մտայը. այսինքն երբոր առողջութիւր կը կորանցնէ, կամ մտքին ուժը կը տկարանայ ուտելով խմելով, ու այ դէմ մեղանչելով կը պատասպարտի: Եւ ով որ մարդու արիւն, և միս կուտէ անդթութեամբ և առանց պատճառի, մեծապէս կը մեղանչէ որպէս որկրամօլ:

Հ. Երբ կրկին կը մեղանչէ:

Պ. Որկրամօլը կրկին կը մեղանչէ, երբոր չափազանց կուտէ կը խմէ արդէլած օր. այսինքն ծոմ և պաք օր. զի ոչ միայն բարեխառնութի դէմ կը մեղանչէ, այլև եկեղեցական պատուիրանաց դէմ: Այլ ինչ է եթէ հիւանդութի համար քիչ մի բանով աւրէ պաքն, որ բժշկին այնպէս պատուիրեր է. զի բժշկաց հրամանին դէմ պէտք չէ ընել: Սակայն շատ

մարդ կայ, որ սուտ և փուռ՝ հիւանդու-  
 թիւնն պատճառ բռնելով կը խորասակէ  
 եկեղեցական պատուիրանը գայթակղու-  
 թիւն տալով, և չարաչար մեղանչելով,  
 զի եկեղեցնայ անհնազանդն՝ է ւնյ ան-  
 հնազանդ: Եթէ եկեղեցւոյն ոչ լուիցէ,  
 եղիցի քեզ իբրև զհեթանոս և զմաք-  
 սաւոր. ասաց ւորն մեր:

Հ. Ի՞նչ է արբեցութիւն:

Պ. Է որկրամոլութիւն, և անկարգ  
 սէր խմելու. որ աւելի մնասակար և ող-  
 բալի չար մեղք է. անոր համար ասաց  
 առաքեալը, թէ արբեցողք զարբայու-  
 թիւնն ւնյ ոչ ժառանգեն. վասն զի մար-  
 դուն մարդկութիւնը և խելքը կը հանէ  
 իրմէն ու անբան անասուն կընէ: Ա՛չ ա-  
 մօթ գիտէ արբեցողը և ոչ երկիւղն ւնյ.  
 Բոլորովին կը խանգարի միաբը. չիմանար  
 ուր պառկեր է, և ինչ կընէ. շատ ան-  
 գամ ճամբուն վրա կիյնի, և շներուն  
 հետ կը պառկի, ու կը խօսի այն մարդն,  
 որ երբ մարդու մէջ կը մանէր, ամէնքը  
 ոտք կելէին, ինչպէս տեսանք:

Հ. Ի՞նչ է գեղը:

Պ. Կրնամ ըսել թէ այս չար ախտն է  
 անբժըշկելի և անգեղ, երբոր արբե-  
 ցոյն սովորութիւն ըրեր է երկան ժամա-  
 նակով. որ ՚ի սկզբան դիւրին էր գեղը,  
 կրնար զինքը մահացնելով, և կամքը կոտ-  
 րելով չի խմել, և իրեն առիթ չտալով  
 հեռու կենալ. սակայն երբոր գազանն  
 այնչափ աճեցաւ դժւար է ազատիլ. մեծ

վտանգի մէջ է հոգևոր և մարմնաւոր .  
 ուրեմն պէտք է ամէն մարդ զգոյշ կե-  
 նաւորով 'ի սկզբան, այսպիսի չար սովորու-  
 թէց չի հեռելի . այլ հեռու վասիչի ոչ  
 միայն արբեցութի, այլև որկրամտութե-  
 թի, և անկարգ ուրախութեց, և բաղ-  
 ձանաց . ուսկից կը ծագի մոլութիւն և  
 մեղք ընդդէմ անձային սրատուիրանաց .  
 զի ամէն բան փոքրէն կըսկըսի . եթէ  
 փոքր պակասութիւնը զանց առնես, սո-  
 վորութիւն ըլլալով կը մեծնայ, և կա-  
 սրականէ անդարման . ոչ ոք եղև յան-  
 կարծ յոռեգոյն՝ ասաց փիլիսոփան :

Հ . Ի՞նչ է ծուլութիւն :

Պ . Է անկարգ գաղջութի և ձանձրու-  
 թի աշխատելու . որով կը բաղձայ ծոյն  
 անգործ մնալ՝ առանց կատարելու սրատ-  
 քը : Այս ախտ մարդն անսխտան և ատելի  
 կընէ . թէպէտ ծոյն ուրիշին մնաս չու-  
 նի . բայց իր անձին մեծապէս մնասելով  
 մահուչափ կը մեղանչէ . մանաւանդ եր-  
 բոր հոգևորին ծուլութի ընելով կը  
 ձանձրանայ պահք պահելու, և սրատ-  
 րագ տեսնելու, տաղտկանալով անբարե-  
 րարութեցն վրա, և խորհուրդներու, վրան  
 ասելով, երանի՛ թէ չըլլային . և չուղե-  
 լով լեցրնել անձային և եկեղեցական պա-  
 տուիրաններն : Այն որ գործէ զգործ ան  
 հեղգութեամբ, ասագ իմաստունն :

Հ . Ո՞ր է ծուլութե ծնունդը :

Պ . Այս ախտէն կը ծագի տատա-  
 նու մն մտաց, կը մոլորի չիյտէ թէ ինչ

ընէ . թմրութի , որով չուզէր տեղէն շարժիլ . վատասրտութիւն , որով ամէն գործքի մէջ զինքն անպիտան և վատ կերեցնէ . և յուսահատութի , որով բոլորովին զօրութին ու ուժը կը կորսնցնէ . հոգւով մարմնով կապահանի , այ և մարդոյ ատելի կըլլայ : Այսպիսիներուն կըսէ սողոմոն՝ երթ առ մըջիւնն ո՛վ վատ . գնա՛ մըջունէն օրինակ առ ո՛վ անպիտան ծոյլ . տես թէ ի՞նչպէս կաշխատի անդադար՝ բոլոր ամառը կը ջանայ ապրուստ և ձմեռվան սրաշար ճարել . որպէս զի կեանքը պահէ ձմեռն անօթի չի մեռնի :

Հ . Ի՞նչպէս պիտի ազատինք այս ախտէն :

Պ . Գիշեր ցորեկ աշխատելով , և ջանալով թէ մարմնաւոր հարկաւորութե համար , և թէ հոգևորին առանց ձանձրանալու , զի թէ բնունն երբեմն հանդիստ ուզէ , պէտք է կրթել , որ դատարկութե չի սորվի . որ է մայր ամենայն չտրեաց , և միշտ յնասակար հոգւոյ և մարմնոյ : Ժրաջան և աշխատաւոր մարդն է սրանձալի և սիրելի ամենուն . դուով հոգևոր՝ դատարկութիւն չսիրէր , որկրամոլութե և ուրիշ ախտերուն չհեռակիր . ամէն ախտից ազատ ըլլալով բարի առաքինի և անձաւոր կըլլայ . նաև օրինակ բարի ամենուն և նման քնի , որ մեզ օրինակ տալու համար այնչափ վշտուցաւ և չարչարեցաւ . որպէս զի մահա-

ցրենք զմեզ և բարոյական կատարելու  
 թեամբ ստակ վինք : Ուրեմն ասկէ ետև  
 մասնաւորապէս զմեզ կրթելով այս չա-  
 փասերէն հեռու փախչինք , որ են  
 եօթնգլխեան վիշապ . որուն մէկ գլուխն  
 ալ բաւական է մեզ կորսնցնելու . հե-  
 տկինք քնի սքանչելի սբ վարուցն , ան-  
 դադար սրահելով և ասպաշխարելով : Ընդ-  
 քնի սրահելով յաղթօղ լիցուք փորձողին,  
 և ընդ հրեշտակս երգեսցո՛ւք փառք 'ի  
 բարձունս Ի՛յ :



# Դ . Տ Ե Ղ Ե Ի Ե Ր

Վ Ե Ր Դ Ա Պ Ե Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Խ Ո Ր Հ Ր Դ Ո Յ



Լ Ը . Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ . Ի՞նչ միջոցով պիտի արգարանայ մարդն սկզբնական և ներգործական մեղքերէն:

Պ . Որովհետև մարդս պարտաւոր եղաւ սկզբնական մեղօք աւամայ . նաև տկար ըլլալով անհնարին է որ միշտ միակերպ արգար մնայ . այլ շատ անգամ կիյնի և կը պարտաւորի ներգործական մեղօք , կամ պատուիրանազանցութե . ուստի թէ սկզբնական և թէ ներգործական մեղքերէն ազատելու համար քսն տրն մեր դէղ և միջնորդ տվաւ մարդուս , որ են եկեղեցնայ խորհուրդներն :

Հ . Ի՞նչ կը նշանակէ :

Պ. Խորհուրդն է նշան խորհրդական .  
 և այնպիսի նշան քսէ գրված , որ ունի  
 գաղանի զօրութի , որ է շնորհք . որով  
 կարգարանայ մեղաւորը , և կը զօրանայ  
 տկարը . աղքատը կը փարթամանայ , և  
 մեռած հոգին մեղօք՝ յարութիւն կառ-  
 նէ շնորհօք :

Հ. Ի՞նչ կըսվին :

Պ. Խորհուրդք քրիստոնէական կրօնի  
 կըսվին՝ որ կը բերեն շնորհքն այ : Թէ-  
 պէտ գրեթէ ամէն ազգի մէջ կան խոր-  
 հրդական նշաններ . բայց չեն ճշմարիտ  
 խորհուրդ . ինչպէս հրէայք ունէին միջը-  
 տութիւն որ կը լվացվէին գետը , կը խոս-  
 տովանէին իրարու իրենց մեղքը . նմա-  
 նապէս հին կռասպաշտից օրէնքներուն  
 մէջ գտանք , որ բնական խելքով հաս-  
 կըցեր էին , թէ առանց խորհրդոյ կրօն  
 չըլար , զանազան խորհրդական նշաններ  
 սահմաներ էին . ոմանք լվացվելով կը  
 համարէին արդարանալ . ինչպէս հնարս-  
 տանցիք մինչև հիմա գանդէս գետը կը  
 մտնեն որ արդարանան իրենց մեղքէն .  
 ասոնք ունին հին օրէնք որ կըսէ . խոս-  
 տովանեա՛ զյանցանս քո որդւոց քոց  
 արեւու և մարդկան , և մաքրեա՛ զքեզ ՚ի  
 գետն գանդէս : Ոմանք կուռքին ըն-  
 ծայած հացը կուտէին և մեռելին պա-  
 շար կուտային , ինչպէս հին եգիպտացիք .  
 որոնց չորս հազար տարւան մեռելը տե-  
 սանք ամբողջ կեցած՝ որուն գոգը հաց  
 դրեր էին . բայց ասոնք ամէնն են սատուր

Ճշմարիտ խորհրդոց քրիստոնէական  
կրօնի :

Հ . Ի՞նչ ըսել կուզէ խորհուրդն է  
նշան :

Պ . Վասն զի խորհուրդը կը բերէ  
չնորհք , որ չեքենար . միայն հաւատքը  
կը տեսնէ . ապա այն նշանն որ աչքով  
կը տեսնենք կամ մկրտութիւնով և կամ օծ-  
վելով ունի ներքին խորհուրդ , կամ նշա-  
նակութիւն . որ է սրբացուցումն , կամ  
չնորհք . որ նոյն գործողութիւն կը սլատ-  
ճառի : Ուստի նշանը կրնանք ըմբռնէր  
զգայութիւն . զի այնպիսի բանէ բաղադրած  
է , որ կը տեսնենք և կը շօշափենք , նաև  
խօսքերը կը լսենք , որ կը ավին նիւթ , և  
ձև խորհրդոց :

Հ . Քանի՞ են գործք խորհրդոց :

Պ . Երկու են գործք խորհրդոց . մաս-  
նաւոր և հասարակ . մասնաւորն է կը-  
նիքն , որ ենթակայն կրնողունի կամ կը  
սպաւորի հոգին , և ոչ երբէք կեղծանի  
և կը կրկնի . որ կը լայ մկրտութիւն , գրոշ-  
մով , և քահանայական կարգով վասն զի  
մէկալ խորհուրդները կրնան կրկնելի , և  
կրնան նորոգվիլ . զսրբութեան սպաշխարող  
արդարը մեղօք կը կորսնցնէ արդարու-  
թիւր , և մինչև որ չի նորոգվի չի կրնար  
արգարանալ . բայց մկրտեալը , նաև քա-  
հանայն թէ և մեղանչէն և ուրանան ,  
միշտ են մկրտեալ և քահանայ . զի կնիքը  
սպաւորած է իրենց հոգին . ուստի չի  
կրկնիր :

Հ. Ի՞նչ է հասարակ գործքը :

Պ. Հասարակն է շնորհն, որ ամէն խորհուրդ կարտագրէ, և կատարեալ քրիստոնեայ կրնէ զայն՝ որ վաւերաբար և օրինապէս կրնոյ ունի, և կըլլայ արդար. ինչպէս նրա աւետարանը այլևայլ տեղ կը վարդապետէ, և քն գործքով յայտնեց մկրտութիւն՝ մկրտվելովը, զորոշմը՝ տալով հոգին նրա, հաղորդութիւն՝ վերնատան մէջ, ապաշխարութիւն և թողութի մեղաց. վերջին օծումն, ինչպէս սրատուրեց առաքելոց, որ խլով կօծանէին հիււանդը. կարգը՝ ձեռնադրելով առաքեալները. և սրահն, որ արդէն անձ գրեթէ բնական օրէնքով :

Հ. Քանի՞ են խորհուրդք :

Պ. Խորհուրդք եկեղեցւոյ են եօթն. մկրտութիւն, գրոշմ, հաղորդութի, ապաշխարութի, վերջին օծումն, կարգ, և սրահ. ուր մկրտութիւնն ու ապաշխարութիւնը միայն կըսվին խորհուրդ մեռելոց. զի չի մկրտվողը չունի շնորհք, և կը համարի մեռած. նոյնպէս մահուցանի մեղանչողը, թէպէտ մկրտեալ է, մեռած է մեղօք. թւաթի այս երկու խորհուրդն ընդունելով կը կենդանանան. ըստ այնմ. Ուր մկրտեցի՝ կեցցէ. ապաշխարեցէք և հաւատացէք յաւետարանն :

Հ. Որո՞նք են խորհուրդ կենդանեաց :

Պ. Մնացեալ հինգ խորհուրդները կըսվին խորհուրդ կենդանեաց, որով

հետև կընդունին անոնք որ սրբարար շնորհքով կենդանի են . և նոյն կենդանու թեամբ երբոր կընդունին գրոշմ, կամ հաղորդութի, կամ վերջին, կամ քահանայութի և կամ պսակ օրինաւոր արամադրութեամբ՝ կընդունին զաճումն շնորհաց :

Հ . Ինչո՞ւ համար եօթն են միայն խորհուրդք եկեղեցւոյ :

Պ . Եօթը խորհուրդ ունին համեմատութիւն մարդուս կենացն հետ . զի որպէս մարդը կը ծնանի, կը զարգանայ, կը սնանի, կը բժշկի, կը զօրանայ, կը կառավարի, և կաճի . այսպէս եօթն ըլլալով խորհուրդներն՝ մկրտութեամբ կը ծնանի նոր մարդ . գրոշմով կը զարգանայ, հաղորդութեամբ կը սնանի, ասպշխարութեամբ կը բժշկի, վերջին օժմամբ կը զօրանայ, կարգով կամ քահանայութեամբ կը կառավարի, և պսակով կաճի կը շատնայ :

Հ . Ո՞րն է առաջին խորհուրդն եկեղեցւոյ :

Պ . Է մկրտութիւն, որ կընէ զմարդը քրիստոնեայ, որդի Իսայ և եկեղեցւոյ . ուստի երբոր երեխայն կը մտնէ աւազանին ջուրը և քահանայն վրան ջուր լեցնելով ամենամբ երրորդուէ անուամբը կը մկրտէ, նոյն կէտին կը մաքրի սկրզնիական մեղաց . թէ որ չափահաս մեղաւոր է, կազատի նաև նոյն ներգործական մեղաց, իբր զի՝ որպէս ջուրը մար-

ժինը կը ըլայ, նոյնպէս հողին սք զհողի մկրտովուն կը մաքրէ. անոր համար կըսվի խորհուրդ հարկաւոր և աւանց անոր՝ մարդ չի կրնայ փրկիլ, ըստ այնմ. Եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի հողոյ ոչ կարէ մտանել յարքայութիւնն ւայ:

Հ. Ինչո՞ւ կըսվի երկրորդ ծնունդ:

Պ. Ասան զի ջնջելով սկզբնական մեղքը՝ նոր կեանք կառնէ և հողւորապէս կը ծնանի որդի եկեղեցոյ և որդի ւայ. մինչ զի՝ մկրտեալն իրաւամբք կըլլայ Ժառանգ երկնային Թագաւորութեան. զի այս վախճանին համար քս սահմանեց այս խորհուրդը երբոր մկրտելովն յորդանան սրբեց ջուրը, և հրամայեց որ ամէն հաւատացեալ մկրտվի, և սրբի ամենայն մեղաց. ըստ այնմ. Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զիսսս յանուն հօր և որդոյ և հօգւոյն սք:

Հ. Երբ չեն կրնար մկրտվիլ ինչ պէտք է ընել:

Պ. Եղան միամիտներ որ ըսին, եթէ ջուր չըլլայ, Թող լայ ու արտասուենքովը մկրտվի. որ է տգիտական խօսք. զի մկրտութեան ջուրը պիտի ըլլայ բնական ջուր աղբիւրի կամ գետի, և կամ ծովու, ևն: Ապա իրեք կերպ մկրտութի կայ. այսինքն մկրտութիւն ջրոյ, և այս միայն խորհուրդ կըսվի. մկրտութիւն սրոյ. որ կըլլայ մարտիրոսութիւն. և մկրտութի սիրոյ, որ բաւական է ունենալ կատարեալ

սէր և փափաք մկրտովէլու : Ուստի եթէ  
երեխայն վասն քսի սպանվի, կը համա-  
րի մկրտեալ . ինչպէս եղան մանկունք  
բէթղէհէմի . իսկ չափահասը չի կրնալով  
մկրտիլ՝ թէ որ հաւատալով ընէ ներդոր-  
ծուի զղջման և սիրոյ՝ կը մկրտի բաղձանօք :

Հ . Ի՞նչ կը պարտաւորէ մկրտութեան  
խորհուրդը :

Պ . Աը պարտաւորէ հաւատալ և խոս-  
տովանիլ վարդապետութիւնն յսի քսի .  
նաև հրաժարիլ ՚ի սատանայէ, յամե-  
նայն խաբէութենէ նորա . և ՚ի չար  
գործոց նորա . որ եթէ մկրտվողն չափա-  
հաս է՝ նախ պիտի սորվի և զուրցէ . իսկ  
եթէ տղայ է՝ կնքահայրը պիտի խոստա-  
նայ մկրտութիւնն առաջ եկեղեցնայ դուռն  
ըստ ծիտի եկեղեցւոյ, և այնպէս կը մտնէ  
ներս :

Հ . Ի՞նչ կը պարտաւորի կնքահայրը :

Պ . Որովհետև հոգևոր ազգականութի  
կրտանայ թէ տղուն և թէ ծնողացն  
հետ, կը սրտաւորի որ հոգ աւնենայ  
սանին վրա կրթելու և քրիստոնէական  
վարդապետութի սորվեցնելու . վասն զի  
երաշխաւոր է տղուն կողմանէ, և խօսք  
ավեր է անոյ, որ հրաժարի սատանայէ, և  
ամենայն խաբէութենէ նորա, հրաժա-  
րի սշխարհային ունայնութենէ և ապա-  
կանութենէ մեղաց, որ է գործք սատա-  
նայի . ուստի թէ որ կնքահօրն անհոգ  
ըլլալովը տղան անկիրթ և գէշ մեծնայ,  
ինքը կըլլայ պարտական անոյ :

Հ. Ո՞վ է պաշտօնեայն մկրտութեան:

Պ. Կարգաւորեալ պաշտօնեայն է քահանայն . որ եթէ պակսի , սարկաւագն ալ կրնայ մկրտել . բայց հարկաւոր ատենը երբ կարելի չէ գտնել քահանայ ամէն մարդ թէ այր ըլլայ , և թէ կին՝ կրնայ մկրտել , միայն ամբողջ ջուր լեցընելով վրան և ասելով , մկրտի ծառայս յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ :

Հ. Բոլոր մարմինը պէտք է լուսցիլի:

Պ. Ըստ արևելեան ծիսի տղան ջրին մէջ պիտի մանէ , և քահանայն ամբողջ պիտի իրեք անգամ վրան լեցընէ . բայց հարկաւորութե ժամանակը միայն բաց գլխուն վրա լեցընէ ջուրը՝ բաւական է . սակայն բաւական չէ՝ թէ որ միայն մազը ըլլայ , կամ լոթին վրա լեցընէ , և կամ միայն ձեռքը և ոտքը մկրտէ . զի մարդը չի մկրտվիր ըստ հրամանին քսի :

Հ. Քանի՞ են գործք մկրտութեան :

Պ. Չորս են . նախ՝ հեղումն շնորհաց որով մեղքերը կը թողվին . երկրորդ՝ հեղումն հաւատոյ , յուսոյ , սիրոյ , և բարոյական առաքինութեց . երրորդ՝ տպաւորութի կնքոյ , որով կը ըլլայ եկեղեցնայ իշխանութե սակը . և չորրորդ՝ բարձումն սնկանոնականութե , որով կրնայ մանեւ եկեղեցական վիճակ : Ահա այսպէս է գերազանցութի քրիստոնէական կրօնին , և զօրութի այս սբ խորհրդին . որով մարդը ՚ի փառս կը բարձրանայ այսչափ շնորհօք : Ուստի ճանչնալով գերազանցութը

մեր սբ հաւատքին ոչ միայն կեանքերնիս  
 պիտի տանք անոր համար, ինչպէս մար-  
 տիրոսները տանջուիլով չուրացան սբ հա-  
 ւատքը և պսակեցան փառօք. այլև պի-  
 տի ջանանք առաքինական դործքով զօ-  
 րացնել մեր հաւատքը յոյսը և սէրը.  
 այնպէս որ՝ քսի նշանը վրանիս երևնայ  
 քրիստոնէական կատարելութեամբ և ան-  
 շնորհօք. ըստ այնմ. Ազբերացուսցես ՚ի  
 մեզ զշնորհ քո զողորմուէ, ար ամ խոս-  
 տովանեացուք հաւատով սբ զերրորդունն,  
 զհայր և զորդի և զսբ հոգիդ յաւիտեանս  
 ամէն :

ԼԹ. Կ Ի Ր Ա Կ Ի .

Հ. Ո՞րն է երկրորդ խորհուրդն ե-  
 կեղեցւոյ :

Պ. Ինչպէս որ մարդս ծնանելէն ետև  
 կը զարգանայ, այսպէս մկրտութիէ ետև  
 զարգանալով հոգևորապէս կը հաստա-  
 աի սբ հաւատքին մէջ ընդունելով երկ-  
 րորդ խորհուրդն, որ է դրոշմը :

Հ. Ի՞նչ է դրոշմը :

Պ. Է խորհուրդ եկեղեցւոյ, որ մկր-  
 տեալը զարգարելով անձային շնորհօք  
 կրնէ կատարեալ քրիստոնէայ, այսինքն  
 օժեալ. վասն զի ինչպէս որ քսի աշա-  
 կերաները մկրտեալ էին. բայց հոգե-

գալստեան օրը հոգին սբ առին, և շնորհազարդեցան. այսպէս և քրիստոնեայ մկրտեալը գրոշմ առնելով, կամ սբ մեռոնով օծվելով՝ կառնու հոգին սբ, ինչպէս կրսէ. դնէին ձեռս'ի վերայ նուցա, և առնուին հոգի սբ:

Հ. Միթէ մկրտութիւն միայն չե՞նք առներ հոգին սբ:

Պ. Այո՛, մկրտութեան ժամանակն ալ կառնուինք հոգին սբ, և անով կրկնիք քրիստոնեայ. ինչպէս քսի մկրտութե ժամանակն երևցաւ հոգին սբ աղանակերպ, այսպէս կուգայ ամէն մկրտելոց. սակայն գրոշմը նոյն շնորհքն աւելցնելով՝ հոգւով սբվ կը զարգարէ և կը զօրացնէ. այնպէս որ՝ երբ նախնի քրիստոնեայք կրնգունէին հոգին սբ գրոշմով, կրսկրսէին մարգարէանալ, չգիտցած լեզուները խօսիլ, և հրաշքներ գործել. ինչպէս կը սլատմէ զուկաս աւետարանիչը գործոց մէջ:

Հ. Ի՞նչ կը նշանակէ:

Պ. Դրոշմը կը նշանակէ կնիք և զօրութիւն. ինչպէս մէկ աման մի երբոր կնքած կըլլայ թագաւորական կնքով, թշնամի չի կրնար գաչելու. այսպէս երբ քրիստոնեայ հոգին կը գրոշմի կամ կը կնքովի հոգւով սբով՝ կը զօրանայ անհաւատից դէմ, նաև սատանային դէմ. մինչ զի՝ համարձակ կրնայ խոստովանիլ իւր սբ հաւատքը առանց երկիւզի. ինչպէս մանուկ աղաք նոյն զօրու-

Թեամբ շատ անգամ յայթեցին բըւ-  
նաւորայ :

Հ . Ե՛րբ կը արվի :

Պ . Որովհետև մկրտեալը զարգանա-  
լովն՝ աւելի կը հաստատովի հաւատքը, ա-  
նոր համար արևմուտք եօթը տարւանէ  
ետև կուտան գրոշմն . որպէս զի խոր-  
հըրդին զօրութին հասկընալով և լաւ  
արամագրեւով զինքն՝ ընդունի հոգին  
սբ . իսկ արևելեան եկեղեցեաց արարո-  
ղութին է , որ մկրտելէն ետև անմիջա-  
պէս կուտան , որպէս զի աղայութեան  
ատենէն զօրանայ շնորհօք և զինուոր  
գրվի քսի :


Հ . Ո՛վ կուտայ գրոշմը :

Պ . Դրոշմին պաշտօնեայն եպիսկո-  
պոսն է միայն . զի առաքեալներուն  
պաշտօնն ըլլալով , որոնց տվաւ քն ,  
մկրտութենէ ետև կուտային հոգին սբ .  
իսկ աշակերտները միայն կը մկրտէին ,  
յետոյ առաքեալները կը դրոշմէին . ինչ-  
պէս յայտնի է գործք առաքելոցէն . սա-  
կայն արևելեան եկեղեցիք ունին հին  
աւանդութիւն , որ սարգ քահանայն  
կը դրոշմէ :

Հ . Ի՞նչպէս կը դրոշմէ :

Պ . Սբ մեռնով մկրտվածին նախ ճա-  
կատն , և ապա ուրիշ զգայութիւններն  
օծելով կաղօթէ և կը կոչէ հոգին սբ ,  
որ կիջնի իւր շնորհաց պարգևօքն . եթէ  
ճակատը չօծվի՝ դրոշմ չըլլար . զի մար-  
դուն գլխաւոր մասն է գլուխը , և մաս-





նաւորատէս ճակատին վրա կերևնայ ա-  
մօթ, երկիւղ, և արիութիւն. որ ըսել  
է թէ հաւատքի համար ոչ երկիւղ  
պէտք է ունենալ, և ոչ ամօթ :

Հ. Ի՞նչ է մեռոնը :

Պ. Սբ մեռոնին նիւթն է ձէթ և բա-  
լասան, որուն ծառը կըսվի մեռոնի  
ծառ. մեր ազգը, ինչպէս յունացն ալ՝  
սովորութիւն ունի որ ուրիշ զանազան  
անուշահոտ ծաղիկներ ալ կը խառնէ սբ  
մեռոնին պատիւ ըլլալու համար :

Հ. Ո՞վ կօրհնէ :

Պ. Ամէն ազգաց եպիսկոպոսները  
կօրհնեն. իսկ մեր ազգին մէջ կաթողի-  
կոսները կօրհնեն շատ մեծ հանդէսով.  
որպէս զի աւելի յարգութիւն ըլլայ  
խորհրդին, և մեծ ջերմեռանդութիւն  
ժողովրդին : Նաև սբ լուսաւորչայ ա-  
ջովք կօրհնեն, և սրբոց մասունքնե-  
րը մէջը կը ձգեն նոյն պատճառին  
համար :

Հ. Ի՞նչ կը նշանակէ խառնումը նիւ-  
թերուն :

Պ. Ձէթը կը նշանակէ առտա չը-  
նորհն հոգւոյն սբյ որ կիջնի. բալասա-  
նը կը նշանակէ զօրութիւնն, որով  
քրիստոնեայն պատրաստ կըլլայ խոստո-  
վանիլ և դաւանիլ սբ հաւատքը. իսկ  
ծաղիկը կը նշանակէ անուշահոտ վարքը  
քրիստոնէին. որ ըստ առաքելոյն հոա-  
անոյշ կըլլայ քնի զանազան առաքինու-  
թեամբ և եղբայրսիրութեամբ :

Հ. Ի՞նչպիսի տրամադրութիւն պէտք է ընդունիլ գրոշմը :

Պ. Թէ որ չափահաս է՝ պէտք է ոչ միայն մկրտած ըլլայ, այլև կատարեալ ասպաշխարութիւն շնորհաց մէջն ըլլայ. որպէս զի աւելնայ շնորհքը գրոշմով. իսկ եթէ տղայ է, պէտք է նախ մկրտուի, և կնքահայրը, նաև իւր մերձաւորքը ներկայ ըլլան աւագանին քով. որոնք փոխանակ տղուն պիտի բանան սրտերնին ճշմարիտ և հաստատ հաւատով յուսով և սիրով. որպէս զի՝ անոնց հաւատքովը տղան ընդունի հոգին սուրբ :

Հ. Այս խորհուրդն հարկաւոր է մեր փրկութեան համար :

Պ. Այնպիսի հարկաւոր չէ, որ առանց ասոր չի կարենանք փրկուիլու, ինչպէս է մկրտութիւնը. սակայն մեծ մեղք կըլլայ՝ թէ որ մեկը զանց առնէ չի գրոշմի. որ գիւրին կիյնի թէ սասանայի փորձութիւն մէջ, և թէ աշխարհի փորձութեան մէջ :

Հ. Քանի՞ են գործք գրոշմին :

Պ. Երեք. նախ՝ աճումն շնորհաց. զի կընդունի լոումն հոգւոյն սբյ. երկրորդ՝ առանձին զօրեղութիւն. որով կը հաստատուի հաւատքին մէջ առ ՚ի համարձակ խոստովանիլ առաջի բռնաւորաց. և անխախտ պահել. երրորդ՝ կնիք, որով կը կնքի իբր զինուոր քնի առ ՚ի պատերազմիլ ընդդէմ թշնամեաց և գիւաց :

Հ. Ի՞նչպէս կրնանք պահել գրոշմին շնորհքը :

Պ. Պէտք է հաստատ հաւատքով և բարի վարքով միշտ աղաչել հոգին սր, որ բնակելով 'ի մեզ՝ միշտ մեր սրտէն սրահաս չըլայ, և յայ մեզ հոգի խնաստուածեան, զօրութեան, երկիւղի, և անձապաշտութեան, ինչպէս շարականին մէջ կը խնդրենք, որ եօթնարփեան շնորհք զարգարէ զմեզ, և պահէ կատարեալ քրիստոնեայ և ճշմարիտ անձապաշտ :

Հ. Ո՞վ եղաւ այս խորհրդին գէմ :

Պ. Ինչպէս որ հին ատենն ելան կրկնակնուհի հերեօններ, որ մկրտութեան խորհուրդը կրկնելով կուղէին եղծանէլ՝ առաքելոյն խօսքին հակառակելով, որոնք գատապարտեցան, այսպէս այս խորհրդին հակառակող եղաւ կրտսն յակոբ ծանծալոս ասորի աղանդաւորն, որ տաք երկաթով կը գրոշմէր մկրտեալներուն ճակատը, ծուռ մեկնելով աւետարանին խօսքը, թէ նա մկրտեցէ ըզձեզ և հրով, որուն հետևողներն յակոբիկ ըսվեցան, բայց մեր սք վարդապետները հերքեցին և կը հերքեն թէ այս մոլորութիւնը և թէ աղանդաւորը :

Հ. Որո՞նք կը հակառակին այս խորհրդին :

Պ. Այն քրիստոնեաներն որ կամ կեղծաւորութեամբ անհաւատներուն առջին այլակերպ և անհաւատ կը ձևա-

նան, կամ ամբշնալով քրիստոնէական  
 կրօնն իրենց ամօթ կը սեպեն. և կամ  
 չար վարքով քրիստոնէութեան անուը  
 կաւրեն. այսպիսի մարդիկ ոչ միայն այս  
 սբ խորհրդին դէմ կը մեղանչեն, այլև  
 այ օրինաց դէմ մեղանչելով անհաւատ  
 և ուրացող կը սեպվին. զի ըստ սբ վար-  
 դապետաց թերեհաւատ է ով որ հա-  
 ւատքը ծածկելով կը կեղծաւորի. այս-  
 պիսին պիտի լսէ քսի ահաւոր վճիռը  
 թէ՛ Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ գիտեմ  
 զձեզ. 'ի բաց կացեք յինէն ամենե-  
 քեան, ոյք գործէիք զանօրէնութիւն :  
 Եւ այս վճիռն ըլլայ մեզ խրատ զգու-  
 շութե. որպէս զի արիանանք հաւատ-  
 քով և զօրանանք գործով յաղթե՛նք  
 սատանայի, աշխարհի, և մարմնոյ. և  
 այնպէս կոխելով աշխարհս երթանք  
 մեր զօրագլխուն քով սրսակալինք : Ա-  
 դաչանօք իծածնին անապական քում  
 ծնողին՝ զիմանալի աչս սրտից մերոց  
 բացցէս ողորմութեամբ հայիլ 'ի լոյս  
 քո քն :

## Խ . ԿԻՐԱԿԻ :

Հ . Ո՞րն է երրորդ խորհուրդն եկեղեցւոյ :

Պ . Ինչպէս որ մանուկը մեծնալով սննդեան կը կարօտի . այսպէս քրիստոնեայ հոգին յետ մկրտութեան , և յետ դրոշմով զօրանալոյն՝ պէտք է որ հոգեւորապէս սնանի անմահական հացով և բաժակաւ . որ է հաղորութիւն և երրորդ խորհուրդ եկեղեցւոյ , և հաստատեալ քնէ աւագ հինգշաբաթի վերնատան մէջ . երբոր ասաց աշկերտներուն՝ Առէք կերէք այս է մարմին իմ . Արբէք ՚ի ամանէ , այս է արիւն իմ :

Հ . Ի՞նչ է հաղորդութի :

Պ . Է խորհուրդ , որ կը պարունակէ իսկապէս և գոյացասէս մարմին և արիւն հոգի և անձութիւն տեառն մերոյ յնի քնի ընդ տեսակաւ և եղևմամբ հացի և գինւոյ : Ուստի քահանայն մաղըզմանին վրա գնելով հացը կամ բաղարջը , և սկիհին մէջ գնելով գինին , երբոր կըսէ էական խօսքը քնի , Առէք կերէք , և Արբէք . նոյն ատենը հացը կը փոխարկի կըլլայ քնի մարմինը . և գինին կըլլայ արիւնը . միայն տեսակը մնալով հացին և գինւոյն , այսինքն գոյնը՝ ձևը՝ և համը :

Հ . Երևցած նշխարքը միայն մարմինն է քնի :

Պ . Քնի մարմինը կենդանի ըլլալով

ունի արիւն՝ հոգի՝ և ձօնութիւն, որ էն անբաժանելի. նոյնպէս է բաժակին. զի քն տէրն մեր կատարելապէս կայ թէ նշխարքին և թէ բաժակին մէջ. և ոչ երբէք կը բաժնովի. նաև փոքրիկ մասին մէջն ալ քն ամբողջ կայ ճշմարտապէս, ըստ այնմ. Այսօր վերստին նորոգեցաք ՚ի յանկիծից նախահօրն ճաշակելով ըզմարմին և զարիւն որդւոյն աստուծոյ:

Հ. Ի՞նչպէս քն ձօնութեամբն ներկայ է խորանին վրա:

Պ. Քն թէպէտ աջակողմն է հօր նշ. ուստի պիտի գայ մեծաւ փառօք դատել զկենդանիս և զմեռեալս, ինչպէս ասաց քահանայապետին. բայց որովհետև ամենակարօղ և ամենակալ ձօն է, և ամէն տեղ ինքն է լեցուցեր. անոր համար ճշմարտապէս երկինքն է և ճշմարտապէս հաղորդութեան մէջն է, ըստ այնմ. Ես եմ հացն կենաց, որ յերկնից իջեալ: Եւ հացն, զոր ես տաց՝ մարմին իմ է. զոր ես տաց վասն կենաց աշխարհի:

Հ. Ո՞վ է այս մեծ խորհրդիս կատարողն:

Պ. Սկզբնաբար քն է կատարողը. բայց քահանայն կը կատարէ քնի խօսքովը և կը սրբադործէ իբր պաշտօնեայ քնի. նաև պատարագելով կը ներկայացնէ խաչելութիւնն քնի, որ գողգոթային վրա զոհ և պատարագ եղաւ հօր նշ:

Հ. Ինչո՞ւ համար քսն տէրն մեր կը ներկայանայ ընդ տեսակաւ հացի և գինւոյ :

Պ. Մեզի յայանելու համար, թէ ինքն է մեր հոգևոր կերակուրն, որ հաղորդուի կրնդունիինք. որպէս զի ինչպէս որ ինքը մեզի կրնծայի, մենք ալ իրեն հետ միանալով ընծայ ըլլանք այ հաւատքով և այսպէս իւր անծային շնորհքը կանցնի մեր հոգւոյն վրա: Ահա ասով յայանեց իւր անհուն ողորմութիւնը, և անչափ սէրը պարգևելով մեզ այս գերազանց շնորհքը. ուստի ջերմեռանդ հաղորդվողը կը միանայ քսնի հետ, կը զօրանայ շնորհք, և գրաւ կրնդունի երանութեան:

Հ. Քանի՞ են գործք հաղորդութիւն:

Պ. Երեք. նախ՝ աճումն շնորհաց. երկրորդ՝ թողութի ներելի մեղաց. երրորդ՝ միաւորիլ ընդ քսնի. ըստ այնմ. Որ ուտէ զմարմին իմ, յիս բնակեսցի և ես՝ ի նմա:

Հ. Ո՞վ կրնդունի հաղորդութիւնն:

Պ. Ամենայն մարդ մկրտեալ. բայց նախ պիտի արդար ըլլայ խոստովանութիւն. երկրորդ՝ ծով կէս գիշերէն ետև. իսկ թէ որ ծանր հիւանդ ըլլայ, ծով չի նայլիւր. նաև թէ որ խոստովանահայր չըլլայ՝ ծանր հիւանդը կաստարեալ զղջում ընելով կրնայ հաղորդվել սարկաւազին ձեռքովը:

Հ. Ե՛րբ պէտք է հաղորդվել:

Պ. Որովհետև հաղորդութիւնն է հոգևոր կերակուր՝ հարկաւոր է բարի հոգւոյն յաճախ հոգևոր սնունդ առնել. ինչպէս հին քրիստոնեաներն այնպիսի սք վարք ունէին, որ ամէն օր կը հաղորդվէին. բայց հիմա նոյն ջերմեռանդութիւր սակսելով՝ սք եկեղեցին կը վաւաքի, որ հաւատացեալք ամէն մեծ տօներուն, և տաղաւարներու հաղորդվին, և պատուիրեր է որ դէժ տարին անգամ մի զատկին հաղորդվին. թէ չէ՝ նզովեալ և արտաքոյ եկեղեցնայ կը սեպվին: Եւս առաւել՝ պարտական էիք հաղորդվիլ հիւանդութեան և մահուան ժամանակը. որպէս զի հոգևոր և մարմնաւոր առողջութիւն գանեիք. ըստ այնմ. Եթէ ոք ուտիցէ ՚ի հացէ յայսմանէ, կեցցէ ՚ի յաւիտեան:

Հ. Ի՞նչպէս պիտի պատրաստվինք:

Պ. Ամենայն երկիւղածութք պատրաստ պիտի ըլլանք, ոչ միայն ծով կենալով և խոստովանելով ապաշխարելով, այլև հաշտ ըլլալով ան հետ և ընկերոջ հետ. այսինքն ՚ի վիճակ շնորհաց ըլլալով և ան սիրովը վառվելով պիտի ներեիք այլոց պակասութիւր. ամենևին խէթ և խիղճ չունենալով անանկ պիտի մօտենանք ահաւոր խորհրդին. ինչպէս տէրը կը խրատէ, թէ պատարագին քովն ըլլաս, ու միտքդ դայ թէ ընկերդ խէթ ունի և չես հաշտըված, ճգէ պատարագդ նախ գնա՛ հեան հաշտըվէ, յե-

տոյ դարձիւր պատարագդ կատարէ :

Հ . Ո՞վ որ անպատրաստ կը հաղորդ-  
վի ի՞նչ կըսվի :

Պ . Անպատրաստ և խիղճմտանքով  
հաղորդվողն սրբապղծութիւն կը գոր-  
ծէ . որ է սարսափելի մեծ մեղք . մա-  
նաւանդ անոնք որ կամ չարութիւն մեղք  
կը պահեն , և կամ ամբշնալով . որոնք  
յուզայի նման սատանայի բաժին կըլ-  
լան . զի ըստ առաքելոյն՝ ով որ անար-  
ժանութիւն կը հաղորդվի՝ դատաստան ան-  
ձին իւրում և դատապարտութիւն կըն-  
դունի . ես եմ հացն կենաց ասաց քի .  
ասպա քի մարմնոյ և արեան պարտա-  
կան կը մնայ :

Հ . Նախ քան զհաղորդութիւն ի՞նչ  
զգուշութիւն պէտք է ընել :

Պ . Պէտք է զգաստութիւն լուռ կե-  
նալ , շատ չի խօսիլ . մէկին մէկալին վրա  
բան չի զուրցել և ոչ ծաղրաբանութի  
ընել . նաև օրինաւոր հեշտութեանց հե-  
ռու կենալ և մաքուր հագուստով մօ-  
տենալ սեղանին՝ ջերմեռանդ պատա-  
րագ տեսնելէն և աղօթքներն ընելէն  
ետև . որպէս զի մաքուր հոգևով և մա-  
քուր մարմնով միանայ անց հետ , և վա-  
ռէ սիրաբ սիրովն անց :

Հ . Ի՞նչ պիտի մտածենք :

Պ . Նախ՝ քի չարչարանքն ու մահը  
պիտի մտածենք մեր փրկութե համար .  
երկրորդ՝ անբաւ սէրն , որ սք չարչարա-  
նացն յիշատակը մնալու համար , և զմեզ

իրեն միայնեւ լու համար այս մեծ սքանչելի խորհուրդն հաստատեց ասելով .  
 Զայս արարէք առ իմոյ յիշատակի : Եւ այսպէս մտածելէն ետև ջերմեռանդ սրտով պիտի ընենք ներգործուի հաւատոյ, յուսոյ, սիրոյ, զղջման, խոնարհութե, երկրպագութե, և փափաքանայ . այսինքն բոլորով սրտով հաւատալ քսի բանիցն, յուսալ ողորմութեանը, և սիրել, խոնարհելով և գողալով զղջալ, և երկիրպագանել փափաքելով միանալ ընդ նմա :

Հ . Հաղորդութեան ատենն ի՞նչպէս կենալու է :

Պ . Մտենալով թագաւորաց թագաւորին՝ պէտք է աւելի ահով և ջերմեռանդութե աղօթել սրտանց , և մըտքով վերանալով առաջի ան, և առանց ուրիշ տեղ նայելու ընդունիլ ընդունին վրա ոք հաղորդութիւնն զգաստութե . և քիչ մի ատեն անշարժ կենալով պէտք է ճաշակել առանց ուշացնելու բերնին մէջ . և շնորհակալ ըլլալով երթալ իր տեղն աղօթք ընել՝ այն մեծ պարգևին արժանի ըլլալուն համար :

Հ . Յետոյ ի՞նչ պէտք է ընել :

Պ . Շնորհակալութե աղօթքները կատարելէն ետև , պէտք է աղօթել ծնողաց , ընկերաց , և ննջեցելոց համար , նաև աշխարհիս խաղաղութեանը համար . հոգևոր գրեանք կարգալով , թէ

նոյն օրը, և թէ՛ յետոյ բարեգործութիւն  
 և երկիւղածութիւն անցընելով, և միշտ  
 մտածելով, թէ ինչ մեծ պարգևաց ար-  
 ժանի եղաւ :

Հ. Ո՞վ հակառակեցաւ այս սբ խոր-  
 հրդիին :

Պ. Հաղորդութիւն խորհրդին հակա-  
 ռակեցան նախ՝ հին աղանգաւորներն .  
 երկրորդ՝ լուտերական և կալվինական  
 հերետիկոսներն . երրորդ՝ անսփռ չարա-  
 միաները . սակայն սբ եկեղեցին հան-  
 գերձ ընդհանուր սբ հայրապետներով  
 նշովեց զամէնն ալ, և հաստատեց ճշ-  
 մարտութիւնը քսի խօսքով թէ հացն  
 զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց  
 վասն կենաց աշխարհի : Եւ շարականն  
 ասէ, Որ կազմեցեր սեղան խորհրդոյ,  
 և արբուցեր յանմահական բաժակէն  
 սբց քոց առաքելոց այսօր՝ ի սբ վերնա-  
 առնն : Իայց զարմանալին այն է, որ  
 նոյն իսկ վօլթէն գլուխն անսփռից բռ-  
 նագատեալ ճշմարտութենէն այսպէս  
 կրսէ . Հաղորդութիւն որոշէ յամենայն  
 երկրաւոր բարեաց, և տայ միանալ մար-  
 դոյ ընդ այն . որ կայ ՚ի մարմնի և յա-  
 րեան մերում . յետ միանգամ և եթ  
 հաղորդութեան ո՞վ համարձակեացի մե-  
 ղանչէլ . անհնարին է արդարև ՚ի խոր-  
 հիւն զայսպիսի խորհուրդ, որ պահէ ա-  
 մենայն զօրութիւն զմարդիկ յառաքինու-  
 թիւ : Երանի՛ թէ ինչպէս որ ճանաչեց  
 այս ճշմարտութիւնը, այնպէս ալ գործ-

քով հետևէր. բայց մեզի բաւական  
խրատ ըլլայ այս շաբթու՝ որ ճանչցած  
նիս գործքով ալ սրահէնք : Յիծային  
կայծակունհան 'ի սրովքէից անհպէ ին  
անմաքրապէս մերձեցաք դ՛ու պարտա-  
սրան քում խորհրդոյն . շնորհեա զնոյն  
մաքրութեամբ 'ի թողութիւն մեզաց  
մերոց :

### ԽԱ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ. Ի՞նչ է պատարագը :

Պ. Է զո՛հ մարմնոյ և արեան յնի  
քնի՝ ընծայած սեղանին վրա ընդ տե-  
սակաւ հացի և գինւոյ : Իբր զի՛ ինչպէս  
հին օրինաց մէջ՝ անասունները զո՛հ կը-  
նէին սոյ, և անով իրենց մեղացը թողու-  
թի կըլլար, որ է՞ր օրինակ սբ պատարա-  
գին . նոյնպէս քն զո՛հ կամ պատարագ  
ըլլալով հօր սոյ՝ հին զո՛հը վերուց, ինքն  
եղաւ քաւիչ մեղաց պատարագան, որ  
թողուց յիշատակ իրեն չարչարանացն .  
ուստի ամէն արարողութիւն պատարա-  
գին՝ է կենդանի ներկայութիւն խաչե-  
լութեանն քնի :

Հ. Ի՞նչպէս կը տարբերին պատարա-  
գը և հաղորդութեան խորհուրդը :

Պ. Երկու բանով կը տարբերին .  
մէկմը որ պատարագ ըլլալու պէտք է

սրբագործել հացն ալ, գինին ալ : Բայց հաղորդութե բաւական է սրբագործել և ճաշակել մէկը միայն, այսինքն կամ հացն, կամ բաժակը : Երկրորդ՝ պատարագը գործողութիւն կրկնատարվի և կը վերջանայ. բայց հաղորդութիւնը կըմնայ քանի որ հացին կամ գինւոյն տեսակը անարատ կան. ուստի մասնատուփին կամ բաժակին մէջ պահածը կըսվի հաղորդութիւն, բայց չըսվիր պատարագ :

Հ. Ո՞ր բանով կը ներկայանայ քս պատարագին մէջ :

Պ. Սրբացուցմամբ. զի երբ կըսէ քահանայն. Այս է մարմին իմ. Այս է արիւն իմ. Ճշմարտապէս կը ներկայանայ քս. և ինչպէս ընծայեցաւ խաչին վրա, նոյնպէս կըլլայ պատարագին մէջ. բայց այս տարբերութիւն, որ խաչին վրա թափելով արիւնն ինք զինքն ընծայեց հօր իմ մեռնելով մեզի համար. իսկ խորանին վրա՝ կընծայէ հօր իմ մահն որ կըրեց, և արիւնն որ թափեց : Ուրեմն քրիստոնէայն պատարագին մէջ պէտք է մտածելով յնի չարչարանքն ելլել մտքով գողգոթայ լեռը և ցաւակցիլ մահուանը վրա. նաև ձեռամբ քահանային ընծայել զքս հօրն երկնաւորի :

Հ. Ինչո՞ւ համար հաց ու գինի կընծայեն պատարագին :

Պ. Զի հացն ու գինին է երկրիս ազնիւ բերքը. ինչպէս հին ազգերուն մէջն ալ սովորութիւն կար, որ քահանանե-

բուն տանելով հայն ու գինին ընծայ  
կընէին այ . նմանապէս քն տէրն մեր  
կամեցաւ , որ իւր մարմինին տեղը հայը  
կամ նշխարքն ըլլայ ընծայ . և արիւնին  
տեղը գինին ըլլայ ընծայ կամ պատարագ  
այ հօր . որ քահանայն ճաշակելով կը  
կատարի խորհուրդն : Եւ ինչպէս որ  
քնի մարմինէն և արիւնէն անբաժանելի  
է անբաժանելի , նոյնպէս անբաժանելի  
է հաղորդութենէն կամ բաժակէն . ուս-  
տի են երկրպագելի : Զի մարմին իմ ճըշ-  
մարիտ կերակուր է , և արիւն իմ ճըշ-  
մարիտ ըմպելի է : Ար ուտէ զմարմին իմ,  
և ըմպէ զարիւն իմ , ունի զկեանսն յա-  
ւիտենականս :

Հ . Քանի՞ բան կը նկատուի պատարագ-  
դին մէջ :

Պ . Նախ՝ նուիրումն և սրբացուցումն .  
երկրորդ՝ զոհ . որոյ պատկեր էր զոհն և  
կոչումն արբահամու . նաև առաջին  
դաշնագրութիւնն այ ընդ մարդոյ . եր-  
րորդ՝ ներկայութիւնն այ . չորրորդ՝ միա-  
ւորութի մարդոյ ընդ այ հաղորդվելով  
ի սբ սեղանոյ պատարագին քնի : Իսկ  
քնի չարչարանքը եօթը խորհրդով կը  
նկարվի . ա Աղօթելն քահանային ա-  
ւանդատան մէջ՝ քնի պարտեզին մէջ ա-  
ղօթելը կերևցրնէ . և դալով խորանին  
առջին բազկատարած աղօթելը՝ կը  
յայտնէ զօրանալն քնի հրեշտակէն . ք  
Սպաս դնելը՝ կը նշանակէ յնիմատնու-  
թիւն ու չարչարանք . ք Գիրք աւետա-

րան և հաւատաւքը՝ կը յայտնեն քսի վարդապետութիւն, որ չարչարանքովն յայտնեց և լուսաւորեց աշխարհ . ի Ողջոյն տալն՝ կը նշանակէ քսի ներելը թշնամեաց . Է Սրբացուցումն՝ քսի իրական կենդանի մարմին և արիւնը կը ներկայացնէ , որ եղաւ փրկութիւն աշխարհի . ի Բարձրացուցումն՝ կերևցնէ քսի խաչին վրա բարձրանալը . Է Ճաշակումը՝ կը նշանակէ քսի թաղումը : Իսկ սքաւարագին օրինակն էր տօն քաւութեանն , որ հրէայք կը կատարէին քիփուռ անուամբ թշրին ամսուն . և քահանայապետը սպասարագ կրնէր կարմիր և անարատ երինջ մի, որուն արեամբը կը սրբէին . որ էր օրինակ քսի ըստ առաքելոյն . քս միանգամ մատուցեալ սպասարագ առ ՚ի բառնալոյ զմեզս բազմաց :

Հ . Ի՞նչ վախճանաւ եկեղեցին կը մատուցանէ սպասարագը :

Պ . Առ ՚ի պաշտել արարիչն և հաճել խնդրելով շնորհք , և շնորհակալ ըլլալով բարերարութեցն . սւտի սպասարագին հետ եկեղեցին կրնծայէ ւայ նաև աղօթք և ուխտ ամենայն քրիստոնէից . որ միանալով ընդ սպասարագին շատ ընդունելի է ւայ . նաև նոյն իսկ հաւատացեալ ժողովուրդը կրնծայէ ւայ . որ է եկեղեցի միացեալ ընդ գլուխն քս . առ նոր համար սպասարագին մէջ կը յիշեն սուրբերն , որ սպասարագով սրբեցան և

ընծայեցան ւնց :

Հ . Ինչո՞ւ կը խնդրենք որ սուրբերուն աղօթքն ալ ընդունի :

Պ . Որպէս զի այս մեր պատարագին կցորդ ըլլան՝ վերի եկեղեցնայ սուրբերուն ուխտը, և վարի եկեղեցնայ ուխտը . նաև յիշելով մեռելներուն հոգին որ չեն հասած, ամէնը միանան սք պատարագին մէջ . զի քս հաւասարասլէս կը պատարագի ամենուն համար . ինչպէս կը հաստատեն լուսաւորիչ, ոսկեբերան . և այլ սք վարդասպէսքն :

Հ . Քանի՞ մասն կը բաժնըլի պատարագը :

Պ . Հասարակերէն իրէք . նու իրումն , սրբացուցումն , և ճաշակումն . ուստի բարի քրիստոնէայի սէսք է իրէք մասին ալ ներկայ գտլիլ , քահանային հետ միատեղ նուիրելով պատարագը , և հոգևորասլէս ճաշակելով հաղորդ ըլլայ քսի պատարագին և զարգարվի շնորհօք ըստ այնմ . ճաշակեցէք և տեսէք , զի քողցր է տէր : Եկա՛ք առ խամենայն աշխատեալք և ծանրաբեւեալք , և ես հանգուցից զձեզ : Այս Քրիստոսի բանն ըլլայ մեզի կրթուի . ասկէց ետև փափաքելով տեսնենք և հաղորդ ըլլանք սք պատարագին օրհնելով և շնորհակալ ըլլալով բարերարունէցն ւնց , որ այսպիսի մեծամեծ շնորհաց զմեզ արժանացուց : Որ բաշխամբ կենդանարար խորհրդոյ անսպական ճաշակամբն հրաւիրեաց :

զմեղ յերկնից արքայութիւն, զնա ամե-  
նայն ազնիւք օրհնեցէք հոգևոր երգով :

ԽԲ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Տ. Որն է չորրորդ խորհուրդն եկե-  
ղեցւոյ :

Պ. Է ապաշխարութիւն, որ բժշկե-  
լով տկար հոգին յարութի կուտայ .  
վասն զի ինչպէս որ ախտացեալ մարմի-  
նը գեղով կը բժշկի, այսպէս մեղաւոր  
հոգին, որ մկրտութիւն ետև տկարացաւ  
ապաշխարութիւն կառողջանայ . և այս  
վախճանիս համար քս գրաւ այս խոր-  
հուրդն յարութիւն ետև, երբ ասաց ա-  
ռաքելոց . Առէք հոգի նք . եթէ ումէք  
թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի . և թէ  
զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի :

Տ. Ի՞նչ է ապաշխարութիւն :

Պ. Ապաշխարութիւն ըստ որում բա-  
րոյական առաքինութիւն է ապա աշխա-  
րել . կամ ցաւիլ գործած մեղացը վրան  
վասն նոյ՝ հանդերձ առաջագորութեամբ  
այլ չմեղանչելոյ . իսկ ըստ որում խոր-  
հուրդ՝ կը մաքրէ մեղքն ու շնորհք կը  
բերէ ապաշխարողին . վասն զի ան կու-  
ղէ մեր փրկութիւնը . Ոչ կամիմ զմահ  
մեղաւորին, այլ զգառնալ նորա և ըզ-  
կեանն :

Հ. Որն է զգալի նշանն աներևոյթ շնորհացն :

Պ. Գլխաւորմն է զղջմամբ խոստովանութիւն, և արձակումն, որ քահանայն կուտայ ասելով՝ Արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց, յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոր է նշանակ և պատճառ ներքին արձակման, և թողութեան մեղաց սպաշխարողին :

Հ. Քանի՞ մասն ունի այս խորհուրդ :

Պ. Չորս. զղջում, խոստովանութիւն, արձակում, և ասպաշխարանք, որ է վաճարումն. վասն զի առ ՚ի ճշմարտապէս ասպաշխարել, պէտք է նախ սաստիկ զղջալ գործած մեղացը վրան. երկրորդ՝ խոստովանիլ բոլոր մեղքերը, երրորդ՝ արձակիլ քահանայէն. և չորրորդ՝ վաճարել հետզհետէ քահանային դրած ասպաշխարանքն :

Հ. Ի՞նչ է զղջումն :

Պ. Է ցաւ սրտի մեղացն համար, որով անարգեց զի՞ծ, հաստատ առաջագրելով սյլ ոչ մեղանչել բնաւ. որ եթէ առաջ գայ ՚ի սիրոյն ւոյ, կրնայ կատարեալ և խորտակման զղջում. իսկ թէ յերկիւղէ դատաստանին և դժոխոյ յառաջ գայ՝ կրժակ անկատար և բեկման զղջում : Ասրա ցաւ զղջման պէտք է ըլլալ ներգործական, ճշմարիտ, վասն ւոյ, և կարգեալ առ այս խորհուրդ յառաջ քան զարձակումն :

Հ . Ի՞նչպէս պիտի ըլլայ :

Պ . Կատարեալ զղջումը պիտի ըլլայ շարժեալ ՚ի հոգւոյն նոց, և ամբողջ հանդերձ անկեղծ առաջագրութեամբ . յուսալով թողութի գտանել, և սիրելով զի՞ծ իբր աղբիւր ամենայն արդարութեան . որ ձրի կարգարացնէ սլարզ վասն իւր անհուն բարութե : Ուրեմն եթէ ապաշխարողն այսպիսի զղջում՝ չունենայ՝ անկատար է, և կարօտ արձակման . և եթէ շատ մահացու մեղք ունենայ՝ ամէնուն վրա զլջայ, ու մէկին վրա միայն չի զլջայ կամօք, անօգուտ է : Նոյնպէս եթէ միայն բնական զլջմամբ առանց հաւատոյ ցաւի մեղքերուն վրա, անօգուտ է, չի կրնար արդարանալ և հաշտիլ ի՞նչ հետ :

Հ . Ի՞նչ է խոստովանութի :

Պ . Է ամբաստանութի բոլոր մեղացն, որ կը խոստովանի քահանային . որպէս զի արձակվի մեղքերէն . որ կատարեալ և վաւեր ըլլալու համար, նախ՝ պէտք է լաւ քննել՝ և առանձին մտածելով զլջալ, երկրորդ՝ պէտք է քահանային առջին որոշ սլարզ և անկեղծ զուրցել բացատրել բոլորն առանց պահելու . կամ առանց գոց անցնելու հանդերձ գլխաւոր սլարագայով . թէ չէ՝ սրբապըլծութի կրլայ . երրորդ՝ յանձն առնելով քահանային գրած ապաշխարանքն, ու արձակվիլ մեղքերէն :

Հ . Ի՞նչ է սլարագայն :

Պ. Պարագայն է որ կը թէթեցնէ, և կը ծանրացնէ մեղքը. և շատ պարագայ կայ, որ տեսակ մեղացը կը փոխէ. ուստի հարկ է բացատրել ամէն պարագայն. զորօրինակ է թէ գողնայ ընկերին բանը՝ է գողութիւն. իսկ է թէ գողնայ եկեղեցնայ մէջէն եկեղեցնայ բանը՝ է սրբապղծութիւն. է թէ բամբասէ ընկերն է մեղք. և է թէ բամբասէ քահանայն՝ կը ծանրանայ մեղքը պարագայէն. ուրեմն ոչ միայն պարագայն, այլ թէ քանի անգամ գործեր է, պէտք է յայտնել քահանային. կամ թէ ինչպիսի անձի հետ, երբ, և ուր եղեր է:

Հ. Քանի տեսակ խոստովանութիւն կայ:

Պ. Երկու, մասնաւոր, և ընդհանրական. մասնաւորն է ամբաստանութիւն այն ամենայն մեղաց, որ խոստովանութիւն է տալ գործեր ենք. իսկ ընդհանրականն է մանկութիւն ի վեր, կամ երեւելի ժամանակէ ետև ինչ մեղք որ եղեր է՝ կը խոստովանինք: Հին ատենը կար և հրապարակական խոստովանութիւն, երբ ասպաշխարօղն եկեղեցնայ մէջ և բազմութիւն առջին բարձր ձայնով մեղքերը կը խոստովանէր խոնարհելով առաջի անձի. ինչպէս կը յիշէ օսկեբերան. հիմա չի կայ այս սովորութիւնը:

Հ. Երբ պէտք է խոստովանիլ:

Պ. Սուրբ վարդապետները կը սուկան, թէ ինչպէս մեղաւորը մահացու

մեղքով կրնայ քնանալ. և ի՞նչպէս մէկէն չի խոստովանիր, որ յաւիտենական վասնդէ ազատի. ապա ամէն ծանր մեղք պէտք է շուտով խոստովանիլ. իսկ ներքելի մեղքը ևս շատ պէտք է ուշացնել. այլ ամէն տօն օր պէտք է խոստովանիլ և արդարանալ:

Հ. Խոստովանութենէ առաջ ի՞նչ պէտք է ընել:

Պ. Նախ և առաջ պէտք է բարակ քննել խիղճմտանքնիս և որոնել մեղքերնիս ամենայն զգուշութեւ. որպէս թէ նոյն օրն օր առ ջին պիտի ելլենք պատասխան տանք. որովհետև առանց լաւ քննելու և ճանչնալու մեղքերնիս՝ անհնար է զղջալ և լաւ խոստովանիլ: Սակայն աղէկ ըլլալու համար պէտք է նախ լոյս խնդրել ստեղծողէն առ ՚ի լաւ քննել, և շնորհք առ ՚ի զղուիլ մեղքերէն:

Հ. Ի՞նչպիսի մտադրութեւ:

Պ. Շատ մեծ մտադրութի պիտի ունենանք լաւ քննութեւ համար. զի քան զայն աւելի մեծ հարկաւոր գործք չունինք, զանազանելով ինչ տեսակ մեղք էր և քանի՞ անգամ ստատահեցաւ թէ խորհրդով, թէ խօսքով, թէ գործքով, և թէ զանցառութեւ ընդդէմ օր և եկեղեցնայ պատուիրանաց. ընդդէմ ընկերին, և ընդդէմ բուն անձնական պարտաւորութեւ: Եւ այսպիսի քննութիւն ոչ միայն խոստովանութեան ատենը

պիտի ընենք, այլ ամէն իրիկուն մեր  
գործքը քննելով պարտական ենք զղջա-  
լու. որպէս զի խոստովանութեան ժա-  
մանակն գիւրին և աղէկ կարենանք  
զղջալու :

Հ. Ի՞նչպէս է ներգործութիւն  
զղջման :

Պ. Ա՞ծ իմ, զղջամ և ցաւիմ բոլորով  
սրտիւ 'ի վերայ ամենայն մեղաց խնոց-  
որով արատեցի զիմ անարատ հոգի, և  
անարգեցի յիս չարաչար զպատկերերկ-  
նաւորիդ՝ կացուցանելով զիս անարժան  
հայրսինամ բարութեց քոց, և արժա-  
նի յաւիտենական պատժոց, զրկեալ  
յարարչէի և տարադիր յարքայութիւդ՝  
ժառանգ եղեալ գեհէնին : Սակայն  
լուր պաղատանացս, գո՛ւթ արկցէ 'ի  
քեզ հեծութիւն իմ. մեղայ յերկինս և  
առաջի քո. ցաւիմ, զի զայրացուցի  
զերկնաւոր հայրդ գթած և բարի, ողոր-  
մած և մարգասէր : Այսուհետև կամիմ  
մեռանիլ, քան թէ մեղանչել, ահա  
հաստատութեամբ առաջագործմ այլ ոչ  
ևս մեղանչել նք շնորհօք քո : Ամենա-  
կալ քաւեա զմեղս իմ, զի լծ ես ա-  
պաշխարողաց : Արդ անկեալ աղաչեմ  
փրկիչ և բարերար. խնայեա՛ յիս 'ի մե-  
ղուցեալ ծառայս, և ողորմեա՛ ինձ բազ-  
մամեղիս :

Հ. Խոստովանողը զղջումէն ետև ի՞նչ  
պիտի ընէ :

Պ. Պէտք է երթալ երկիւղած խո-

նորհուծք քահանային սբ աջն ու օրհնուծին առնել՝ և ծնկան վրա գլուխը ծռած ասել. Հայր մեղայ յերկինս և առաջի քո, ահա՛ խոստովանիմ առաջի ւնյ, սրբուհւոյ ւծածնին, և ամենայն սրբոց. շատ անգամ պակասելով ՚ի սիրոյն ւնյ և ընկերիս՝ բարկացուցեր եմ ստեղծօղս. մեղայ վայ ինձ. կառաջարեմ ոչ ևս մեղանչել վասն սիրոյն ւնյ : Անկէտեալ խոստովանահօրն պիտի բացարեք որչափ ժամանակ է խոստովանանքը, և ինչպէս կատարեր է ապաշխարանքը : Յետոյ կսկըտի պարզ խօսքով պատմել թէ՛ մեղաց տեսակն, և թէ՛ թիւն. քանի՞ անգամ, ո՛ւր, ե՞րբ, ի՞նչ անձի հետ, և՛ն :

Հ. Ամէն մեղք պատմելէն ետև պարզմտուծք, ի՞նչ պիտի ընէ :

Պ. Խիղճը հանդարտուծք լաւ մաքրելէն ետև, աղէկ մտիկ դնելու է քահանային խրատներուն, և դրած աստուծ խարանքն սիրով յանձն առնելէն ետև, պէտք է զզջարով ասել. Հայր սբ զքեզ ունիմ միջնորդ հաշտուծէ, և բարեխօս առ միածին օրդին ւնյ. զի իշխանուքն որ տուեալ է քեզ, արձակեացես զիս ՚ի մեղաց խնոց :

Հ. Արձակումէն ետև ի՞նչ պիտի ընենք :

Պ. Պէտք է նորէն խոստովանահօր աջն առնել, երթալ առանձին տեղ չոքած շնորհակալ ըլլալ ւնյ, որ զինքն ար-

Ժանի ըրաւ թողու թէ, ինդրելով խո-  
նարհու թի շնորհք. որպէս զի ըրած ա-  
ռաջագրու թեր վրա հաստատ մնայ, և  
առած շնորհքը չի կորսնցնէ, հեռու  
փախչելով առ ի թներէն, չար սովորու-  
թիներէն, չար ընկերներէն, և դատար-  
կու թէ. նաև աղօթքի պարապելով, և  
միշտ յիշելով առաքեալին խօսքն, թէ  
ահիւ և դողու թի զվրկու թի անձանց  
դործեցէք :

Հ. Եթէ արձակու մն գրով ըլլայ, ար-  
դեօք կարձակվի :

Պ. Ոչ երբէք. զի ասպաշխարօղն բեր-  
նով պիտի խոստովանի և արձակու մն ի-  
րեն վրա պիտի ըլլայ, որ ըստ արևելեան  
սովորու թէ՛ քահանայն աջը խոստովա-  
նողին գլխուն վրա դնելով կուտայ ար-  
ձակու մն : Նաև թերի է խոստովանու-  
թին. եթէ խոստովանօղն մեղք պահէ,  
կամ չըրած մեղքն ըսէ. և կամ երկ  
բայականն իբրև ստոյգ խոստովանի :  
Նոյնպէս խոստովանահայրը պարտական  
է լսել մեղքերը, ճանաչել, դատել, և  
ասլա արձակել :

Հ. Ի՞նչ է ասպաշխարանքն :

Պ. Է փոխարէնն առ ժամանակեայ  
պատժոց՝ իբր դեղ և դարման մեր հի-  
ւանդու թէ. որ սիրով պիտի ընդունինք  
և կատարենք, առ ՚ի ազատիլ պատժոց-  
ուսաի եթէ արձակմանէն ետև ասպաշ-  
խարօղն չուզէ ընդունիլ դրած ասպաշ-  
խարանքն, կը մեղանչէ. նոյնպէս թէ որ

շատ ուշացնէ՝ ժամանակովը չի կատարէ, կը մեղանչէ . բայց արձակումէն առաջ կրնայ թէ որ ունի ծանր սրտածառ մը ծանուցանել, և ուրիշ ապաշխարանք ընդունիլ :

Հ . Ասով կրնանք կատարեալ հատուցումն ընել մեր մեղացի համար :

Պ . Անհնար է կատարեալ հատուցումն ընել . զի Թոմային գերազանցութիւն է անհամեմատ վեր, որուն գէմ մեղօք անիրաւեցանք . իսկ մեր հատուցումն է չափաւոր . սակայն պիտի ջանանք ջերմեռանդութեամբ կատարելու ըստ կարի . որպէս զի՝ Թոմային շնորհքն օգնական ըլլալով հաճոյական ընծայ ըլլայ Թոմայ . ապա յսիրտեամբք կըլլայ հատուցումն . որ է անսահման . որուն հետ միաւորելով մերը կընծայենք Թոմայ . որպէս ասէ եկեղեցին . Ասան զի դու ես, որ մատուցանես, և մատչիս, և ընդունիս, և սաս քս Թոմայ մեր :

Հ . Ո՞րն է դորձք հատուցման :

Պ . Է կատարումն ասրաշխարանաց, որ քահանայն կը գնէ . որպիսի են՝ աղօթք, ողորմութի, սրտարագ, ծով, և ամենայն զրկումն ախորժակաց . նաև համբերութի վշտաց, որ կուտայ Թոմայ . ըստ այնմ . համբերութեմք ձերով ստաս ջիք զոգիս ձեր :

Հ . Ի՞նչ է հատուցումն ընկերին :

Պ . Է հատուցանել ուրիշին բանը, զորօրինակ գողունի բան, պարագ, և դը

տած քան՝ երբ տերը գիտենք . նաև ե-  
թէ միաս , միշտ , և նեղութի տվեր ենք  
ընկերին , պէտք է հատուցումն ընել .  
ևս առաւել , եթէ զըստարտելով և բաւ-  
բասելով անուան անիրաւութի ըրինք .  
պէտք է շահենք և խոնարհելով առաջ-  
նին հատուցումն ընենք . թէ չէ՝ պար-  
տական կը մնանք , և խոստովանութիւր  
կըլլայ ոչինչ :

Հ . Ի՞նչպէս պիտի ընդունինք ա-  
սպաշխարանքն :

Պ . Բաղձանօք պիտի խնդրենք որ  
քահանայն մեզի անանկ ասպաշխարանք  
դնէ . որպէս զի ուղղէ զմեզ , և նման ը-  
նէ քսի , որ խաչվեցաւ մեր մեղացն հա-  
մար : Ուստի սարտական կը մնան անոնք ,  
որ դիւրին ասպաշխարանք կուզեն , և  
հանգիստ կուզեն կատարել , զի արդար  
է տէր և արգարութեամբ կը պահանջէ  
ճիշդ , թէ հոս չըլլայ՝ հանդերձեալը  
պիտի կատարվի ծանր սրտով : Որչափ  
մեծ է իւր ողորմութիւն՝ այնչափ ալ մեծ  
է պատիժը . հոս նեղ ճամբայէ պիտի  
անցնինք . որ հոն ընդարձակ կենաց ճամ-  
բան գանենք . զի աշխարհիս ընդարձակ  
ճամբային վերջն է կորուստ , ըստ այնմ .  
Նեղ է գուռն և անձուկ ճանապարհն  
որ տանի՝ ի կեանս . ընդարձակ է գուռն  
և համարձակ ճանապարհն , որ տանի՝ ի  
կորուստ :

Հ . Քանի՞ են գործք ասպաշխարու-  
թեան խորհրդին :

Պ . Իրեք . նախ՝ մեղաւորն արդարա-  
 նալով մեղքերը կը քաւովն , առաքի-  
 նութիւններն կը դառնան , և բարի գործ-  
 քերն որ ըրաւ շնորհաց մէջ՝ կը կենդա-  
 նանան . երկրորդ՝ յաւիտենական պա-  
 տիժը կը փոփոխի ժամանակաւոր կըլ-  
 լայ . երրորդ՝ նաև ժամանակաւոր սրա-  
 տիժն ալ կը թեթևնայ : Ահա այսպէս  
 երկնաւոր հայրն մեր տեսնելով մեր  
 խեղճ հիւանդութիւնն՝ ամէն կերպով  
 հոգացաւ մեր փրկութիւն , ապա վայ  
 անզեղջ մեղաւորին , որ թողուցեր է  
 բարի և գթած հայրը , սատանային ձեռ-  
 քըն է մատնելէր , որ հոս խիղճմտանքով  
 կը տանջէ զինքն , և հոն յաւիտենա-  
 կան դատապարտութիւն : Ապաշխարե-  
 ցէք , զի մերձեալ է արքայութիւն երկ-  
 նից , կըսէ յոհաննէս մկրտիչ : Ուստի  
 անհաւատ մարդիկ տեսնելով գերազան-  
 ցութի այս սք խորհրդին՝ խրատ կու-  
 տային իրենց հպատակաց որ խոստովա-  
 նին և ուղղին : Այսպէս կը խօսի անիճ  
 վօլդէն . Խոստովանութիւն է գործ իմն  
 գերազանց և սանձ յանցանաց , սովո-  
 րեալ ՚ի հնութեան անդ . որ լինէր ՚ի  
 հռչակման ամենայն հին խորհրդոց . . .  
 որ է յոյժ բարի ՚ի ամոքել զսիրտս  
 վշտացեալս ՚ի թշնամեաց առ ՚ի ներել :

Հ. Որն է հինգերորդ խորհուրդն եկեղեցւոյ :

Պ. Է վերջին օծումն, որ կարգեալ է հոգևոր և մարմնաւոր բժշկութիւն մարդկան. վասն զի ինչպէս որ տկար մարդը թէպէտ մահուան վտանգ չունի, բայց տակաւին կը կարօտի դեղոց. այսպէս մեղաւորն ապաշխարութեամբ կառողջանայ մահուանէ, բայց տակաւին դեղի կը կարօտի. անոր համար ասաց յակօրոս առաքեալ. Հիւանդանայցէ դք 'ի ձէնջ' կոչեսցէ զերկցունս եկեղեցւոյն, և արասցեն 'ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն տեառն, և աղօթքն հաւատով փրկեսցեն զաշխատեալն. և յարուսցէ զնա տէր. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա :

Հ. Ի՞նչ է վերջին օծումն :

Պ. Է խորհուրդ աւանդեալ 'ի քսէ, որ օծելով զգայարանքն հիւանդին՝ նախ կը պատճառէ աճումն շնորհաց հանդերձ առանձին օժանդակութբ ընդդէմ փորձութեց գիւին. երկրորդ՝ թեթևութի կուտայ հիւանդին մարմնաւորակարութենէ. մինչ զի՝ եթէ օգուտ է փրկկութե հոգւոյն՝ յարուսցէ զնա տէր. երրորդ՝ թողութի կը բերէ մնացեալ մեղացն, ըստ այնմ. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցի նմա :

Հ . Ե՞րբ պիտի արվի վերջին օժուժն :

Պ . Արևելեան հին սովորութի է որ ինչևիցէ հիւանդի կուտան . բայց հասարակօրէն ծանր հիւանդին կը արվի առանց սպասելու վերջի կէտին : Բայց նախ՝ հիւանդը պէտք է ըլլալ ՚ի վիճակ շնորհաց . երկրորդ՝ պէտք է վստահութի սպաւնիլ յողորմութիւնն ան . երրորդ՝ պէտք է բոլորապէս յանձն ըլլայ ՚ի նք կամս ստեղծողին :

Հ . Ի՞նչպէս պէտք է ստանալ շնորհք :

Պ . Պէտք է նախ ամենայն հարկաւոր արամագրութի սպարաստովի առ քն երթալու . երկրորդ՝ խոստովանութի և հաղորդութի տրամագրելէն ետև , բաղձանօք և ջերմեռանդութի պիտի ընդունի խորհուրդն աներկիւղ , յետոյ շնորհակալ ըլլալով անձային պարգևացը վրաս որ ըրաւ , միշտ պէտք է մտածել յաւիտենական երանութիւնն , որ պիտի վայելէ քնի արդէամբքն . ահա այսպէս կրնգունի անձային շնորհքն :

Հ . Ի՞նչ կերպ կուտան :

Պ . Քահանայն երբոր կը տեսնէ հիւանդը լաւ արամագրութե մէջ՝ հիւանդի համար օրհնած ձէթով կօծէ նախ աչքը և ապա միւս զգայարանքներն , մաղթելով թողութի՝ ինչ որ մարդկօրէն մեղանչեր է տեսանելեօք , լսելեօք , հոտոտելեօք , և շօշափելեօք . ինչպէս որ դրած է կիկիկեցոց մաշտոյին մէջ . որոնք անասներ կրնէին :

Հ . Ամէն ազգի մէջ կայ :

Պ . Որովհետեւ խորհուրդ է եկեղեցւոյ, պէտք է որ ամէն քրիստոնէից մէջ ըլլայ . բայց այլևայլ արարողութիւն, ինչպէս ըսինք : Մեր ազգն ալ կը ճանաչէ և կընդունի թէ եօթն խորհրդոց մէկն է վերջինն օծումը, և վարդապետք ալ կը յիշեն . բայց գործածութիւնը հիմայ չըլլալով, ոմանք համարեցան թէ հին ժամանակը կար, և յետոյ պատճառով մի խափանեցաւ . ոմանք ալ ասացին թէ ուրիշ օծում անոր տեղը կըլլայ : Սակայն գիտնալու է որ շատ պիտուական խորհուրդ է ամենայն քրիստոնէից :

Հ . Ի՞նչ է կարգն :

Պ . Կարգն է վեցերորդ խորհուրդ եկեղեցւոյ . որով մարդը կը կառավարի հոգևորապէս կարգաւորներէն . որոնք ունին իշխանութի կատարելու եկեղեցական արարողութիւններն և սուրբ խորհուրդներն, ըստ որում քս ավաւ առաքեալներուն :

Հ . Ի՞նչպէս կը տրվի այս իշխանութիւն :

Պ . Եպիսկոպոսին ձեռնադրութեն՝ երբոր ձեռքը նորրնծային վրա կը դնուէ և կան խօսքերը կըսէ : Բայց նորրնծայիննախ՝ պէտք է կոչում ունենայ յայ եկեղեցական պաշտօն մանելու . երկրորդ՝ պիտի ընծայէ զինքն փառացն ից և փրկութեան ընկերին . երրորդ՝ պիտի ունենայ բարի վարք և ամբիժ բարք .

չորրորդ՝ պիտի ըլլայ 'ի վիճակ շնորհաց :

Հ . Քանի՞ կը բաժնըվի :

Պ . Եօթն աստիճան . չորս փոքր , և իրեք մեծ , կամ նր . թէպէտ կան որ ութ աստիճան կը գնեն , զի եպիսկոպոս . սութի՛ր գերազանց վիճակ ըլլալով զատ աստիճան կը գնեն . որ կուտայ ամէն իշխանութիւն : Իսկ արքեպիսկոպոսութիւնը զատ աստիճան չէ , այլ է եկեղեցական վեհադոյն մեծուի : Նոյնպէս պատրիարգութիւն է ազգին մեծ արքեպիսկոպոսութիւն և արաքին պատիւ : Նմանապէս կաթողիկոսութիւնն է նոյն իսկ պատրիարգութիւն , որ մենք յունական բառով կաթողիկոս կըսենք :

Հ . Ո՞րն են փոքր աստիճաններն :

Պ . Դանապանութի , որուն նիւթն է փականք եկեղեցնայ . ընթերցողութի , նիւթն է գիրքն ընթերցուածոց նրց . երգմենցուցչութի . նիւթն է գիրք երգման . և ջահընկալութի , նիւթն է ժամանոց և աշտանակ : Իսկ խուզումն հերաց չէ աստիճան , այլ արամադրութի : Այս ամէն աստիճան կարգեալ են ծառայելու նր պատարագին , և նձային ժամերգութեան :

Հ . Ո՞րն են նր աստիճաններն :

Պ . Կիսասարկաւագութի , նիւթն է դատարկ սկիհ և առաքելական գիրք . սարկաւագութի , նիւթն է աւետարան .

քահանայութի, նիւթն է սկիհ գինիով  
 և մաղղման նշխարով. իսկ էպիսկոպո-  
 սութեան նիւթն է դրութի ձեռաց :  
 Արաստարկաւագութիւն է հինգերորդ  
 աստիճան . որ ունի իշխանութի պօղո-  
 սի թղթերը կարգալու, և սրբապ սկի-  
 հը տանելու . սարկաւագը քահանային  
 պաշտօնեայն ըլլալով կրնայ աւետարան  
 կարգալ, մեկնել, և սրբութի տալ : Սա-  
 կայն ամէն աստիճանաւոր պարտական  
 է իրեն պաշտօնին ծառայել և անարատ  
 վարք ունենալ . զի ով որ մեղօք կը գոր-  
 ծածէ պաշտօնը՝ չարաչար կը մեղանչէ,  
 մանաւանդ նր աստիճան ունեցողն :  
 Ուստի պէտք է տարիքը չափահաս ըլ-  
 լայ . նոյնպէս փոքր աստիճանաւորը  
 պէտք է տասներկու տարին անցած ըլ-  
 լայ, և ամէնքը պիտի ունենան մկր-  
 տութիւն, և գրոշմ . որպէս զի առնուն  
 ձեռնագրութեամբ շնորհք հոգւոյն սբյ,  
 և եկեղեցական իշխանութիւն հանդերձ  
 կնքով :

Հ . Ո՞րն է եօթներորդ խորհուրդ ե-  
 կեղեցւոյ :

Պ . Է պսակն, որով կը տրվի ամուս-  
 նացելոց շնորհք քրիստոնէարար ապրե-  
 լու միատեղ, կրթելով ըստ ան զաւակ-  
 նին . որ հին ատենն էր սոսկ դաշնակ-  
 ցութիւն . բայց քն խորհուրդ հաստա-  
 տեց ասելով . զոր ան զուգեաց մարդ մի  
 մեկնեացէ : Ուստի ըստ առաքելոյն ինչ-  
 պէս քն է գլուխ եկեղեցւոյ, կը սիրէ

իւր հարան եկեղեցին, որով կը ծնանին մարդիկ շնորհօք. այսպէս պիտի փեսան մաքուր սիրով սիրէ հարսը, և հարսը պիտի հնազանդ ըլլայ համեստութեամբ, ինչպէս եկեղեցին է ընդ իշխանութեամբ քսի. և այս միաւորութիւն կը մնայ անբախտելի մինչև 'ի մահ: Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ 'ի քս և յեկեղեցի. ասաց առաքեալն:

Հ. Ի՞նչ պարտաւորութիւն ունին:

Պ. Պարտաւորեալ են կեալ միաբան և սիրով իրարու բեռը բառնալով. և իբր մի անձն ըլլալով առաքինութեամբ և պարկեշտութեամբ բարի օրինակ տալով զաւակաց, և ինչ երկիւղովն կը թելով զանոնք:

Հ. Որո՞նք ընդդէմ կը գործեն այս խորհրդին:

Պ. Հեշտասէր և աշխարհասէր մարդիկ, որ ինչ կամօքը չեն շարժիր, և սքստակին պարտքը չեն ճանչնար, և չար գիտաւորութեամբ կեղծանեն կարգը պսակին. նաև որոնք անկարգաբար կը ստակ վին ընդդէմ կամօց ծնողացն:

Հ. Ի՞նչ տրամադրութիւն կը պահանջի:

Պ. Նախ քան զպսակն պէտք է խոստովանիլ և հաղորդվիլ. աղօթքով և ողորմութեամբ խնդրել շնորհք հոգւոյն սբ. նաև առաջադրել պարկեշտ և սքստակութեամբ և ապա պսակվիլ եկեղեցական կանոնով կատարեալ հասակով, և չարդե-

լած օր : Եթէ այսպիսի տրամադրութիւն  
 և առաջադրութիւն պատկանին անտարա-  
 կոյս կառնուն պատկան շնորհքն ու օրհ-  
 նութիւն. որով կը ծաղկին օրէ օր, կաճին  
 բարի զաւակաց ծնողք ըլլալով անտը-  
 տում ուրախութիւն թէ հոս, և թէ յեր-  
 կինս հանդերձ զաւակօք՝ ասելով առ-  
 քն, թէ ահա մանկունք իմ, զոր ետ ինձ  
 ւծ : Այսպէս էին սբ նահապետքաբրա-  
 համ իսահակ և յակոբ, որ այնչափ փա-  
 ռաւորեցան, ինչև քն տէրն երենց զա-  
 ւակէն եկաւ փրկեց զաշխարհ և հաս-  
 տատեց եկեղեցնայ խորհուրդներն . որ-  
 պէս զի արքայութե զաւակներ ծնին, և  
 անճառելի իւր փառքը վայելին յաւի-  
 տեանս յաւիտենից : Արոնց նման մենք  
 ալ ըլլալով սբ խորհրդոց շնորհքն զար-  
 դարվինք, ընտիր և լուսաւորեալ ըլլանք  
 ըստ առաքելոյն, որ կըսէ . որդիք լու-  
 սոյ և որդիք տունջեան եղիցուք մնալով  
 ՚ի սէրն քնի :

# Ե . Տ Լ Գ Լ Ե Ի Լ Ը

Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

## Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ



Խ Դ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ . Եկեղեցին կրնայ պատուիրան գնել :

Պ . Սբ եկեղեցին մայր ըլլալով ամենայն հաւատացեալ քրիստոնէից՝ ունի իրաւունք և իշխանութիւն իւր կողմանէ , որ պատուիրան և օրէնք գնէ իրեն զաւակացն , սր մկրտութիւն ծնաւ :

Հ . Ինչո՞ւ կը գնէ պատուիրան :

Պ . Որպէս զի աւելի ըսւ կառավարվինք , և աղէկ պահենք իւր պատուիրաններն . որովհետեւ եկեղեցական պատուիրաններն կը փակին իւր պատուիրանացը մէջ . անոր համար ով որ եկեղեցնայ պատուիրանացը գէմ կը գործէ , իւր

դէմ կը մեղանչէ . զի եկեղեցնայ անհը-  
նազանդն է հեթանոս և անհաւատ ա-  
սաց քի :

Հ . Քանի՞ են եկեղեցնայ պատուի-  
րաններն :

Պ . Հինգ են . առաջինն է կիրակինե-  
րը և տօն օրերը հոգևորի հետըլլալ սպ-  
տարագ տեսնելով , աղօթքով , և քրիս-  
տոնէական ուսմամբ անցնելով . երկ-  
րորդ՝ գէթ տարին անգամ մի խոստովա-  
նանք ըլլալ . երրորդ՝ տարին անգամ մի  
հաղորդվիլ զատկին . չորրորդ՝ պահք և  
ծով պահել . հինգերորդ՝ ասլրանքին  
տասանորդը տալ :

Հ . Կան ուրիշ պատուիրաններ :

Պ . Եկեղեցին անսխալ կանոն ըլլա-  
լով ինչ որ կօրինադրէ , է պատուիրան ,  
և պիտի պահվին . ով որ չի պահէ , կը  
մեղանչէ . զորօրինակ պատուիրեր է . որ  
արգիլած օրը հարսնիք չընեն , ով որ ը-  
նէ այնպիսի օր՝ կը մեղանչէ . նոյնպէս  
ամէն մասնաւոր եկեղեցնայ մէջ կան  
հաւանեալ ծէսեր , սովորութիւնք , և  
կանոններ , իւրաքանչիւր եկեղեցի իրե-  
նը պիտի պահէ առանց ուրիշ ազգի ծէ-  
սը վար զարնելու : Սակայն ընդհանուր  
եկեղեցնայ հինգ պատուիրաններն ամե-  
նայն ազգ քրիստոնէայ պարտական է  
պահելու :

Հ . Ի՞նչ կը պարտաւորէ առաջին պա-  
տուիրանն եկեղեցւոյ :

Պ . Կը պարտաւորէ ամենայն միլը-

տեալ՝ եօթը տարւանէ վեր՝ պատարագ տեսնէ կիրակի և տօն օրերը երբոր Կանէ. այսինքն ներկայ գտնըվի պատարագին, մտադրութեան կամ լսէ տաւանց ասդին անդին նայելու, և առանց անկատար ձգելու:

Հ. Ի՞նչպէս ամբողջ կըլլայ պատարագը:

Պ. Որովհետև պատարագն է իրեք մասն, առջի մասն է նուիրումն. երկրորդ է սրբացուցումն. երրորդն է ճաշակումն. ապա պատարագ տեսնողը գէթ աւետարանին ժամանակէն մինչև ճաշակումն պիտի ըլլայ ներկայ պատարագին. սակայն բարեպաշտ քրիստոնէին կը վայլէ որ բոլոր ամբողջ պատարագը տեսնէ, և ժամանակը չի խնայէ ինչ համար՝ որ պիտի վարձատրէ երկինքը: Քանի՛ ամօթ է անոնց, որ փուճ բանի համար դատարկաբանութիւն ժամանակնին կանցընեն. և ինչ համար քիչ մի ժամանակ ծախելու կը խնայեն. և ի՞նչպէս պիտի արժանի ըլլան իծային ողորմութեան և անհուն բարեացն որ պիտի հասուցանէ. եթէ բաժակ մի ջուր ցուրտ վարձք ունի, հասլա քնի սրտարագը քահանային հետ միատեղ ինչ ընծայելն՝ որչափ բիւրասրտակ վարձուց արժանի չընէր: Ամէն ասեմ ձեզ ոչ կորուսցէ զվարձս իւր:

Հ. Ի՞նչպէս պիտի անցընենք կիրակին, և մեծ օրերը:

Պ . Որովհետև ան ընծայած սբ օրեր  
 են՝ պէտք է սբ անցընենք քարոզ և խը-  
 րատ լսելով, աղօթք ընելով, և հոգևոր  
 գրեանք կարդալով . նաև բարեգործու-  
 թի և բարեսպաշտական գործքեր ընե-  
 լով . այսինքն հիւանդաց տեսութի եր-  
 թալով, սղաւորներն և աղքատները  
 մխիթարելով . տգէտներուն և անառակ  
 ներուն խրատ տալով ու բան սորվեցը-  
 նելով . որով երանութի կառնունք ըս-  
 տեղծողէն :

Հ . Ի՞նչպէս կարդադրելու է ժա-  
 մանակը :

Պ . Ըստ արևելեան սովորութե շա-  
 բաթ իրիկ-ընէ կիրակամուտ կըլլայ, ննջե-  
 ցելոց հոգւոցն համար խունկ ծխելով ա-  
 ղօթք կըլլըվի . և նոյն իրիկունը պատրաս-  
 տուի տեսնելով առաւօտը մաքուր լա-  
 թերով ամէն բանէն առաջ շնտակ եկե-  
 Ղեցին երթալու է :

Հ . Ի՞նչ ժամանակ :

Պ . Որչափ կանուխ երթայ, այնչափ  
 սղէկ է և ան ընդունելի . վասն զի միա-  
 քը փուճ բաներով զբաղած չըլլալով ա-  
 ւելի աղէկ ջերմեռանդութի կրնայ ը-  
 նել . նոյնպէս ընդունելի է ան լսել ժա-  
 մերգութիւնը, և փառաբանել զանձ քա-  
 հանայից հետ, ըստ այնմ . Քահանայք  
 անձաբանելով . ժողովուրդք բարձր արա-  
 րէք զնա յաւիտեան :

Հ . Ի՞նչպէս կենալու է :

Պ . Որովհետև եկեղեցին է տունն ան

ըստ առաքելոյն, պէտք է պարկեշտութիւն և մեծ երկիւղածութիւնս առնել յիմաստասէր միտք դնելով ժամերգութեց, ևս առաւել՝ պատարագին մէջ մտածելով քնի չարչարանքն, միշտ մտք առած վերանալ և շնորհակալ ըլլալ, որ խաւար կռապաշտութիւն և անհաւատութիւն 'ի լոյս անգիտութեան բերեր է, և բոլոր աշխարհ լոյս հաւատքով լուսաւորեր է. որ այսպէս համարձակ մանկունք եկեղեցւոյ կը փառաւորեն ասելով. Այս երբեակ և մի անբաժանելի սրբերորդութիւն, զքեզ ընդ երկնայնոց երկրածինքս միշտ փառաւորեմք. 'ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա՛ 'ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Հ. Ինչո՞ւ կան ոմանք որ այսպիսի ջերմեռանդ մարդը ազէկ չեն սեպեր:

Պ. Այսպիսի ջերմեռանդական բաները միշտ անբաժանելի է. և բարեգործ մարդուն փառք են թէ հոս և թէ 'ի հանդերձեալը. մինչ զի՝ հին հեթանոսներն ալ այսպէս ճանչնալով ջանացին մեծամեծներն ըլլալ կրօնասէր. ինչպէս էր եփամինանոս, միլախատէս, քսէնոփոն, աղէքսանդր. ևն: Ապա քանի՞ ամօթ է քրիստոնէից երբոր կռապաշտէն վար կըլան: Սակայն եղան այնպիսի անպիտան քրիստոնէայք և անանկ անհաւատ մարդիկ, որ իրենք թոյլ ըլլալով կարծեն թէ բարեպաշտ մարդն անխելք միամիտ է. չկտեն որ անխելքն իրենք

են, և խելացին անոնք են, որ անյասալ-  
 ւինելով կերթան: Այսպիսիք ըստ նբ  
 գրոց, որ սիսի դայ որ ըսեն, թէ մենք  
 այն մարդն անխելք կարծելով ծաղր կը-  
 նէինք. այս ի՞նչպէս խելացի եղեր է,  
 որ անյ փառացն արժանի եղաւ, ու մենք  
 հպարտանալով դատասարառութե ար-  
 ժանի եղանք անմտութի: Եւ սակայն  
 այն ժամանակեան լացն օգուտ չունի,  
 հիմա պէտք է ամէն մարդ անծային և ե-  
 կեղեցական պատուիրանները պահելով  
 և լաւ կատարելով ըլլայ այր ան և օրի-  
 նակ բարի աշխարհին. որպէս զի լսէ՞ք  
 քնի բերնէն. Աշնիւ՝ ծառայ բարի և  
 հաւատարիմ, մուտ յուրախուի տեառն  
 քո: Յոյս իմ ՚ի միւսանգամ դալըս-  
 տեանն քո. մի անտես աւներ զիստէր  
 ան իմ:

---

ԽԵ. ԿԻՐԱԿԻ:

Հ. Ո՞րն է երկրորդ պատուիրանն ե-  
 կեղեցւոյ:

Պ. Գոնէ տարին անգամ մի խոստո-  
 վանանք ըլլալ: Որով ամենայն քրիստո-  
 նեայ կը պարտաւորի ալէկ քննութի  
 խոստովանանք ըլլալու, և ստաշխարե-  
 լու. որպէս զի՝ մեղքերէն թեթևնայ և  
 արդարանալով հոգին կենդանանայ ան-

ային շնորհօքն, որ մեզօք կորսնցուցեր էր :

Հ. Չի խոստովանօղն ի՞նչ կըլլայ :

Պ. Նախ՝ նզովքի տակ իյնելով եկեղեցին չի կրնար մօնել. զի եկեղեցիէն դուրս է այնպիսին, ինչ երեսէն ընկած կայէնի նման, և տատանային մատնը ված. երկրորդ՝ եթէ մեռնի՝ եկեղեցական թաղմանէ կը զրկուի, և առանց քահանայի տանին փոսը կը ձգեն, որ հողուով և մարմնով դատապարտեալ կը սեպվի :

Հ. Ի՞նչու կըսէ տարին անգամ մի :

Պ. Բարի քրիստոնէին կը վայլէ, որ տարին շատ անգամ խոստովանի. մանաւանդ մեծ հանդիսաւոր օրերը, երբ լծային սրբգևաց աղբիւրը բաց և առատ է. սակայն եթէ անկարելի ըլլայ յաճախ խոստովանելու վասն առողջանալու, գոնէ տարին մէկ անգամ պէտք է որ խոստովանի և նորոգվի : Առաւպաշտներն ևս դիտեցին տեսան որ կենդանիներն տարւէ տարի կը նորոգվին. զի ըստ յոբայ՝ բազէն արևին գէմ թևերը բաց կենալով ոյժ կառնէ և կը զօրանայ. իրենք ալ օրինակ առին, ու երբեմն ապաշխարելով իբր թէ կը նորոգվին : Ապա քանի վայ է քրիստոնէին, որ ճշմարիտ հաւատքովն անհաւատէն վատ և յեանեալ կըլլայ. և ապականեալ մեզօք կը մնայ ու կը կորսուի :

Հ. Եթէ չունի մեղք՝ ինչ խոստովանի :

Պ. Սք գիրը կրսէ թէ անհնար է մարդապրի ու չմեղանչէ . զի տկար բնու թիւն մարդոյ շատ գիւրին կիյնի . մանաւանդ արդար մարդիկ , և սուրբերն աւելի զիրենք մեղաւոր կը ճանչնան , ու ապաշխարելով կը խոստովանին : Հապա աշխարհական խառնագնաց ռամիկ մարդն ինչպէս կրնայ ըսել , թէ ես արդար կապրիմ , և կը պարծի թէ մեղք չունիմ ինչ պիտի խոստովանիմ . չէ թէ մեղք չունի , հասա սատանան միտքն այնչափ խաւարեր . է՛ որ մեծ մեղքերն ալ չի տեսնէ . վասն զի ինչպէս որ ջուրը որչափ աւելի մաքուր ըլլայ , այնչափ մանր շիւղերն ալ մէջը կերևնան . իսկ եթէ պրոտորի այնչափ՝ որ ախիւմ ըլլայ , անատենը ինչ որ մէջն իյնի կը կորսըվի . ահա այսպէս է մեղաւորին միտքը . և անոր համար գատասարտու թեան արժանի կըլլայ :

Հ. Պէտք է յաճախ խոստովանիլ :

Պ. Որչափ անգամ որ մարդ մահացու մեղաց մէջ կիյնի , պարտական է շուտով խոստովանահայր գտնել խոստովանիլ , որ չըլլայ թէ մեռնի ու յաւիտեան կորսըվի . և որչափ անգամ ներելի մեղք կը գործէ՝ պէտք է ցաւելով զղջալ . որպէս զի՝ սովորական չըլլայ , ու մեծնայ մեղքը : Բայց ով որ ինչ և իցէ թեթեւ պատճառով կուզէ ամէն անգամ խոս-

տովանիչ, կամ խղճահար է, և կամ չափազանց երկիւղած, որ տկարուն մտաց կը սեպվի. սէտք է որ խնամտուն խոստովանահօր խորհրդին հետևի, և զինքը չափի մէջ դնէ:

Հ. Որն է երրորդ սրատուիրանն եկեղեցւոյ:

Պ. Գոնէ զատկէ զատիկ տարին անգամ մի սրբութիւն առնել և հաղորդվիլ. որ կը սրբատուորէ զքրիստոնէայն՝ խոստովանութեամբ խիղճը մաքրելէն ետև հաղորդվի զատկին տանըհինգ օրւանը մէջ. ու որ զանց կառնէ, կը մեղանչէ, և կը զրկվի շնորհաց:

Հ. Եթէ երկիւղածութիւն հաղորդվի, կը մեղանչէ:

Պ. Կան հաւատքի սրաղ մարդիկ որ երկիւղածութիւնը սրածառ բռնելով չեն ուզեր հաղորդվիլ. որանց սէտք էր որ մեղանչելէն վախնային չէ թէ հաղորդվելէն. որ է հոգևոր կերակուր, և առանց անոր հոգին անօթի մնալով կը տկարանայ և կը վտանդի: Սակայն մեծ սրատրաստութիւն և երկիւղածութեամբ սէտք է մօտենալ քնիմարմնոյ և արեանը. և իւր անհուն ողորմութեն տալիսնելով մօտենալ անմահական սեղանին. ինչպէս որ ամէն հոգևոր մարդիկ փափաքելով կը վազեն բաղում երկիւղածութիւն և ջերմեռանդութիւն ասելով. Մաքրեա՛ զմիտս և զխորհուրդս. զի և

մեք հաղորդեացուք սրբութիւն ընդ նրց  
քոց առաքելոց :

Հ . Ո՞րն է չորրորդ պատուիրանն ե-  
կեղեցւոյ :

Պ . Պատք և ծոմ պահել, որ կը պա-  
տուիրէ ամէն չափահաս մկրտեալ պատք  
պահել ամէն չորեքշաբթի և ուրբաթ,  
ամէն շաբաթական պատք և մեծ պատք . նաև  
ծոմ կենալ բան չուտել ըստ կանոնին  
եկեղեցւոյ :

Հ . Ո՞վ դրեր է պատքը :

Պ . Ըստ շնորհալուոյն նախ անձ դրաւ  
պատքը ադամայ դրախտին մէջ որ պըտու-  
ղէն չուտեն . և խորայեղացոց պատուի-  
րեց, որ պատք պահեն . ինչպէս մարգա-  
րէք ալ կը պահէին . բայց քն տէրն մեր  
հաստատեց քառսուն որ պատք պահե-  
լով, և ասաց որ ինքն վերանալէն ետև  
պահեն ու կամքերնին կտորելով արգա-  
րանան : Յետոյ առաքեալները տեսնե-  
լով օգուտը առաջ իրենք սկսան պա-  
հել, և դրին շաբթուն երկու օր . որ ըստ  
արևմտեան արարողութիւն է ուրբաթ և  
շաբաթ . իսկ ըստ արևելեանն է չորեք-  
շաբթի և ուրբաթ . երկուսն ալ առա-  
քելական աւանդութիւն է : Կրորդ՝ շա-  
բաթական պատքն հայրապետները դրին  
խորաքանջիւր աղօթի . որ մեր աղօթին մէջ  
ամէնէն շատ է . զի ամէն ամսուան մէյ-  
մէկ շաբաթը պատք դրեր են . որ այլևայլ  
տեղ գնելով անոնց անուամբը կը յիշ-  
վի . չորրորդնակ յիսնակաց պահք կըսվի՝

քնի ծննդին համար, զի իբր յիսուս օր  
կը մնայ. սուրբ սարգսի կրսէն, որ լու-  
տաւորիչ դրեր է ազգը քրիստոնէայ ը-  
րած ժամանակը: Նոյնպէս ուրիշ ազ-  
գերուն հայրապետներն ալ մէյմէկ կերպ  
պաք և ծով սահմաներ են. բոլորն ալ  
աղէկ են, և պէտք է պահպլին. զի մե-  
ղաց թողութեան և ան փառացն հա-  
մար են:

Հ. Ինչո՞ւ համար ամէն շաբթու եր-  
կու օր պաք է:

Պ. Նախ պարտական ենք որ շաբթուն  
երկու օրն ան համար կամքերն իս կոտ-  
րենք, միս և եղ չուտելով ապաշխա-  
րենք. երկրորդ՝ յիշատակ ըլլայ յն չար-  
չարանացը, չորեքշաբթին մատնութեը,  
և ուրբաթ խաչելութեը. երրորդ՝ պատ-  
րաստութի ըլլայ կիրակին ան պահելու,  
և ան հաճոյ ըլլալու: Ապա ով որ սուտ  
պատճառով և առանց հարկաւորութե  
կաւրէ պաքը՝ կը մեղանչէ, և ով որ ան-  
պաշտութեամբ կը պահէ կարգարանայ,  
ինչպէս կը խրատէ շնորհալին. Այսօր  
ընդ մեծին եղևայի սրբեալ պահօք, զի  
տեսլեան անձային լուսյի արժանաս-  
ցուք հոգւով:

Հ. Ո՞րն է հինգերորդ պատուիրանն  
եկեղեցւոյ:

Պ. Տալ զտասանորդս. որ կը պար-  
տաւորէ հաւատացեալներն որ տարւէ  
տարի իրենց վաստակին տասանորդը կմ<sup>ք</sup>  
տաճը մասին մէկը տան պատարագուց,

ողորմութիւն կարօտելոց, նաև ժամերու կամ դպրատանց և կամ հոգևոր հարկաւորութե համար. որ պարտական են հոգալու. վասն զի անոր համար այն վաստակն անոնց կուտայ որ կարօտելոց հասնին, և հոգեւոր տեղերը շէն պահեն. նաև եկեղեցականներն կարօտ և ողորմելի չըլլան. մինչ զի ամէն ազգ բնականաբար գիտէ այս պատուիրանը, և կը ջանայ պարտական չի մնալու :

Հ. Ինչո՞ւ համար դրված է :

Պ. Որովհետև ան արգելէր է եկեղեցականաց, որ մարմնաւոր վաստակի ետևէ չըլլան, և ժողովրդին պատուիրէր է որ զանոնք նային. հարկ է որ աշխարհականը վաստակէն մաս մի հանելով իբր անոնց տայ և եկեղեցական պատուիրանները կատարելով թողութիւն գտնէ մեղացն. և եթէ պարտականութի ունի անգիտութեամբ վաստակին մէջ, պարտականութե ազատի. ինչպէս կըսէ մարգարէն, թէ մեղքդ քաւէ գթով անանկաց :

Հ. Ինչպէս պիտի պահվին այս պատուիրաններն :

Պ. Ամենայն քրիստոնեայ պարտական է ինչպէս ան պատուիրաններն, այս պէս ալ եկեղեցնայ պատուիրանները սրահել. զի եկեղեցին ան է, և ան կը կառավարի. և ան պատրաստ է իր շնորհքն ու կարողութիւնը տալ. որպէս զի

դիւրին կարենանք պահելու . որոց փոխարէն խոստացաւ տալ արքայութեան փառքն : Ապա վայ անոնց որ անհնազանդ ըլլալով կը զրկուին , ու ժառանգ կըլլան գեհէնին . իսկ երանի՛ անոնց որ բարեպաշտական գործքերով քիչ ժամանակիս մէջ պատուիրանները պահելով անանցանելի բարեաց և երանական տեսութե՛ արժանի կըլլան յաւիտեանս յաւիտենից :

Հ . Կայ՞ ուրիշ պարտաւորութիւն :

Պ . Պարտական է ամէն քրիստոնեայ Հոգևոր և մարմնաւոր ողորմութի ընելու որչափ որ ձեռքէն կուգայ . և ասով կը պարտաւորին եկեղեցականք , նաև աղքատք , որ ուրիշի համին : Հոգևոր ողորմութիք են եօթն . ՝ Տգէտներուն բարի բան սորվեցնել . Ք Տարակուսածներուն բարի խրատ տալ . Պ Աշտացածները մխիթարել . Պ Մոլորեալները խրատել , և բարի ճամբայ ցոյց տալով սղգառնել և շահել . Է Ընկերին չարութեանը ներել , և քաղցրութեամբ շահիլ . Պ Ընկերին ծանր խօսքին , և պակասութե՛ր համբերել . Է Աղօթք ընել կարօտելոց և անօգնական ննջեցելոց համար :

Հ . Քանի՞ են գործք մարմնաւոր ողորմութեան :

Պ . Եօթն են . ՝ Կարօտաւ մարդկանց հաց և ջուր տալ , մանաւանդ՝ չի գանձված ժամանակը . Ք Մերկ մարդ-

կանց զգեստ տալ. Դ՛ Օտարական կա-  
րօսները տունն ընդունիլ. Դ՛ Հիւանդին  
տես երթալ, և կերակուր զրկել. Է՛ Բան-  
տարգէլներն երթալ տեսնել, և հոգալ:  
Զ՛ Անտէր հիւանդը տուն բերել բժշկով  
և քահանայով հոգին և մարմինը հո-  
գալ. Է՛ Մեռելի թաղման երթալ, և ար-  
նանկը թաղել տալ:

Հ. Ինչո՞ւ կրավին գործք ողորմութե՛ւ:

Պ. Անոր համար որ նախ՝ այսպիսի  
բարի գործք ընօղներն են ողորմած և  
բարեբար մարդիկ. երկրորդ՝ այսպիսի  
գործք ընօղներն ողորմուի պիտի գըտ-  
նեն, և դատաստանին օրը քսէ պիտի  
լտեն. Եկայք օրհնեալք հօր խնայ ժա-  
ռանդեցէք զպատրաստեալ ձեզ զար-  
քայութիւնն՝ ՚ի սկզբանէ աշխարհի. զի  
քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարա-  
ւեցի՝ և արբուցիք ինձ. օտար էի՝ և ժո-  
ղովեցիք զիս. մերկ՝ և զգեցուցիք զիս.  
հիւանդ էի՝ և տեսիք զիս. ՚ի բանտին  
էի՝ և եկիք առ իս: Արովհետև արարիք  
միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝  
ինձ արարիք: Արուն հեաւելով և մեհք  
աղաղակենք առ քս. Շնորհեա՛ մեզ  
տէր ընդ աղքատաց օրինակին զազա-  
րու ժուժկալութիւն. զի կամաւոր աղ-  
քատութեամբ արքայութեանդ երկնից  
ընդ նմին լիցուք արժանի. լուր մեզ և  
ողորմեա՛ քս ւնձ:

## ԽԶ. ԿԻՐԱԿԻ :

Հ. Ի՞նչ են տօնախմբութիւնք :

Պ. Են սրբազան հանգէսք և հոգևոր յնժուածիք, որ բազմութիւն հաւատացեալոց խմբեալ կը կատարէ. վն զի առաքեալք և հայրապետք ծէսեր հաստատեցին, որ եկեղեցին տէրուհական մեծ օրերը՝ հոգեւոր հանգէսներ և տօնախմբութիւն կատարելով փառաւորէ զձծ :

Հ. Ամէն ազգաց տօնախմբութիւնք միակերպ է :

Պ. Գրեթէ ամէն քրիստոնէկոյր միակերպ է. զի ամեննալ առաքեալներէն և հայրապետներէն սորված են. սակայն զանազան ծէսով և արարողութիւն կը կատարին. վասն զի եկեղեցին՝ քնի պարտեղն է. ամէն տեսակ ծաղիկ պէտք է դանըվել, բաւական է որ ուղիղ մտօք ըլլայ :

Հ. Ո՞րն են առաքեալներուն սահմանածներն :

Պ. Նախ՝ տօնախմբութիւնք հրաշափառ ծրննդեան յնի քնի սահմանեցին, որ փառաւորելով մարդեղութիւն բանին ան հաշակենք փրկագործութիւն, որով փրկեցանք : Նոյնպէս անձայայանութիւն, մկրտութիւն, չարչարանքն, թաղումն, յարութիւնն, համբարձումն, հոգէգալուստն, և այլ ամենայն տէրուհական տօներն և տնօրէնութիւններն յնի՝ առաքեալք սահմանեցին ուսեալք ՚ի քնէ,

և ուսուցին եկեղեցնայ . որ ամէն տարի  
հռչակելով փառաւորէ զի՛ծ . լը այնմ :  
Եւ աշակերտեալք ՚ի սբց տաքելոց  
ուսաք փառաւորել զքեզ ՚ի տաճարի  
սրբութեան քո :

Հ . Ո՞րն են հայրապետներուն սահմա-  
նածներն :

Պ . Տ՛ն ընդ առաջ, վարդավառ, վերա-  
փոխում, խաչ, և այլ տօնախմբութիւնք  
ի՛ծածնայ, յոհաննու մկրտչին, առաքե-  
լոց, և մարտիրոսաց որ ամէն մէկ եկե-  
ղեցնայ հայրապետներն այլևայլ ծիտով,  
և այլևայլ որ սահմանեցին . և եկեղե-  
ցին դեղեցիկ կը կատարէ այս ամէն տօ-  
նախրմբութիւնքն ինչպէս ամէնուն որ-  
ւանը մէջ ծանուցինք :

Հ . Ո՞րն են տէրունական տօներն :

Պ . Են այն տօնախմբութիւնք որ տն կը  
վերաբերին . զի քնի անօրէնութիւնը նաև  
յարութիւն կը հռչակիլի . ինչպէս է զա-  
տիկը և հասարակ կիրակիները, և ինչպէս  
է ծնունդը, յայանուիւր, ծաղկազարդը,  
և այլ ամենայն տնօրինական տօներն են  
տէրունական :

Հ . Ի՞նչ են տաղաւարները :

Պ . Են հինգ տօնախմբութիւնք տէրու-  
նական տօնից, որ կը կատարենք տարւան  
մէջ մեծ հանդէսներով, և մեր աղբն այս-  
պէս կարգաւորեր է . ծնունդ, զատիկ,  
վարդավառ, ի՛ծածին, և խաչ : Բայց  
ծնունդն ու զատիկն ամէն քրիստոնէայք  
շատ փառաւոր կը տօնեն . զի են տօն

փրկագործութե և քառութեան . անոր համար ճրագալոյց կրնենք նախընթաց օրն, ոչ միայն առջևի օրւան մեծութին հռչակելու համար, այլև յայանի ընելու համար, թէ խաւարէն լոյս եկանք և մեռելութենէ կենդանութի փոխեցանք : Եւ այս խորհրդով մեր վարդապետները գրէր են՝ որ խթման իրիկունները պատարագ ըլլայ :

Հ . Ինչո՞ւ համար այս սօները տաղաւար կըսվին :

Պ . Որովհետև հրէայք մեծ տօն կը կատարէին տարին անգամ մի, որ կըսվէր տօն տաղաւարահարաց . զի թշին ամսուն՝ ամէնքն երուսաղէմ կը ժողվէին ու հրապարակներուն, սարտէզներուն, և տանիքներուն վրա տաղաւարներ կամ մանր շարժական խուցեր շինելով վրան եղէգներով և ճիւղերով կը գոցէին, և եօթն օր հօն կը բնակէին, որ յիշատակ ըլլայ քառանամեայ իրենց շրջագայութե անապատին մէջ . իսկ եօթներորդ օրն մեծ հանգէսով ճիւղեր կառնէին ձեռքերնին, ու եօթն անգամ կը պարէին զօհին բոլորը : Ահա քսի գալըստեամբն ասոնք ամէնը խափանեցան, և անոնց փոխան տէրունական մեծ սօները կոչեցան տաղաւար . որ են մեծահանգէս տօնախմբութիք :

Հ . Այս վարդապետութի ի՞նչ պիտի սորվինք :

Պ . Այս օրւան վարդապետութի կը

յայտնէ մեզ, թէ հին օրինաց մէջ ձծ  
 ինչ որ յայտնեց մարգարէից և սրբոց, և  
 որչափ հանդէսներ կըլլար, բոլորն ալ  
 քնի գալստեան և տնօրէնութե օրինակ  
 էին. որ ըստ աւետարանչին՝ է կատա-  
 րումն օրինաց և մարգարէից: Անոր հա-  
 մար կերգէ եկեղեցին. Ար զՃառագայթս  
 ձծային ցուցեր այսօր մարգարէից, որոյ  
 ցանկային տեսանել. և ինչպէս որ ինքն  
 ասաց, թէ բազում մարգարէք ցանկա-  
 ցան տեսանել, և ոչ տեսին: Ապա մենք  
 որ այսչափ ձծային շնորհքը վայելցինք,  
 և այս հրաշափառ տօնախմբութիւներն  
 որ կը կատարենք ցնծութե, պարտա-  
 կան ենք նախ՝ մաքուր և անարատ ըլլալ  
 ամենայն մեղաց, և այնպէս հրեշտա-  
 կային վարուք փառաբանել զձծ խառն  
 ընդ հրեշտակաց, երկրորդ՝ պէտք է սրբոց  
 փափաքանօք մերձեանք առ խորհուրդ  
 սբ հաղորդութե միանալով ընդ քնի և շնոր-  
 հաղարգելով, երրորդ՝ սուտ աշխարհիս  
 անցաւոր բաներն արհամարհելով սեր և  
 փափաք ունենանք անճառելի տեսութե  
 քնի և երկնից աշքայութե: Անանկ որ՝  
 ամենայն տէրունական տօնախմբութե  
 օրերը վառի մեր սիրտն երկնային փա-  
 փաքանօք, իբր նոր մարգըլլալով նորոգ,  
 վինք, և պայծառանանք: Ահա այս վախ-  
 ճանաւ սբ եկեղեցին գրեր է այս հրա-  
 շալի հանդէսներն: Աւստի կերգէ. Այսօր  
 ք հրեշտակս ՚ի բարձունս ցնծացուք  
 տօնիւս ՚ի ծագել իմանալի լուսոյ ձծու-

Թէդ, օրհնեմք զքեզ էակիցդ հօր, որ  
եկիր 'ի փրկել զսինգերս :

ԽԷ . ԿԻՐԱԿԻ :

Հ . Քրիստոնեայն յնի ծննդեան վրա  
Խնչ պիտի մտածէ :

Պ . Իրիկւրնէ պիտի մտածէ, որ մեր  
փրկութիւն համար լծ մարդ եղաւ, աշ-  
խարհք եկաւ. անբաններուն մութ մտու-  
րին մէջ ծնաւ՝ որ մեր խաւար հոգին լու-  
սաւորէ . աղքատացաւ՝ որ մեր հոգևոր  
աղքատութիւնը հարստացնէ . խոնարհե-  
ցաւ որ մեր հպարտութիւնը վերցընէ . և համ-  
բերեց ամենայնի, որ զմեզ յաւիտե-  
նական երանութիւն հասցընէ : Գիշերը  
պիտի մտածէ հովիւներուն երանութիւնը,  
և անոնց հետ մտքով միանալով ճշմար-  
տութիւն երկիրպագանէ մանկացեալ յնին .  
որ պարզամիտ և արդար հովիւներուն  
յայտնեց զինքն . որոնք երբոր բացօթեաց  
գուրան ոչխարները կը պահէին գիշեր ա-  
տեն, ահա հրեշտակ ինն աւետիս տվաւ  
իրենց, թէ ծնաւ ձեզ այսօր փրկիչ : Այս  
ձայնը լսածնուն պէս աչքերնին բացին  
տեսան բազմունի հրեշտակաց . որ ուրա-  
խութիւն կերգէին . Փառք 'ի բարձունս Խնչ  
և յերկիր խաղաղութի, 'ի մարդիկ հա-  
ճութի :

Հ . Խնչ ըրին հովիւներն :

Պ. Զարմանալով վախցան առջի բերանը երբոր տեսան ահագին լոյսն երկնքէն ծագած . բայց հրեշտակային փառաբանութիւն մտիկ գնելով հաւատացին . և երբ հրեշտակները վերացան, իրենք ալ ելան ուրախութիւն գնացին բէթղէհէմ և երկիր սագին մանուկ յսին . որ երկնային փառքը թողուցեր մտուրին մէջ պառկեր էր . որոնք յետոյ սկսան ամենուն սատմել և քարոզել հրաշքներն որ տեսան : Ահա այս խորհրդով սէտք է քրիստոնեայն նոյն սբ օրն իրարու տուն երթալով աւետիս տան և ուրախանան, բարեմտութիւն և իրար համբուրելով հաշարվին, աղքատութիւնն ու խոնարհութիւնը սիրեն, և աշխարհիս ունայն մեծութիւնն արհամարհեն՝ քնի հետևելով, որ զանձն խոնարհեցոյց ըզկերպարանս ծառայի առեալ :

Հ. Ի՞նչ է յայտնութեան տօնը :

Պ. Ածայայտնութեան տօնախմբութիւնը կը հաջակէ քնի անտութին, որ մոգ թագաւորներն եկան երկրպագութիւն ընելով յայտնեցին . ուստի սբ եկեղեցին մկրտութեան տօնախմբութիւնն ալ միատեղ կատարելով կը յայտնէ, թէ մարգարեալ բանն ան յայտնեցաւ մարգկային մարմնով և մկրտելով սրբեց զաշխարհս ՚ի մեղաց, և մարգիկ շնորհօք անտագուց :

Հ. Ուսկից էին մոգերը :

Պ. Արևելքէն, որոնք տեսնելով հրա-

շալի աստղ մի, հասկըցան որ Թճ մարգա-  
ցեր աշխարհք եկեր է. ելան ճամբայ, և  
հասան երուստղէմ. անկից ալ աստղին  
առաջնորդութիւն գնացին քեթիւհէմ. եր-  
բոր տեսան փրկիչը խոնարհելով երկիր  
պագին և մատուցին ոսկի կնդրուկ և զը-  
մուռս. ոսկին իբր թագաւորի ընծայե-  
ցին, կընդրուկը որպէս Թճ, և զմուռսը  
որպէս մարգացելոյ. որ թագումը կը  
նշանակէր :

Հ. Հրէաներն ալ գնացին քնի :

Պ. Ոչ. զի այս հրաշքն յայանի ըրաւ  
թէ հեթանոսներն հեռուէն պիտի դան  
ճանչնան Թճ, և նոր խորայէլըսին. իսկ  
հրէաները պիտի կուրանան հոգևորա-  
պէս. ինչպէս որ մարգարէները առա-  
ջուց ըսեր էին: Ուստի քրիստոնէայն այս  
հրաշափառ տօնը կատարելով պիտի ա-  
ռաջագրէ հետևել հրաշալի աստեղն որ  
կը տանի առ փրկիչն. որ է ազգումն  
չնորհաց, և սարտական է մատուցանել  
Թճ ոսկի բարեգործութիւն, կնդրուկ սիրոյ,  
և զմուռս ապաշխարութիւն :

Հ. Ի՞նչ խորհրդով մէկալ տօները  
սահմանած են :

Պ. Քնի ամէն գործքը և բանը խոր-  
հուրդ ունենալով կըսվին անօրէնութիւն, որ  
եկեղեցին տօնելով կը փառաբանէ: Ինչ  
պէս է թլփատութիւն որ ծնունդէն ութ  
օր ետև եղաւ, և Յն անունը գրվեցաւ,  
ինչպէս որ հրէշտակն աւետման օրն յայտ-  
ներ էր: Տեառներնգառաջն է տօնախմբուի

քառսուն օրւան տաճարն երթալուն .  
 ուր սիմէոն ծերունին կրտսասէր փափա-  
 քանօք, որ տեսաւ փրկիչը . և գիրկն առ-  
 նելով օրհնեց ձծ : Աւետումն է տօնա-  
 խրմբուի անճառ մարգեղուէ բանին ձյ :  
 Իսկ ծաղկազարդն է տօնախմբութի ե-  
 րուսաղէմ մանեղուն քնի . որ իբր թա-  
 գաւոր յաղթանակաւն կամ հանգէսով  
 մտաւ յես այնչափ հրաշքներ ընելուն .  
 անոր համար ծերք և աղայք ոստերով  
 կամ ծառի ճիւղերով գիմացն ելան՝ իբր  
 թէ ծաղկազարդեցին տօնը . և բաներ  
 փռեցին ճամբաներնոր քն վրան կոխելով  
 անցնի . և աղաղակելով կը կանչէին ո՛վ  
 սաննայ . այսինքն օրհնուի ՚ի բարձունս .  
 օրհնեալ որ գասդ թագաւոր խորայէլի :  
 Հ . Ինչո՞ւ նոյն օրէն մինչև զատիկ  
 սուրբ շաբաթ կրովի :

Պ . Որովհետև մեծ պաքը կը պատրաս-  
 տէ զմեզ որ ծոմ պահելով և ապաշխարե-  
 լով քնի չարչարակից ըլլանք , և հռչակենք  
 նոյն սբ օրերը սրբութի և բարեպաշտու-  
 թի , և այս խորհրդով վերջի շաբաթը սբ  
 կամ աւագ շաբաթ ըսվեցաւ . որ փրկա-  
 դործուէ օրերն ըլլալով քն նոյն շաբ-  
 թուն մէջ կատարեց ինչ որ ՚ի յաւիտե-  
 նից սահմանած էր մեր փրկութի հա-  
 մար : Ուստի աւագ չորեքշաբթի՝ մաս-  
 նրվեցաւ . աւագ հինգշաբթի՝ ըվաց աչ-  
 կերտներուն ոտքը , և իրիկունը վերնա-  
 տունը զատկական գառը կերաւ , և հա-  
 զորդութի խորհուրդն հաստատեց : Իսկ

նոյն գիշերը չարչարեցաւ. աւագ ուրբաթ  
խաչվեցաւ, և նոյն իրիկունը թաղվե-  
լով՝ աւագ շաբաթ մնաց գերեզմանին  
մէջ մինչև կիրակի առաւօտն: Արդ՝ սքե-  
կեղեցին անոր համար այս տօնախմբու-  
թիները կը կատարէ, որ քրիստոնեայք  
նոյն շաբթուն հոգևորի հետ ըլլան.  
քնի անբաւ երախտիքը ճանչնան՝ շնորհա-  
կալ ըլլան. մեղքերնուն վրա լան ողբան,  
յնի հետ մահանան, քնի հետ թաղվին  
ապաշխարութիւն, և քնի հետ յարութի  
առնեն անմահութիւն փառաւորեալ յա-  
ւիտեանս յաւիտենից: Եկայք հաւատա-  
ցեալք քնի, ցնծութիւն պահեսցուք ընդ  
անմահին մահու մեռանելով մեղաց. զի  
յարութեամբ նորա կենդանացուք ար-  
դարութեամբ:

### ԽԸ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Հ. Ո՞րն է երկրորդ տաղաւարն:

Պ. Զատիկ փառաւոր յարուն քնի,  
որ յետ երեքօրեայ թաղմանն յարեաւ 'ի  
մեռելոց, և լուսափայլ զարդարեց զաշ-  
խարհս ամենայն. զի գոլով յաղթող մա-  
հու և մեղաց, և խայտառակելով թշնա-  
մին սատանայ՝ ազատեց հոգիքն արդա-  
րոց. անոր համար եկեղեցին պայծառա-  
ցեալ մեծ հանդէսով կը տօնէ ասելով.  
ցնծացէք այսօր քն յարեաւ 'ի մեռե-

լոց : Հրէայք ևս ունեին զատիկ որ պատեք կրսէին. և եօթն որ կը տօնէին յիշատակ ազատութե եգիպտոսէ, և գառն կը մորթէին. որ էր նշանակ ազատութե մարդկան քնի մահուամբ. և յարութիւն ըստ այնմ. Այսօր զատիկ մեր զենմամբ քնի արասցուք տօն ցնծութե :

Հ. Ի նչպէս յայանի եղաւ յարութիւնն :

Պ. Ըստ հին սովորուն՝ խունկ և ազնիւ իւղեր պատրաստեց մարիամ մագդաղենացին և այլ սրբասէր կանայք, ու կիրակի առտանց կանուխ գնացին յնի գերեզմանն որ պատուեն, տեսան որ գերեզմանին քալը մէկ դի դրած է. ներս մտան, նայեցան, որ յնի մարմինը չի կայ. երբոր զարմացած կը նայէին՝ ահա մեծ շարժում ըլլալով հրեշտակն երկնքէն իջաւ պայծառ փայլակի նման. ասաց անոնց թէ ինչ եկեր մեռելներուն մէջ կը փնտրուէք կենդանին. չէ սատ, այլ յարեաւ, այս բանն որ ըսեց մարիամ վազեց առաքեալներուն իմացուց, ուստի պետրոս և յոհաննէս հասան հոն, տեսան որ պատանքին կտաւները կային, յնի մարմինը չիկար : Երբոր մարիամ կուրար գերեզմանին քով յն երեցաւ իրեն, և միտիթարեց. սուր երեցաւ առաքեալներուն, և աշակերտներուն իրեք անգամ զարմանալի հրաշքներով : Սակայն ամէնէն առաջ յիշատակ երեցեր և միտիթարեր էր :

Հ. Քրիստոնեայն ինչ պիտի մտածէ:

Պ. Ինչպէս ծննդեան խթում և ճրագալոյց ընելով կը պատրաստվի յՍԻ ծնընդեան շնորհքն առնելու. այսպէս պիտի զատկին պատրաստվի խոստովանութիւն և ապաշխարութեամբ մտածելով, թէ խաւար կռտարչութիւն ՚ի լոյս անգիտութիւն և մահուանէ ՚ի կեանս եկայ յարուցեալ քնի հետ. կի՞ որպէս քնկոյս գերեզմանէն ծնաւ յարութիւն առնելով. այսպէս մեղաւորը մեղքէն ազատելով նոր մարդ կը ծնի, և շնորհքն քնի յարութիւն կառնէ. ըստ որում կը հաստատեալ տքեալն: Եւ ինչպէս քն այլ չմեռնիր. այսպէս մենք ալ չպիտի մեռնինք մեղք. այլ շնորհազարդեալ պիտի ուրախանանք միշտ, յուսալով թէ օր մի յարութիւն առնելով նմին նման պիտի ըլլանք:

Հ. Ի՞նչ է համբարձումն:

Պ. Է տօնախմբութիւն քնի վերանալուն յերկինս քառսուն օր յարութենէն ետև. և անոր համար հանգիստոր կը տօնէ եկեղեցին այս տօնն. որ քն նստելով աջակողմն հօր անջ ժառանգեց իւր թագաւորութիւն և հաւատացելոյ տեղ պատրաստեց, որպէս ստաց. Երթամ և պատրաստեմ ձեզ տեղի:

Հ. Ի՞նչպէս համբարձաւ:

Պ. Քառսուն օրն որ եղաւ աշակերտներուն հետ կերակուր կերաւ և երկար խօսեղէն ետև՝ գնաց բեթանիա ձիթեհեաց լեռն հանեց զանոնք. և ձեռքը

վերցուց զամէնն օրհնեց, խոստացաւ իրենց հոգին սբ, և հրաման տվաւ որ երթան ամէն աշխարհ քարոզեն. և ապա սկսաւ վերանալ երկինքը. և ամիզը ծածկեց զինքն անոնց տեսութենէն: Երբոր շարունակ գէպ ՚ի վեր կը նայէին, երկու հրեշտակներ երեցան իրենց, ու ծանուցին, թէ ինչպէս որ համբարձաւ, նոյնպէս պիտի գայ փառօք վերջի օրը: Որոնք ապա դարձան երուսաղէմ, և միաբան սբ Ծառնայ հետ նստան վերնատունը կրսպասէին դալճատեան հոգւոյն սրբոյ, ըստ բանին քսի:

Հ. Այս տօնախմբունի ինչ խորհուրդունի:

Պ. Որովհետեւ մարմին ենք քսի, մեր գլուխն երկինքը համբառնալով մեզի կը սորվեցնէ, որ միշտ մտքերն իս և սրտերն իս երկինքն ըլլայ. որ միշտ փափաքի անձառելի փառացն, որ պիտի յայտնին, և պիտի վայելենք. որ մեզի համար սպարաստեր է:

Հ. Ինչ է երկրորդ ծաղկազարդը:

Պ. Է տօնախմբութի չորրորդ աւուր համբարձման. ուր ծաղկազարդին աւետարաններուն կարգը կուգայ կարգալու և անոր համար երկրորդ ծաղկազարդ կըսվի: Իսկ մեր ազգը աւանդութի ունի, թէ լուսաւորչայ սահապան հրեշտակն էր չորրորդ դասէն. որ նոյն օրը համբարձման համար տօնախմբունի ընելով երկինքը՝ ուշ երեցեր է լուսաւորչայ:

և ուշանալուն պատճառը սպասուներ է. ա-  
սոր համար հանգիստուր կը տօնէ. ինչ-  
պէս կըսէ շարականը. Մեծահրաշ այս  
խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հա-  
սեալ. զոր հոգւոց լուսատուն 'ի սլաշտ-  
պանէն իւրմէ լուեալ, եթէ տօն մեծ է  
այսօր իմոյ դասուն որ 'ի յերկինս :

Հ. Ի՞նչ է հոգեգալուստն :

Պ. Է տօնախմբութի և մեծ հանգէս  
գալըստեան հոգւոյն սլչ որ զարդարե-  
լով առաքեալները շնորհօք՝ բոլոր աշ-  
խարհ լուսով շնորհաց լուսաւորեց. անոր  
համար ամէն ազգ մեծապայծառ կը  
տօնէ այս տօնը. որ կըսվի պէնսէկոստէ,  
այսինքն յիսներորդ. զի զատկէն եօթը  
շաբաթ ետև հրէայք կը տօնէին յիշա-  
տակ օրինացն, որ տաին սինա լեռը. և  
էր օրինակ հոգեգալստեան :

Հ. Երբ եկաւ :

Պ. Չատկէն յիսուն օր ետև՝ երբոր  
առաքեալք և աշակերտք միաբան ա-  
ղօթք կընէին վերնատունը՝ երրորդ ժա-  
մուն սաստիկ ձայներ լավեցան, և հրեղէն  
լեզուներ երևցան ամէնուն վրան. որ էին  
նշան շնորհաց. որով առաքեալներն  
սկսան զանազան լեզուներ խօսիլ, և մար-  
դարէանալ, նաև հրաշագործութի շատ  
մարդ նոյն օրը լուսաւորեցին, ինչպէս  
առաջ սպասեցինք :

Հ. Քրիստոնեայն ի՞նչ պիտի մտածէ :

Պ. Նախ՝ պիտի մտածէ հոգւոյն սրբոյ  
սպարդեացը մեծութին որ շնորհեց մեզ,

և կընդունինք դրոշմին խորհրդովն, երկ-  
րորդ՝ սլիախ մտածէ նախնի քրիստո-  
նէից վարքն որ ամէնքը մէկ սիրտ մէկ  
հոգի էին միաբանական սիրով, բոլորը  
մէկտեղ ժողոված աղօթքի և անձային բա-  
նը ըսելու ետեւէ էին, միշտ ջերմեռանդ  
ըլլալով հաղորդութե և սպասարագի-  
նակ մեծ ուրախութի էր իրենց երբոր  
քնի անուանը համար նախատինք և չար-  
չարանք կը քաշէին:

Հ. Ո՛րն է երրորդ տաղաւարն:

Պ. Է վարդավառն կամ տօն այլակեր-  
պութեն քնի, որ մեր ազգը շատ մեծ  
կը տօնէ ինչպէս որ լուսաւորիչ սահմա-  
ներ է. զի կուսակազմութե ատենը նոյն  
օրը մեծ տօն կը կատարուէր հայաստան՝ ա-  
նահատական կուոց համար, իսկ լուսաւո-  
րիչ փոխեց այս հեթանոսական տօնն ու  
դրաւ այլակերպութեան տօնը քնի: Եւ  
որովհետեւ նոյն ատենը վարդով կը զար-  
դարէին քաղաքները, և կուսուռները,  
անոր համար նոյն կուուքը կըսուէր վար-  
դամատն, ուստի և այս տօնախմբու-  
թիւն ալ վարդավառ ըսվեցաւ: Տէս ճեմ.  
655:

Հ. Ինչո՞ւ կըսուի այլակերպութի:

Պ. Քնի չարչարանաց օրերն որ մօտե-  
ցաւ, ուզեց որ անուրի փառքն առա-  
քելոց երկնցնէ, առաւ հետը պետրոս,  
յակօբոս, և յոհաննէս, ելաւ թափօր  
լեռը, և հոն սկսաւ լուսաւորելով սոյ-  
ժառանալ գէմքը, ուր երեցան մարդա-

րէններն մովսէս և եղիա . և անաստենը  
ամսոյ մի վրանին հովանի եղաւ . ուսկից  
ձայն եկաւ , [Թէ դա է որդի իմ սիրելի  
ընդ որ հաճեցայ , դմա լուարո՞ւք :

Հ . Առաքեալներն ի՞նչ ըրին :

Պ . Այնչափ սքանչելի էր տեսիլը  
սլայծառակերպուէն քսի , մինչև առա-  
քեալներն զմայլեցան սարսափելով .  
ապա սկսարոս համարձակեցաւ ըսելու .  
ի՞նչ բարո՞ւք է մեզ աստ լինել . ասկէց ա-  
ղէկ տեղ չըլլար , [Թէ որ կամիս իրէք խո-  
րան ( չափը ) շինե՞նք , մէկը քեզի , մէկը  
մովսէսի , և մէկալն ալ եղիայի . նաև շփո-  
թելով չիյտեր ինչ խօսէր : Սակայն յե-  
տոյ յանկարծ ամսը վերացաւ , այլ ուրիշ  
բան չտեսան :

Հ . Քրիստոնեայն ի՞նչ խորհրդածուէ  
սլիտի ընէ :

Պ . Պիտի կենդանի հաւատքով հաւա-  
տայ , [Թէ որ մի նոյն ի՞նչային տեսլեանն  
ինքն ալ արժանի սլիտի ըլլայ [Թէ որ սք  
ասորի առաքեալներուն նման . և միշտ  
սլիտի քսի հետ [Թագաւորէ անանցանելի  
փառօք , [Թէ որ մահանայ քսի հետ և  
համբերէ վասն ի՞նչ : Ահա այսսլիտի հաւա-  
տով և յուսով սլիտի միտի [Թարվինք որ-  
սլիտի մեծ նեղութեան մէջ ըլլանք . և  
միշտ փափայքելով այն անճառելի տես-  
լեանն աղաղակե՞նք ըստ դաւ [Թի . Այն  
ինձ , զի ընդերկար եղև սանդխտու-  
թիւնն իմ . երբ եկից երևեցայց երե-  
սացդ ինչ : Նաև ջերմ սիրով մայլ [Թե՛նք ընդ

եկեղեցւոյ. Սրբեա՛ւ Թոր զմեզուցեալ զծա-  
ռայից քոց զգայարանս, և շնորհեա՛ս աւե-  
սանել զքեզ և լսել զհայրական զձայնն,  
եթէ դա է որդի իմ սիրելի:

ԽԹ. ԿԻՐԱԿԻ:

Հ. Ո՞րն է չորրորդ տաղաւարը:

Պ. Է տօնախմբութի վերափոխման  
իծածնին. որ աւելի հանդիսաւոր ըլլա-  
լու համար կիրակի օր կը տօնէիք: Եւ  
որովհետեւ իծածնի ամէն սուրբերէն վեր  
է արժնապատուութեամբ, զի է մայր  
այ. եկեղեցին մասնաւոր գերազանցու-  
թիբ պատուելու համար սբ կոյսը, քնի  
անօրինական տօներէն ետեւ չորրորդ տա-  
ղաւար անուանեց այս տօնը. այսինքն  
մեծ հռչակաւոր տօնախմբութի. և ինն  
օր կը տօնէ:

Հ. Քանի՞ էն իծածնայ տօնախմբու-  
թիւնքն:

Պ. Գրեթէ ամէն օր տօնախմբութիւն  
կայ իծածնայ մեծացուցանելով և մաղ-  
թելով մասնաւոր աղօթքով և շարակա-  
նով թէ սրատարադին մէջ, և թէ ժա-  
մերգութն. սակայն սբ եկեղեցին չորս  
տօնախմբութիւն դրեր է իծածնայ՝  
յղութիւն, ծնունդ, ընծայումն, և  
վերափոխումն, բայց վերափոխումն ա-

ւելի փառաւոր կը տօնենք. զի թագուհի  
երկնի և երկրի սասկիւնցաւ, և մարմնով  
որդւոյն միածնի քով բազմեցաւ ան-  
սլատմելի փառաց մէջ, ըստ այնմ: Մար-  
գարտատեսիլ և ծիրանազգեաց հրաշա-  
փառագոյն կոյս. զոր առեալ որդւոյ  
վերափոխեալ դասեաց յանախատում՝ ի  
կեանս:

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի յղութիւնը:

Պ. Ըստ վարդապետունքն սբ եկեղեց-  
նայ և Թաթարանից՝ սբ կոյսն անարատ  
յղացաւ առանց արատոյ սկզբնական մե-  
ղաց. ուստի և ոչ մէկ բոսէ եղաւ սա-  
տանային իշխանութե տակն, ինչպէս ե-  
ղան ուրիշ սուրբերն և արդարներն: Ըստ  
սլատաճ էր անարատ յղութիւնն՝ Թաթար-  
մայրութեն և բանին Թայ, որ մայր էր  
ընտրեր իրեն անարատ կոյսն: Ահա  
այս խորհրդով եկեղեցին դրաւ այս  
տօնախմբութիւնն. որ մենք հին ատենէ  
՚ի վեր կը տօնենք ՚ի սլատիւ անարատ  
յղութե Թաթարան:

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի ծնունդը:

Պ. Իրեք խորհուրդ ունի. նախ՝ ծնաւ  
Թաթարին յուգայ նահապետին ցեղէն,  
որուն վրա մարգարէացէր էր յակոբնա-  
հապետ հայրը, թէ անկէց սլատի ծընի  
փրկիչն աշխարհի. ուստի նոյն ցեղէն  
եղան մարգարէներ և թագաւորներ գա-  
ւիթ, սողոմոն, և այլ բազում. ահա այս  
հին մարգարէութիւն կատարեց անարատ  
գուսարն յակոբայ Թաթարին՝ հազար եօթն

հարիւր տարիէն ետեւ . կատարելով նաեւ  
ազամայ մարգարէութիւն՝ ըլլալով կեանք  
աշխարհի հինգ հազար երկուհարիւր  
տարիէն ետեւ :

Հ . Ո՞րն է երկրորդ խորհուրդը :

Պ . Երկրորդ՝ անձնայ ծնողքն ա-  
մուշ ըլլալով հրաշքով ծնաւ նբ կոյսն  
առանց սկզբնական մեղաց . որուն վրա  
կար մարգարէութիւն , և տեսիլք . ինչպէս  
էր մորենին անկիզելի , որ տեսաւ մով-  
սէս . գեղմն հրաշալի , որ տեսաւ գե-  
դէոն . նաև տապանակն , որոնք անձն-  
այ նմանութիւններն էին . ուստի կեր-  
պէ եկեղեցին : Այսօր դառինքն օրինա-  
կանքն յովակիմ և աննա ետուն մեղ  
զգեղմն ընդունիչ զցօղն երկնային :

Հ . Ո՞րն է երրորդ խորհուրդը :

Պ . Երրորդ՝ կատարեցաւ խոստումն  
այ . որ նահապետաց խոստացեր էր որ  
իրենց զաւակէն սլիտի օրհնըվին ամենայն  
աղգ . ուստի անձնին իբր օթարան  
արևու ծագեցաւ այսչափ հրաշափառ .  
ուսկից ապա ծագեցաւ արեգակն ար-  
գարութե քն . որով օրհնեցան աղգ և  
աղինք : Ահա այս ստաճառաւ նբ եկե-  
ղեցին սահմանեց այս տօնախմբութիւնն  
անձնայ հրաշափառ ծննդեան . և կը  
պատուիրէ ամենայն մանկանց եկեղեց-  
ւոյ մեծապատիւ հռչակել ասելով . Նոր  
սիօն ծնեալ մանկունք նբ աւաղանաւ .  
չնորհազարդեալք հոգւովն այ , օրհնե-  
ցէք զհայրն երկնաւոր յաւուր ծննդեան

սրբուհւոյ կուսին . յոր օրհնեցայք յանիծից նախնոյն :

Հ . Ինչ խորհուրդ ունի ընծայումն անձաճնին :

Պ . Որովհետև սք կոյսն եղաւ ըստ նարեկացւոյն՝ առանց յանցանաց զաւակ տօնելի՝ մօրն եւայլ . իւր ամէն բանն եղաւ հրաշալի խորհրդաւոր , յղութիւն անարատ, ծնունդն անբիծ, և ընծայումն սքանչելի . զի ծնած ատենն ուխտեց ամուլն աննա , որ այ ընծայ ընէ . ուստի իրեք տարւան էր սք կոյսն ընծայեցաւ տաճարին մեծ հանդէսով և քահանայապետն ընդունելով օրհնեց օրհնեալ զաւակն , ինչպէս որ սովորութի էր , և ապա եօթը տարւան որ եղաւ բոլորովին ելաւ ծնողացը անէն , գնաց տաճարին քով կուսաստանը նստաւ . ուր սարկէշտ կուսանաց հետ սրբութի և առաքինութի կը մեծնար սրբուհի կոյսն . ուստի կրսէ նարեկացին . Մեղուցելոյ կնոջն առաջնոյ առանց յանցանաց զաւակդուլեցար . և ամենայն ամբծաց ընտրութե սրակ սրբութե դու գաւանեցար , վսեմական վարուց նախընթաց սք անձաճնին :

Հ . Որչափ մնաց հոն :

Պ . Սուրբ կոյսն հրեշտակական վարուք մնաց հոն մինչև չափահաս եղաւ . ապա տասնըջորս տարւան սուրբ յովսէփայ հետ նշանվելէն ետև՝ գաբրիէլ հրեշտակն եկաւ աւետիս տվաւ և բանն անձաճնին :

մարդացաւ յարդանաւ կուսին . յետոյ  
 դնաց այցելուի եղիսաբեթի որով սրբը-  
 վեցաւ յոհաննէս յարդանդի մօրն : Եւ  
 յետ ծնելոյ որդին միածին ընծայեցուց  
 տաճարն . և կուսական կաթամբն կերակ-  
 րելով մեծցուց , ամէն տարի տանելով  
 տաճարը . մինչև՝ տեանելով անսարսա-  
 կան խաչը և մահը միածնին ինքն ալ իբր  
 զոհ եղաւ հօր իւյ կամոցն . և ասպ վաթ-  
 սուն տարւան աւանդեց հոգին ՚ի ձե-  
 ուրս որդւոյն իւյ . և իրեք օրէն յարութի  
 առնելով մարմնով վերափոխեցաւ եր-  
 կինքը . և միշտ բարեխօս է վասն մեր .  
 ըստ այնմ . Խնդած և ուրախ լեր յարկ  
 անձառ ծնելոյդ ՚ի քէն անեղդ իւյ . որ  
 ՚ի նմին յորդւոյն քս խնամոց հրաշազարդ  
 փառօք ամբարձար ՚ի կտտար աւարտման  
 վերնայինն երկնի լուսասէս . և թեօք  
 թեթևութե հոգւոյն սլացեալ յիմանա-  
 լիսն վերաչուեցեր : Ուստի զանեղծին  
 փառաց ճոխութի քեզ սեպհականեցեր  
 սուրբ իծածին :

Հ . Քրիստոնեայն ի՞նչ պիտի մտածէ :

Պ . Պարտական ենք հրաշալի տօնա-  
 խմբութիւններն իծածնայ կատարելով  
 մասնաւոր ջերմեռանդուի ընելու հան-  
 դերձ խոստովանութի և ասպաշխարու-  
 թի . առաջագրելով մաքուր ասրիլ և  
 սուրբ վարուցը նմանիլ , որուն զաւակ  
 դրվեցանք . նաև միշտ մտածել թէ մեր  
 մայրը թագուհին հրեշտակաց երկինքն  
 է . փափաքինք արժանի ըլլալու իւր ան-

գառնալի բարեխօսութեւնը և լուսափայլ  
տեսութեւնը, միշտ և հանապազ ազազա-  
կելով առ նա • Առ քեզ ապաւինիմք ա-  
մենասրբուհի, գերագոյն և հրաշալի և  
բաշխօղ բարութեաց, աղբիւր ես ծարա-  
ւեաց և հանգիստ աշխատելոց: Մարիամ  
կոյս անարատ զանապական փետայդ ա-  
զաչեա՛ . զի հաշտեսցի ընդ այրի եղեալ  
հոգիս, և միաւորեսցի գարձեալ սիրով  
ընդ հեռացեալս 'ի նմանէ :

Ծ • ԿԻՐԱԿԻ :

Հ • Ո՞րն է հինգերորդ տաղաւարը :  
Պ • Է տօնախմբութիւն սուրբ խաչին  
Քրիստոսի, որ սուրբ եկեղեցին մեծա-  
հանգէս կը սլատուէ . որովհետեւ յմի  
նշանն է, ինչպէս առաջ ըսինք . հարկ է  
ոչ միայն սլատուել և երկիրպագանել,  
այլև իւր հրաշքներն հռչակել տօնախմբ-  
բութեմբ . որպէս զի սուրբ խաչին շնորհքը  
և օգնութիւնը մեզ ալ հասնի ու փրկէ  
ամենայն փորձանաց . ըստ որում կեր-  
գէ եկեղեցին . Ապաւինեցաք 'ի խաչ քո  
արարիչ յաւիտենից . որ ետուր մեզ սլա-  
հասան յաղթօղ ընդդէմ թշնամւոյն .  
աղաչեմք սովաւ փրկիչ սլահասանեա՛ զան-  
ձինս մեր :

Հ • Քանի՞ տօնախմբութիւն ունի :

Պ. Աւագ ուրբաթ քրիստոսի չարչարանքն ու խաչելութիւնը տօնախմբելով սուրբ խաչն ալ կը փառաւորենք. նոյնպէս ամէն ուրբաթ չարչարանաց և խաչին յիշատակութիւնը կը կատարենք. սակայն եկեղեցին՝ մասնաւոր տօնախմբութիւններ գրեր է խաչի. որ են չորս, և կը ավին գիւտ խաչ, երևման խաչ, վարագայ խաչ, և վերացման խաչ. այս կը ավինաև մեծ խաչ, զի մեծ տօնախմբութիւն կատարելով է տաղաւար, և ութ օր կը տօնենք հանդերձ եկեղեցնայ տօներովը :

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի գիւտ խաչը :

Պ. Քրիստոս իւր խաչը տվաւ աշխարհի սրահապան, և քրիստոնէից զօրացուցիչ. ըստ այնմ. Սուրբ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ քում սրբոյ : Բայց թշնամիք խաչին անօրէն հրէաները ջանացին կօրսընցնել՝ անծանօթ տեղ ձգելով և վրան բան լեցընելով անյայտ էր եղեր. մինչև դժխոյ հեղինէն մայրը կոստանդիանոս թագաւորին գնաց երուսաղէմ իբր իրէքհարիւր տարիէն ետև գտաւ :

Հ. Ի՞նչպէս գտաւ :

Պ. Շատ փնտրուելով և ծերերուն հարցընելով, նաև աղօթքով և տեսիլքով հասկըցաւ տեղը դողդոթային վրան. բայց շատ գանձ ծախեց, որ ժողովուրդն այնչափ տարւան հողը ետ աւին. սուրբ դժխոյն և երանելի յուգայն միատեղ կաշխատէին. մինչև զի՝ հրաշքով յայտ-

նըվեցաւ և մեռեալ պատանի մի խաչին վրա գնեւ լով յարութի առաւ : Ուստի մեծ թափօրով անուշահոտ խնկերով և մոմերով վերուցին խաչն երուսաղէմ կանգնեցին , որ շատ հրաշքներ ըրաւ . և գշխոյն հեղինէ մէկ կտորմ՝ առաւ խաչամայտէն ջերմեւադութն համար . որ կայ 'ի վէնէտիկ սուրբ հեղինէի մարմինն վրա : Արդ՝ 'ի շնորհակալութիւնս և 'ի փառաւորութիւնս սուրբ խաչին՝ եկեղեցին դրաւ այս տօնախմբութիւնն , որ ամէն տարի ամէն տեղ կը կատարի փառաւորելով զիճ . ըստ այնմ . Ձոր հրէիցն ծածկեալ զանթաքչելի զգանձն փափաքմամբ թագուհոյն փայտ կենաց յայտնեցաւ . եկայք ժողովուրդ երկրպագեսցի՛ք :

Հ . Ի՞նչ խորհուրդ ունի երևման խաչը :

Պ . Քրիստոսի խաչը գտնըվելէն ետև՝ ոչ միայն մասնաւոր հրաշքներ կրնէր , այլև երևելի հրաշքներ . ինչպէս էր այն , որ եղաւ քառսուներհինգ տարի ետև երուսաղէմ . որ կը պատմէ կիւրեղ երուսաղէմացին , թէ վասն հաստատութե ուղղափառ հաւատոյ երևցաւ խաչաձև լոյս երկինքը , և այնչափ ճառագայթափայլ կերևնար խաչին ձևն , որ բոլոր քաղաքը դուր սեղաւ , և ամէնքն երկրպագելով փառաւորեցին քրիստոսի խաչը . և այս տօնս այն խորհրդով սահմանեցին , երևման խաչ կոչելով , երկինքն

երևնալուն համար. ըստ այնմ. 'Ի յերկն  
նից երևեալ նշանն յաղթուածն այսօր  
հեթանոսաց ծագեաց լոյսդ ողորմութեւն :  
Ընդ երևումն սրբոյ խաչի քո քրիստոս  
այսօր երուսաղէմ մեծապէս պանծա-  
ցաւ յոյժ :

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի վարագայ  
խաչը :

Պ. Այս տօնախմբութիւն միայն մեր  
ազգը կը կատարէ ամէն տարի, պատ-  
ճառաւ հռիփսիմէ կուսին խաչափայտին,  
որ վիզը կախեր էր. և առաքելոց ժա-  
մանակէն պատրօնիկէ թագուհիին ձեռ-  
քնն էր անցեր. իսկ սուրբ հռիփսիմէ  
անոր ցեղէն ըլլալով երբոր գայխանէ կու-  
սին վանքը մտաւ՝ վիզը կախեցին. որ բե-  
րաւ հայաստան վարագայ լեռը պահեց.  
երբոր նահատակեցաւ՝ խաչը մնաց հոն :

Հ. Ի՞նչպէս գտան :

Պ. Թողիկ ճգնաւորը շատ պաղատե-  
լով ի՞նչ յայտնեց վարագայ լեռանը վրա  
խաչաձեւ լոյս, և լուսին մէջ կը փայլէր  
նոյն խաչն, որ մտաւ եկեղեցին և խորա-  
նին վրա կեցաւ. ամէնքը տեսնելով այն  
լոյսը հոն վազեցին և երկրպագութիւն  
ընելով համբուրեցին խաչը : Ահա այս  
խորհրդով կոչվեցաւ վարագայ խաչ. և  
այս տօնախմբութիւն անատենը գրին յի-  
շատակ սքանչելեաց խաչին քնի. ըստ  
այնմ. Որ յայտնեացն այսօր զփրկական  
նշանն հրեշտակացն իջմամբ 'ի լեռուն  
վարագայ :

Հ . Ի՞նչ խորհուրդ ունի վերացման խաչը :

Պ . Այս խաչին տօնախմբութիւն աւելի հանդիսաւոր ըլլալով տաղաւար ըսվեցաւ . որ նոյնպէս է յիշատակուի սքանչելեաց խաչին քնի . որ սրբօրից թագաւորը դերի տարեր էրեւո գարձուց տըվաւ հերակլ թագաւորին յունաց . և անոր համար այս մեծ տօնս դրվեցաւ :

Հ . Ի՞նչպէս ազատվեցաւ :

Պ . Սք խաչին զօրութիւն քրիստոնէայք միշտ յաղթեցին սրբօրից , և իրեք թագաւոր մեռան . մինչ զի՝ նեղն ընկան պարսիկները և խոտապան տալ . ուստի խուեմ թագաւորը մեծ պատուով զըրկեց հերակլ կայսեր . ան ալ հանդէսով երուսաղէմ զրկեց յամի տեառն 6/4 ին . ուր շատ ցնծութի և տօնախմբութիւն եղաւ . և սք խաչը վերացուցեալ օրհնեցին աշխարհս ու հաւատացեալ ժողովուրդներն . նաև նաւակատիկ և տօն սահմանվեցաւ . ըստ այնմ . Այսօր երևումն մեծի ճառագայթի նըշանի տեառն Իյ մերոյ վայելեալ ՚ի նաւակատիսն որ յերուսաղէմ . ժողովուրդք բարեբանելով զքն տօնեցէք ուրախութի :

Հ . Ի՞նչ է նաւակատիքը :

Պ . Ի տօնախմբութիւն և հանդէս եկեղեցնայ շինութե , և մեծ գործքի համար , ինչպէս հրէայք իրենց տաճարին համար կընէին : Այս խորհրդով մեր

Նախնիք սահմանեցին իրեք նաւակառիք նորաշէն եկեղեցեաց համար . որ կը կատարենք նախընթաց օրը վարդաւառին, վերափոխման, և խաչին . և հանդիսաւոր տօնախմուծէր համար հակըթեղէն կուտենք : Այս ամէն հանդէսներն են եկեղեցնայ համար, որ իբր հարսն քսի կը փառաւորենք . նաև հաստատութիւն և խաղաղութի կը խնդրենք . ըստ այնմ . 'Ի վերայ վիմի հաւասոյ շինեցեր զքո սբ զեկեղեցի . զսա սգահեա՛ ի խաղաղութեան :

Հ . Քրիստոնէայն ի՞նչ խորհրդածուծիւն պիտի հանէ :

Պ . Բարի քրիստոնէայն այս տօնախմբութիւնները կատարելով պիտի զարմանայ անձային նախախնամութէր վրա . որ այսչափ կը հոգայ եկեղեցին, և կը զօրացնէ հաւասօքը զօրութիւն սբ խաչին . ուստի շնորհակալ ըլլալով պիտի ջանայ բարի գործքով սբ մնայ 'ի ծոց սբ եկեղեցնայ . ասպաւինելով քսի խաչին, և միշտ օգնուիր խնդրելով այսպէս . Փայտ կենաց կանգնեալ 'ի մէջ տիեզերաց, յոյս և ապաւէն ազգի մարդկան . սա սգահեսցէ զմեզ յամենայն վտանգից մերոց . ապրեցուցանել զմեզ 'ի սպարանաց թշնամւոյն :

Հ. Ի՞նչ խորհրդով դրեր է եկեղեցին յիշատակութիւն սրբոց:

Պ. Վասն զի սուրբերն են բարեկամք ան, և շնորհօքն ան լուսաւորեալ փառաւորեցան թէ աշխարհիս վասն հրաշագործութիւն և թէ երկինքը անձային փառօք, որպէս ասաց իմաստունն. Ուրիշ արդարոց 'ի ձեռնն ան և ոչ մերձեացի 'ի նոսա մահ. թուեցան յաչս անդգամաց թէ մեռան, բայց նոքա 'ի խաղաղութեան: Ահա այս խորհրդով եկեղեցին կը տօնէ սուրբերը առ 'ի փառաւորել զանձ. ըստ այնմ. Ղուսաւորեալք 'ի յերկրի պայծառացեալք 'ի յերկինս և դասակցեալք ընդ հրեշտակս. եկայք ժողովուրդք ցնծութիւն տօնեացուք:

Հ. Ո՞ր օր կը յիշատակին սուրբերը:

Պ. Հասարակօրէն սուրբերուն յիշատակն իրենց վախճանած օրը կը կատարենք. և նոյն օրը կը ավի իրենց ծնած օրն, որ ծնան յերկինս յաւիտենական փառօք: Բայց կան սուրբեր որ իրենց չարչարանաց օրը, և նշխարաց գիւտը կը տօնենք. ինչպէս ան լուսաւորչայ թէ մուտն 'ի վիրապը կը տօնենք, թէ ելն 'ի վիրապէ, և թէ գիւտ նշխարացն: Կան յոհաննու մկրտչին ծնած օրն ալ, նշխարքին օրն ալ կը տօնենք:

Հ. Ի՞նչ կարգով կը յիշատակենք :

Պ. Երկու կարգով. մէկը կըսվի յայս-  
մաւուրքի կարգ, մէկալը տօնացուցի :  
Յայսմաւուրքի կարգն ուրիշ աղգաց ա-  
ւելի յարմար է, որ ամսուն ամէն օր-  
ւան վրահասպած ըլլալով կարգաւ ամէն  
օր յիշատակութիւն կըլլայ սրբոց՝ թէ  
սպաք ըլլայ, թէ ուտիք, և թէ կիրակի  
կամ տօն. իսկ տօնացուցի կարգն ու-  
րիշ կերպ է :

Հ. Ի՞նչ կարգով է :

Պ. Նախ՝ շատ տէրունական տօներն  
աւելի պատուելու համար կիրակի օր  
գրած է. զորօրինակ վարդավառ, վե-  
րափոխումն, խաչ, ևն. որ ուրիշ աղ-  
գերը կընեն օրւան կարգի վրա. երկ-  
րորդ՝ մեծամեծ սուրբերուն յիշատա-  
կը շաբաթ կը գնէ աւելի պատիւ ը-  
լլալու համար. երրորդ՝ չորեքշաբթի,  
ուրբաթ, և շաբաթական սպաքին նբոց  
յիշատակութիւն չըլլար, այլ ապաշխա-  
րութե օրեր են. իսկ ուրբաթ ննջեցե-  
լոց յիշատակութիւն կըլլայ :

Հ. Այն ուրիշ կարգ :

Պ. Ընդհանուր կարգմ՝ ալ կայ, որ  
ամէն մէկ օր՝ սուրբերուն նուիրած է .  
զորօրինակ երկուշաբթին է հրէշտակաց,  
իրեքշաբթին՝ մարգարէից. հինգշաբ-  
թին՝ առաքելոց. շաբաթ՝ մարտիրոսաց  
և այլ նբոց. ուստի նոյն օրերն ընդհան-  
րապէս յիշատակութիւն մի կըլլայ նոյն  
սուրբերուն : Իսկ չորեքշաբթին ըն-

ծայած է անձանց, ուրբաթ՝ չարչարանաց, և կիրակին, յարութէ :

Հ. ՍԹ յոհաննէս ո՞ր կարգին մէջըն է :

Պ. Հասարակօրէն կը համարի մարդարէ և առաքեալ, կամ մարդարէից լրումն և առաքելոց սկիզբն. նաև կըսվի կարաստ, մկրտիչ, և մտրտիրոս. անոր համար այլևայլ օր կը տօնենք. ըստ այնմ. Փութացի մեզ յօգնութիւն առ ՚ի վերուստ սբ յոհաննէս, առաքեալ և մարդարէ և կարաստ և մկրտիչ որդւոյն ան :

Հ. Սուրբ յովսէփ ո՞ր կարգին մէջըն է :

Պ. Քնի նահատետաց կարգէն կը համարի հասարակօրէն. սակայն յոգայի ցեղէն ըլլալով աղքական և փեսայ էր սբ կուսին. նաև պաշտպան կամ խնամակալ ըլլալով յնի՝ անձանց կօշվելու արժանի եղաւ. անոր համար սբ եկեղեցին մեծապէս պատուելով տօնը կը կատարէ, և մեծ հանդէս կըլլայ արևմուտք ՚ի պատիւ սուրբ յովսէփայ անձանց. որ է բարեխօս անոնց, որ կը փափաքին բարի մահուան արժանի ըլլալու : Նմանապէս նահատետաց կարգէն կը սեպվին սբ յովակիմ և աննա ծնողք անոնց. որոնց մասնաւոր տօնը կը կատարվի վերստի խնամէն ետև :

Հ. Ի՞նչ է պաշտպան սուրբը :

Պ. Է մասնաւորաց պաշտպան և ա

Նուանակից սուրբ. զի եկեղեցին սորվեցուցեր է, որ ամէն մարդ իւր անուան սուրբը միշտ պաշտպան բռնէ, և ամէն տարի անուան օրը ջերմեռանդութեամբ օգնութիւն խնդրէ պատարագ տեսնելով և ողորմութիւն տալով: Նաև պէտք է շնորհակալ ըլլայ անոր, որ նոյն օրուան հասուց զինքն, և խնդրէ պաշտպանութիւն սուրբին. որպէս զի բարի ապրի, և անվընաս հասնի միւս տարւան. մինչև բարի անուամբ արժանի ըլլայ տեսնելու իր սուրբն արքայութե մէջ:

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի տօն ամենայն սրբոց:

Պ. Բոլոր սուրբերուն յիշատակը կատարելով պիտի փառաւորենք զսօժ մեծ շնորհակալութե, որ սրբացուց և փառաւորեց սուրբերը. նաև սուրբերուն յաւիտենական տօնախմբութեք մասնակցելով՝ պարտական ենք զմեզ զարթուցանելու առ ՚ի նմանիլ վարուց և առաքինութեց սրբոց. միջնորդ բռնելով զանոնք և շնորհք խնդրելով անվըտանդ անցնիլ այս սուտ աշխարհէս, և բաժանորդք ըլլալ իրենց փառացն:

Հ. Ի՞նչ խորհուրդով կը տօնենք հրեշտակները:

Պ. Ըստ վարդապետութեան սուրբ գրոց և սբ եկեղեցնայ՝ հրեշտակները ոչ միայն կարգեալ են պաշտպանել և օգնել մարդոյ, այլև բարեխօսելով առ սօժ կալաղակեն մեզն համար, ողորմեա ա.

բօրածոց քոյ և մի կորուսաներ . անոր  
համար մասնաւոր տօնախմբութեամբ  
կը փառաւորենք զած . հաշակելով ի-  
րենց փառքն ու մեծութիւնը , և կը խընդ-  
րենք օգնականութիւնն , որ մենք ալ  
արժանի ըլլանք այն փառացն . որոնք  
մեր ալօթքը կը տանին իբր բուրումն  
խնկոց առաջի անմահ գառին այ՝ ըստ  
յայտնութեան յոհաննու աւետարան-  
չին :

Հ . Ունի՞ ամէն մարդ սահասական հրեշ-  
տակ :

Պ . Այո՛ ինչպէս կը հաստատէ սուրբ  
գիրքը , վասն զի երբոր պետրոս առա-  
քեալ բանտէն ելաւ տուն գնաց դուռը  
զարկաւ , կարծեցին թէ իրեն հրեշտակն  
էր . և ինչպէս որ տղիթին որդւոյն պա-  
հասական ըլլալով հրեշտակը՝ տարաւ և  
բերաւ հօրը տվաւ որդին , այսպէս ամ-  
մէն մարդ , նաև փոքրիկ սղաքն ունին  
սահասական հրեշտակ , որ զիրենք կը պա-  
հէ սատանայի և աշխարհի փորձանքնե-  
րէն : Սակայն կերենայ թէ մեծ սուր-  
բերուն հրեշտակն է վերի դասերէն .  
ինչպէս լուսաւորչայ հրեշտակն էր չոր-  
րորդ դասէն . ըստ այնմ . Իսկ ՚ի չոր-  
րորդն դասէ սաշտական եղեալ լուսա-  
ւորչին :

Հ . Ի՞նչպէս պիտի սատուենք մեր  
սահասական հրեշտակը :

Պ . Նախ՝ պիտի շնորհակալ ըլլանք  
անձային անբաւ երախտեացն , որ այս .

չամբ գթով մեզ կը խնամէ, ժինչ զի իւր  
 հրեշտակները մեզ մեղաւորաց պահա-  
 պան ավեր է. որպէս կը հաստատէ ա-  
 ռաքեալն: Երկրորդ՝ ջերմեռանդ ըլլա-  
 լով պիտի ջանանք զգուշաւոր ըլլալ, և  
 նր սպրիլ հրեշտակին առջին, որ միշտ  
 մեզի հետ է: Երրորդ՝ պիտի իրար սի-  
 րենք և պատուենք, ժինչև փոքր տղաքը.  
 վասն զի ամէնքն ալ հրեշտակ ունին, որ  
 մեծ են առաջի անջ. ինչպէս որ պատ-  
 ուիրեց քս. Զգոյշ կացէք մի արհամար-  
 հիցէք զմի՛ ի փոքրկանցս յայսցանէ. ա-  
 սեմ ձեզ զի հրեշտակք նոցա հանապազ  
 տեսանեն զերեսս հօր խնայ, որ յերկինս  
 է: Վերջապէս պարտական ենք ըլլալու  
 իբրև հրեշտակ անջ նր և մաքուր վարուք  
 հեռու փախչելով պակասութեց, ըստ  
 որում հեռու են հրեշտակները. և փա-  
 ռաւորելով զանձ սիրով և բարեպաշ-  
 տութեամբ նման հրեշտակաց. որոնք  
 անգագար կը փառաւորեն զանձ: Քաղց-  
 րաձայն երգով գոհաբանօլք որգւոյն  
 միածնի դասք հրեշտակաց. բարեխօս  
 լերուք ընդ մեղաւորացս:

Հ. Ինչ խորհրդով կըլլայ յիշատակ  
ննջեցելոց :

Պ. Սուրբ եկեղեցին սահմաներ է  
մասնաւոր օր հաւատացեալ ննջեցեալ  
ներն յիշելու համար, որ ամէն ազգի  
մէջ կայ, և ամէն մարդ պարտական է  
նոյն օրերը մեռելներն յիշել տայ՝ պա-  
տարագով, ողորմութիւն, և աղօթքով: որ  
մենք մեռելոց կըսենք :

Հ. Ինչո՞ւ կըսվի մեռելոց :

Պ. Վասն զի նոյն օրերը բոլոր աղօթք-  
ներն եկեղեցիայ մէջ մեռելոց համար  
կըլլայ. և պատարագէն ետև թափօրով  
խնկով և մոմով կերթան գերեզմաննո-  
ցը. ամէն մարդ իր մեռելներն օրհնել  
կուտայ թէ ծնողքն ըլլայ, թէ ազգա-  
կանը, թէ բարեկամը, և թէ բարերա-  
րը. նաև անօգնական մեռելներն, որ շատ  
մեծ վարձք է, և հին սովորութիւն. ինչ-  
պէս կը պատուիրէ լուսաւորիչ :

Հ. Քանի՞ անգամ պիտի ըլլայ :

Պ. Մեր արարողութիւնը հինգ տա-  
ղաւարին երկրորդ օրերը մեռելոց սահ-  
մաներ է. որպէս զի նոյն հանդիսաւոր  
տօնախմբութիւն ետև յիշենք մեռելնիս,  
և այն անհուն գանձէն ողորմուի խընդ-  
րենք ննջեցելոց համար. որով և արքայ-  
ութեան տեսութիւն արժանի ըլլան : Աւս-  
տի մասնաւորապէս հինգ օր ննջեցելոց

ունինք . նաև վարդանանց օրն ալ մեռե-  
լոց է . զի նոյն օրը շատ նահատակ ե-  
ղան , և բարեկենդանի օրերը լլալով՝ ար-  
ժան է յիշել մեռելներն ուղորմութիւն .  
նաև ամէն ուրբաթ յիշատակութիւն կըլ-  
լայ ննջեցելոց :

Հ . Ի՞նչ կը նշանակէ մոմով և խնկով  
գերեզմաններն օրհնել :

Պ . Կը նշանակէ միտիթարութիւն և  
ուրախութիւն . որով հոգիք պատարա-  
գով և աղօթքով կը թեթևանան ժամա-  
նակաւոր պատիժէն , ու փառաւորե-  
լով յաւիտենական ցնծութեան արժա-  
նի կըլլան . ըստ այնմ . ' Ի յօթևանս հօր  
իւրոյ կոչէ զգասս արդարոց , և յան-  
պատում 'ի բարիս , զոր խոստացեալ է  
նոցա :

Հ . Ինչո՞ւ գերեզմանները կ'օրհնեն :

Պ . Որովհետև մեռելին ոսկորները  
գերեզմանին մէջն են . հոն աղօթքը կը-  
նեն՝ որ հոգին արքայութեւ արժանի ըլ-  
լայ , ու աւուր գատաստանին դայ հոն  
նոյն մարմնոյն հետ միանայ , և փառա-  
ւորէ հող եղած և փթտած մարմինը .  
ըստ այնմ . Աւետեօք տեառն մեռեալք  
յառնեն , և սուրբք ամենայն անճառ  
փառօք զարդարին :

Հ . Ի՞նչ պիտի մտածենք գերեզման-  
նոցը :

Պ . Նախ՝ պիտի մտածենք և խոնար-  
հինք , որ մենք ալ օր մի ասունց նման  
հող պիտի դառնանք , ինչպէս որ առաջ

ալ հողէն եղած ենք . ահա ասոնք ալ մեզի նման կը քալէին . կը խօսէին , և կը զարդարվէին . բայց հիմա քարերուն տակն են մնացեր . ո՛ւր է այն լեզուն , որ մեծ մեծ կը խօսէր . ահա հող եղած է . ո՛ւր է այն մարմինն որ զարդարված կը սլաքտէր , ահա քանի մի հողոտ ոսկորները կան : Ինչպէս որ Իյ անդառնալի վճիռը կատարվեցաւ իրեն վրա , օրմ' ալ իմ վրաս պիտի կատարվի . թէ հող էիր և 'ի հող դարձցիս . ես ալ պիտի մանեմ այս հողէ տունը . ես ալ պիտի փթտիմ հող ըլլամ . իմ վրաս ալ պիտի դալեն մարդիկ , ինչպէս ուրիշին վրա ես կը քալեմ . ինձի ալ պիտի ըսեն՝ Ի՞ծ ողորմի հոգւոյն :

Հ . Երկրորդ՝ ի՞նչ պիտի մտածենք :

Պ . Պիտի մտածենք , թէ այս մարդիկներուն մարմինը թէպէտ հող եղած և ոսկորները որդերու բուն են , որտղաքն ալ ձեռքերնին կառնեն կը նային . սակայն ասոր անմահ հոգին արդեօք ո՛ւր տեղ է . քանի որ ողջ էր՝ մարմինը բան մի կը կարծըվէր . ահա տեսանք որ հող է . բայց հոգին չենք տեսներ , թէ ի՞նչ վիճակի մէջ է . եթէ արդարոց կարգն է՝ երանի՛ իրեն . իսկ եթէ դատասպարուելոց կարգն է , վայ իրեն . արդեօք ի՞նչ սարսափելի տանջանաց մէջն է , և ի՞նչ դառն է վիճակը : Արդեօք իմ ոսկորներս որ տեսնեն մարդիկ ի՞նչ պիտի զուրցեն . վայ պիտի ըսեն , թէ երանի . ա-

նէ՛ծք պիտի կարգան , թէ ողորմիս մա-  
նաւանդ թէ՛ իմ գործքս զիս ի՛նչ վիճա-  
կի մէջ պիտի գնէ , արդարո՞ց , թէ գա-  
տապարտելոց . ահա քս՛ վճռեց , թէ ո-  
րոց բարիս գործեալ իցէ՛ ՚ի յարութի  
կենաց , և որոց զչար արարեալ՝ ՚ի յա-  
րութի դատաստանաց . հապա ես չար  
գործքովս ի՛նչ պատասխան պիտի տամ  
անաչառ բեմին քսի և ահաւոր դատա-  
ւորին . որ ոչ միայն բարեգործութիւն  
պիտի պահանջէ եամէ , այլև զտաղանդ  
պատուիրանին , որ չարաչար վատնեցի ,  
որ պատուիրաններն անարդեցի , սուրբ  
խուրհուրդներն անպէտ ըրի , և շնորհք  
ները փճացուցի , ի՛նչ պատասխան տամ  
պիտի վայ ինձ , և կրկին վայ ինձ : Չու-  
նիմ ուրիշ ճար , բայց ահա իւր ողոր-  
մութեանն սպաւինելով կազազակեմ .  
Ստեղծուած եմ անարատ ձեռաց քոց ,  
մի անտես առներ . այլ խնայեա՛ յիս յա-  
հագին աւուրն , տէր զտպաւինեալս յի-  
շեա՛ ՚ի քում գալտեան :

Հ . Երբորդ՝ ի՛նչ պիտի մտածենք :

Պ . Պիտի մտածենք , թէ այս հող ե-  
ղած մարմինն , որ պիտի յարուի առնէ .  
եթէ արդար է՛ ի՛նչպէս պիտի փառաւո-  
րի , և ի՛նչպէս ուրախանայ անպատմելի  
ցնծութե՛ք . իսկ եթէ դատապարտեալ  
է՛ ի՛նչպէս պիտի զարհուրելի տխուր և  
գժոխային ըլլայ : Արդեօք ես ի՛նչպէս  
պիտի ելլեմ գերեզմանէս , իմ հոգիս  
ուսկէ՞ց պիտի գայ միանայ մարմինիս

հետ. արքայու թե՛նէն թէ գժոխքէն .  
այն ի՛նչպիսի սարսափելի վայրկեան է  
ինձի , թէ որ լսեմ . Երթայք յինէն ա-  
նիծեալք . և այն ի՛նչպիսի ցնծալից վայր-  
կեան է , թէ որ լսեմ . Եկայք օրհնեալք  
հօր խնայ . երանի՛ այն ականջին , որ այս  
ձայնը պիտի լսէ : Ահա՛ այս է ճշմարիտ  
յարու թի՛ ի կեանս և մի միայն միսի թա-  
րու թի՛ հաւատացելոց . որ ամէն ազգաց  
սրտին մէջ գրած է , թէ նոյն իսկ մար-  
մինն յարու թի՛ առնելով , և փառաւո-  
րեալ հոգւոյն հետ միանալով նոր  
կեանք կրակըսի , անծերանալի կեանք ,  
անվերջանալի ցնծութի , անտրտում ու-  
րախութիւն , և անպտտմելի փառք :  
Բայց արգարք յաւիտեան կացցեն և ՚ի  
տեառնէ վարձք նոցա , և խնամք նո-  
ցա ՚ի բարձրելոյն . վասն այսորիկ ըն-  
կացին զարքայութիւնն և զթագն գե-  
ղեցկութե՛ ՚ի ձեռանէ տեառն . ասաց  
իմաստունն :

Հ . Չորրորդ՝ ի՛նչ պիտի մտածենք :

Պ . Այս ամէն մտածականներն ընե-  
լէն ետև չորս խօսք պիտի գրենք մեր  
որտին մէջ՝ մահ , դատաստան , գժոխք ,  
և արքայութիւն . ահա՛ այս բաներն ա-  
նանկ խոր պիտի տպաւորին , որ ամէն  
կէտ պիտի յիշենք , և առաջնիս բերենք  
նախ մահը , թէ չիմա՛ Ե՛յ հոգի պիտի  
տանք . երկրորդ՝ դատաստան պիտի ել-  
լենք՝ Ե՛յ պատասխան տանք . երրորդ՝  
գժոխք կայ դատաստարտելոց՝ չըլլայ թէ

չար գործքով յաւիտեան գատապարտիմք . չորրորդ՝ արքայութի կայ, և անտեսութի, արդեօք արժանի սխախտում վայելելու անանց բարին, անզրաւ կեանքն, անճառելի լոյսն, և անբաւ երանութիւնն անճային քաղցր տեսութե, և երկնից արքայութեան յաւիտեանս յաւիտենից : Յորժամ զտաղանդ սատուիրանին սրահանջեսցես՝ ի ծառայիցն, ընդ կրկնաշահ քանքարացն՝ արժանացն զմեզ քն ուրախութեք՝ յերկինս :

Հ . Հինգերորդ՝ ինչ սխախտածեք :

Պ . Աերջասպէս սխախտածեք, թէ ինչպէս որ ամէն բանին սկիզբն է անձ, յորմէ եղև ամենայն ինչ . այսպէս ամէն բանին վերջն է անձ, ամենայն բան իրեն փառացն համար է, և ամենայն բանին արարչական և վախճանական սրահանջն անձ է : Ուստի ստեղծեց և ինամարկեց մարդն ողորմութեամբ . պատուիրան տվաւ, որ բարի ըլլան . հաւատք և կրօն տվաւ, որ լուսաւորվին և փրկութեան հասնին . խորհուրդներն հաստատեց, որ շնորհազարդեալ որդիք անձ գրվին, և արքայութե ժառանգ ըլլան . անոր համար ասաց իմաստուն մի . Չարմանք մեծ . զի կրօն քրիստոնէական թուի թէ չունի զայլ ինչ նպատակ, եթէ ոչ երջանկութի անտի կենաց . նաև առնէ երանելի յաստի կեանս :

Հ. Ի՞նչպէս կը միանայ հոգին մարմնոյն հետ :

Պ. Աճային ամենազօր հրամանաւ միայն կը միանայ . որ փչելով հոգին կապեց ադամայ մարմինին հետ, և ըրաւ մարդ կենդանի . նաև հրամայելով զազարու հոգին ելաւ լիմպոսէն եկաւ հոտած մարմինին հետ միացաւ, և ելաւ գերեզմանէն մարդ կենդանի . ահա նոյն ձեռքով հրամանաւ երբ կուգայ հոգին գերեզմանին քով՝ ոսկորները կը ժողվելին, և իրարու կապվելով կըլլայ մարմին, ինչպէս եղան եզէկիէլ մարգարէին յարուծի աված ոսկորները . ապա հոգին միանալով կելլէ գերեզմանէն մարդ փառաւոր՝ եթէ է երանեալ, կերթայ ընդհանուր դատաստան և վարձատրեալ հոգևով և մարմնով կը թագաւորէ ընդ թագաւորին յաւիտենից՝ անձառելի և անվերջանալի փառօք . որուն համար մարդ ստեղծվեցաւ, քրիստոնեայ եղաւ, քրիստոնէաբար ասրեցաւ, քրիստոնեայ մեռաւ, և ընդ քրիստոսի կը միանայ երանութեամբ : Յորժամ փառօք հայրենի քս ծագիս ՚ի յերկնից, և յարուցանես զմեռեալն, յայնժամ զասեան ընդ աջմէ քուսմէ, և կոչես զմեզ ՚ի փառս քո :

Արդ՝ որպէս վախճան մարդոյ է անվասարիլ, անվմեռնիլ, անվյառնել, և ինչ թագաւորելը այսպէս և այս մեր վարդասպետուէ վախճանն է անվ սերմանիլ

'ի սիրտս ամենեւոցուն . ամլ պողաբերիլ  
 յաճումն առաքինական գործոց ամսաշ-  
 ատութիւն , և առ ամ վերաբերիլ . որոյ  
 վասն ըստ առաքելոյն՝ ոչ դադարեցայ  
 արտասուօք խրատել զերկեամ մի զմի մի  
 խրաբանչիւր 'ի ձէնջ յամենայն կիւրա-  
 կէի յառաւօտուն քարոզելով , և յերե-  
 կոյնն խրատաբանելով յայս եկեղեցի ,  
 պարտաւորեալ յառաքելական և 'ի վլքա-  
 րական պաշտօնէս . ակն ունելով թէ որ-  
 պէս մեռեալք սերմանին մարմինն շնչա-  
 ւոր և յառնեն մարմինն հոգևոր , սեր-  
 մանին ապականութեամբ և յառնեն փա-  
 ոօք . այսպէս և այս խրատական սեր-  
 մունք հոգևորապէս ուսճացետլ 'ի սիր-  
 տարս ձեր՝ յառնեն փառօք փառաւորե-  
 լով և լուսաւորելով զմիտս և զհոգիս  
 ձեր 'ի սէր առաքինական գործոց և երկ-  
 նային ուրախութիւն . որով ապա լուսա-  
 պանծ երևեալ մեր ամենեւոցուն ընդ ա-  
 ջակողմեան դասուն երջանկաց յահա-  
 ւոր բեմին քնի , հասցէ ինձ ասել առ քն  
 համարձակութիւն . Ահա ես և մանկունք  
 իմ , զոր ետ ինձ ամ . կամք ամենեւեան  
 և ակն ունիմք տեսոյն քնի : Պայծառաս-  
 ցին լապտերք հոգւոց մերոց և բաղմե-  
 ցուցես զմեզ ընդ հրաւիրեալսն 'ի կո-  
 չումն արքայութիւն երկնից : Լսելով ապա  
 զերանաւէս զձայն կենարարին . Ահայք  
 օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զպա-  
 տրաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի սկըզ-  
 բանէ աշխարհի :

Ազատ 'ի վախճանի' վերջին խորհրդա-  
 ծուք նկատեսցուք թէ հոգիք երանե-  
 լեաց երբ գան միանալ ընդ հող մահու  
 ննջեցեալ մարմինս իւրեանց՝ զինչ ինչ  
 արդեօք մարթ է նոցա խօսիլ ընդ մի-  
 մեանս, որպէս զարմանալ ընդ հիանալի  
 վիճակս իրերաց :

### Հ.ԳԻ.

Հողազարդ կրմախբ որդնակէր մարմին ,  
 ո՞վ զխորդ գընիս 'ի գուբ խաւարին .  
 արի 'ի հողոյ եկ մերձաւոր իմ,  
 արի 'ի ժանեաց մահու դառնագին :

### Մարմին .

Արդ զինչ տեսանեմ հողս 'ի մուժ  
 բանաին՝  
 զոմն անձացեալ հոգի լուսածին .  
 չըժուժան հայիլ հողալից աչք իմ,  
 յարիխափայլ գեղ անմահականին :

### Հ.ԳԻ.

Յիշե՛մ տանապեալդ 'ի կեանս աղքատին՝  
 վըշտատես ցաւեամ մեռեալ յաշխար-  
 հին .  
 դու իմ լըծակից մահացեալ մարմին ,  
 ես քս վերնաձեմ երջանիկ հոգին :

## Մարին .

Բենամբարձ հոգի վեհ անձակիր ,  
 ո՛հ դու ես այն իմ հոգի լըծակիր :  
 զիս 'ի հող զանգեաց քունն անձագիր ,  
 բաբէ իբր ըզքեզ արար լուսալիր :

## Հոգի .

Մի զիմ լուսափայլ տեսիլ շնորհաձիր  
 յանձեան փառաց ամբարձեալ 'ի ծիր'  
 մի օտար 'ի քէն անարժան դատիր ,  
 դու ես ընդ կրրիւք ես հոգի անկիր :

## Մարին .

Իսկափայլ պատկեր արարչականին՝  
 զիարդ հողս առ քեզ մերձիլ ժպրհիմ .  
 յորդանց 'ի ճճեաց հիւժեալ ոսկերք  
 իմ՝  
 ընդ տիրականիդ արդեօք կապեսցի՞ն :

## Հոգի .

'Նորասքանչ հրաշիւք անյեղլի վճռին՝  
 կերեալքն 'ի յորդանց արդ 'ի լայս  
 դարձցին .  
 որ 'ի կառ փրչեաց միացոյց զհոգին ,  
 նոյն անլոյծ կապէ զհոգի ընդ մարմին :

## Մարտին .

Ահա հիանամահա մերբերիմ,  
 արդ փրտեալ կըմախքս 'ի գեղ կերպա-  
 գրին .  
 բայց ի՞նչ մեծասքանչ հրաշից հանդի-  
 պիմ՝  
 ի՞նչ ընիմ կցորդ փառացդ հոգի՛ իմ :

## Հ֊ԳԻ .

Սէր երկնաւորին սէր հանուրց փրկչին՝  
 տայ զանանց բարին ընդ անցաւորին .  
 զի 'ի միասին տարաք զփոքրոգին ,  
 յաւիտեան բերկրիմք արդ 'ի միասին :





# Յ ԱՆ Կ

## Ա. Կ Ի Ր Ա Կ Ի :

Առաջին վարդապետութիւն յառաջաւորութիւն .	5
Յայտնութիւն յառաջաւորութիւն .	6
Սկիզբն .	7

## Բ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Ոչինչ .	12
Առաջին սրտաշար .	14
Կարգ արարչութիւն .	15

## Գ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Վեցորեայ արարչութիւն .	17
Շարժումն երկնից .	19
Կենդանիք .	21
Ազամ եւա .	23
Հողեղէն արարածք .	24
Չար, և բարի հրեշտակք .	25

## Դ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Դրախտ .	26
Ծառ կենաց, և ծառ դիտութիւն .	28
Անկումն նախաստեղծից .	28
Ծնունդք ազամայ .	30

Ջրհեղեղ .	31
Աշտարակաշինութիւն .	31

## Ե . Կ Ի Ր Ա Կ Ի :

Հայր արահամ .	34
Մէլքիսեդեկ .	35
Սահակ և Յակոբ .	35
Մովսէս .	36
Եւք խորայէլացոց .	38
Յոբ .	39

## Զ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Տեսիլ 'ի սինա .	40
Որթ ոսկի .	41
Տապանակ ուխտի .	42
Խորան վկայութե .	43
Յեսու .	45
Դատաւորք .	46
Թագաւորութիւն .	46

## Է . Կ Ի Ր Ա Կ Ի :

Գերութի հրէից .	49
Աղատութի նոցա .	50
Մակաբայեցիք .	51
Հերովդէս .	53
Բարձումն քահանայապետութե .	54

## Ը. Կ Ի Ր Ա Կ Ի :

Ծնունդ փրկչին .	56
Մկրտութի .	57
Չարչարանք և թաղումն .	58
Յարութիւն . հոգէգալուստ .	61
Քարոզութի առաքելոց .	62
Կործանումն տաճարին .	62
Հալածանք եկեղեցւոյ .	63

## Թ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Մարդարէք .	65
Առաքեալք .	66
Վարդապետք .	71
Աճաշունչ .	72

## Ժ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Համառօտախօսութի .	75
-------------------	----

## ԺԱ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Երկրորդ վարդապետութիւն հա լատոյ .	87
Սւանդութիւն .	88
Հաւատաւք .	90

## ժԲ. ԿԻՐԱԿԻ :

Ճողովք .	92
Մասունք հաւատոյ .	95

## ժԳ. ԿԻՐԱԿԻ :

Բացատրութիւն հաւատամքին .	97
Պարզութիւնն .	99
Արարչագործութիւն .	101
Անունն .	103

## ժԴ. ԿԻՐԱԿԻ :

Միութիւնն .	105
Յատկութիւն երկոց անձանց .	107
Գեղազանցութիւն մարդոց .	108

## ժԵ. ԿԻՐԱԿԻ :

Մեօխա .	110
Մարմնաւորութիւն .	112
Աճամայրութիւնն .	114

## ժԶ. ԿԻՐԱԿԻ :

Մի անձն քնի .	115
Հակառակօղք մարդեղութեան .	116
Աւաջօքեանք .	119

## ԺԷ. ԿԻՐԱԿԻ:

Խորհուրդ չարչարանաց .	121
Անպարտական մահ .	122

## ԺԸ. ԿԻՐԱԿԻ:

Լիմպոս .	129
Խորհուրդ յարութի, և համբարձման .	130

## ԺԹ. ԿԻՐԱԿԻ:

Խորհուրդ երկրորդ դալատեան .	136
Առանձնական, և ընդհանրական դատաստան .	137
Միջական հոգիք .	140

## Ի. ԿԻՐԱԿԻ:

Հոգին սբ .	142
Շնորհք .	144
Զնջումն մեղաց .	145

## ԻԱ. ԿԻՐԱԿԻ:

Յաւիտենական երանութիւն .	147
Նախասահմանութիւն, և անարդեալք .	151
Նշանք փրկելոց .	151

## ԻԲ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Եկեղեցի .	153
Նշանք և յատկութիւնք եկեղեցւոյ .	156

## ԻԳ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Հաղորդութի սբօց .	159
Թողութի մեղաց .	160
Յարութի մարմնոց .	160
Սաղութեանք .	162

## ԻԴ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Յաւիտեանական կեանք .	165
Մովսէս և սյօղոս անձատեսք .	166
Ենովք և եղիա .	167
Հաղարամեայք .	168
Կայանադիրք .	169

## ԻԵ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Գործք երկոյ անձանց .	171
Պարտք քրիստոնէից .	173
Խաչակնքեւ .	173

## ԻԶ . Կ Ի Ր Ա Կ Ի :

Ալօթք .	175
Հայր մեր .	177

## ԻԷ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Խորհուրդ հայրմերին .	180
Նշանք անձային կամաց .	181
Խորհուրդ ողջունին .	185

## ԻԸ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Պաշտօն , երկրպագութիւն .	187
Յարգութի պատկերաց .	189
Պատկերամարտք .	190
Պատիւ խաչին .	191
Նշխարք սբց .	191
Ածաբանական առաքինութիւնք .	193
Ներգործութիւնք քրիստոնէի .	195

## ԻԹ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Երրորդ վարդապետութի բարոյա- կան .	198
Պատուիրանք .	199
Օրէնք հեթանոսաց .	200
Տանաբանեայ պատգամք .	201
Լրումն պատուիրանաց .	203

## Լ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Առաջին պատուիրան .	205
Ածսիրութիւն .	206
Կռակաշտութիւն .	206
Աւելորդապաշտութիւն .	207

Կախարդութիւն .	207
Եղբայրսիրութիւն .	210
Անողորմութիւն .	211
Գայթակղութիւն .	212

### ԼԱ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Երկրորդ սրատուիրան .	213
Հայհոյութիւն .	214
Սուտ երդումն .	214
Ուխտազանցութի .	215
Երրորդ սրատուիրան .	216

### ԼԲ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Չորրորդ սրատուիրան .	219
Պարտաւորութի զաւակաց և հօտակաց .	219
Պարտաւորութիւն ծնողաց .	225
Պարտաւորութիւն եղբարց և քերց .	225
Պարտաւորութիւն առն և կնոջ .	226

### ԼԳ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Հինգերորդ սրատուիրան .	227
Անձնասպանութիւն .	227
Պաշտպանութի անձին .	229
Զրպարտութիւն .	229
Վեցերորդ սրատուիրան .	230
Շնութիւն և զէղխութիւն .	230
Պարկէշտ սղջաստհութիւն .	232

## ԼԴ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Եօթներորդ պատուիրան .	233
Գողութիւն , խաբէութիւն , զըր- կանք .	235
Ութերորդ պատուիրան .	236
Սուա վկայութիւն , դատողութի .	237
Յայտնութի գաղանեաց .	237
Քսութիւն , բամբասանք .	238
Նախատինք , և ծաղրել .	240

## ԼԵ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Իններորդ պատուիրան .	241
Յանկութիւն կնոջ .	241
Զգուշութիւնք .	241
Տասներորդ պատուիրան .	244
Չարասրտութիւն .	245
Պատուիրանապահ .	246

## ԼԶ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Խիղճմտանք .	247
Սկզբնական մեղք .	249
Մահացու և ներելի մեղք .	250
Մեծութի մեղաց .	252

## Նոյն ԼԶ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Գլխաւոր մեղք .	253
Հպարտութիւն .	253
Ագահութիւն .	255

Բղջախոհութիւն .	256
Արուագիտութիւն .	256
Մահացուցումն .	257

ԼԵ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Նախանձ . ատելութիւն .	258
Չարախօսութիւն . արտունջ .	259
Բարկութիւն . յիշոց .	260
Համբերութիւն .	261
Որկրամոլութիւն .	262
Արբեցութիւն .	264
Ծուլութիւն .	265

ԼԸ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Չորրորդ վարդապետութիւն խորհրդոց .	268
Գործք խորհրդոց .	270
Խորհուրդ մկրտութե .	273

ԼԹ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Խորհուրդ դրոշմի .	276
Մեռոն .	279
Գործք դրոշմի .	197

Խ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Խորհուրդ հալորդութե .	283
Գործք հալորդութե .	285

## ԽԱ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Խորհուրդ սպատարագի .	290
Խնդիրք 'ի սպատարագի .	291

## ԽԲ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Խորհուրդ ասպաշխարութեան .	295
Զղջումն . խոստովանութիւն .	296
Արձակումն .	302
Ասպաշխարանք .	302
Գործք ասպաշխարութե .	304

## ԽԳ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Խորհուրդ վերջին օժման .	306
Խուրհուրդ կարգի .	308
Եօթն աստիճանք .	309
Խորհուրդ սլոակի .	310

## ԽԴ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Հինգերորդ վարդապետութիւն եկե- ղեցոյ .	313
Պատուիրանք եկեղեցոյ .	314
Ջերմեռանդութի .	316

## ԽԵ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Խոստովանիլ և հաղորդիլ .	318
Պաք . ծով .	322

Տալ զտասանորդ .	323
Հոգևոր և մարմնաւոր սղորմու- թիւն .	325

## ԽԶ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Տօնախմբութիւնք .	327
Հինգ տաղաւարք .	328

## ԽԷ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Խորհուրդ ծննդեան .	331
Աճալայանու թիւն .	332

## ԽԸ. Կ Ի Ր Ա Կ Ի .

Զատիկ . Համբարձումն .	335
Հոգեգալուստ .	339
Վարդավառ .	340

## ԽԹ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Վերափոխումն .	342
Տօնախմբութիւնք անձաճնին .	342

## Ծ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Տօնախմբութիւնք խաչին .	347
------------------------	-----

ԾԱ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Յիշատակութի սրբոց .	353
Պահապան հրեշտակ .	557

ԾԲ. Կ Ի Ր Ա Կ Ի :

Յիշատակութիւն ննջեցեաց .	359
Վերջին մտածութիք .	560

ԵԿ  
ԳՄԻ

